1076

Ն. ԼԵՆԻՆ (Վ. Ի. ՈՒԼՅԱՆՈՎ)

# ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ — 1928

3K23
Գ-68

Ն. ԼԵՆԻՆ (Վ. Ի. ՈՒԼՅԱՆՈՎ)

# ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Պետական հրատարակչություն

1928—Յերևան

1076

Գրառեպ. № 634 բ.   հ. 706.   Տիրաժ 4000

Պետհրատի 2-րդ տպարան Յերևան.—380

## ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆԻՑ *)

Ներկա գրքույկի նպատակն ե—տալ լենինիզմի ուսումնասիրության դիմողին համառոտ ձեռնարկ, ուր ժողոված են ընկ. Լենինի գլխավոր հոդվածներն ու ճառերը (ըստ մեծի մասին լրիվ, իսկ մի քանիսը հատվածներով) գյուղացության դերի մասին հեղափոխության մեջ։ Միաժամանակ ներկա գրքույկը նկատի ունի ոժանդակ ձեռնարկ լինել այն ագիտատորին ու պրոպագանդիստին, վորոնց այժմ ուժգին թափով կուսակցությունն ե առաջ քաշում բանվորագյուղացիական մասսայի խորքերից։

Կարիք չկա ապացուցելու, թե գյուղացիության նկատմամբ մեր վերաբերմունքի հարցն ուղիղ լուսաբանելու համար անհրաժեշտ ե ծանոթ լինել վոչ միայն այդ հարցի արդի դրման հետ։ Պետք ե իմանալ գյուղացիության նկատմամբ կուսակցության ունեցած քաղաքականությունը անցյալ հեղափոխական պայքարի տարբեր փուլերում։ Այստեղ ավելի քան պակաս կարող են հարկավորվել ընդհանուր ձեվակերպումները։ Ընդհանուր գծերով դեռ կարելի յե նշել պրոլետարիատի տակտիկական գիծը գյուղացիության ծայրահեղ շերտերի նկատմամբ, դեպի նրա առավել պրոլետարական թեվը և դեպի առավել բուրժուականը։ Բայց գյուղացիության միջնավոր շերտերի նկատմամբ տակտիկական գծի ընդհանուր ձևակերպումները նվազ արժեք ունեն։ Այդ շերտերը ներկայացնում են մի շարք փոփոխանցիկ աստիճաններ և դասակարգային տեսակետից խիստ գծագրված տիպեր չեն տալիս։ Նրանց համար բնորոշ ե նրանց դասակարգային դիրքի ծայրահեղ անկայունությունը, վորն իր քաղաքական արտահայտությունն ե գտնում այն յերերումների մեջ, վոր նրանք են կատարում բուրժուազիայից դեպի պրոլետարիատը և ընդհակառակը։ Նրանց այդ գծերը նշանակալից չափով սաստկանում են նաև նրանով, վոր բուն յեզրերը այդ միջնավոր խավերի միջև անչափ շարժական են և այստեղ առանձին անհատների անցումը մի շերտից մյուսը և յերրորդն առավել հաճախ տեղի ունեցող յերևույթ ե, քան արդյունաբերության բնագավառում։

---

*) Այս առաջաբանը վերցրված ե «Прибой» բանվորական հրատարակչ. հրատարակությունից. Լենինգրադ 1925 թ.

Գործ ունենալով գյուղացիության այս խայտաբղետ կազմի հետ, հմտություն է պահանջվում վորսալու այդ շերտերի յուրաքանչյուր նոր փոխհարաբերությունը, հասկանալու ինքնորինակությունը շարժման յուրաքանչյուր փուլի, ինչպես ընկ. Լենինն եր սիրում արտահայտվել: Յեվ քանի վոր այդ փուլերն այստեղ իրար են հետևում ավելի հաճախ, ավելի արագ, ապա այստեղ առանձնակի դեր է խաղում հեղափոխական մտքի ճկունությունը: Հարցի պատմության ուսումնասիրությունը, վոչ միայն ընդհանուր ճշմարտությունների ըմբռնումը, այլ և նրանց կոնկրետ գործադրումն անչափ տարբեր պարագաներում, այստեղ առանձնապես են անհրաժեշտ: Միայն նման ուսումնասիրությունը կարող է սկզբունքային տոկունություն ապահովել մեր պրոպագանդայի համար և նրան ազատ պահել նկատվող թեքումներից դեպի գյուղացիական հարցի օպորտյունիստական, իբր ուղղափառ-մարքսիստական մեկնաբանության կողմը II Ինտերնացիոնալի վոգով, կամ դեպի գյուղացիական շարժման այնպիսի գնահատություն, վոր շարժումը վերցնում է ինքն իր մեջ՝ անկախ նրա կապերից բանվոր դասակարգի գործի շահերի հետ: Ասածով ել բնորոշվում է հոդվածների այն ընտրությունը, վոր մենք ենք արել Վ. Ի. Լենինից, ինչպես և քաղվածքները նրա հոդվածներից ու ճառերից:

Գլխավոր ուշադրությունը, բնականաբար, մենք դարձրել ենք հետհոկտեմբերյան ժամանակաշրջանի վրա և վորքան հեռացել ենք արդեն մոմենտից, մենք ավելի նվազ գրականություն ենք ավել: Սակայն ընթերցողին մենք ծանոթացնում ենք հարցի այն դրման հետ, ինչ ընկ. Լենինն է արել սկսած 1894 թվականից: Այդ ժամանակին է վերաբերում մի հատված «Ինչ բան է ժողովրդի բարեկամները» գործից, վորը մենք միաժամանակ իր տեսակի ներածական հոդված ենք դնում մյուս հոդվածների նկատմամբ, վորոնք նրան են հաջորդում: Մի շարք հաջորդական հոդվածներով մենք լուսաբանում ենք հիմնական փուլերը. «կտրոնքների» ծրագրի ժամանակաշրջանը, 1906 թ. ագրարային ծրագիրը, ստոլիպինյան ռեֆորմի ժամանակաշրջանը, փետրվարի հեղափոխությունը, հոկտեմբերի հեղաշրջումը, ռազմական կոմունիզմի ժամանակաշրջանը (չքավորների կոմիտեները, միջակի նկատմամբ ստանձնած կուրսը) և նեպը:

Նկատի ունենալով, վոր առաջին փուլերն ավելի յերիտասարդ ընթերցողին կարող են իսպառ անծանոթ լինել, կամ խիստ նվազ ծանոթ լինել, իսկ նրանց նվիրված գրականություն մենք քիչ ենք տալիս, մենք անհրաժեշտ համարեցինք՝ ընթերցողին օգնելու միտումով՝ տեղ-տեղ տալ վորոշ բացատրություններ ըստ եյության, մի քանի տեղ ել լրացուցիչ նկատողություններ: Ոտարազգի բառերի և հատուկ անունների բացատրությունը, ըստ հնարավորության, տալիս ենք



գծի տակի ծանոթություններում: Վորպեսզի այդ ծանոթությունները տարբերել կարելի լինի ընկ. Լենինի գրչին պատկանող ծանոթություններից, նրանք բոլորն ել առանձնապես է, վոր նշանակված են իբրև **ծանոթ. խմբ**: Ավելի մանրամասն մեկնաբանությունները տրված են գրքույկի վերջում:

Հոդվածների ու հատվածների ընտրության գործը, այլ և ընտրած նյութի ծանոթություններով ճոխացնելը կատարել է ընկ. Ռատոները: Ընդհանուր խմբագրությունը պատկանում է ընկ. Ս. Զակս—Գլադնեվին:

# ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ԴԵՊԻ ՄԱՆՐ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՆ

(«Ինչ բան է «Ժողովրդի բարեկամները» յեվ ինչպես են նրանք մարտնչում սոցիալ-դեմոկրատների դեմ» գրքից) (1)

**Ինչպես պիտի վերաբերվի բանվոր դասակարգը մանր բուրժուազիային ու նրա ծրագրին:** *Այս հարցին չի կարելի պատասխանել, յեթե ուշադրություն չդարձնենք այդ դասակարգի յերկակի բնույթը (մեզ մոտ Ռուսաստանում այդ յերկակիությունն առանձնապես ուժեղ է շնորհիվ այն բանի, վոր սակավ է զարգացած ներհակությունը մանր ու խոշոր բուրժուազիայի (2) միջև): Նա առաջադիմական է հանդիսանում՝ վոր չափով ընդհանուր դեմոկրատական պահանջներ է առաջադրում, այսինքն պայքարում է միջնադարյան եպոխայի ու ճորտատիրականության ամեն մի մնացորդի դեմ. Նա հետադիմական է հանդիսանում՝ վոր չափով պայքարում է իր դրությունը պահպանելու, իբր մանր բուրժուազիայի դրություն, ջանալով կասեցնել, յետ շրջել բուրժուական յերկրի ուղղությամբ (3) ընթացող ընդհանուր զարգացումը: Այնպիսի հետադիմական պահանջներ, ինչպիսին են, օրինակ, բաժնեհողի (4) տխրահռչակ անօտարացումը, ինչպես և այլ բազմաթիվ ծրագրերը, վոր խնամակալություն են հետապնդում գյուղացիության նկատմամբ,—դրանք սովորաբար թաքստոց են գտնում աշխատողների պաշտպանության բարեհաճ պատրվակի տակ, բայց իրականի մեջ նրանք, հարկավ, միայն վատթարացնում են նրանց վիճակը, այդ նույն ժամանակ դժվարացնելով նրանց պայքարն իրանց ազատագրության համար: Մանր բուրժուական ծրագրի այս յերկու կողմը պետք է խըստորեն տարբերել և բացասելով այդ թեորիաների վորևե սոցիալիստական բնույթը, պայքարելով նրանց հետադիմական կողմերի դեմ, չպետք է մոռանալ նրանց դեմոկրատական կողմի մասին: Օրինակով կը բացատրեմ, թե ինչ ձևով մարքսիստների կողմից քաղքենիական թեորիաների լիակատար ժխտումը վոչ միայն չի բացասում նրանց ծրագրի դեմոկրատիզմը, այլ ընդհակառակը պահանջում է էլ ավելի համառորեն պնդելու նրա վրա: Յերեք հիմնական դրություն կա, վորոնց վրա յել միշտ իրանց ձին են քշել քաղքենիական սոցիալիզմի*

ներկայացուցիչներն իրենց թեորիաներում — սակավահողություն, բարձր վճարներ, վարչության ճնշում։

Այս չարիքների վերացման պահանջի մեջ սոցիալիստական խապառ վոչինչ չկա, վորովհետև նրանք վոչ մի բանով չեն բացատրում էքսպլոատացիան ու շահագործումը (5) և նրանց վերացումը վոչնչով չի շոշափի կապիտալի ճնշումն աշխատանքի վրա։ Բայց նրանց վերացումը կը մաքրե այդ ճնշումը նրան սատարող միջնադարյան լաթերից, կը հեշտացնե բանվորի համար ուղղակի պայքարը կապիտալի դեմ և այս պատճառով իբր դեմոկրատական պահանջ բանվորների ամենայեռանդագին պաշտպանությանը կարժանանա։ Վճարումներն ու հարկերը — սա, ընդհանրապես խոսելով, մի այնպիսի հարց է, վորին ի վիճակի չէ առանձին կարևորություն տալու միայն մանր բուրժուան, բայց մեզ մոտ գյուղացիական վճարումները շատ տեսակետից ներկայացնում են ճորտատիրականության պարզ վերապրում. այսպես են, օրինակ, փրկանքի վճարները (6), վորոնք պետք է անհապաղ ու անպայման վերացվեն. այսպես են այն հարկերը, վորոնք միայն բարդվում են գյուղացիների ու քաղքենիների վրա և վորոնցից ազատ են «ազնիվները»։

Սոցիալ-դեմոկրատները միշտ էլ կը պաշտպանեն միջնադարյան հարաբերությունների այդ մնացորդների վերացման պահանջը, հարաբերություններ, վորոնք պայմանավորում են տնտեսական ու քաղաքական մի անշարժություն։ Այս նույնը պետք է ասել սակավահողության մասին։ Անտարակուսելի չէ, վոր, օրինակ, գյուղացիական ռեֆորմը հողերի կտրանքներով կալվածատերերի օգտին ուղղակի կողոպտել է գյուղացիներին, ծառայություն մատուցելով այդ ահագին հետադիմական ուժին և անմիջարար (գյուղացիական հողերի խլումով) և չեզակի (բաժնեհողերի ճորտար սահմանածրումով) (7)։ Յեվ սոցիալ-դեմոկրատները յեռանդագին կերպով պիտի պաշտպանեն այն, վոր անհապաղ գյուղացիներին վերադարձվի նրանցից խլած հողը, վոր լիովին էքսպրոպրիացիայի *) չենթարկվի կալվածատիրական հողատիրությունը — ճորտատիրական հիմնարկների ու ավանդությունների այդ նեցուկը։ Այս վերջին կետը, վոր զուգադիպում է հողի ազգայնացման (նացիոնալիզացիայի) **) հետ, իր մեջ վոչ մի սոցիալիստական բան չի պարունակում, վորովհետև մեզ մոտ արդեն կազմավոր-

*) Էքսպրոպրիացիա — պետության շահերի համար մասնավոր սեփականության հարկադրականորեն պետական դարձնելը։

ԾԱՆՈԹ. ԽՄԲ.

**) Հողի ազգայնացում (Նացիոնալիզացիա) — յերբ պետության մեջ գտնվող հողերը կենտրոնական պետական իշխանության սեփականություն են դառնում։

ԾԱՆՈԹ. ԽՄԲ.



վող ֆեոդալական *) հարաբերություններն այդ պարագային ավելի արագ ու փարթամորեն կը փթթեյին, բայց այն խիստ կարևոր է դեմոկրատական իմաստով, իբրև միակ միջոց, վոր կարող էր վերջնականապես ջախջախել ազնիվ կալվածատերերին։ Վերջապես, խոսել գյուղացիների իրավազրկության նկատմամբ, իբրև գյուղացիների էքսպլոատացիայի ու շահագործման պատճառի մասին, կարող են, ի հարկե, միայն պ. պ. Յուժակովները (8) և Վ. Վ. (9), բայց վարչության ճնշումը գյուղացիության վերաբերմամբ վոչ միայն անտարակուսելի չէ, այլ ներկայացնում է չէ թե պարզ հարստահարություն, այլ գյուղացիների, իբրև «ստոր խուժանի», ուղղակի անգիտացում, վորին հատուկ է հպատակության մեջ լինել ազնիվ կալվածատերերի մոտ, վորի համար ընդհանուր քաղաքացիական իրավունքներից օգտվելը միայն իբրև առանձին շնորհ է, վոր տրվում է (օրինակ, գաղթը) **), վորի նկատմամբ յուրաքանչյուր պոմպադուր կարող է տնօրինություններ անել, դիտելով նրանց իբրև մարդիկ, վոր արգելքի տակ են առնված աշխատանքի տան մեջ։ Յեվ սոցիալ-դեմոկրատները անպայմանորեն հարում են այն պահանջին, վոր առաջարկում է գյուղացիության լիակատար վերականգնումը քաղաքացիական իրավունքների մեջ, լիակատար վերացումն ազնվականության բոլոր արտոնությունների, բյուրոկրատական խնամակալության վոչնչացումը գյուղացիության նկատմամբ և ինքնավարության վերապահումը նրան։

Առհասարակ, ռուս կոմմունիստներին, մարքսիզմի հետևողներին, ավելի, քան վորևե մեկ ուրիշին, հարկավոր է իրանց **սոցիալ-դեմոկրատ** անվանել և իրանց գործունեյության մեջ յերբեք չմոռանալ **դեմոկրատիզմի** ***) ահագին կարևորության մասին։ Ռուսաստանում միջնադարյան, կիսաճորտատիրական հիմնարկների մնացորդներն այնպես անհամեմատորեն դեռ ուժեղ են (Արևմտյան Յեվրոպայի հետ համեմատած), նրանք այնպիսի հարստահարող լուծ են դարձել պրոլետարիատ-

*) Ֆեոդալական հարաբերություններ — կապիտալիստական հողագործության հարաբերություններ։

ԾԱՆՈԹ. ԽՄԲ.

**) Չի կարելի այստեղ չհիշել ճորտատիրականի այն զուտ-ռուսական լկբրության մասին, վորով պ. Յերմոլովը, այժմ հողագործության մինիստր, իր «Անբերքությունը և ժողովրդական աղետը» գրքի մեջ առարկում է գաղթի դեմ։ Չի կարելի, գեն. պետական տեսակետից այն խելացի համարել, յերբ յեվրոպական Ռուսաստանում կալվածատերերը դեռ ազատ ձեռքերի կարիք ունեն։ Յեվ էլ ինչի համար են պաշտպանում գյուղացիները, յեթե վոչ նրա համար, վորպեսզի իրանց աշխատանքով կերակրեն ֆեոդալ-կալվածատերերին և նրանց «բարձրագիր» արտոնյալներին։

***) Այս խիստ կարևոր կետ է։ Պլեխանովը իրավացի կերպով ցույց է տալիս, թե մեր հեղափոխականները «յերկու թշնամին ունեին. դեռ վոչ-լիովին արմատախիլ յեղած հին նախապաշարմունքները մի կողմից, և նոր ծրագրի նեղ ըմբռնումը մյուս կողմից»։

տի ու ընդհանրապես ժողովրդի համար՝ կասեցնելով քաղաքական մտքի զարգացումը բոլոր դասերի ու դասակարգերի մեջ, որ չի կարելի չկանգել նրա վրա, թե բանվորների համար ահագին կարևորություն ունի պայքարը բոլոր ճորտատիրական հիմնարկների դեմ, ինքնակալության (աբսոլյուտիզմի) *), դասայնության, բյուրոկրատիայի դեմ։ Բանվորներին անհրաժեշտ է իր ամբողջ մանրամասնությամբ ցույց տալ, թե ինչ զարհուրելի հետադիմական ուժ են ներկայացնում այդ հիմնարկները, ինչպես են նրանք սաստկացնում կապիտալի հարստահարությունն աշխատանքի վրա, ինչպես են ստորացնող ձևով ճնշում աշխատավորներին, ինչպես են կասեցնում կապիտալն իր միջնադարյան ձևերի մեջ (10), որոնք աշխատանքի շահագործման տեսակետից չեն խոնարհվում նորագույն ինդուստրիալ կապիտալի ձևերի առաջ, բայց այդ շահագործմանն ավելացնում են ազատագրության համար մղվող պայքարի զարհուրելի դժվարությունները։ Բանվորները պիտի իմանան, թե քանի չեն տապալված ռեակցիայի այդ սյուները, **) նրանք ոչ մի հնարավորություն չպիտի ունենան հաջող պայքար մղելու բուրժուազիայի դեմ, որովհետև նրանց գոյության դեպքում ռուսական գյուղական պրոլետարիատը, որի աջակցությունն անհրաժեշտ մի պայման է բանվոր դասակարգի հաղթության համար, յերբեք չպիտի դուրս գա տրորված, հալածված մարդու վիճա-

*) Աբսոլյուտիզմ — ինքնակալություն։ Ինքնակալության պայմանում ժողովրդին փաստորեն կառավարում են ազնվականները, հողատերերը, իսկ թագավորն «առաջին ազնվականն» է հանդիսանում։ ԾԱՆՈԹ. ԽՄԲ.

**) Առանձնապես պատկառելի հետադիմական հիմնարկ է հանդիսանում հայրենական բյուրոկրատիան, որը de facto (փաստորեն) էլ կառավարում է Ռուսաստանի պետությունը, համեմատաբար նվազ բևեռելով իր վրա մեր հեղափոխականների ուշադրությունը։ Լրացնելով իր կազմը գլխավորապես անտոհմիկներից (разночинец) այդ բյուրոկրատիան է իր ծագման աղբյուրի տեսակետից, և իր կոչման ու գործունեության բնույթի կողմից խորապես բուրժուական է հանդիսանում, բայց ինքնակալությունը և ազնիվ կալվածատերերի ահագին քաղաքական արտոնությունները նրան տվել են առանձնապես վնասակար հատկություններ։ Դա մշտական հողմացույց է, որ իր գերագույն խնդիրն է համարում զուգակցել կալվածատերերի ու բուրժուաների շահերը։

Դա մի հուդա է, որ օգտվում է իր ճորտատիրական համակրանքներով ու կապերով, որպեսզի խաբե բանվորներին ու գյուղացիներին, ըստ որում «տնտեսապես թույլին պաշտպանելու» և նրա կուլակից ու վաշխառուից «խնամակալելու» անվան տակ անց է կացնում այնպիսի ձեռնարկումներ, որոնք աշխատողներին հասցնում են «ստոր խուժանի» վիճակին, ոտքով-գլխով նրանց ճորտատիրական-կալվածատիրոջը տալով և դրանով էլ նրան անպաշտպան դարձնելով բուրժուազիայի դեմ։ Դա խիստ վտանգավոր մի կեղծավոր է, որն իմաստություն է ժողովել ռեակցիայի արևմտա-յեվրոպական վարպետների փորձից և ճարտարորեն իր արակչեևյան (11) ձգտումներն է թաքցնում ժողովրդասիրական բառերի թզենու տերևներով։



կից, ընդունակ միայն բութ հուսահատության, այլ ոչ խելացի ու տոկուն բողոքի և պայքարի։ Յեվ այս պատճառով արմատական դեմոկրատիայի կողքին պայքար մղել ինքնակալության և ռեակցիոն դասերի ու հիմնարկների դեմ — դա բանվոր դասակարգի ուղղակի պարտականությունն է, որը և պիտի նրան ներշնչեն սոցիալ-դեմոկրատները, աչքաթող չանելով մի րոպե իսկ նույն ժամանակ նրան ներշնչելու և այն, թե այդ բոլոր հիմնարկների դեմ պայքարն անհրաժեշտ է միայն իբրև միջոց հեշտացնելու պայքարը բուրժուազիայի դեմ, թե հանուր-դեմոկրատական պահանջների իրագործումը բանվորին անհրաժեշտ է միայն իբրև ճանապարհի մաքրումն, ճանապարհի, որը տանում է դեպի հաղթանակ աշխատավորների գլխավոր թշնամու դեմ — իր բնույթով զուտ դեմոկրատական մի հիմնարկի — կապիտալի դեմ, որը մեզ մոտ Ռուսաստանում առանձնապես հակված է զոհ բերելու իր դեմոկրատիզմը, դաշնակցելու ռեակցիոներների հետ նրա համար, որպեսզի ճնշել կարելի լինի բանվորներին, որպեսզի էլ ավելի կասեցնի բանվորական շարժման յերևան գալը...

Ահագին սխալ են անում նրանք, որոնք բանվորներին ավետում են ինքնակալության դեմ պայքարելու գաղափարը, միևնույն ժամանակ չլուսաբանելով մեր հասարակական հարաբերությունների ներհակ բնույթը, որի զորությամբ քաղաքական ազատության կողմնակից են բուրժուազիայի իդեոլոգները *) (գաղափարախոսները), — չլուսաբանելով նրանց ռուսական բանվորի պատմական դերը, իբրև մի մարտնչողի ամբողջ աշխատավոր բնակչության ազատագրության համար։

Սոցիալ-դեմոկրատներին սիրում են կշտամբել նրա համար, թե իբրև նրանք իրանց բացառիկ օգտագործման են վերցնում Մարքսի թեորիան, այն ինչ, դեհ, նրա տնտեսական թեորիան ընդունվում է բոլոր սոցիալիստների կողմից...

Ինչպե՞ս կարելի չէ ընդունել Մարքսի տնտեսական թեորիան իր յեզրակացությամբ — պրոլետարիատի հեղափոխական դերի մասին իբրև կոմմունիզմի կազմակերպիչ կապիտալիզմի միջոցով, — յերբ մեզ մոտ ուղիներ են փնտրում դեպի կոմմունիզմն անկախ կապիտալիզմից և նրա կողմից ստեղծվող պրոլետարիատից (12)։

Ակներև է, որ նման պայմաններում բանվորին կոչել պայքարելու քաղաքական ազատության համար, — դա հավասարազոր է նրան կոչել կրակից շագանակներ փոյնելու առաջավոր բուրժուազիայի համար, որովհետև չի կարելի ժխտել (բնորոշ է, որ նույնիսկ նարոդնիկ-

*) Իդեոլոգներ (գաղափարախոսներ) — այս կամ այն դասակարգի վորոշ աշխարհահայացքի արտահայտիչները։ ԾԱՆՈԹ. ԽՄԲ.

ները ու նարոդովոլցիները (13) չեյին ժխտում այդ), թե քաղաքական ազատությունը նախ և առաջ կը ծառայի բուրժուազիայի շահերին, տալով բանվորներին չե թե թեթևացում նրանց վիճակի, այլ միայն... միայն թեթևացում պայքարի պայմանների... **այդ նույն բուրժուազիայի դեմ**։ Յես այս ասում եմ այն սոցիալիստների դեմ, վորոնք՝ չընդունելով սոցիալ-դեմոկրատների թեորիան, սակայն իրենց ագիտացիան ուղղում են դեպի բանվորական միջավայրը, համոզվելով փորձով, թե միայն այնտեղ կարելի յե հեղափոխական տարրեր գտնել։ Այդ սոցիալիստները իրանց թեորիան ներհակության մեջ են դնում գործնականի հետ և խիստ լուրջ սխալ են կատարում, շեղելով բանվորներին իրենց անմիջական խնդրից—**սոցիալիստական բանվորական կուսակցություն կազմակերպելուց** *)։

Սոցիալ-դեմոկրատների քաղաքական գործունեյությունը նրա մեջ է կայանում, վորպեսզի նպաստել կարողանան բանվորական շարժման կազմակերպման զարգացմանը Ռուսաստանում, վերակազմավորելու այն իր արդի տրոհված, ղեկավար գաղափարից զուրկ, բողոքի փորձերի, «բունտերի» և գործադուլների վիճակ ապրող կացությունից կազմակերպված պայքարի **վողջ** ռուսական բանվոր **դասակարգի**, վոր ուղղված է բուրժուական ռեժիմի դեմ և ձգտում է եքսպրոպրիատորների եքսպրոպրիացիային, ձգտում վոչնչացնելու այն հասարակական կարգերը, վորոնք հիմնված են աշխատավորի հարստահարության վրա։ Այս գործունեյության հիմք է ծառայում մարքսիստների ընդհանուր համոզումը, թե ռուս բանվորը Ռուսաստանի վողջ աշխատող ու շահագործվող բնակչության միակ ու բնական ներկայացուցիչն է **)։

Բնական—նրա համար, վոր Ռուսաստանում աշխատավորի շահագործումն **ամենուրեք ըստ իր եյության կապիտալիստական է հանդի-**

*) Այն յեզրակացությունը, թե անհրաժեշտ է բանվորին պայքարի ծառացնել ինքնակալության դեմ, կարելի յե հանգել յերկու ուղիով. կամ նայել բանվորի վրա իբրև միակ մարտնչողի սոցիալիստական հասարակակարգի համար և այն ժամանակ քաղաքական ազատության մեջ տեսնել այն պայմաններից մեկը, վորոնք հեշտացնում են նրա պայքարը։ Այդպես են նայում սոցիալ-դեմոկրատները։ Կամ դիմել նրան պարզապես, իբրև մի մարդու, վորն ամենից շատ է տանջվում արդի կարգերից. վորն այլ ևս վոչինչ չունի կորցնելու և վորն ամենից վճռականորեն կարող է հանդես գալ ինքնակալության դեմ։ Բայց այդ եյ այն կը նշանակե, վոր հարկադրենք նրան քարշ գալու բուրժուական արմատականների պոչից, վորոնք ամբողջ «ժողովրդի» ինքնակալության դեմ ունեցած համերաշխության թիկունքում չեն ուզում տեսնել բուրժուազիայի ու պրոլետարիատի ներհակությունը։

**) Ռուսաստանում ապագայի մարդը—դա գյուղացին է, այդպես եյին մտածում գյուղացիական սոցիալիզմի ներկայացուցիչները, նարոդնիկները, այս բառի ամենալայն նշանակությամբ։ Ռուսաստանում ապագայի մարդը—դա բանվորն է, մտածում են սոցիալ-դեմոկրատները։ Այդպես է ձևակերպված յեղել մարքսիստների հայեցակետը մի ձեռագրի մեջ։



**սանում**, յեթե աչքաթող անենք ճորտատիրական տնտեսության անհետացող մնացորդները. բայց միայն արտադրողների մասսայի շահագործումը մանր է, տրոհված, չզարգացած, այն ինչ ֆաբրիկա-գործարանային պրոլետարիատի շահագործումը խոշոր է, հանրայնացած և կենտրոնացած։ Առաջին դեպքում շահագործումը դեռ ևս ցանցված է միջնադարյան ձևերով, զանազան քաղաքական, իրավաբանական և կենցաղային ավելորդություններով, ճորտարություններով և խորամանկություններով, վորոնք խանգարում են աշխատավորին և նրա գաղափարախոսին տեսնել եյությունն այն կարգերի, վորոնք ճնշում են աշխատավորին, տեսնել, թե ուր և ինչպես է հնարավոր յելքը նրանցից։ Ընդհակառակը, վերջին դեպքում շահագործումն արդեն միանգամայն զարգացած է և հրապարակ է գալիս իր անխառն տեսքով առանց գործը խճճող վորևե մանրակրկիտ յերևույթների։ Բանվորը չի կարող չտեսնել, վոր իրան **կապիտալն է** հարստահարում, վոր պայքարն սկսված է մղել բուրժուազիայի **դասակարգի** դեմ։ Յեվ նրա այդ պայքարը, վոր ուղղված է մերձավոր տնտեսական կարիքները գոհացնելու գործին, նրա նյութական վիճակը բարելավելու համար, անխուսափելիորեն բանվորական կազմակերպություններից պահանջում է, անխուսափելիորեն դառնում է պատերազմ չե թե անձնավորության դեմ, այլ **դասակարգի** դեմ—այն դասակարգի դեմ, վորը մեն միայն ֆաբրիկաներում ու գործարաններում չե, այլ ամեն տեղ և ամենուրեք է հարստահարում ու ճնշում աշխատավորին։ Ահա ինչու ֆաբրիկա-գործարանային բանվորը հանդիսանում է վոչ ավելին, քան առաջավոր ներկայացուցիչն ամբողջ շահագործվող բնակչության և նրա համար, վորպեսզի նա իրագործե իր ներկայացուցչությունը կազմակերպված, տոկուն պայքարում,—ամենևին այն չե պահանջվում, վոր նա հափշտակվի վորևե «հեռանկարներով». դրա համար պահանջվում է միայն մի հասարակ բան—**պարզել նրան իր վիճակը**, պարզել այն սիստեմի քաղաքական-տնտեսական կարգը, վորը հարստահարում է նրան, պարզել, թե այդ սիստեմի որով անհրաժեշտ ու անխուսափելի յե դասակարգային ներհակությունը։ Ֆաբրիկա-գործարանային բանվորի այդ վիճակը՝ կապիտալիստական հարաբերությունների ընդհանուր սիստեմում՝ նրան դարձնում է միակ մարտնչողը բանվոր դասակարգի ազատագրության համար, վորովհետև միայն կապիտալիզմի զարգացման բարձրագույն աստիճանը, խոշոր մեքենայական ինդուստրիան է, վոր նյութական պայմաններ և սոցիալական ուժեր (14) է ստեղծում, անհրաժեշտ այդ պայքարի համար։ Բոլոր մնացած տեղերում, կապիտալիզմի զարգացման ստորին ձևերի գոյությամբ, չկան այդ նյութական պայմանները. արտադրությունը տրոհված է հազարավոր մանրագույն տնտեսությունների (վորոնք չեն դադարում տրոհված **տնտեսա-**

յունները լինելուց, երբ գոյություն ունեն համայնական **հողատիրության** ամենից հավասարար ձևերը), շահագործվողն ըստ մեծի մասին դեռ տիրում ե մանրիկ մի տնտեսության և այս կերպ կապվում ե այն խիկ բուրժուական սիստեմին, վորի դեմ պայքար պիտի մղե. դա կասեցնում ու դժվարացնում ե այն սոցիալական ուժերի զարգացումը, վորոնք ընդունակ են տապալելու կապիտալիզմը: Տրոհված, առանձնակի մանր շահագործումը կապում ե աշխատավորներին տեղի հետ, բաժան-բաժան ե անում նրանց, հնարավորություն չի տալիս նրանց ըմբռնելու իրանց դասակարգային համերաշխությունը, հնարավորություն չի տալիս միավորվելու, հասկանալով, թե հարստահարության պատճառը վոչ թե այս կամ այն անձնավորությունն ե, այլ ամբողջ տնտեսական սիստեմը: Ընդհակառակը, խոշոր կապիտալիզմն անխուսափելիորեն քանդում ե բանվորի ամեն մի կապը հին հասարակության հետ, վորոշ տեղի և վորոշ շահագործողի հետ, միավորում ե նըրանց, հարկադրում ե մտածել և դնում ե այնպիսի պայմաններում, վորոնք հնարավորություն են տալիս կազմակերպված պայքար սկսելու:

Բանվորների դասակարգի վրա յել սոցիալ-դեմոկրատները դարձնում են իրանց ամբողջ ուշադրությունը և իրանց ամբողջ գործունեությունը: Յերբ նրա առաջավոր ներկայացուցիչները կը յուրացնեն գիտական սոցիալիզմի (15) գաղափարները, ռուսական բանվորի պատմական դերի գաղափարը, յերբ այդ գաղափարները լայն տարածում կը ստանան և բանվորների մեջ կը ստեղծվեն ամուր կազմակերպություններ, վոր կը վերակազմավորեն բանվորների արդի տրոհված տնտեսական կռիվը գիտակից դասակարգային պայքարի, — այն ժամանակ ռուս **բանվորը**, բոլոր դեմոկրատիկ տարրերի գլուխն անցնելով, կը տապալի ինքնակալությունը և կառաջնորդի **ռուսական պրոլետարիատին** (**բոլոր յերկրների** պրոլետարիատի հետ կողք-կողքի) **բացահայտ քաղաքական պայքարի ուղիղ ճանապարհով դեպի հաղթական կոմմունիստական հեղափոխություն:**

## ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ (16)

Քառասուն տարի չի անցել գյուղացիների ազատագրության որից: Լիովին բնական ե, վոր մեր հասարակությունն առանձին վոգևորությամբ ե տոնում փետրվարի 19-ի որը—հին, ճորտատիրական Ռուսաստանի անկման որը սկիզբը մի եպոխայի, վորը ժողովրդին խոստանում եր ազատություն և բարորություն: Բայց չպետք ե մոռանալ, վոր տոնակատարների գովասանական ճառերում՝ դեպի ճորտատի-



րականությունը և նրա բոլոր արտահայտությունները տածած անկեղծ թշնամության կողքին՝ կա բազում կեղծավորություն: Ամբողջապես կեղծավորությամբ և թափանցված և սուտ ե «մեծ» ռեֆորմի այն գընահատանքը, վորը մեզ մոտ շրջուն ե դարձել.— «գյուղացիների ազատագրումը հողով հանդերձ պետական փրկանքի **օգնությամբ**»: Իսկ իրականի մեջ դա գյուղացիների ազատագրումն եր հողից, վորովհետև այն բաժնեհողերից, վորոնք դարերի ընթացքում գյուղացիների տիրության մեջ եյին գտնվում, անպին կտրանքներ արվեցին, իսկ հարյուր հազարավոր գյուղացիներ միանգամայն հողազուրկ արվեցին—նրանք գնացին նստելու քառորդ դեսյատինի կամ մուրացկի բաժնեհողի վրա: Իսկապես վոր գյուղացիները կողոպուտի յենթարկվեցին կրկնակի ձևով. բավ չեր, վոր նրանցից կտրեցին հողը, նրանց հարկադրեցին դեռ «փրկանք» վճարել նրանց տրամադրված և միշտ ել նրանց տիրության մեջ յեղած հողի համար, և դրա հետ միասին հողի փրկանքի գինը նշանակված եր առավել բարձր նրա իսկական գնից: Ազատագրումից տասն տարի անց՝ իրանք կալվածատերերն եյին խոստովանում գյուղատնտեսության վիճակն ուսումնասիրող կառավարական չինովնիկների առաջ, թե գյուղացիներին հարկադրեցին վճարել վոչ միայն իրանց հողի, այլ և իրանց ազատության համար: Յեվ փրկանք վերցնելով անձնական ազատագրության համար՝ այնուամենայնիվ գյուղացիներին ազատ մարդիկ չդարձրին. նրանց քսան տարի ժամանակավոր-պարտատեր (17) թողեցին, նրանց թողեցին—և մինչև որս ել նրանք մնում են—ստորին դաս, յենթակա գանակոծության, առանձին հարկեր վճարող, չհամարձակվող ազատորեն հեռանալու կիսաճորտական համայնքից, ազատորեն տնօրինելու իր հողը, ազատորեն բնակություն հաստատելու պետության իր ընտրած վայրում: Մեր գյուղացիական ռեֆորմը կառավարության մեծահոգության մասին չե, վոր վկայում ե. ընդհակառակը, նա մեծագույն պատմական որինակն ե հանդիսանում այն բանի, թե յուրաքանչյուր գործ ինչ աստիճանի ապականված ե դուրս գալիս ինքնակալական կառավարության ձեռքից: Ռազմական պարտության, զարհուրելի ֆինանսական դժվարությունների և գյուղացիների ահեղ հուզումների ճնշման տակ կառավարությունն ուղղակի **հարկադրված եր** ազատագրելու նրանց: Ինքը թագավորը խոստովանեց, թե պետք ե ազատագրել վերից, քանի չեն սկսել ազատագրել վարից: Բայց ազատագրության ձեռնարկելով՝ կառավարությունն արավ բոլոր հնարավորն ու անհնարինը, վորպեսզի գոհացնե «զրկվող» ճորտատիրականների ագահությունը. կառավարությունը կանգ չառավ նույնիսկ այնպիսի ստորության առաջ, ինչպես այն մարդկանց ջոկողությունը, վորոնք կոչված եյին իրագործելու ռեֆորմը,—թեև այդ մարդիկ կոչված եյին հենց ազնվականների շարքից!

Առաջին կոչի հաշտարար միջնորդները *) արձակվեցին պաշտոնից և փոխարինվեցին մարդկանցով, վորոնք անընդունակ եյին դիմադրություն ցույց տալ ճորտատիրականներին, յերբ նրանք կողոպտում եյին գյուղացիներին հենց հողի սահմանածրման ժամանակ։ Ցեվ մեծ ռեֆորմը չեր լինում ի կատար ածել առանց զինվորական եկզեկուցիաների **) և գյուղացիների գնդակահարության, վորոնք հրաժարվում եյին ընդունելու կանոնագրերը (18)։ Զարմանալի չէ, վոր այդ ժամանակի լավագույն մարդիկ, կաշկանդված լինելով գրաքննական զսպաշակալով, անեծքի լռությամբ են, վոր ընդունեցին այդ մեծ ռեֆորմը...

Բեգարից «ազատագրված» գյուղացին ռեֆորմատորի ձեռքից դուրս յեկավ այնպես տրորված, կողոպտված, ստորացված, իր բաժնեհողին կպած, վոր նրա համար վոչինչ չեր մնում, քան «հոժարակամ» բեգարին դիմելու։ Ցեվ գեղջուկը սկսեց մշակել իր նախկին տիրոջ հողը, նրանից «կապալով վերցնելով» իրանից խլած հողերը, ձմեռը՝ սոված ընտանիքի համար հացի նպաստ ստանալու փոխարեն՝ ամառային աշխատանքին վարձվելով։ Փոխաշխատանք և ստրկական կախում — ահա ինչ դուրս յեկավ իրականի մեջ այն «ազատ աշխատանքը», վորի վրա «աստուծո օրհնությունը» կանչելու յեր հրավիրում գյուղացուն մանիֆեստը, կազմված տերտեր-ճիզվիտի ձեռքով։

Կալվածատիրական այդ հարստահարությանը, վոր պահպանվեց ռեֆորմի ստեղծող ու իրագործող չինովնիկների մեծահոգության շնորհիվ, ավելացավ նաև կապիտալի հարստահարությունը։ Փողի իշխանությունը, վոր ճնշել է, օրինակ, անգամ ֆրանսիական գյուղացուն, վորն ազատագրվել է կալվածատիրական իշխանությունից չէ թե խղճալի, կիսակատար ռեֆորմով, այլ հզոր ժողովրդական հեղափոխությամբ, — փողի այդ իշխանությունն իր ամբողջ ծանրությամբ ընկավ մեր կիսաճորտական գեղջուկի վրա։ Փող ճարել հարկավոր եր ինչ էլ վոր լինի. և՛ բարերար ռեֆորմի ավելացրած հարկերը վճարելու, և՛ հող կապալով վերցնելու համար, և՛ ֆաբրիկային արդյունաբերության այն խղճալի արտադրանքները գնելու համար, վորոնք սկսեցին դուրս վտարել գյուղացու տնային արտադրանքները, և՛ հաց գնելու համար և այլն։ Փողի իշխանությունը վոչ միայն ճնշեց, այլ և պառակտեց գյուղացիությունը. ահագին մասսան անշեղորեն քայքայվում եր և պրոլետար դառնում, փոքրամասնությունն իր միջից արտադրում եր փոքրաթիվ, բայց կառչուն

*) Հաշտարար միջնորդներ — պաշտոնատար անձինք, վորոնց վրա յեր դրված կարգավորել հարաբերությունները ազատագրված ճորտական գյուղացիների ու նրանց կալվածատերերի միջև։
ԾԱՆՈԹ. ԽՄԲ.

**) Պատիժ, պատժական միջոց։
ԾԱՆՈԹ. ԽՄԲ.



կուլակներ և տնտեսավար գեղջուկներ, վորոնք իրանց ձեռքն եյին ժողովում գյուղացիական տնտեսությունը և գյուղացիական հողերը, ծնվող գյուղական բուրժուազիայի շարքերը կազմելով։ Ցետ-ռեֆորմի ամբողջ քառասնամյակը գլխովին այդ գյուղացիաթափման պրոցեսն է կազմում, դանդաղ, ցավագին մահացման մի պրոցես։ Գյուղացին հասցրված եր մուրացկի կյանքի, նա իր անասունների հետ եր ապրում, ցնցոտի հագնում, թելուկով կերակրվում. գյուղացին փախչում եր իր բաժնեհողից, յեթե փախչելու մի վորևե տեղ կար, անգամ փրկություն եր վորոնում այդ բաժնեհողից, վճարելով նրան, ով համաձայնվում եր վերցնելու բաժնեհողը, վորի տուրքերը գերազանցում եյին նրա հասութաբերությունը։ Գյուղացիները քաղցում եյին պարբերաբար և տասնյակ հազարներով մահանում սովից ու անբերրիությունների ժամանակ ծագող համաճարակներից, անբերրիություններ, վորոնք հաճախ և հաճախ եյին կրկնվում։

Մեր գյուղում այսպես է դրությունը և այժմ։ Հարց է, ո՞ր է յելքը և ինչ միջոցներով բարելավել գյուղացու վիճակը։ Կապիտալի հարստահարությունից մանր գյուղացիությունը կարող է փրկվել միայն բանվորական շարժմանը հարելով, օգնելով նրան իր պայքարի մեջ սոցիալիստական հասարակակարգի համար, հողը, ինչպես և արտադրության մյուս միջոցները (ֆաբրիկաներ, գործարաններ, մեքենաներ և այլն) հասարակական սեփականություն դարձնելու համար։ Փորձել փրկելու գյուղացիությունը կապիտալիզմի գրոհից, պաշտպանելով մանր տնտեսությունը և մանր սեփականությունը — կը նշանակեր անօգուտ տեղը կասեցնել հասարակական զարգացումը, խաբել գյուղացուն մի պատրանքով, թե կապիտալիզմի օրով էլ է բարօրություն հնարավոր նրա համար, բաժանել աշխատող դասակարգերը, ստեղծելով փոքրամասնության համար արտոնյալ վիճակ մեծամասնության հաշվին։ Ահա ինչու սոցիալ-դեմոկրատները միշտ պիտի պայքարեն այնպիսի անմիտ ու վնասակար հիմնարկների դեմ, ինչպես գյուղացիական բաժնեհողերի անօտարացումն է, համապարտ յերաշխավորությունը, ազատ յելքի արգելքը գյուղացիական համայնքից և ազատ ընդունելությունը նրա մեջ ամեն մի դասի անձանց! Բայց մեր գյուղացին տառապում է, ինչպես մենք տեսանք, վոչ միայն և անգամ վոչ այնչափ կապիտալի հարստահարությունից, վորքան կալվածատերերի լծից ու ճորտատիրականության մնացորդներից։ Անողոք պայքարն այդ կաշկանդումների դեմ, վորոնք անչափելի վատթարացնում են գյուղացիության վիճակը և կապում են նրա ձեռքն ու վոտքը, վոչ միայն հնարավոր է, այլ և անհրաժեշտ յերկրի վողջ հասարակական զարգացման շահերի տեսակետից, վորովհետև անհատնում չքավորությունը, խավարը, գեղջ[illegible]ությունը և խոնարհ վիճակն



ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ս. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ

ասիականության կնիքն են դնում մեր հայրենիքի բոլոր կարգերի վրա։ Յեվ սոցիալ-դեմոկրատիան իր պարտքը կատարած չէր լինի, յեթե այդ պայքարին ամեն կարգի աջակցություն չընձեռեր։ Այդպիսի աջակցությունը, կարճ խոսելով, պիտի արտահայտվի նրանում, **վոր գյուղ մուծվի դասակարգային պայքարը։**

Մենք տեսանք, վոր ժամանակակից ռուսական գյուղում համակեցություն ունեն յերկու տեսակի դասակարգային հակադրություններ. առաջին՝ գյուղական բանվորների և գյուղական ձեռնարկատերերի միջև, յերկրորդ՝ ամբողջ գյուղացիության և ամբողջ կալվածատեր դասակարգի միջև (19)։ Առաջին հակադրությունը զարգանում և աճում է, յերկրորդը՝ աստիճանաբար թուլանում։ Առաջինը — ամբողջապես դեռ ապագայի գործ է, յերկրորդը—նշանակալից չափով արդեն անցյալում է։ Յեվ չնայած դրան, ժամանակակից ռուս սոցիալ դեմոկրատների համար հայտնապես յերկրորդ հակադրությունն ունի առավել էական և առավել գործնականորեն կարևոր նշանակություն (20)։ Վոր մենք ամեն մի ներկայացող առիթից պիտի օգտվենք նրա համար, վորպեսզի դասակարգային ինքնագիտակցություն զարգացնենք գյուղատնտեսական վարձու բանվորների մեջ, վոր մենք այդ պատճառով ուշադրություն պիտի դարձնենք նրա վրա, վոր քաղաքային բանվորներ փոխադրենք գյուղը (օրինակ՝ շոգեշարժ կալսիչների վրա զբաղվող մեխանիկներ և այլն), վոր մենք ուշադրություն պիտի դարձնենք գյուղատնտեսական բանվորների վարձակալության շուկաների վրա,—դա հասկանալի յե ինքնին, դա մի աքսիոմա յե յուրաքանչյուր սոցիալ-դեմոկրատի համար։

Բայց մեր գյուղական բանվորները դեռ խիստ ամուր են կապված գյուղացիության հետ, նրանց վրա դեռ չափից դուրս են ծանրանում հանուր գյուղացիական աղետները և այս պատճառով գյուղական բանվորների շարժումը չի կարող հանուր-ազգային նշանակություն ստանալ վոչ այժմ, վոչ մերձավոր ապագայում։ Ընդհակառակը, ճորտատիրականության մնացորդների ավլելու-սրբելու հարցը, ռուսական պետության բոլոր կարգերից դասային անհավասարության և տասնյակ միլիոնավոր «հասարակ ժողովրդի» խոնարհության վոգու հալածելու հարցը,—այդ հարցն արդեն այժմ ունի հանուր ազգային նշանակություն. և մի կուսակցություն, վոր հավակնություն ունի ազատության համար մարտնչողի առաջավոր դեր խաղալ, չի կարող մի կողմը քաշվել այդ հարցից։

Գյուղացու դժբախտությունների ճանաչումը հիմա դարձել է (ավելի կամ պակաս ընդհանուր ձևով) համարյա ընդհանուր յերևույթ, այն խոսքը, վոր տրվում է 1861 թվականի ռեֆորմի «թերությունների» և պետական օգնության անհրաժեշտության մասին,—շրջանի



ճշմարտություն է դարձել։ Մեր պարտքն է մատնանշել նրա վրա, թե այդ դժբախտությունները ծագում են հայտնապես գյուղացիության դասակարգային հարստահարությունից, թե կառավարությունը հարստահարողների դասակարգերի հավատարիմ պաշտպանն է, թե օգնություն չէ, այլ փրկություն նրա հարստահարությունից, քաղաքական ազատության նվաճում պիտի ստանան այդ կառավարությունից նրանք, ովքեր անկեղծորեն ու լրջորեն հիմնական բարելավում են ցանկանում գյուղացիների վիճակի համար։ Խոսում են փրկության վճարների անչափ բարձր վիճակի մասին, այն բարերար միջոցի մասին, յեթե կառավարությունը իջեցնի այդ վճարները և փոփոխի նրանց ժամկետը։ Մենք դրան կասենք, թե այդ բոլոր փրկանքի վճարները վոչ այլ ինչ են, քան օրինական ձևերով և չինովնիկական ֆրազներով ծածկված գյուղացիների կողոպուտ կալվածատերերի ու կառավարության կողմից, վոչ այլ ինչ, քան մի տուրք ճորտատերերին նրանց ստրուկների ազատագրության համար։ Մենք կառաջադրենք այս պահանջը—անհապաղ ու լրիվ վերացնել փրկանքի վճարները և հասութատուրքերը, վերադարձնել ժողովրդին այն հարյուրավոր միլլիոնները, վոր տարիներով պոկել է ցարական կառավարությունը ստրկատերերի ախորժակը լիացնելու համար։ Խոսում են գյուղացիների սակավահողության մասին, այն մասին, վոր պետական օգնություն է անհրաժեշտ գյուղացիական հողատիրությունն ընդարձակելու համար։ Մենք դրան կասենք, թե հայտնապես **շնորհիվ** պետական օգնության—հասկանալի յե, կալվածատերերին ընձեռած օգնության,—գյուղացիները նման մասսայական դեպքերում զրկվել են իրենց համար խիստ անհրաժեշտ հողերից։ Մենք կառաջադրենք այս պահանջը—վերադարձնել գյուղացիներին այն կտրանքները, վորոնց միջոցով շարունակում է մնալ անազատ, ստրկական, բեգարային, այսինքն իրականի մեջ նույն ճորտական աշխատանքը։ Մենք կառաջադրենք այս պահանջը—հիմնել գյուղացիական կոմիտեներ՝ ուղղելու այն աղաղակող անարդարությունները, վոր ազատագրվող ստրուկների նկատմամբ արել են ցարական իշխանության կողմից հիմնված ազնվականների կոմիտեները։ Մենք կը պահանջենք դատարաններ հիմնել, վորոնք իրավունք ունենային իջեցնել հողի անչափ բարձր վճարը, վոր կալվածատերերն են գանձում շնորհիվ գյուղացիների անելանելի վիճակի, դատարաններ, վորոնց առաջ գյուղացին իրավունք ունենար վաշխառության համար հետապնդելու նրանց, ովքեր ստրկական գործարքներ են կապում, օգտվելով մյուսի ծայրահեղ կարիքից։ Մենք ամեն ժամանակ և ամեն առիթով պիտի ջանանք բացատրելու գյուղացիներին, թե մարդիկ, վորոնք խոսում են արդի պետության խնամակալության կամ օգնության մասին—կամ հիմարներ են, կամ շառլատաններ և նրանց վատ-

թար թշնամիները, թե գյուղացիությանն անհրաժեշտ է նախ և առաջ փրկություն ձեռք բերել չինովնիկների իշխանության կամայականությունից և հարստահարությունից, հարկավոր է նախ և առաջ բոլոր տեսակետներից նրանց լիակատար և անպայման իրավահավասարության ճանաչումը մյուս բոլոր դասերի հետ, հարկավոր է տեղափոխության ու գաղթի լիակատար ազատություն, ազատություն տնօրինելու հողը, ազատություն տնօրինելու բոլոր համայնական գործերը և համայնական եկամուտները։ Յուրաքանչյուր ռուսական գյուղի կյանքից վերցրած ամենից առօրյա փաստերը կարող են միշտ հազարավոր առիթներ տալ ագիտացիա մղելու հանուն մատնանշված պահանջների։ Այդ ագիտացիան ելակետ պիտի ունենա տեղական, կոնկրետ, գյուղացիների առավել հասունացած կարիքները, բայց չպիտի ընդարմանա այդ կարիքների վրա, այլ անդուլ պիտի ընդարձակի գյուղացիների տեսողության դաշտը, անդուլ պիտի զարգացնե նրանց քաղաքական գիտակցությունը, մատնանշե այն առանձին տեղը, որ պետության մեջ գրավում են կալվածատերերն ու գյուղացիները, մատնանշե, թե գյուղի համար միակ միջոցը փրկվելու նրա վրա կախված կամայականության ու կեղեքումի հարստահարությունից – դա ժողովրդական ներկայացուցիչների հրավիրումն է, չինովնիկների ինքնիշխանության տապալումը։ Անհեթեթ ու ցնդաբան պնդում է, թե իբր քաղաքական ազատության այս պահանջը անմատչելի է բանվորների գիտակցության. ոչ միայն այն բանվորները, որ ֆաբրիկանտների ու ոստիկանության դեմ մղած ուղղակի պայքարի տարիներ են ապրել, որոնք մշտապես տեսել են իրենց լավագույն շարքերի կամայական ձերբակալումն ու հալածանքը, ոչ միայն սոցիալիզմով արդեն վարակված այդ բանվորները, այլև ամեն մի աչքաբաց գյուղացի, որ նվազագույն չափով իսկ մտածում է այն բանի վրա, ինչ նա տեսնում է իր շուրջը, ի վիճակի է հասկանալ և յուրացնել, թե ինչի համար են պայքարում բանվորները, յուրացնել զեմսկի սոբորի գաղափարը, որն ազատագրում է ամբողջ երկիրն ատելի չինովնիկների ամենաիշխանությունից։ Յեվ գյուղացիության անմիջական ու առավել այրող կարիքների հողի վրա մղած ագիտացիան միայն այն ժամանակ ի վիճակի կը լինի կատարել իր խնդիրը — դասակարգային պայքար մուծել գյուղը — երբ այս կամ այն «տնտեսական» չարիքի յուրաքանչյուր մերկացումի հետ՝ նա կարող կլինի կապել որոշ քաղաքական պահանջներ։

Բայց հարց է տրվում, կարո՞ղ է արդյոք սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցությունն իր ծրագիրը մուծել պահանջներ, որպիսին վերը մատնանշածներն են։ Կարո՞ղ է արդյոք նա հանձն առնել ագիտացիա մղելու գյուղացիության մեջ։ Չի՞ առաջնորդիլ դա դեպի այն, որ մենք մեր հեղափոխական ուժերը, որ այնքան էլ



բազմաթիվ չեն, կը ցրենք և կուղղենք շեղ գծով շարժման գլխավոր և միակ վստահելի հունից։

Այդպիսի առարկությունները թյուրիմացության վրա յեն հիմնված։ Այո, մենք անպայման մեր ծրագիրը պիտի մուծենք պահանջներ, որոնք հետամուտ են ազատագրել մեր գյուղը ստրկության բոլոր մնացորդներից, պահանջներ, որոնք ընդունակ լինեյին գյուղացիության լավագույն մասի մեջ առաջ բերել յեթե ոչ ինքնուրույն քաղաքական պայքար, ապա բանվոր դասակարգի ազատագրական պայքարին գիտակից պաշտպանություն։ Մենք սխալ կանեյինք, յեթե պաշտպան կանգնեյինք այնպիսի միջոցների, որոնք ընդունակ են կասեցնել հասարակական զարգացումը, կամ արհեստականորեն պատսպարել մանր գյուղացիությանը կապիտալիզմի աճումից, խոշոր արտադրության զարգացումից, բայց ավելի ևս կորստաբեր կը լինի այն սխալը, յեթե մենք չկարողանայինք օգուտ քաղել բանվորական շարժումից տարածելու գյուղացիության մեջ այն դեմոկրատիկ պահանջները, որ չի իրագործել 1861 թվականի փետրվարի 19-ի ռեֆորմը, շնորհիվ նրա խեղաթյուրելուն կալվածատերերի և չինովնիկների կողմից։ Այդպիսի պահանջների մուծումն անհրաժեշտ է մեր կուսակցության համար, յեթե նա ուզում է գլուխ կանգնել ամբողջ ժողովրդին պայքար մղելու ինքնակալության դեմ*)։ Բայց այդպիսի մուծումը չի յենթադրում իսպառ, թե մենք կսկսենք կոչել, որ ակտիվ հեղափոխական ուժերը քաղաքից գյուղը դառնան։ Այդ մասին խոսք իսկ լինել չի կարող։ Ոչ մի տարակուսանք չի վերցնում, որ կուսակցության բոլոր մարտական տարրերը պիտի ձգտեն դեպի քաղաքները և դեպի ֆաբրիկագործարանային կենտրոնները, որ միայն արդյունաբերական պրոլետարիատն է ընդունակ անդարձ ու մասսայական պայքար մղելու ինքնակալության դեմ, որ միայն այդ պրոլետարիատն է ընդունակ իր ուսերին կրելու պայքարի այնպիսի միջոցներ, ինչպես բացահայտ ցույցերի կազմակերպումը, կամ կանոնավոր լույս տեսնող և լայն տարածվող ժողովրդական քաղաքական թերթի հրատարակումը։ Չե թե նրա համար, որպեսզի քաղաքից գյուղը յետ կանչենք համոզված սոցիալ-դեմոկրատներին, չե թե նրա համար, որպեսզի նրանց կապենք գյուղի հետ, չե թե դրա համար պիտի մենք մեր ծրագիրը մուծենք գյուղացիական պահանջ-

*) Մենք արդեն կազմել ենք սոցիալ-դեմոկրատական ծրագրի մի նախագիծ, ներմուծելով այնտեղ վերը մատնանշված պահանջները։ Մենք հույս ունենք «Աշխատանքի Ազատագրություն» խմբակի (21) աջակցությամբ այդ նախագիծը քննելուց ու վերամշակելուց հետո, մերձավոր համարներից մեկում հրապարակել մեր կուսակցության ծրագրի նախագիծը։ (Ծրագրի այդ նախագիծը տպվեց 1902 թ. գարնանը „Искра"-ի № 21։ ԾԱՆՈԹ. ԽՄԲ).

ները,— վոչ, այլ նրա համար, վորպեսզի գործունեյության դեկավարությունը տանք այն ուժերին, վորոնք **չեն կարողանում** իրանց համար գործադրություն գտնել այլ կերպ, քան գյուղում, նրա համար, վորպեսզի դեմոկրատիայի և ազատության ոգտին մղվող քաղաքական պայքարի համար ոգտագործել կարողանանք այն կապերը գյուղի հետ, վորոնք հանգամանքների բերումով ունեն սոցիալ-դեմոկրատիային նըվիրված ինտելլիգենտներից ու բանվորներից շատերը և վորոնք անհրաժեշտորեն ընդարձակվում և աճում են շարժման աճման հետ միասին։ Մենք վաղուց ենք ապրել-անցել այն ստադիան, յերբ մենք կամավորների մի փոքրիկ ջոկատ եյինք, յերբ սոցիալ-դեմոկրատական ուժերի ամբողջ պահեստը սպառվում եր յերիտասարդության խմբակներով, վորոնք գլխովին «բանվորներին եյին դիմում»։ Մեր շարժումն այժմ ունի մի ամբողջ բանակ, բանվորների բանակ, վորոնք շփվել են հանուն սոցիալիզմի ու հանուն ազատության մղվող պայքարով,— ինտելլիգենտների բանակ, վորոնք մասնակցել են ու մասնակցում են շարժմանը և այժմ արդեն ցրված են Ռուսաստանի բոլոր ծայրերում,— համակրողների բանակ, վորոնք հավատով ու հույսով են նայում բանվորական շարժմանը և պատրաստ են հազարավոր ծառայություններ մատուցել։ Յեվ մեր առաջ մի մեծ խնդիր է ծառացած.— կազմակերպել այդ բոլոր բանակները, կազմակերպել այնպես, վորպեսզի մենք ընդունակ լինեյինք վոչ միայն անցողակի բռնկումներ ստեղծել, վոչ միայն թշնամուն պատահական, տրոհված (այս պատճառով էլ անվտանգ) հարվածներ հասցնել, այլ հետապնդել թշնամուն անշեղ, համառ և տոկուն պայքարով ամբողջ գծի վրա, հալածել ինքնակալական կառավարությանն ամենուրեք, ուր նա կեղեքում է ցանում և ատելություն հնձում։ Բայց միթե կարելի յե հասնել այս նպատակին, յեթե դասակարգային պայքարի և քաղաքական գիտակցության սերմեր չցանվեն գյուղացիության բազմամիլիոն մասսայի մեջ։ Յեվ մի ասեք, թե գաղափարների նման տարածումն անհնարին է. այն վոչ միայն անհնարին է, այն արդեն կատարվում է, այն ընթանում է հազարավոր ուղիներով, վորոնք խուսափում են մեր ուշադրությունից և մեր ներգործությունից։ Այն կընթանա անչափ ծավալուն ու արագ, յեթե մենք կարողանանք լոզունգ տալ նման ներգործության համար և պարզենք ռուսական գյուղացիության ազատագրության դրոշակը խայտառակ ճորտատիրական իրավունքի բոլոր մնացորդներից։ Քաղաք յեկող գյուղի մարդն այժմ իսկ հետաքրքրությամբ և ուշադրությամբ է դիտում իր համար անհասկանալի այն պայքարը, վոր բանվորներն են մղում, և այդ մասին համբավ է տարածում բոլոր յետ ընկած անկյուններում։ Մենք կարող ենք և պիտի նվաճենք այն, վոր կողմնակի դիտողների այդ հետաքրքրությունը կը փոխվի յեթե վոչ կատարյալ ըմբռնումով, ապա գոնե աղոտ գիտակցու-



թյամբ այն բանի, թե բանվորները պայքարում են ամբողջ ժողովրդի շահերի համար, կը փոխվի ավելի ու ավելի մեծ համակրությամբ դեպի նրանց պայքարը։ Յեվ այն ժամանակ հեղափոխական բանվորական կուսակցության հաղթանակի որը վոստիկանական կառավարության վրա կը մոտենա մեզ համար անսպասելի-անգուշակելի արագությամբ»։

(«Իսկրա» (22) («Կայծ») № 3, 1901 թ. ապրիլ)։

## ՌՈՒՍԱԿԱՆ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ԱԳՐԱՐԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ (23)

. . . . . . . . . . . . . . . . .

. . . . . . . . . . . . . . . . .

Ռուսաստանում կենտրոնական փաստն ագրարային կարգերի բնագավառում մենք դասակարգային պայքարն ենք ճանաչում։ Մենք մեր ամբողջ ագրարային քաղաքականությունը (հետևաբար և ագրարային ծրագիրը) կառուցում ենք այդ փաստի անշեղ ճանաչման վրա՝ նրանից բղխող իր բոլոր հետևություններով (24)։ Մեր գլխավոր մերձավոր նպատակն է — հարթել ճանապարհը դասակարգային ազատ պայքարի համար գյուղում, պրոլետարիատի դասակարգային պայքարի համար, վոր հետամտում է իրագործելու համաշխարհային սոցիալ-դեմոկրատիայի վախճանական նպատակը, քաղաքական իշխանության նվաճումը պրոլետարիատի կողմից և սոցիալիստական հասարակության հիմքերի ստեղծումը։ Դասակարգային պայքարը հաշվելով մեզ ղեկավարող թելը բոլոր «ագրարային հարցերում»,— մենք դրանով իսկ վճռականորեն ու անդարձ մեզ զատում ենք Ռուսաստանում այնքան բազմաթիվ կողմնակիցներ ունեցող կիսակատար ու ճապաղ թեորիաներից.— «նարոդնիկական», «բարոյա-հասարակագիտական», «քննադատական», սոցիալ-բարենորոգչական և այսպես շատ շատերը (25)։

Վորպեսզի ճանապարհ հարթվի դասակարգային պայքարի ազատ զարգացման համար Ռուսաստանում ընդհանրապես և ռուսական գյուղում մասնավորապես, անհրաժեշտ է վերացնել ճորտատիրական կարգի բոլոր մնացորդները, վորոնք այժմ **ծածկում են** կապիտալիստական ներհակության սաղմերը գյուղական բնակչության մեջ, հնարավորություն չեն տալիս նրանց զարգանալու։ Յեվ մենք **վերջին** փորձն ենք անում ոգնելու գյուղացուն մի վճռական հարվածով սրբել-ավլել այդ բոլոր մնացորդները,— «վերջինը» այն պատճառով, վոր և ինքը, զարգացող ռուսական կապիտալիզմը տարերայնորեն կատարում է նույն աշխատանքը, առաջնորդում է դեպի նույն նպատակը, բայց առաջնորդում է իրան հատուկ բռնության ու հարստահարության, քայքայման ու սովամահի ուղիով։ Ճորտատիրական շահագործման

անցումը կապիտալիստականի անխուսափելի չէ և վնասակար. հեղափոխական պատրանք կլիներ փորձելու կասեցնել այն կամ «փախ տալ» նրանից: Բայց այդ անցումը խորհելի չէ նույնպես և բանական տապալման ձևով այն ճորտատիրական-վերջնակների, վորոնք, կռթնելով չէ թե «փոքր իշխանության» վրա, այլ ստրկատիրական առաջվա իշխանության ավանդների վրա, այժմ ծծում են վերջին հյութերը նահապետական գյուղացիությունից: Այդ նահապետական գյուղացիությունը, վոր ապրում է իր ձեռքի աշխատանքով բնատնտեսության սիստեմի պայմաններում, դատապարտված է չքացման, բայց բնավ «պարտադիր», «անհրաժեշտ» չէ, վոր հասարակական-տնտեսական եվոլյուցիայի օրենքով դատապարտված լինի «հարկեր պոկելու» տանջանքին և խարազանին, սովամահ սպանվելու չարչարանքին:

Եվ ահա վոչ մի պատրանք չփայփայելով այն մասին, թե հնարավոր է մանր արտադրողների փթթումը, կամ նույնիսկ տանելի գոյությունը կապիտալիստական հասարակության մեջ (վորպիսին ավելի ու ավելի յե դառնում Ռուսաստանը), մենք պահանջում ենք լիակատար ու անպայման, վոչ թե ռեֆորմիստական այլ հեղափոխական վերացումն ու վոչնչացումը ճորտատիրականության մնացորդների, մենք գյուղացիական ենք ճանաչում այն հողերը, վորը նրանցից կտրել է ազնվական կառավարությունը և վորոնք մինչև օրս շարունակում են նրանց պահել փաստական ստրկության մեջ: Մենք այս կերպ դառնում ենք—իբրև բացառություն և առանձին պատմական հանգամանքների զորությամբ—մանր սեփականության պաշտպաններ, բայց մենք այն պաշտպանում ենք միայն նրա պայքարի մեջ ընդդեմ այն բանի, ինչ վողջ է մնացել «հին ռեժիմից»*) և միայն այն հիմնարկների վերացման պայմանով, վորոնք կասեցնում են նահապետական, իր անշարժության, խեղճության և մուրացկանության մեջ քարացած Օբլոմովկայի (26) վերակազմավորումը. պաշտպանում ենք այն պայմանով, վոր սահեցվի տեղափոխության կատարյալ ազատություն, հողի ազատ շրջանառություն, դասային բաժանումների կատարյալ վոչնչացում: Ռուսաստանի պետական ու քաղաքացիական օրենքների դեմոկրատիկ վերաքննությունը մենք կամենում ենք լրացնել տրեխբանիչակ «գյուղացիական ռեֆորմի» հեղափոխական վերաքննությամբ:

Ղեկավարվելով ագրարային քաղաքականության նման սկզբունքներով՝ ռուսական սոցիալ-դեմոկրատը գյուղն ընկնելով՝ կարող կլինի գլուխ հանել տեղական հարաբերությունների բարդ ցանցից, կարող կը լինի «հարմարեցնել» նրանց նկատմամբ իր խիստ անթերի հեղափոխական պրոպագանդան ու ագիտացիան: Նրան անպատրաստ չի գտնիլ այն ժամանակ հնարավոր գյուղացիական շարժումը (վոր տեղ-տեղ կարծես

*) «Հին ռեժիմ»—այսինքն ճորտատիրական հասարակակարգի: ԾԱՆՈԹ. ԽՄԲ.



սկսվում է): Նա չի սահմանափակվիլ այն պահանջներով ի պաշտպանություն գյուղատնտեսական վարձու բանվորների, վորոնք մանրամասն նշված են մեր ծրագրի մերձավոր «բանվորական» պահանջների բաժնում և վորոնց նա, հարկավ, պիտի առաջադրի միշտ ու ամենուրեք: Նա միշտ իմիձակի կլինի նույնպես և գյուղացիության մեջ առաջ հրել այն հանուր-դեմոկրատական շարժումը, վորը (յեթե նրան վիհրել ձևակված է մեր գյուղում դուրս գալ սաղմնային կացության սահմաններից) կսկսվի իբրև պայքար գյուղական ճորտատիրականների դեմ; իսկ կվերջանա իբրև ապստամբություն ճորտատիրականության այն հզորագույն և քամնելի մնացորդի դեմ, վոր ցարական ինքնակալություն է կոչվում:

(«Զարյա» (27) («Արշալույս») № 4, 1902 թ. օգոստոս):

## ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ (28)

. . . . . . . . . . . . . . . .

. . . . . . . . . . . . . . . .

### IV. ՄԵՐ ԱԳՐԱՐԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ռ. Ս. Դ. Բ. Կ. ագրարային ծրագրի հարցը նշանակալից չափով կպարզվեր, յեթե մենք փորձեյինք տալ այդ ծրագիրը հասարակ ու պարզ խորհուրդների ձևով, խորհուրդներ, վոր դեմոկրատական հեղափոխության ժամանակաշրջանում սոցիալ-դեմոկրատիան պիտի տա պրոլետարիատին ու գյուղացիությանը:

Առաջին խորհուրդն անխուսափելիորեն կլինի այսպիսին.—ուղղել բոլոր ջանքերը գյուղացիական ապստամբության կատարյալ հաղթանակի վրա: Առանց այդպիսի հաղթանակի չի կարելի լուրջ խոսել վոչ կալվածատերերից «հողերը խլելու», վոչ իսկական դեմոկրատական պետություն ստեղծելու մասին: Իսկ այն լոզունգը, վոր գյուղացիներին դեպի ապստամբություն է կանչում, կարող է միայն մեկը լինել.—գրավում բոլոր կալվածատիրական հողերի (ամենևին վոչ տարբացում ընդհանրապես, կամ եքսպրոպրիացիա ընդհանրապես, վոր ստվերի մեջ է թողնում փրկանքի հարցը) և անպատճառ գրավում գյուղացիական կոմիտեների միջոցով մինչև Հիմնադիր ժողովը:

Վորևէ այլ խորհուրդ (ի թիվս վորի և «տարբացման» լոզունգը, վոր Մասլովը (29) է առաջադրում, և ամբողջ նրա մունիցիպալիզացիան),—դա մի կոչ է լուծելու հարցը վոչ թե ապստամբությամբ, այլ գործարք կատարելով կալվածատերերի հետ, գործարք կատարե-

լով հեղափոխական կենտրոնական իշխանության հետ, մի կոչ է հարցը լուծելու վոչ թե հեղափոխական ուղիով, այլ բյուրոկրատական ուղիով, վորովհետև ամենից դեմոկրատիկ մարդի ու զեմսկի կազմակերպությունները չեն կարող բյուրոկրատիկ չլինել հեղափոխական գյուղացիական կոմիտեների հետ համեմատած, վորոնք հենց այստեղ, հենց տեղն ու տեղը, այժմ իսկ պիտի հաղթահարեն կալվածատերերին և գրավեն այն իրավունքները, վորոնք յենթակա յեն Համաժողովրդական Հիմնադիր Ժողովի հաստատության։

Յերկրորդ խորհուրդն անխուսափելիորեն կլինի այսպիսին.— առանց նրան, վոր լրությամբ չիրագործվի քաղաքական կարգի դեմոկրատիզացիան, առանց հանրապետության և իրականի մեջ ժողովրդի ինքնակալության ապահովելուն, չարժե իսկ մտածել վոչ գյուղացիական ապստամբության նվաճումները պահպանելու մասին, վոչ այն մասին, վորպեսզի գեթ վորևե քայլ արվի առաջ։ Այս մեր խորհուրդը բանվորներին ու գյուղացիներին մենք պետք է առանձին հստակությամբ և ճշտությամբ ձևակերպենք, վորպեսզի անհնարին լինի վորևե տարակուսանք, վորևե յերկմտություն, վորևե ծուռ մեկնություն, վորևե լռելյան թույլատրում այնպիսի անմտության, թե հնարավոր է կալվածատիրական հողատիրության վոչնչացում, յերբ հետադիմական կենտրոնական իշխանություն գոյություն ունի։ Ուստի և հաջողությամբ առաջադրելով մեր քաղաքական խորհուրդները՝ մենք պիտի ասենք գյուղացուն.— վերցնելով հողը՝ դու առաջ պիտի գնաս, թե չէ այլ կերպ անխուսափելիորեն ջարդ պիտի կրես և յետ շպրտվես կալվածատերերի ու խոշոր բուրժուազիայի կողմից։ Չի կարելի վերցնել հողը և այն իրեն պահել առանց նոր քաղաքական նվաճումների, առանց նոր և էլ ավելի վճռական հարված չհասցնելով հողի ամբողջ մասնավոր սեփականության ընդհանրապես։ Քաղաքականության, ինչպես և ամբողջ հասարակական կյանքի մեջ առաջ չընթանալ—նշանակում է լինել յետ շպրտված։ Կամ բուրժուազիան, զորանալով դեմոկրատական հեղաշրջումից հետո (վորը, բնականաբար, զորացնում է բուրժուազիային), յետ կը խլե և բանվորների և գյուղացիական մասսայի ամբողջ նվաճումները,—կամ թե պրոլետարիատը և գյուղացիական մասսան իրանց համար ճանապարհ կը հարթեն դեպի առաջ։ Իսկ այս նշանակում է հանրապետություն և ժողովրդի կատարյալ ինքնակալություն։ Այս նշանակում է.—հանրապետությունն նվաճելու պարագային ազգայնացում ամբողջ հողի, իբրև հնարավոր մաքսիմում բուրժուա-դեմոկրատական հեղաշրջման, իբրև բուրժուական դեմոկրատիզմի հաղթանակից բնական և անհրաժեշտ քայլ ընդառաջ դեպի սկիզբն իսկական պայքարի սոցիալիզմի համար։

Յերրորդ և վերջին խորհուրդը.—առանձին կազմակերպվեցեք,



քաղաքի և գյուղի պրոլետարներ ու կիսապրոլետարներ։ Մի վստահանաք վորևե տնտեսատիրոջ, թող թե. մանր, թող թե «աշխատավոր»։ Մի հրապուրվեք մանր տնտեսությամբ, յերբ պահպանվում է ապրանքային արտադրությունը։ Վորքան մոտենում է գյուղացիական ապստամբության հաղթանակի գործը, այնքան մոտ է գյուղացի-տնտեսատերերի շրջադարձը պրոլետարիատի դեմ, այնքան կարևոր է ինքնուրույն պրոլետարական կազմակերպությունը, այնքան յեռանդագին, համառորեն, վճռականորեն ու բարձր պիտի մենք կոչենք դեպի լիակատար սոցիալիստական հեղաշրջում։ Մենք մինչև վերջը պաշտպանում ենք գյուղացիական շարժումը, բայց մենք պիտի հիշենք, թե դա ուրիշ դասակարգի շարժում է, վոչ **Նրա**, վորը կարող է կատարել և կը կատարե սոցիալիստական հեղաշրջումը։ Այս պատճառով մենք մի կողմն ենք թողնում այն հարցը, թե ինչ պետք է անել հողի հետ նըրա բաշխման իմաստով, իբրև տնտեսության օբյեկտի,—այդ հարցը կարող են լուծել բուրժուական հասարակության մեջ և պիտի լուծեն մեծ ու փոքր տնտեսատերերը։ Իսկ մեզ հետաքրքրում է ամբողջապես (գյուղացիական ապստամբության հաղթանակից հետո յել՝ համարյա բացառապես) մի հարց.—ինչ պիտի անե գյուղական պրոլետարիատը։ Մենք զբաղվում ենք և կզբաղվենք գլխավորապես այդ հարցով, մանր բուրժուազիայի իդեոլոգներին թողնելով շարադրել հողօգտագործման հավասարությունը և այլ նման բաներ։ Մենք կը պատասխանենք այդ հարցին, նոր, բուրժուա-դեմոկրատական Ռուսաստանի հիմնական հարցին.—գյուղական պրոլետարիատը պիտի քաղաքինի հետ միասին ինքնուրույն կազմակերպվի պայքար մղելու լիակատար սոցիալիստական հեղաշրջման համար։

Հետևաբար, մեր ագրարային ծրագիրը պիտի բաղկացած լինի յերեք հիմնական մասից. առաջին՝ մի ձևակերպում ամենավճռական կոչի՝ հեղափոխական գյուղացիական գրոհ տալու կալվածատիրական հողատիրության վրա. յերկրորդ՝ ստույգ մատնանշում հետագա քայլի, վորը կարող է և պիտի շարժում անե ամրացնելու գյուղացիական նվաճումները և անցնելու դեմոկրատիայի հաղթանակից դեպի պրոլետարական անմիջական պայքարը սոցիալիզմի համար. յերրորդ՝ մատնանշում կուսակցության դասակարգային պրոլետարական խնդիրների, վորոնք այնքան ուժգնորեն են ծառանում մեր առաջ և այնքան համառորեն պահանջում իրանց պարզ դնումը, վորքան մոտենում է գյուղացիական ապստամբության հաղթանակը։

Մասլովի ծրագիրը չի լուծում այս հիմնական խնդիրներից և վորևե մեկը, խնդիրներ, վորոնք այժմ պիտի լուծումն ստանան Ռ.Ս.Դ.Բ. կուսակցության կողմից. այդ ծրագիրը չի տալիս այնպիսի լոզունգ, վորն այժմ իսկ, անհապաղ, ամենից հակադեմոկրատական պետության

ժամանակաշրջանում ուղղում ե գյուղացիական շարժումը դեպի հաղթանակ,— այդ ծրագիրը հստակ սահմանավորումն չի տալիս այն քաղաքական վերակազմությունների, վորոնք անհրաժեշտ են ագրարային վերակազմություններն ավարտելու և ամրացնելու համար,—նա չի մատնանշում այն միջոցների վրա, վորոնք անհրաժեշտ են հողային ռեֆորմի բնագավառում, պայման ունենալով ամենից լիակատար ու հետևողական դեմոկրատիզմը, նա չի տալիս մեր կուսակցության պրոլետարական դիրքի բնորոշումը հանդեպ բոլոր բուրժուա-դեմոկրատական վերակազմությունների: Այդ ծրագիրը չի վորոշում վոչ «առաջին քայլի» պայմանները, վոչ «յերկրորդ քայլի» խնդիրները, այլ բոլորը մի կույտի մեջ ե խառնում, սկսելով նրանից, վոր ուդելի (արքայական տան) հողերը հանձնում ե գոյություն չունեցող «դեմոկրատիկ պետության» ձեռքը և շարունակում կալվածատիրական հողերը հանձնել դեմոկրատիկ մունիցիպալիտետների ձեռքն այն պատճառով, վոր յերկյուղ ե կրում կենտրոնական իշխանության անդեմոկրատիկ բընույթից: Տվյալ մոմենտում վոչ-հեղափոխական իր գործնական նշանակությամբ, կառուցված մի յենթադրության վրա, վոր պատկերացնում ե միանգամայն արհեստական և միանգամայն անհավանական գործարք կիսահետադիմական կենտրոնական իշխանության հետ, այդ ծրագիրը չի կարող ղեկավարություն տալ բանվորական կուսակցությանն այն ուղիներից և վոչ մեկի ժամանակ, վորոնք հնարավոր ու խորհելի յեն Ռուսաստանի դեմոկրատիկ հեղաշրջման զարգացման համար:

Ամփոփում ենք. դեմոկրատիկ հեղաշրջման պայմանում միակ ուղիղ ծրագիրը կլինի այսպիսին—կալվածատիրական հողերի գրավումը և գյուղացիական կոմիտեների (30) հիմնարկումը մենք պիտի անհապաղ պահանջենք և չպետք ե այդ պահանջը բարձրացնենք վորևե սահմանափակիչ վերապահումներով: Այդպիսի մի պահանջ հեղափոխական և ձեռնտու յե թե պրոլետարիատի և թե գյուղացիության տեսակետից ամեն-մի, նույնիսկ ամենավատթար պայմանում: Այդպիսի պահանջն անխուսափելիորեն առաջնորդում ե դեպի վոստիկանական պետության կործանումը և դեմոկրատիզմի ուժեղացումը:

Բայց սահմանափակվել գրավումով չի կարելի: Դեմոկրատիկ հեղափոխության և գյուղացիական ապստամբության ժամանակաշրջանում մենք վոչ մի դեպքում չենք կարող մերժել հողի անպայման ազգայնացումը: Անհրաժեշտ ե միայն այդ պահանջը պայմանավորել նրանով, վոր միանգամայն ստույգ ցուցմունքներ լինեն հայտնի քաղաքական կարգերի վրա, վորոնց բացակայությամբ ազգայնացումը կարող ե վնասել պրոլետարիատին ու գյուղացիությանը:

Այդպիսի մի ծրագիր լրիվ ու ամբողջական կը լինի: Նա կառ



անպայման մաքսիմումն այն բանի, ինչ ընդհանրապես խորհելի յե ամեն մի բուրժուա-դեմոկրատական հեղաշրջման ժամանակ: Նա չի կաշկանդի սոցիալ-դեմոկրատիայի ձեռքերը, տարբեր քաղաքական պարագաներում թույլատրելով և՛ բաժանք, և՛ ազգայնացում: Նա վոչ մի դեպքում խորթություն չի գցի գյուղացիության և պրոլետարիատի միջև, իբրև դեմոկրատիզմի համար պայքարողների*): Նա վոստիկանական-ինքնակալական քաղաքական կարգերում հրապարակ կը հանի այժմ և իսկույն անպայման հեղափոխական և այդ կարգերը հեղափոխող լոզունգներ, առաջադրելով նույնպես և հետագա պահանջները, յեթե դեմոկրատիկ հեղափոխության լիակատար հաղթանակը լինի, այսինքն յեթե իրերի այնպիսի կացություն լինի, յերբ դեմոկրատիկ հեղաշրջման ավարտումը կը բանա նոր հեռանկարներ և նոր խնդիրներ:

Ծրագրում անպայման անհրաժեշտ ե ստույգ ցուցմունք տալ մեր այն առանձին պրոլետարական դիրքի մասին, վոր պիտի ունենանք ամբողջ դեմոկրատիկ ագրարային հեղաշրջման մեջ: Զպետք ե քաշվել նրանից, թե նման ցուցմունքի տեղը տաքտիկական բանաձևի մեջն ե, կամ նրանից, թե դա ծրագրի ընդհանուր մասի կրկնությունն ե:

Մեր դիրքի պարզության և մասսայի առաջ այն պարզաբանելու համար կարելի յե զոհել թեմաների ներդաշնակ սխեմաների բաժանումը ծրագրային ու տաքտիկական մասերի:

Ագրարային ծրագրի համապատասխան նախագիծը, մշակված «ագրարային հանձնաժողովի» մեծամասնության կողմից («ագրարային հանձնաժողովը» նշանակված եր ՌՍԴԲԿ Միացյալ Կենտրոնական Կոմիտեյի կողմից կազմելու նոր ագրարային ծրագրի նախագիծը) մենք ել առաջարկում ենք:

## V. ԱԳՐԱՐԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾ

Ճորտատիրական կարգի մնացորդների վերացման նպատակով, վորոնք ծանր լծով ընկած են անմիջապես գյուղացիների վրա, և գյուղում դասակարգային պայքարի ազատ զարգացման շահերի համար՝ կուսակցությունը պահանջում ե.

*) Վորպեսզի վերացվի ամեն մի միտք այն մասին, թե անկախ գյուղացիության կամքից, անկախ գյուղացիության ներսում տեղի ունեցող ինքնուրույն շարժումից, բանվորական կուսակցությունը կամենում ե գյուղացիության շլինքին փաթաթել բարենորոգումների վորևե բյուրոկրատիկ նախագիծ՝ ծրագրի նախագծին կցված ե Ա․ վարիանտը, վորի մեջ ազգայնացման ուղղակի պահանջի փոխարեն սկզբից խոսվում ե այն մասին, թե կուսակցությունը պաշտպանում ե հեղափոխական գյուղացիության ձգտումները վերացնելու հողի մասնավոր սեփականությունը:

1) Գրավումն բոլոր յեկեղեցապատկան, վանքապատկան, ուդելի, պետական, կաբինետի և կալվածատիրական հողերի.

2) Գյուղացիական կոմիտեների հիմնարկումն, վերապահելով նրանց կալվածատիրական իշխանության և կալվածատիրական արտոնությունների բոլոր հետքերի անհապաղ վոչնչացումը և գրաված հողերի փաստական տնօրինումը մինչև այն, վոր Համաժողովրդական Հիմնադիր ժողովը նոր հողաշինարարություն կը հաստատե.

3) Վերացումն բոլոր հարկերի ու պարհակների, վոր ներկայումս գյուղացիության վրա յեն ընկնում իբրև հարկատու դասի.

4) Վերացումն բոլոր օրենքների, վորոնք կաշկանդում են գյուղացուն հողի տնօրինության գործում.

5) Ընտրովի ժողովրդական դատարաններին իրավունքի վերապահում իջեցնելու անչափ բարձր կապալավարձերը և հռչակելու չգոյն գործարքները, վորոնք ստրկական բնույթ ունեն:

Իսկ յեթե Ռուսաստանում արդի հեղափոխության վճռական հաղթանակը լրությամբ ապահովե ժողովրդի ինքնակալությունը, այսինքն ստեղծե հանրապետություն և լիովին դեմոկրատիկ պետական կարգ, ապա կուսակցությունը պիտի*) ձգտի վերացնելու հողի մասնավոր սեփականությունը և հանձնելու բոլոր հողերն ամբողջ ժողովրդի ընդհանուր սեփականության:

Սրա հետ միասին Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական կուսակցությունը բոլոր դեպքերում և ագրարային դեմոկրատիկ վերակազմությունների բոլոր վիճակներում իրան նպատակ է դնում անշեղորեն ձգտել նրան, վոր գյուղական պրոլետարիատն ինքնուրույն դասակարգային կազմակերպություն ունենա, բացատրել նրան նրա շահերի անհաշտելի հակադրությունը գյուղական բուրժուազիայի շահերին, նախազգուշացնել նրան չհրապուրվելու մանր տնտեսության սիստեմով, վորը ապրանքային արտադրության գոյության որով ի վիճակի չէ վոչնչացնելու մասսաների աղքատությունը և, վերջապես, մատնանշել կատարյալ սոցիալիստական հեղաշրջման անհրաժեշտության վրա, իբրև միակ միջոցի, վոր կոչված է վոչնչացնելու ամեն մի աղքատություն և ամեն մի շահագործում:

Գրված է 1906 թ. փետրվարին:

Գրքույկով տպագրված ՍՊԲ. 1906 թ.:

*) Ա. Վարիանտ...ապա կուսակցությունը պիտի պաշտպանե հեղափոխական գյուղացիության ձգտումը վերացնելու հողի մասնավոր սեփականությունը և հետամուտ այն, վոր բոլոր հողերը պետության սեփականության հանձնվին:



## ՅԵԶՐԱՓԱԿԻՉ ԽՈՍՔ ՌՍԴԲԿ IV «ՄԻԱՑՈՒՑԻՉ» ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ(31) ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Յես առաջադրում եմ յերկու հիմնական թեզիս. 1) գյուղացիները յերբեք մունիցիպալիզացիա չեն ցանկանա, 2) առանց դեմոկրատիկ հանրապետության, առանց ժողովրդի ինքնակալությունը լրությամբ ապահովելու, առանց չինովնիկների ընտրականության՝ մունիցիպալիզացիան վնասակար է: Զարգացնելով այդ թեզիսները՝ յես նախ կանգ կառնեմ ազգայնացման դեմ արված առավել լուրջ առարկությունների վրա. անտարակույս նման առավել լուրջ առարկություն է հանդիսանում ընկ. Պլեխանովի արած առարկությունը: Ընկ. Պլեխանովը բառացիորեն ասում էր—յես գրի յեմ առել նրա խոսքերը. «մենք վոչ մի դեպքում չենք կարող ազգայնացման կողմնակից լինել»: Դա սխալ է: Յես հանձն եմ առնում պնդելու, վոր յեթե մեզ մոտ իսկապես իրագործվի գյուղացիական հեղափոխությունը և յեթե նրան ուղեկցող քաղաքական հեղաշրջումը հասնի մինչև իսկապես դեմոկրատիկ հանրապետության ստեղծումը, ապա ընկ. Պլեխանովը հնարավոր կը համարի կողմնակից լինել ազգայնացման. և իսկապես յեթե մեզ մոտ Ռուսաստանում գալիք հեղաշրջման մեջ իրագործվեր դեմոկրատիկ հանրապետությունը, ապա ամբողջ, վոչ միայն ռուսական, այլև միջազգային շարժման կացությունը կը հրեր դեպի ազգայնացում: Իսկ յեթե չիրագործվի այս պայմանը, ապա և այն ժամանակ մունիցիպալիզացիան մի ֆիկցիա կըլինի. այն ժամանակ նա միայն գուցե կարող է իրագործվել իբրև փրկանքի նոր տեսակ: Ընկ. Ջոնը (32) գործ է ածում մի տերմին.—օտարացում, այլ վոչ գրավում, և ինչպես տեսնվում էր նրա ճառից, այդ տերմինը նա պատահաբար չէ ընտրել, իսկ այն ինչ՝ այդ տերմինը պարզապես կադետական է. այն յենթադրում է ինչ կուզեք, և նրա հետ լիովին հաշտվում է կադետների կողմից ծրագրվող փրկանքը: Առաջ անցնենք: Ո՞ւր է յերաշխիքը ռեստավրացիայի*) դեմ—հարցնում եր ընկ. Պլեխանովը: Յես չեմ կարծում, վորպեսզի այդ հարցի դնումը սերտ ու անխզելի կապակցության մեջ լիներ մեր կողմից քննվող ծրագրի հետ, բայց քանի այդ հարցը դրված է՝ նրան պետք է տալ լիովին վորոշ և աներկմիտ պատասխան: Յեթե խոսենք իսկական, լիովին իրական տնտեսական յերաշխիքի մասին ռեստավրացիայի դեմ, այսինքն այնպիսի յերաշխիքի մասին, վորն ստեղծեր ռեստավրացիան բացառող տնտեսական

*) Ռեստավրացիա—վերականգնումը հեղափոխության կողմից վերացված կարգի: ԾԱՆՈԹ. ԽՄԲ.

պայմաններ, ապա այն ժամանակ կարիք կըլինի ասել—թե միակ յերաշխիքը ռեստավրացիայի դեմ՝ դա սոցիալիստական հեղաշրջումն է Արեւմուտքում. ուրիշ վորեւե յերաշխիք այս բառի իսկական և լրիվ իմաստով չի կարող լինել։ Այս պայմանից դուրս, հարցի լուծման վորեւե այլ դեպքում (մունիցիպալիզացիա, բաժանք և այլն)—ռեստավրացիան վոչ միայն հնարավոր է, այլ ուղղակի անխուսափելի յե։ Այդ դրությունը յես կը ձեւակերպեի այսպիսի խոսքերով.—ռուսական հեղափոխությունն իր սեփական ույժերով կարող է հաղթել, բայց նա վոչ մի դեպքում իր սեփական ձեռքերով չի կարող պահպանել և ամրացնել իր նվաճումները։ Դրան նա չի հասնի, յեթե Արեւմուտքում սոցիալիստական հեղաշրջում չլինի. առանց այդ պայմանի ռեստավրացիան անխուսափելի յե և մունիցիպալիզացիայի դեպքում, և ազգայնացման դեպքում, և բաժանքի դեպքում, վորովհետև մանր տընտեսատերը բոլոր և ամեն կարգի տիրության ու սեփականության ձեվերի մեջ ռեստավրացիայի նեցուկը կըլինի։ Դեմոկրատիկ հեղափոխության լիակատար հաղթանակից հետո մանր տնտեսատերն անխուսափելիորեն յերեսը շուռ կտա պրոլետարիատից և այնքան շուտ, վորքան շուտ կըլինեն շպրտված պրոլետարիատի և մանր տնտեսատիրոջ ընդհանուր թշնամիները, ինչպես կապիտալիստները, կալվածատերերը, ֆինանսական բուրժուազիան և այլն։ Մեր դեմոկրատիկ հանրապետությունը Արեւմուտքի սոցիալիստական պրոլետարիատից զատ վորեւե այլ պահեստի ույժ չունի և այս տեսակետից չպետք է աչքաթող անել, թե դասական բուրժուական հեղափոխությունը Յեվրոպայում, հայտնապես XVIII դարի Ֆրանսիական Մեծ հեղափոխությունը տեղի ուներ վոչ այնպիսի միջազգային պայմաններում, ինչ պայմաններում տեղի յե ունենում ռուսական հեղափոխությունը։ XVIII դարավերջի Ֆրանսիան շրջապատված եր ֆեոդալական և կիսաֆեոդալական պետություններով։ XX դարի Ռուսաստանը, վորը բուրժուական հեղափոխություն է կատարում, շրջապատված է յերկրներով, վորոնց մեջ սոցիալիստական պրոլետարիատը սպառազեն կանգնած է բուրժուազիայի հետ վերջին ճակատամարտը կատարելու նախօրեյին։ Յեթե այնպիսի համեմատաբար չնչին յերեւույթներ, ինչպես հոկտեմբերի 17-ին Ռուսաստանում ազատության խոստումներն եյին թագավորի կողմից, արդեն Արեւմտյան Յեվրոպայում մեծ խթան տվին պրոլետարիատի շարժմանը,—յեթե բավ եր, վոր ավստրիական բանվորները հեռագիր ստանային Պետերբուրգից տխրահռչակ սահմանադրական մանիֆեստի մասին, վորպեսզի իսկույն և յեթ փողոց դուրս գային, վորպեսզի մի շարք ցույցեր ու զինվորական ընդհարումներ ունենային Ավստրիայի խոշորագույն արդյունաբերական քաղաքներում,—ապա կարելի յե պատկերացնել, թե ինչպես կը պահի իրան միջազգային սոցիալիստա-



կան պրոլետարիատը, յեթե Ռուսաստանից յեկած լուրերը նրան ավետեյին չե թե ազատության խոստումն, այլ նրա իսկական իրագործումը և հեղափոխական գյուղացիության կատարյալ հաղթանակը։ Իսկ յեթե ռեստավրացիայի դեմ պահանջվող յերաշխիքի հարցն այլ հողի վրա դնենք, այսինքն՝ յեթե խոսենք հարաբերական ու պայմանական յերաշխիքի մասին ռեստավրացիայի դեմ, ապա այն ժամանակ կարիք կըլինի ասել հետեւյալը.—ռեստավրացիայի դեմ հարաբերական ու պայմանական յերաշխիք է հանդիսանում միայն այն, վորպեսզի հեղափոխությունն իրագործվի հնարավորին ավելի վճռական, վորպեսզի այն մղվի անմիջապես հեղափոխական դասակարգի կողմից, նվազագույն մասնակցությունն ընձեռելով միջնորդների, համաձայնողականների և ամեն կարգի հաշտարարների, վորպեսզի այդ հեղափոխությունն իսկապես վախճանին հասցնվի, և իմ նախագիծը յերաշխիքների տեսակետից տալիս է մաքսիմումը ռեստավրացիայի դեմ։ Վորպես հեղափոխական գյուղացիական շարժման անմիջական լծակ, վորպես նրա առավել ցանկալի ձեւ՝ իմ նախագծի մեջ առաջադրված են գյուղացիական կոմիտեները։ Գյուղացիական կոմիտեները պարզ լեզվի թարգմանած նշանակում է կոչել այն բանին, վորպեսզի գյուղացիներն իրանք անհապաղ և անմիջապես դատ տեսնեն չինովնիկների ու կալվածատերերի հետ ամենավճռական ձեւով։ Գյուղացիական կոմիտեներ—դա նշանակում է կոչել այն բանին, վորպեսզի ճորտատիրական մնացորդներից ու վոստիկանական կարգերից հարստահարված ժողովուրդը դատ տեսնի այդ մնացորդների հետ, ինչպես Մարքսն եր ասում, «պլեբեյականորեն»։ Իր վախճանին հասցրած հեղափոխության այդ նախադրյալը, վոր իրագործում է չինովնիկների ընտրությունը ժողովրդի կողմից, ընկեր Պլեխանովին հիշեցրեց նրա համար, հարկավ և մեզ բոլորիս համար այնքան տհաճելի անարխիզմը, բայց վերին աստիճանի տարօրինակ է, վոր չինովնիկների ընտրությունը ժողովրդի կողմից կարող է անարխիզմի մասին հիշեցնել. վերին աստիճանի տարօրինակ է, վոր այնպիսի մոմենտին, ինչպիսին ներկա մոմենտն է, չինովնիկների ընտրության հարցը ժողովրդի կողմից կարող է կամ կարող եր Բերնշտայնից[33] բացի վորեւե այլ սոցիալ-դեմոկրատից ժպիտ խլել։ Հայտնապես այժմ մենք ապրում ենք այնպիսի ժամանակ, յերբ այդ լոզունգը—չինովնիկների ընտրությունը ժողովրդի կողմից—ստանում է ամենից անմիջական, ահագին գործնական նշանակություն։ Մեր ամբողջ գործունեյությունը, պրոպագանդան ու ագիտացիան գյուղացիական մասսաների մեջ նշանակալից չափով պիտի բաղկացած լինի հայտնապես այդ լոզունգի պրոպագանդայից, նրա ծավալումից ու պարզաբանումից։ Քարոզել գյուղացիական հեղափոխություն, շատ ու քիչ խոսքի լուրջ իմաստով խոսել ագրարա-

յին հեղափոխության մասին և դրա հետ միասին չխոսել իսկական դեմոկրատիզմի անհրաժեշտության մասին, այսինքն ի միջի այլոց և չինովնիկների ընտրության մասին ժողովրդի կողմից,—դա աղաղակող հակասություն է։ Այս առիթով կշտամբանքն անարխիզմի համար ինձ միայն հիշեցնում է գերմանական բեռնշտայնականներին, վորոնք մոտ անցյալում՝ բանակռվելով Կաուցկու (34) հետ՝ նրան կշտամբեցին անարխիզմի մեջ։

Մենք պիտի ուղղակի և վորոշակի ասենք գյուղացուն- յեթե դու ուզում ես վախճանին հասցնել ագրարային հեղափոխությունը, ապա դու պարտավոր ես նույնպես վախճանին հասցնել և քաղաքական հեղափոխությունը. յեթե իր վախճանին չհասցնվի քաղաքական հեղափոխությունը. բոլորովին չը լինի, կամ շոշափելի չափով չի ամրանա ագրարային հեղափոխությունը։ Առանց լիակատար դեմոկրատիկ հեղաշրջման, առանց նրան, վոր ժողովուրդն ընտրե չինովնիկներին, մենք կունենանք կամ ագրարային բունտեր կամ կադետական ագրարային ռեֆորմներ։ Մենք չենք ունենալ այն, ինչ արժանի լիներ Պլեխանովի գործածած մեծ խոսքին—գյուղացիական հեղափոխություն։ Առաջ անցնենք։ Մունիցիպալիզացիան լայն ասպարեզ է գըծում դասակարգային պայքարին—ասում եր Պլեխանովը։ Յես ջանացել եմ վերարտադրել նրա այդ պնդումն ըստ հնարավորության առավել բառացիորեն և յես պիտի վճռականորեն հայտարարեմ, թե այդ պնդումն ուղղակի ճիշտ չէ. այն ճիշտ չէ վոչ քաղաքական, վոչ տընտեսական իմաստով։ Մյուս հավասար պայմաններում մունիցիպալիտետը և մունիցիպալ հողատիրությունը հանդիսանում են անտարակուսելիորեն դասակարգային պայքարի ավելի նեղ ասպարեզ, քան ամբողջ ազգը, քան հողի ազգայնացումը։ Հողի ազգայնացումը դեմոկրատիկ հանրապետության ժամանակ անպայման ստեղծում է ամենից լայն ասպարեզ դասակարգային պայքարի համար—ամենից լայնը, վոր միայն հնարավոր է և միայն խորհելի յէ առհասարակ կապիտալիզմի գոյության պայմաններում։ Ազգայնացումը նշանակում է բացարձակ ռենտայի (35) վոչնչացում, հացի գների իջեցում, մրցակցության մաքսիմալ ազատության ապահովում և կապիտալի թափանցման ազատություն հողագործության մեջ։ Մունիցիպալիզացիան, ընդհակառակը, նեղացնում է համազգային դասակարգային պայքարը, չզտելով հողագործության մեջ բոլոր արտադրական հարաբերությունները բացարձակ ռենտայից, մասնակի պահանջների մանրացնելով մեր ընդհանուր պահանջը. մունիցիպալիզացիան համենայն դեպս ստվերավորում է դասակարգային պայքարը։ Այս տեսակետից Պլեխանովի դրած հարցը կարելի յէ միայն լուծել մի իմաստով։ Այս տեսակետից մունիցիպալիզացիան անպայման քննադատության չի դիմանում։ Մունիցիպալիզացիան՝ դա դասակարգային պայքարի նեղացումն ու



ստվերավորումն է։ Պլեխանովի հետևյալ առարկությունը վերաբերում է իշխանությունը գրավելու հարցին։ Պլեխանովն ինձ մոտ իմ ագրարային ծրագրի նախագծում տեսել է իշխանության գրավում և յես պետք է ասեմ, վոր իշխանության գրավման գաղափարը հեղափոխական գյուղացիության կողմից իսկապես կա իմ ագրարային ծրագրի նախագծում, բայց այդ գաղափարը վերածել իշխանության գրավման նարոդովոլցիների գաղափարին (36)—դա մեծագույն մի սխալ է։ 70-ական և 80-ական թվականներին, յերբ իշխանության գրավման գաղափարը սնվում եր նարոդովոլցիների կողմից, նրանք ներկայացնում եյին մի խումբ ինտելլիգենտներ և իրականի մեջ շատ ու քիչ լայն, իսկապես մասսայական հեղափոխական շարժում չկար։ Իշխանության գրավումը ցանկություն կամ ֆրազ եր մի բուռն ինտելլիգենտների կողմից, այլ վոչ թե արդեն զարգացող մասսայական շարժման անխուսափելի հետագա քայլը։ Այժմ, 1905 թվականի հոկտեմբերից, նոյեմբերից և դեկտեմբերից հետո, նրանից հետո, յերբ բանվորական դասակարգերի, կիսապրոլետար տարրերի և գյուղացիության լայն մասսաները աշխարհին ցույց տվին վաղուց արդեն չտեսնված հեղափոխական շարժման ձևեր,—այժմ, նրանից հետո, յերբ հեղափոխական ժողովրդի պայքարը իշխանության համար բռնկվեց և՛ Մոսկվայում, և՛ հարավում, և՛ Մերձբալթյան յերկրում,—այժմ հեղափոխական ժողովրդի կողմից քաղաքական իշխանությունը նվաճելու միտքը վերածել նարոդովոլչության—նշանակում է ուշանալ ամբողջ 25 տարով, նշանակում է Ռուսաստանի պատմությունից ջնջել մի ամբողջ ահագին ժամանակաշրջան։ Պլեխանովը ասում եր.—չպետք է վախենալ ագրարային հեղափոխությունից։ Հայտնապես այդ վախը հեղափոխական գյուղացիության կողմից իշխանությունը նվաճելու հանդեպ մի վախ է ագրարային հեղափոխությունից։ Ագրարային հեղափոխությունը դատարկ ֆրազ է, յեթե նրա հաղթանակը չի յենթադրում իշխանության նվաճում հեղափոխական ժողովրդի կողմից։ Առանց այս վերջին պայմանի դա կը լինի չէ թե ագրարային հեղափոխություն, այլ գյուղացիական բունտ կամ կադետների ագրարային ռեֆորմ։ Յես միայն կըհիշեցնեմ, այս կետի քննությունն ավարտելու համար, թե անգամ փոքրամասնության ընկերների բանաձևը, վոր տպված է „Партийные Nзвестия"-ի № 2-ում, ասում է, վոր մեր առաջ այժմ ծառանում է արդեն մի խնդիր—կորզել իշխանությունը կառավարության ձեռքերից։

«Ժողովրդական ստեղծագործություն» բառերը, վորոնք, թվում է, չկան մեր բանաձևերում, բայց վորը գործ եմ ածել յես, յեթե հավատանք ընկ. Պլեխանովի հիշողությանը, իմ ճառում, նրան թվում են իբրև հիշեցում հին ծանոթների՝ նարոդովոլցիների և եսերների

մասին։ Ընկ. Պլեխանովի այդ հիշողությունն իսկ դարձյալ 25 տարվա ուշացում է նշանակում։ Հիշեցեք այն, ինչ տեղի յե ունեցել Ռուսաստանում 1905 թ. վերջին քառորդի ընթացքում. գործադուլներ, Բանվորական Պատգամավորների Խորհուրդներ, ապստամբություններ, գյուղացիական կոմիտեներ, յերկաթուղային կոմիտեներ և այլն.—այս բոլորը հայտնապես վկայում է, թե ժողովրդական շարժումն անցնում է ապստամբության ձևին, այս բոլորը ցույց է տալիս հեղափոխական իշխանության օրգանների անտարակուսելի սաղմեր. և իմ խոսքերը ժողովրդական ստեղծագործության մասին ունեցել են միանգամայն վորոշ ու կոնկրետ բովանդակություն. Նրանք վերաբերել են հայտնապես ռուսական հեղափոխության այդ պատմական օրերին, նրանք բնորոշել են հայտնապես պայքարի այդ ձևը վոչ միայն հին իշխանության դեմ, այլ պայքարի ձևը հեղափոխական իշխանության միջոցով, մի ձև, վոր առաջին անգամ ռուս բանվորների ու գյուղացիների լայն մասսաները գործադրեցին հռչակավոր հոկտեմբերյան և դեկտեմբերյան օրերին։ Յեթե մեր հեղափոխությունը թաղված է, այն ժամանակ թաղված են և գյուղացիների ու բանվորների հեղափոխական իշխանության այդ սաղմային ձևերը. յեթե սուտ ֆրազ չեն ձեր խոսքերը գյուղացիական հեղափոխության մասին, յեթե մենք պիտի ունենանք իսկական ագրարային հեղափոխություն այս խոսքի բուն նշանակությամբ, այն ժամանակ, անտարակույս, մենք կը տեսնենք հոկտեմբերյան և դեկտեմբերյան անցքերի կրկնումն անընդգըրկելի ընդարձակ չափերով։ Չե թե ինտելիգենտների, չե թե դավադիրների մի խմբակի, այլ բանվորների ու գյուղացիների հեղափոխական իշխանություն է արդեն տեղի ունեցել Ռուսաստանում, արդեն իրագործվել մեր հեղափոխության ընթացքում։ Այն ճզմվել է ռեակցիայի հաղթանակի շնորհիվ. բայց յեթե մենք ունենք իրական հիմունք համոզված լինելու հեղափոխության վերելքի նկատմամբ, ապա մենք անխուսափելիորեն նույնպես պիտի սպասենք և զարգացման վերելքը և հաջողությունը նոր, ել ավելի վճռական, ել ավելի գյուղացիության ու պրոլետարիատի հետ կապված հեղափոխական իշխանության օրգանների։ Հետևաբար, «նարոդովոլչեստվության» ծեծված ու ծեծաղելի խրտվիլակի միջոցով Պլեխանովը միայն փախ տվավ շարժման հոկտեմբերյան-դեկտեմբերյան ձևերի վերլուծումից։

Վերջապես, քննենք նաև այն հարցը, թե վորքան է ճկուն և չորս կողքով պայտած իմ ծրագիրը։ Յես կարծում եմ, վոր և՛ այդ տեսակետից իմ ագրարային ծրագիրը հանդիսանում է առավել գոհացուցիչը բոլոր մնացածների հետ համեմատած։ Ի՞նչ անել, յեթե հեղափոխության գործերը վատ ընթանան։ Ի՞նչ անել, յեթե առանց իրագործելու իմ նախագծի մեջ գրված բոլոր «յեթե»-ներն անկարելի



պիտի լինի խոսել մեր դեմոկրատիկ հեղափոխությունն իր վախճանին հասցնելու մասին։ Այն ժամանակ, անտարակույս, պետք է հաշվի նստել գյուղացիական տնտեսության և գյուղացիական հողօգտագործման այն պայմանների հետ, վորոնք կան այժմ իսկ։ Այս տեսակետից յես վկայության կըկանչեմ այնպիսի խոշորագույն կարևորության մի յերևույթ, ինչպիսին կապալն է։ Չե՞ վոր յեթե խոսելու լինենք այն մասին, թե հեղափոխության գործը կարող է վատ գնալ, թե նա կարող է և իր վախճանին չհասնել, ապա այդ դեպքում, անտարակույս, պետք է հաշվի նստել նման յերևույթի գոյության և անվերացնելիության հետ, և յես այդ անհաջողության դեպքում, այն դեպքում, յեթե կը բացակայեն բոլոր իբր ուտոպիական «յեթե»-ները, կուսակցության խնդիրները նախատեսել եմ ավելի լրիվ, ավելի հստակ և առավել զգաստ, քան ընկ. Մասլովը։ Այս կերպ իմ ծրագիրը տալիս է գործնական լոզունգներ գյուղացիական տնտեսության և գյուղացիական հողօգտագործման և՛ արդի պայմաններում, և՛ կապիտալիզմի հետագա զարգացման լավագույն հեռանկարների ժամանակ։ Ընկ. Ջոնը փորձ արավ սրախոսելու, թե իմ ծրագրի մեջ չափազանց շատ ծրագրեր կան, թե յես ունեմ և՛ գրավում և՛ կապալ, վորոնք ժխտում են իրար. սրախոսությունն այստեղ չեղավ, վորովհետև կալվածատիրական հողերի գրավումը չի ժխտում կապալը, վորը տեղի ունի և գյուղացիական հողերի վրա։ Հետևաբար ընկ. Պլեխանովը մանավանդ արդարացի չեր, յերբ նա առաջադրում եր իր առանձնապես տպավորիչ պատճառաբանությունն իմ դեմ։ Դժվար չէ, դե՛հ, ծրագիր գրել այնպիսի դիպվածի համար, յեթե ամեն ինչ լավագույն կերպով պսակվի։ Այդպիսի ծրագիր ամեն վոք կըգրե, իսկ դու ահա ծրագիր գրիր այն դիպվածի համար, յերբ հենց հրապարակի վրա չկան լավագույն պայմանները։ Յեվ ի պատասխան այդ պատճառաբանության յես պնդում եմ, թե հայտնապես մեր հեղափոխության վատթարագույն հնարավոր ընթացքի կամ յելքի դեպքում իմ ծրագիրը, վոր խոսում է կալվածատիրական հողերի գրավման մասին և նախատեսում այնպիսի հարցեր, ինչպես կապալի հարցը, վոր իմ ծրագիրը հանդիսանում է առանձնապես զգաստ և առանձնապես լավ պայտված, իսկ ահա ինչ վերաբերում է ընկ. Ջոնին, նրա նախագիծը վոչինչ չըխոսելով այդ վատթարագույն պայմանների մասին—այսինքն, յերբ բացակայում են իսկապես գոյություն ստացած քաղաքական դեմոկրատիզմի պայմանները—մեզ տալիս է միայն մունիցիպալիզացիա առանց չինովնիկների ընտրության ժողովրդի կողմից, առանց մշտական զորքի վոչնչացման և այլն ու ներկայացնում է նույնպիսի վտանգ և անգամ ավելի մեծ վտանգ, ինչպես և ազգայնացումը։ Ահա ինչու և յես պնդում եմ այն «յեթե»-ների կարգման վրա, վորոնց այնպես անարդարացիորեն դատապարտում եր Պլեխանովը։

Յեվ այսպես՝ գյուղացիները չեն ընդունի մունիցիպալիզացիան։ Ընկ. Բարթվելովը(37) ասում էր, թե Կովկասում գյուղացիները լիովին համաձայնվում են սոց.-հեղափոխականների հետ, բայց ընդ. ամեն հարցնում են.—իրավունք պիտի ունենա՞ն նրանք վաճառելու բաժանքի կամ սոցիալիզացիայի ժամանակ նրանց հասած հողը։ Ճիշտ է, ընկ. Բարթվելով! Ձեր դիտողությունը լիովին համապատասխանում է գյուղացիական շահերին ընդհանրապես և գյուղացիական իրանց շահերի ըմբռնմանը, բայց հայտնապես այն պատճառով, որ գյուղացիներն ամեն մի ագրարային վերակազմություն քննում են այն տեսակետից, թե իրավունք պիտի ունենա՞ն նրանք արդյոք ծախելու իրանց հասած լրացուցիչ հողը, հայտնապես այդ պատճառով էլ գյուղացիները անպայման դեմ պիտի լինեն մունիցիպալիզացիային, զեմստվոյիզացիային։ Գյուղացիները մինչև օրս էլ զեմստվոն դեռ շփոթում են զեմսկի պետի հետ և նրանք դրա համար ունեն առավել խորը հիմունքներ, քան յենթադրում են իրավունքի վեհապանծ կադետ պրոֆեսորները, որոնք ծիծաղում են գյուղացիական տգիտության վրա։ Այս պատճառով մունիցիպալիզացիայի մասին խոսելուց առաջ՝ անհրաժեշտ է, անպայման անհրաժեշտ է խոսել չինովնիկների ժողովրդական ընտրականության մասին։ Այժմ էլ, քանի այդ դեմոկրատական պահանջը չի իրագործված, տեղին է միայն խոսել գրավման մասին առհասարակ, կամ թե բաժանքի մասին։ Ահա ինչու հիմնական հարցը համագումարի համար պարզավորելու նպատակով՝ յես հետևյալ կերպով եմ վարվում. քանի որ ընկ. Բորիսովի(38) ծրագիրը մի շարք ընդհանուր գծեր ունի իմ ծրագրի հետ և կառուցված է հայտնապես բաժանքի, այլ ոչ ազգայնացման վրա, ապա յես յետ եմ վերցնում իմ ծրագիրը և համագումարին թողնում արտահայտվելու այս հարցի մասին—բաժանք, թե՞ մունիցիպալիզացիա։ Յեթե դուք մերժեք բաժանքը,—կամ գուցե ավելի ճիշտ կլինի ասել. «յերբ դուք կմերժեք բաժանքը», այն ժամանակ յես, հարկավ, ստիպված կլինեմ վերջնականապես յետ վերցնելու իմ նախագիծը, իբրև անհուսալի. իսկ յեթե դուք կընդունեք բաժանքը, ապա յես կը մտցնեմ իմ ծրագիրն ամբողջապես, իբրև ուղղումն ընկ. Բորիսովի նախագծին։ Ի պատասխան այն կշտամբանքներին, թե իբր յես գյուղացիների շլինքին եմ փաթաթում ազգայնացումը, կը հիշացնեմ նաև, թե իմ ծրագրում կա «վարիանտ Ա..»*), որի մեջ հատկապես խոսվում է այն մասին, որ վերացվի ամեն մի միտք, ինչ կարող է հիշեցնել, թե գյուղացիների շլինքին որևէ բան է փաթաթվում հակառակ նրանց կամքին։ Հետևաբար իմ նախագիծը Բորիսովի նախագծով փոխարինելը նախնա-

*) Վարիանտ Ա—տես էջ 29, Ծանոթ. Լենինի.

ԾԱՆՈԹ. ԽՄԲ.



կան քվեարկության մեջ հավասարապես ոչինչ չի փոխի գործի էյությունից և միայն կը հեշտացնե ու կը պարզավորե մեզ համար համագումարի իսկական կամքի ինչ լինելը։ Իմ կարծիքով մունիցիպալիզացիան սխալ ու վնասակար է, բաժանքը սխալ է, բայց վնասակար չէ։ Համառոտակի կանգ կառնեմ այդ տարբերության վրա. «բաժանքի կողմնակիցները» ճիշտ են մեկնաբանում փաստերը, բայց նրանք չեն հիշում Մարքսի ասացվածքը հին մատերիալիզմի մասին. «մատերիալիստները բացատրում էին աշխարհը, բայց խնդիրը ոչ միայն նրա մեջ է, որպեսզի բացատրենք այն, այլ և նրա մեջ, որպեսզի փոփոխենք աշխարհը»։ Գյուղացին ասում է. «հողը աստծունն է, հողը ժողովրդական է, հողը ոչ ոքինն է»։ «Բաժանքի կողմնակիցները» մեզ բացատրում են, թե նա այդ անգիտակցաբար է ասում, թե նա մի բան է ասում, իսկ այլ բան մտածում։ Գյուղացիների իսկական ձգտումները, ասում են նրանք, կայանում են ամբողջապես ու բացառապես նրանում, որ հող հավելվի գյուղացիներին, ընդարձակվի մանր տնտեսությունը և ուրիշ ոչինչ։ Այդ բոլորը միանգամայն ճիշտ է։ Բայց մեր տարաձայնությունը «բաժանքի կողմնակիցների» հետ այստեղ էլ չի վերջանում, այլ միայն սկսվում է։ Հենց գյուղացիների այդ խոսքերով, չնայած նրանց տնտեսական վողջ սնանկության կամ անպարունակության, մենք պիտի օգտվենք, կառչոցներ նկատելով նրանց պրոպագանդայի համար։ Դու ասում ես, թե հողից պիտի օգտվեն բոլորը։ Դու կամենում ես հողը տալ ժողովրդին։ Շատ լավ, բայց ինչ է նշանակում հողը ժողովրդին տալ։ Ո՞վ է տնօրինում ժողովրդական սեփականությունը և ժողովրդական գույքը։ Չինովնիկները։ Տրեպովները (39)։ Կամենու՞մ ես դու արդյոք հողը տալ Տրեպովին ու չինովնիկներին։ Ոչ։ Ամեն-մի գյուղացի կասի, թե նա չի կամենում հողը նրանց տալ։ Կամենու՞մ ես դու արդյոք հողը տալ Պետրունկևիչներին ու Ռոդիչևներին (40), որոնք գուցե պիտի բազմեն մունիցիպալ ինքնավարություններում։ Ոչ։ Գյուղացին հավանորեն չի կամենա հողն այդ պարոններին տալ։ Հետևաբար,—կը բացատրենք մենք գյուղացիներին,—նրա համար, որպեսզի հողը ամբողջ ժողովրդին տրվի՝ գյուղացիների օգուտը նկատի առնելով, անհրաժեշտ է, որպեսզի առանց բացառության ապահովված լինի չինովնիկների ընտրականությունը ժողովրդի կողմից։ Հետևաբար, իմ կողմից առաջարկված ազգայնացման նախագիծը, որ պայմանավորված է դեմոկրատիկ հանրապետության լիակատար ապահովությամբ, տալիս է հենց վարմունքի ուղիղ գիծ մեր պրոպագանդիստներին ու ագիտատորներին. պարզ ու առարկայորեն ցույց տալով նրանց, թե գյուղացիների հողային պահանջների վերլուծումը պիտի պատվանդան ծառայե քաղաքական և, ի մասնավորի, հայտնապես հանրապետա-

կան պրոպագանդայի համար: Գյուղացի Միշինն, օրինակ, վորը Դումայի պատգամավոր է ընտրած Ստավրոպոլի գյուղացիների կողմից, ընտրողներից մի հրահանգ է բերել, վոր տպագրված է լրիվ «Русское Государство» թերթում: Այդ հրահանգի մեջ պահանջվում է և՛ զեմսկի զինովնիկների վերացում, և՛ ելեվատորների կառուցում, և՛ բոլոր հողերի հանձնումը գանձարանին: Այդ հանձնումի պահանջն անտարակուսելիորեն հետադիմական նախապաշարմունք է, վորովհետև արդի և վաղվա սահմանադրական Ռուսաստանի գանձարանը—դա վոստիկանական, ռազմական բռնակալության գանձարանն է, բայց այդ պահանջը մենք չպետք է պարզապես դեն շպրտենք, իբրև վնասակար նախապաշարում, մենք պետք է «կառչենք» նրան, վորպեսզի Միշինին և նրա նմաններին մեկնաբանենք, թե ինչպես է գործի վիճակն ըստ էության: Մենք պետք է ասենք Միշինին և նրա նմաններին թե հողի հանձնումը գանձարանին արտահայտում է, թեև շատ վատ, մի անչափ կարևոր և գյուղացիների համար օգտակար գաղափար: Հողի հանձնումը գանձարանին կարող է շատ օգտակար լինել գյուղացիներին և օգտակար կլինի նրանց բացառապես այն ժամանակ, յերբ պետությունը կը դառնա լիովին դեմոկրատիկ հանրապետություն, յերբ լրությամբ կկիրառվի չինովնիկների ընտրականությունը, կը վոչնչացնվի մշտական զորքը և այլն: Ահա այս բոլոր պատճառներով յես էլ մտածում եմ, վոր յեթե դուք մերժեք ազգայնացումը, ապա դրանով անխուսափելիորեն կհարուցեք մեր գործիչների, պրոպագանդիստների և ագիտատորների նույնպիսի սխալները, ինչպիսին մենք հարուցեցինք մեր 1903 թ. կտրանքների սխալ ծրագրով: Ինչպես այն ժամանակ էյին կտրանքները մեկնաբանում ավելի նեղ, քան այդ կետի հեղինակներն էյին ըմբռնել, նույնպես և այժմ ազգայնացման ժխտումը և այդ պահանջի փոխարինումը բաժանքով, չխոսելով արդեն խայտառ շփոթ մունիցիպալիզացիայի մասին, անխուսափելիորեն կառաջնորդի մեր գործիչների, պրոպագանդիստների և ագիտատորների այնպիսի մի շարք սխալների, վոր մենք շատ շուտով կափսոսանք, վոր ընդունել ենք «բաժանքի» կամ մունիցիպալիզատորական ծրագիրը:

Կավարտեմ մի անգամ էլ կրկնելով իմ յերկու հիմնական թեզիսները. առաջին՝ գյուղացիները յերբեք մունիցիպալիզացիա չեն ցանկանա, յերկրորդ՝ մունիցիպալիզացիան առանց դեմոկրատիկ հանրապետության, առանց չինովնիկների ընտրականության ժողովրդի կողմից—վնասակար է:

Ապրիլ 1906 թ.



# ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ԱԳՐԱՐԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ 1905—1907 Թ. Թ. ՌՈՒՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵՋ (41)

. . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .

. . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .

## ՅԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Ագրարային հարցը բուրժուական հեղափոխության հիմքն է կազմում Ռուսաստանում և պայմանավորում է այդ հեղափոխության ազգային առանձնահատկությունը:

Այդ հարցի էությունը կազմում է գյուղացիության պայքարը, վոր ձգտում է վերացնել կալվածատիրական հողատիրությունը և ճորտատիրականության մնացորդները Ռուսաստանի հողագործական կարգի մեջ, հետևաբար և յերկրի բոլոր սոցիալական ու քաղաքական հիմնարկներում:

Յեվրոպական Ռուսաստանում տասն և կես միլիոն գյուղացիական ծուխերն ունեն 75 միլիոն դեսյատին հող: Յերեսուն հազար առավելապես ազնիվ այլև մասամբ գռեհիկ ծագումի լենդլորդները (42) ունեն ամեն մեկը 500 դեսյատինից ավելի, ընդամենը 70 միլ. դեսյատին: Այսպես է պատկերի հիմնական ֆոնը: Այսպիսին են ճորտատիրական-կալվածատերերի գերակշռության հիմնական պայմանները Ռուսաստանի հողագործական կարգում, ուստի, հետևաբար ռուսական պետության մեջ ընդհանրապես և ամբողջ ռուսական կյանքում: Լատիֆունդիաների (43) տերերը ճորտատիրական են հանդիսանում այս խոսքի տնտեսական իմաստով. Նրանց հողատիրության հիմքը ստեղծվել է ճորտական իրավունքի պատմությամբ, ազնվականության կողմից գործադրված հողերի դարավոր կողոպուտի պատմությամբ: Նրանց արդի տնտեսավարության հիմքն է հանդիսանում փոխաշխատանքի սիստեմը, այսինքն բեգառի ուղղակի վերապրումը, տնտեսություն գյուղացիական ինվենտարով, մանր հողագործների անհատնումորեն տարբեր ձևի ստրկացման միջոցով — ձմեռային վարձվորություն, տարեկան կապալ, կիսարարություն, կապալ փոխաշխատանքով, ստրկացում պարտքի դիմաց, ստրկացում կտրանք հողերի համար, անտառի համար, մարգագետնի համար, ջրխումի համար և այլն և այլն անվախճան: Վերջին կիսադարում Ռուսաստանի տնտեսական զարգացումն արդեն այնպիսի քայլ է արել դեպի առաջ, վոր ճորտատիրականության պահպանումը հողագործության մեջ բացարձակապես անհնարին է դարձել, նրա վերացումն ընդունել է բռնական կրիզիսի համազգային հեղափոխության ձևեր: Բայց բուրժուա-

կան յերկրում ճորտատիրականության վերացումը հնարավոր է յերկա-
կի ուղիով:

Ճորտատիրականության վերացումը հնարավոր է այն ուղիով,
վոր ճորտատիրական-կալվածատիրական տնտեսությունները դանդա-
ղորեն վերաճելով յունկեր-բուրժուական(44)տնտեսությունների փոխվեն
գյուղացիների մասսան դառնա տնանկ ու կնեխտ,(45) մասսաները բռ-
նորեն պահվեն կյանքի մուրացիկ մակարդակի վրա, գրոսբաուերների (46)
փոքրաթիվ խմբակներ զատվեն, բուրժուական խոշոր գյուղացիների
խմբակներ, վորոնց անխուսափելիորեն կապիտալիզմն է ստեղծում
գյուղացիական միջավայրում: Սևհարյուրակային կալվածատերերը
և նրանց մինիստր Ստոլիպինը (47) հայտնապես այս ուղին են բռնել:
Նրանք ըմբռնել են, թե մինչև վոր բռնորեն չփշրվեն հողատիրության
ժանգոտած միջնադարյան ձևերը՝ չի կարելի ուղի հարթել Ռուսաստանի
զարգացման համար: Յեվ կալվածատերերի օգտի տեսակետից նրանք
վճռականորեն դիմեցին այդ փշրելու գործին: Նրանք դեն շպրտեցին
բյուրոկրատիայի ու կալվածատերերի շրջանում դեռ մոտ անցյալում
տարածված համակրանքը դեպի կիսաֆեոդալական համայնքը: Նրանք
անվխտացան բոլոր «սահմանադրական» օրենքները, վորպեսզի այն
կործանեն բռնորեն: Նրանք carte blanche *) տվին կուլակներին
կողոպտելու գյուղացիական մասսային, փշրելու հին հողատիրությունը,
ավերելու հազարավոր տնտեսություններ, նրանք միջնադարյան
գյուղը «հափշտակելու և կողոպտելու» տվին ռուբլի ունեցողներին:
Իբրև դասակարգ իրենց տիրապետությունը պահպանելու շահի տեսա-
կետից նրանք այլ կերպ չեն կարող վարվել, վորովհետև նրանք գիտակցել
են, թե անհրաժեշտ է հարմարվել կապիտալիզմի զարգացմանը, այլ վոչ թե
պայքարել նրա դեմ: Իսկ գյուղացիական մասսայի դեմ իրենց տիրա-
պետությունը պահպանելու համար նրանք «գռեհիկ հարուստներից»,
Բազուվայեներից ու Կոլուպայեներից բացի չունեն մեկը, վորի
հետ միանալ կարողանան: Նրանք ուրիշ յելք չունեն, քան կանչ ճչալ ու
այդ Կոլուպայեներին. Enrichissez vous! — հարստացեք: Մենք ձեզ
հնարավորություն կտանք մեկ ռուբլուն հարյուր ռուբլի վաստակելու,
միայն թե օգնեցեք նոր պայմաններում փրկելու մեր իշխանության
հիմքը: Նման ուղին զարգացման համար պահանջում է իր իրագործ-
ման համար գլխովին, սիստեմատիկ, անսանձ բռնություն գյուղացիա-
կան մասսայի ու պրոլետարիատի վրա: Յեվ կալվածատիրական հակա-
հեղափոխությունը շտապում է ամբողջ գծով կազմակերպել այդ
բռնությունը:

Զարգացման մյուս ուղին, տարբերելով առաջինից, պրուսակա-
նից, մենք անվանեցինք կապիտալիզմի զարգացման ամերիկյան ուղի:
Նա նույնպես պահանջում է հին հողատիրության բռնական փշրումն, —

*) Բաց թերթ, այսինքն կատարյալ հնարավորություն:

ԾԱՆՈԹ. ԽՄԲ.



Ռուսաստանում անհավատալու չափ սրված կրիզիսի անհիվանդագին,
խաղաղ յելքի հնարավորության մասին կարող են միայն յերազել ռու-
սական լիբերալիզմի բութ քաղքենիները:

Բայց այդ անհրաժեշտությունը և անխուսափելի փշրումը հնա-
րավոր է գյուղացիական մասսայի շահերի օգտին, այլ վոչ թե կալվա-
ծատիրական հրոսակի: Կապիտալիզմի զարգացման հիմք կարող է
դառնալ ֆերմերների ազատ մասսան առանց վորևէ կալվածատիրական
տնտեսության, վորովհետև այդ տնտեսությունն իր ամբողջությամբ
տնտեսապես հետադիմական է, իսկ ֆերմերության տարրերը գյուղա-
ցիության մեջ ստեղծված են յերկրի նախընթաց տնտեսական պատ-
մությամբ: Կապիտալիզմի զարգացման նման ուղու պայմաններում
նա կընթանա անչափելի լայն, ավելի ազատ, ավելի արագ, քանի
վոր ահագին աճում կունենա ներքին շուկան, ահագին աճում կունե-
նա վողջ բնակչության կենսական մակարդակի վերելքը, նրա յեռանդը,
նախաձեռնությունը և կուլտուրան: Յեվ Ռուսաստանի հսկայական
գաղութային ֆոնդը,(48) վորի օգտագործումն անհուսորեն դժվարաց-
ված է գյուղացիական մասսայի ճորտատիրական հարստահարությամբ
բուն Ռուսաստանում, այլև չինովնիկների ճորտատիրական վերաբեր-
մունքով դեպի հողային-քաղաքականությունը, — այդ ֆոնդը ապահո-
վում է տնտեսական պատվանդան, վորպեսզի կարելի լինի հողագոր-
ծությունն ահագին չափով ընդարձակել և արտադրությունը բարձ-
բացնելու վոչ միայն ըստ լայնության, այլև ըստ խորության:

Զարգացման նման ուղին պահանջում է վոչ միայն կալվածա-
տիրական հողատիրության վոչնչացումը: Վորովհետև ճորտատիրական
կալվածատերերի տիրապետությունը դարերի ընթացքում իր կնիքն է
դրել յերկրի ամբողջ հողատիրության վրա — և գյուղացիական բաժնե-
հողերի վրա և գաղթականների հողատիրության վրա համեմատաբար
ազատ ծայրերկրներում. ինքնակալության ամբողջ գաղթային քաղա-
քականությունը վողջ եյությամբ թաթախված է քարացած չինովնի-
կության ասիական միջամտությամբ, վորը խանգարում է գաղթական-
ներին ազատորեն կառուցել իրենց կյանքը, զարհուրելի խճճում է
նոր հողային հարաբերությունները, կենտրոնական Ռուսաստանի ճոր-
տատիրական բյուրոկրատիզմի թույնով վարակում է ծայրերկրային
Ռուսաստանը: *) Միջնադարյան է հանդիսանում Ռուսաստանում վոչ
միայն կալվածատիրական, այլև գյուղացիական բաժնեհողային հողա-
տիրությունը: Անհավատալի չափով նա խճճված է: Նա տրոհում է

*) Իր «Գաղթն ու կոլոնիզացիան» (ՍՊԲ, 1905 թ.) գրքում Կաուֆմանը տալիս
է գաղթային քաղաքականության պատմության ուրվագիծը: Իբրև խիկան «լիբերալ»
հեղինակն անչափ հարգանք է տածում դեպի ճորտատիրականների բյուրոկրատիան:

գյուղացիներին հազարավոր մանր բաժանքների, միջնադարյան կարգերի, դասային կատեգորիաների։ Նա իր վրա արտացոլում է և կենտրոնական իշխանության և տեղական իշխանությունների գյուղացիական հողային հարաբերությունների մեջ ունեցած կոպիտ միջամտության դարավոր պատմությունը։ Նա գյուղացիներին կարծես գետտո *) յե քշում, ամփոփում է մանր միջնադարյան ֆիսկալ, հարկատվական բնույթ ունեցող միությունների մեջ, միություններ բաժնեհողի տիրապետության տեսակետից, այսինքն համայնքները։ Յեվ Ռուսաստանի տնտեսական զարգացումը փաստորեն դուրս է կորզում գյուղացիությունը այդ միջնադարյան պայմաններից, մի կողմից ծնունդ տալով բաժնեհողերը կապալով տալու և աչքաթող անելու յերևույթին, մյուս կողմից ստեղծելով ապագա ազատ ֆերմերների (կամ յունկերական Ռուսաստանի ապագա գրոսսբաուերների) տնտեսություն ամենատարբեր հողատիրության կտորներից,—բաժնեհող սեփական, բաժնեհող կապալային, սեփական գնած հող, պետական կապալային, կալվածատիրական կապալային և այլն։

Վորպեսզի Ռուսաստանում կարելի լինի իսկապես ազատ ֆերմերական տնտեսություն կառուցել՝ անհրաժեշտ է վերացնել սահմանները բոլոր կալվածատիրական և բաժնեհողերի միջև։ Անհրաժեշտ է փշրել ամբողջ միջնադարյան հողատիրությունը, հավասար կացուցել բոլոր և ամեն կարգի հողերն ազատ տնտեսատերերի առաջ ազատ հողի վրա։ Անհրաժեշտ է ծայր աստիճան հնարավոր չափով հեշտացնել հողերի փոխանակումը, տեղափոխությունը, հողակտորների ամփոփավորումը, նոր ազատ ընկերությունների ստեղծումը ժանգոտած հարկատվական համայնքի փոխարեն։ Անհրաժեշտ է «սրբել--մաքրել» (49) ամբողջ հողը վողջ միջնադարյան լաթ ու քուրջից։

Այս տնտեսական անհրաժեշտության արտահայտությունն է հանդիսանում հողի ազգայնացումը, հողի մասնավոր սեփականության վերացումը, բոլոր հողերի հանձնումը պետության սեփականության, իբրև կատարյալ խզումն գյուղում տիրող ճորտատիրական կարգ ու սարքի հետ։ Հայտնապես այս տնտեսական անհրաժեշտությունն է, վոր Ռուսաստանի գյուղացիական մասսային դարձրել է հողի ազգայնացման կողմնակից։ Մանր սեփականատեր-հողագործները մասսայորեն ազգայնացման օգտին են արտահայտվել և Գյուղացիական միության համագումարներում 1905 թ., և առաջին Դումայում 1906 թվականին, և յերկրորդ Դումայում 1907 թվականին, այսինքն հեղա-

*) ԳԵՏՏՈ—առանձին թաղեր, վոր միջնադարյան Յեվրոպական քաղաքներում հրեաներն եյին հատկացվում։

ԾԱՆՈԹ· ԽՄԲ.



փոխության ամբողջ առաջին ժամանակաշրջանի ընթացքում։ Նրանք
այդպես եյին արտահայտվում վոչ թե այն պատճառով, վոր «համայնքը»
նրանց մեջ զարգացրել է առանձին «սաղմեր», առանձին վոչ-բուրժուա-
կան «աշխատավորական սկզբունքներ»։ Ընդհակառակը, նրանք
այդպես եյին արտահայտվում այն պատճառով, վոր կյանքը նրանցից
պահանջում է ազատագրվել միջնադարյան համայնքից և միջնադար-
յան բաժնեհողային հողատիրությունից։ Նրանք այդպես եյին արտա-
հայտվում վոչ այն պատճառով, վորպես թե կամենում եյին, կամ կա-
րող եյին սոցիալիստական հողագործություն կառուցել, այլ նրա հա-
մար, վոր նրանք կամենում եյին և կամենում են, կարող եյին և
կարող են կառուցել իսկական բուրժուական, այսինքն բոլոր ճորտա-
տիրական ավանդություններից ծայր աստիճան ազատ մանր հողա-
գործություն։
Այս կերպ պատահականությունը և այս կամ այն ուսմունքի
ազդեցությունը չէ (ինչպես մտածում են կարճատես մարդիկ), վոր
ռուսական հեղափոխության մեջ մարտնչող դասակարգերի ինքնուր-
նակ վերաբերմունքը հարուցեցին դեպի հողի մասնավոր սեփականու-
թյունը։ Այդ ինքնուրինակությունը լիովին բացատրվում է Ռուսա-
տանում գոյություն ունեցող կապիտալիզմի զարգացման պայման-
ներով և կապիտալիզմի պահանջներով այդ զարգացման տվյալ մոմե-
տում։ Բոլոր սևհարյուրակային կալվածատերերը, ամբողջ հակահեղա-
փոխական բուրժուազիան (և հոկտեմբերականները և կադետները
այդ թվում) հողի մասնավոր սեփականության կողմը կանգնեցին։
Ամբողջ գյուղացիությունը և ամբողջ պրոլետարիատը—հողի մասնա-
վոր սեփականության դեմ են։ Յունկեր-բուրժուական Ռուսաստան ստեղ-
ծելու ռեֆորմատորական ուղին անհրաժեշտաբեն յենթադրում է հին
հողատիրության պատվանդանների պահպանումն և դանդաղ, սխտե-
մատիկ, տանջալից բռնություն գյուղացիության մասսայի վրա։ Գյու-
ղացիական-բուրժուական Ռուսաստան ստեղծելու հեղափոխական
ուղին անհրաժեշտաբար յենթադրում է ամբողջ հին հողատիրության
փշրումը, հողի մասնավոր սեփականության վերացումը։

Գրված է 1907 թ. վերջին։
գրքով տպագրված է 1917 թ.

# ՌՈՒՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՈՒԺՆ ՈՒ ԹՈՒԼՈՒԹՅՈՒՆԸ

. . . . . . . . . .

. . . . . . . . . .

II

Յեթե ընդունենք, վոր «նարոդնիկները կադետների ձախ հարևվաններն են», վոր նրանք «մշտապես չերևում են կադետների և սոցիալ-դեմոկրատների միջև», ապա այստեղից անխուսափելիորեն բղխում է բոլշևիկյան քաղաքականության ընդունումը.— ստիպել նարոդնիկներին սոցիալ-դեմոկրատների կողմը բռնելու ընդդեմ սևհարյուրակայինների և կադետների:

Իրենց խոստովանություններից բղխող այս անխուսափելի յեզրակացությունը մենշևիկները ջանում են թուլացնել կամ մերժել՝ վըկայության կոչելով այն, թե գյուղացիությունն «ավելի հեղափոխական և ավելի դեմոկրատիկ» լինելով լիբերալներից՝ միևնույն ժամանակ «տոգորված է հետադիմական սոցիալական ուտոպիաներով» և ձգտում է «տնտեսականի բնագավառում յետ շրջել պատմության անիվը»:

Այս դատողությունը, վոր սովորական է մեր սոցիալ-դեմոկրատական գրականության մեջ, պարունակում է մի մեծ և՛ տրամաբանական և պատմա-տնտեսական սխալ: Համեմատում են արշինները վըթերի հետ, գյուղացիական գաղափարների հետադիմությունը սոցիալիստական հեղափոխության բնագավառում լիբերալ քաղաքականության հետադիմականության հետ բուրժուական հեղափոխության մեջ:

Յեթե սոցիալիզմի խնդիրների վերաբերմամբ գյուղացիներն անտարակուսելիորեն կողմնակից են հետադիմական ուտոպիաների, ապա լիբերալ բուրժուաներն այդ խնդիրների վերաբերմամբ կողմնակից են այնպիսի հետադիմական դատ ու դատաստանի, վորպիսին եյին 1848 թ. հունիսը կամ 1871 թվականի մայիսը:

Իսկ յեթե տվյալ, այսինքն բուրժուական հեղափոխության մեջ գյուղացիությունը և նրա գաղափարախոս, նարոդնիկները լիբերալների հետ համեմատած վարում են հետադիմական քաղաքականություն, ապա մարքսիստը յերբեք չի ճանաչի նարոդնիկին ավելի ձախ, ավելի հեղափոխական, ավելի դեմոկրատիկ, քան լիբերալներին:

Պարզ է, վոր այստեղ մի ինչ վոր բան այնպես չէ:

Համեմատեցեք լիբերալների ու նարոդնիկների ագրարային քաղաքականությունը: Կա՞ն արդյոք նրա մեջ տնտեսականորեն հետադիմական գծեր տվյալ ժամանակում: Հողատիրության մոբիլիզացիայի սահմանափակման ձգտումը հետադիմական է յերկու կուսակցություն-



ների մոտ: Բայց կադետների ագրարային քաղաքականության չինովնիկական բնույթը (կալվածատիրական բյուրոկրատական հողային կոմիտեները) նրա հետադիմականությունը դարձնում է առավել վտանգավոր գործնականորեն և անհապաղ: Նշանակում է այս կետում համեմատությունն ամբողջովին լիբերալների ոգտին չի խոսում:

Հողոգտագործման «հավասարություն»... Մանր արտադրողների հավասարության գաղափարը հետադիմական է, իբրև մի փորձ սոցիալիստական հեղափոխության խնդիրների լուծումն անցյալում, այլ վոչ թե ապագայում փնտռելու: Պրոլետարիատն իր հետ բերում է չէ թե մանր տնտեսատերերի հավասարության սոցիալիզմ, այլ խոշոր հանրայնացրած արտադրության սոցիալիզմ: Բայց հավասարության նույն այդ գաղափարը բուրժուա-դեմոկրատական խնդիրների ամենից լրիվ, հետևողական և վճռական արտահայտությունն է: Այն մարքսիստներին, վոր այդ մոռացել են, կարելի յե խորհուրդ տալ դիմելու Մարքսի «Կապիտալի» առաջին հատորին և Ենգելսի «Անտի-Դյուրինգին»: Հավասարության գաղափարը առավել ամբողջականորեն է արտահայտում պայքարը ճորտատիրականության բոլոր մնացորդների դեմ, պայքարն ապրանքային արտադրության ամենից լայն և՝ ամենից անխափան զարգացման համար:

Մեզ մոտ հաճախ մոռանում են այս, յերբ խոսում են նարոդնիկական «հավասարար» ագրարային նախագծերի հետադիմականության մասին:

Հավասարությունը վոչ միայն գաղափարապես է արտահայտում ազատ կապիտալիզմի և ապրանքային արտադրության պայմանների առավել լրիվ իրագործումը: Նյութապես էլ, ճորտատիրականությունից ծագող հողագործության տնտեսական հարաբերությունների բնագավառում՝ մանր արտադրողների հավասարությունը հանդիսանում է կապիտալիստական գյուղատնտեսության ամենից ընդարձակ, լրիվ, ազատ և արագ զարգացման պայմանը:

Այդ զարգացումը վաղուց է, վոր տեղի ունի Ռուսաստանում: Հեղափոխությունը փութացրեց այն: Ամբողջ խնդիրը նրանում է, թե նա կընթանա արդյոք, այսպես ասած, պրուսական տիպի համեմատ (կալվածատիրական տնտեսության պահպանումը կնեխտի ստրկացումով հանդերձ, վորը «արդարացի գնահատանքով» վճարում է սովածի բաժնեհողի համար) կամ թե ամերիկական տիպի համեմատ (կալվածատիրական տնտեսության վոչնչացում, ամբողջ հողի անցումը գյուղացիներին):

Սա մեր ամբողջ բուրժուա-դեմոկրատական հեղափոխության հիմնական հարցն է, նրա պարտության և նրա հաղթության հարցը:

Սոցիալ-դեմոկրատները պահանջում են առանց փրկանքի ամբողջ

հողի անցումը գյուղացիներին, այսինքն վճռականորեն պայքարում են կապիտալիզմի զարգացման յերկրորդ, ժողովրդին ձեռնտու տիպի համար։ Յերբ գյուղացիները պայքար են մղում ճորտատիրական կալվածատերերի դեմ՝ ամենից ուժեղ գաղափարական մղումն այդ հողի շուրջը տարվող պայքարում հավասարության գաղափարն է հանդիսանում,—և ճորտատիրականության բոլոր և ամեն կարգի մնացորդների լիակատար վերացումն է հանդիսանում հավասարության ստեղծումը մանր արտադրողների միջև։ Այս պատճառով հավասարության գաղափարն ամենից հեղափոխական գաղափարն է հանդիսանում գյուղացիական շարժման համար, վոչ միայն այն իմաստով, վոր մղում է դեպի քաղաքական պայքարը՝ այլև այն իմաստով, վոր մղում է տալիս գյուղատնտեսությունը տնտեսականորեն մաքրելու ճորտատիրական մնացորդներից։

Վորչափով նարոդնիկները յերազում են, թե հավասարությունը կարող է պահվել ապրանքային արտադրության հիման վրա, թե այդ հավասարությունը կարող է զարգացման տարրը լինել դեպի սոցիալիզմը,—այդ չափով նրանց մտահայեցողությունները սխալ են, նրանց սոցիալիզմը՝ հետադիմական։ Այս պետք է իմանա ու հիշի յուրաքանչյուր մարքսիստ։ Բայց մարքսիստը կդավաճաներ իր այն գործին, վոր պատմականորեն քննում է բուրժուա-դեմոկրատական հեղափոխության առանձին խնդիրները, յեթե նա մոռանար, թե հավասարության այդ իսկ գաղափարը և հավասարության ամեն տեսակի պլանները հանդիսանում են ամենալրիվ արտահայտությունը վոչ թե սոցիալիստական, այլ բուրժուական հեղափոխության խնդիրների, պայքարի խնդիրները վոչ թե կապիտալիզմի դեմ, այլ կալվածատիրական ու բյուրոկրատական կարգի դեմ։

Կամ էվոլյուցիա պրուսական տիպի.—ճորտատիրական կալվածատերը յունկեր է դառնում։ Պետության մեջ տասնամյակով ամրացած է կալվածատիրական իշխանությունը։ Միապետություն։ «Պառլամենտական ձևերով զարդարված ռազմական բռնակալություն» դեմոկրատիայի փոխարեն։ Առավելագույն անհավասարություն գյուղական և մնացած բնակչության մեջ։ Կամ էվոլյուցիա ամերիկյան տիպի։ Կալվածատիրական տնտեսության վոչնչացում։ Գյուղացին ազատ ֆերմեր է դառնում։ Ժողովրդապետություն։ Բուրժուա-դեմոկրատական կարգ։ Առավելագույն հավասարություն գյուղական բնակչության մեջ, իբրև ելակետ և պայման ազատ կապիտալիզմի։

Այսպիսին է իրականի մեջ պատմական յերկընտրանքը, գունավորվող կադետների կեղծավորությամբ (վոր յերկիրը տանում են առաջին ուղիով) և նարոդնիկների սոցիալ-հետադիմական ուտոպիզմով (վոր տանում են յերկրորդ ուղիով)։



Պարզ է, վոր պրոլետարիատը բոլոր ուժերը պիտի ուղղի պաշտպանելու յերկրորդ ուղին։ Միայն այդ դեպքում աշխատող դասակարգերն ամենից շուտ կմաշեն վերջին բուրժուական պատրանքները,—վորովհետև հավասարության սոցիալիզմը մանր տնտեսատիրոջ վերջին բուրժուական պատրանքն է։ Միայն այդ դեպքում ժողովրդական մասսաները, սովորելով չե թե գրքերից, այլ փորձից, իրականի մեջ ամենակարճ ժամանակում կփորձեն բոլոր և ամեն կարգի հավասարար բանագրոսիկ նախագծերի անզորությունը, անզորությունը կապիտալի իշխանության դեմ։ Միայն այդ դեպքում պրոլետարիատն ամենից շուտ կթոթափե իրանից «աշխատավորական», այսինքն քաղքենիական ավանդությունները, կազատվի այժմ անխուսափելիորեն նրա վրա բարդվող բուրժուա-դեմոկրատական խնդիրներից և ամբողջապես անձնատուր կլինի իր սեփական, իսկապես դասակարգային, այսինքն սոցիալիստական խնդիրներին։

Բուրժուա-դեմոկրատական և սոցիալիստական խնդիրների միջև գոյություն ունեցող փոխհարաբերության չհասկանալը, միայն դա յե ստիպում սոցիալ-դեմոկրատներից վոմանց վախ տածել բուրժուական հեղափոխությունն իր վախճանին հասցնելու քաղաքականությունից։

Միայն բուրժուական հեղափոխության խնդիրների և էության չհասկանալն է ծնում հետևյալ կարգի դատողություններ. «Նա (մեր հեղափոխությունը) վերջին հաշվով ծնունդ է առել վոչ թե գյուղացիների շահերից, այլ (??) զարգացող բուրժուական հասարակության շահերից», կամ թե «այդ հեղափոխությունը բուրժուական է յեվ այս պատճառով (!!??) նա չի կարող ընթանալ գյուղացիական դրոշակի ու ղեկավարության տակ» («Нар. Дума», № 21, ապրիլի 4)։ Դուրս է գալիս, վոր Ռուսաստանում գյուղացիական տնտեսությունը խարսխված է ինչ վոր այլ, վոչ-բուրժուական հողի վրա։ Գյուղացիական մասսաների շահերը—դա յել հենց «բուրժուական հասարակության» ամենալրիվ, արագ ու լայն «զարգացման» շահերն են, զարգացման «ամերիկյան տիպի», այլ վոչ «պրուսական»։ Հայտնապես այս պատճառով բուրժուական հեղափոխությունը կարող է ընթանալ «գյուղացիական ղեկավարության» տակ (ավելի ճիշտ՝ պրոլետարական ղեկավարության տակ, յեթե գյուղացիները, յերերվելով կադետների և սոցիալ-դեմոկրատների միջև, ընդհանրապես և ամբողջապես սոց-դեմ. յետևից գնան)։ Բուրժուական հեղափոխությունը բուրժուազիայի ղեկավարության տակ կարող է միայն անավարտ հեղափոխություն լինել (այսինքն վոչ թե հեղափոխություն, այլ խիստ ասած՝ ռեֆորմ)։ Նա կարող է իսկական հեղափոխություն լինել միայն պրոլետարիատի ու գյուղացիության ղեկավարության տակ։

«Նաշե Եխո» («Մեր Արձագանքը») № № 10 և 12.
1907 թ. ապրիլի 5 և 7.

## «ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՌԵՖՈՐՄԸ» ՅԵՎ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ—ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Այն հոբելյանը, վորից այնքան յերկյուղ եր կրում պարոնայք Ռոմանովների միապետությունը և վորի առթիվ այնքան բարեհոգաբեն զմայլվում եյին ռուսական լիբերալները, տոնված է։ Ցարական կառավարությունն այն տոնեց նրանով, վոր մեծ թափով «ժողովրդի մեջ» տարածում եր «Ազգային Ակումբի» սևհարյուրակային հոբելյանական բրոշյուրները, մեծ թափով ձերբակալում եր բոլոր «կասկածելիներին», արգելում այն ժողովները, ուր ճառեր կարելի յեր սպասել, վոր քիչ թե շատ կարող եր դեմոկրատականի նմանվել, տուգանում և խեղդում եր լրագիրները, հալածում «հեղափոխական» կինոները։

Լիբերալները հոբելյանը տոնեցին նրանով, վոր կրկին ու կրկին արցունք ցողեցին «յերկրորդ փետրվարի 19-ի» անհրաժեշտության մասին («Вестник Европы»), իրանց հավատարիմ հպատակության զգացումները հայտնեցին (ցարի պատկերը «Речь» թերթի առաջին տեղում), խոսեցին իրանց քաղաքացիական վհատության մասին, այն մասին, վոր հաստատ չէ հայրենի «սահմանադրությունը», վոր «կործանաբեր տրամաբանություն ունեն» Ստոլիպինի ագրարային քաղաքականության «մշտնջենական հողային սկզբունքները» և այլն։

Ստոլիպինի անունով արձակած իր հրովարտակի մեջ Նիկոլա II հայտարարեց, թե հենց 1861 թվականի փետրվարի 19-ի «մեծ ռեֆորմի» ավարտումն է հանդիսանում ստոլիպինյան ագրարային քաղաքականությունը, այսինքն գյուղացիական հողի հափշտակության ու կողոպուտի տալը մի բուռն ցեցերի, կուլակների, ունևոր գյուղացիների և գյուղի հանձնելը ճորտատիրական-կալվածատերերի գլխավորության։

Յեվ պետք է խոստովանել, վոր Ռուսաստանի առաջին կալվածատեր Նիկոլայ Արյունոտը ավելի մոտ է պատմական ճշմարտության, քան մեր բարեհոգի լիբերալները։ Առաջին կալվածատերը և գլխավոր ճորտատիրականը հասկացավ—ճիշտը՝ յուրացրել է միավորված ազնվականության խորհրդի խրատներից—դասակարգային պայքարի այն ճշմարտությունը, թե ճորտատիրականների ձեռքով կիրառված «ռեֆորմները» չեն կարող ճորտատիրական չլինել իրանց ամբողջ կերպարանքով, չեն կարող չզուգակցվել ամեն կարգի բռնության ռեժիմով։ Մեր կադետները և մեր լիբերալներն ընդհանրապես յերկյուղ են կրում մասսայի հեղափոխական շարժումից, վորը միայն ընդունակ է ջնջել հողի յերեսից ճորտատիրական կալվածատերերին և նրանց ա-



մենակալությունը ռուսական պետության մեջ։ Յեվ այդ յերկյուղը խանգարում է նրանց ընբռնելու այն ճշմարտությունը, թե քանի չեն տապալված ճորտատիրականները՝ վոչ մի ռեֆորմ—և մանավանդ ագրարային ռեֆորմները—այլ կերպ հնարավոր չեն, քան ճորտատիրական կերպարանքով, ճորտատիրական բնույթի և կիրառման յեղանակի։ Յերկյուղ կրել հեղափոխությունից, յերազել ռեֆորմի մասին և հեծկլտալ այն առիթով, թե «ռեֆորմները» իրականի մեջ կիրառվում են ճորտատիրականի ձեռքով ճորտատիրականորեն,—դա ցածության ու տկարամտության ծայրաստիճանն է։ Առավել շատ է իրավացի և առավել լավ է ռուս ժողովրդին խելք ու իմաստություն սովորեցնում Նիկոլայ II, վորն առարկայորեն ընտրության է «առաջարկում», — ճորտատիրական «ռեֆորմներ», թե ճորտատիրականներին տապալող ժողովրդական հեղափոխություն։

1861 թվականի փետրվարի 19-ը ճորտատիրական ռեֆորմ եր, վորը մեր լիբերալները կարող են գունավորել և նկարագրել իբրև խաղաղ «ռեֆորմ» միայն այն պատճառով, վոր վոչնչության չափ այն ժամանակ թույլ եր հեղափոխական շարժումը Ռուսաստանում, իսկ հարստահարված մասսաների մեջ հեղափոխական դասակարգ իսպառ դեռ չկար։ 1906 թ. նոյեմբերի 9-ի (51) հրամանը և 1910 թվականի հունիսի 14-ի օրենքը նույնպիսի բուրժուական պարունակության ճորտատիրական բարենորոգումներ են, ինչպես և 1861 թվականի բարենորոգումը, բայց լիբերալները չեն կարող այն «խաղաղ» բարենորոգում ներկայացնել, չեն կարող այնպես հեշտ սկսել գունավորել այն (թեև նրանք արդեն սկսում են, օրինակ այդ անել «Русская Мысль ամսագրում), վորովհետև կարելի չէ մոռանալ 1861 թվականի անհատ հեղափոխականներին, բայց չի կարելի մոռանալ 1905 թվական հեղափոխությունը։ 1905 թվականին Ռուսիայում ծնվեց հեղափոխական դասակարգ՝ պրոլետարիատը, վորը հաջողեց և գյուղացիական մասսան բարձրացնել հեղափոխական շարժման։ Իսկ յերբ հեղափոխական դասակարգը ծնվել է վորևէ յերկրում՝ նա չի կարող ճնշվել վորևէ հալածանքով, նա կարող է կորստի մատնվել միայն ամբողջ յերկրի կորուստով, նա կարող է մահանալ միայն հաղթանակելով։

---

Հիշենք 1861 թվականի գյուղացիական ռեֆորմի հիմնական գծերը։ Տխրահռչակ «ազատագրումը» գյուղացիների անխիղճ մի կողոպուտ եր, մի շարք բռնություններ և համատարած ծաղր ու ծանակ նրանց վրա։ «Ազատագրության» պատճառով սևահողի նահանգներում գյուղացիական հողից կտրեցին 1/5 մասից ավելի։ Մի քանի նահանգներում կտրեցին, գյուղացիներից խլեցին մինչև 1/3 և անգամ մինչև 2/5 գյուղացիական հողի։ «Ազատագրության» պատճառով գյուղացիա-

կան հողերն այնպես եյին սահմանածրվում կալվածատիրականից, վոր գյուղացիները տեղափոխվում և «ավազուտի» վրա եյին նստում, իսկ կալվածատիրական հողերը սեպով գյուղացիականի մեջ եյին մըտնում, վորպեսզի ազնվատոհմ ազնվականներին հեշտ լինի սարկացնել գյուղացիներին և վաշխառվական գներով կապալով տալ նրանց հողերը: «Ազատագրության» պատճառով գյուղացիներին ստիպեցին «փրկագործել» իրենց սեփական հողերը, ըստ վորում հողի իսկական գների դիմաց նրանցից քերթեցին յերկու և յերեք անգամ ավելի: Առհասարակ 60-ական թվականների ամբողջ «ռեֆորմների դարաշըրջանը» թողեց գյուղացուն աղքատ, տրորված, խավար, յենթակա ճորտատիրական կալվածատերերին և՛ դատարանում, և՛ վարչության մեջ, և՛ դպրոցում, և՛ զեմստվոյում:

«Մեծ ռեֆորմը» ճորտատիրական ռեֆորմ եր և չեր կարող մի այլ բան լինել, վորովհետև այն ճորտատիրականներն եյին կիրառում: Յեվ ինչ ույժ եր, վոր ստիպեց նրանց ռեֆորմի դիմել: Տնտեսական զարգացման ույժը, վոր շարժում եր Ռուսաստանը կապիտալիզմի ուղին: Կալվածատեր-ճորտատիրականները չեյին կարող խանգարել Ռուսաստանի ապրանքափոխանակության աճմանը Յեվրոպայի հետ, չեյին կարող անվթար պահել տնտեսության հին փլվող ձևերը: Ղրիմի պատերազմը ցույց տվավ ճորտատիրական Ռուսաստանի փթած ու անզոր լինելը: Գյուղացիական «բունտերը», վորոնք ազատագրումից առաջ անընդհատ աճում եյին յուրաքանչյուր տասնամյակի հետ, ըստիպեցին առաջին կալվածատեր Ալեքսանդր II խոստովանելու, թե լավ է ազատագրել վերևից, քան սպասել, վոր տապալեն վարից:

«Գյուղացիական ռեֆորմը» ճորտատիրականների ձեռքով կիրառվող բուրժուական ռեֆորմ եր: Դա մի քայլ եր այն ուղիի վրա, վոր Ռուսաստանը դարձնում եր բուրժուական միապետություն: Գյուղացիական ռեֆորմի բովանդակությունը բուրժուական եր և այդ բովանդակությունն այնքան սաստկորեն եր դրսևորվում, վոր չափով քիչ եյին կտրվում գյուղացիական հողերը. վոր չափով նրանք լռությամբ եյին զատվում կալվածատիրականից, վոր չափով ցածր եր ճորտատիրականներին վճարվելիք հարկի չափը (այսինքն «փրկանքը»), վոր չափով գյուղացիները ճորտատիրականների ազդեցությունից և ճնշումից ավելի ազատ եյին տեղավորվում այս կամ այն վայրում: Վոր չափով գյուղացին դուրս եր գալիս ճորտատիրականի իշխանությունից, այն չափով նա ընկնում եր փողի իշխանության տակ, ընկնում եր ապրանքային արտադրության պայմանների մեջ, կախում եր ստանում ծնունդ առնող կապիտալից: Յեվ 1861 թվականից հետո Ռուսաստանում կապիտալիզմի զարգացումն ընթացավ այնպիսի արագությամբ, վոր մի քանի տասնամյակների ընթացքում տեղի ունե-



ցան կերպարանափոխություններ, վորոնք Յեվրոպայի հին յերկրներում ամբողջ դարեր զբաղեցրին:

Ճորտատիրականների և լիբերալների տխրահռչակ պայքարը, վոր այնքան ուռցրված ու նախշած է մեր լիբերալ և լիբերալ-ժողովրդական պատմաբանների կողմից, մի պայքար եր տիրող դասակարգերի ներսում, ըստ մեծի մասին կալվածատերերի ներսում, պայքար բացառապես զիջումների չափի ու ձևի համար: Լիբերալները նույնպես, ինչպես և ճորտատիրականները, կանգնած եյին սեփականության ու կալվածատերերի իշխանության ճանաչման հողի վրա, ցասումով դատապարտելով ամեն-մի հեղափոխական միտք այդ սեփականության վոչընչացման, այդ իշխանության լիակատար տապալման մասին:

Այդ հեղափոխական մտքերը չեյին կարող չթափառել ճորտատիրական գյուղացիների գլուխներում: Յեվ յեթե ճորտության դարերն այնքան եյին տրորել ու բթացրել գյուղացիական մասսաներին, վոր նրանք ռեֆորմի ժամանակ անընդունակ եյին մի այլ բանի, քան տըրոհված, յեզակի ապստամբությունների, ավելի շուտ «բունտերի», վորոնք չեյին լուսավորված վորևէ քաղաքական գիտակցությամբ, ապա այն ժամանակ էլ կային Ռուսաստանում հեղափոխականներ, վորոնք գյուղացիության կողմն եյին բռնած և հասկանում եյին ամբողջ տխրահռչակ «գյուղացիական ռեֆորմի» սահմանափակությունը, ամբողջ վոխառությունը, նրա ամբողջ ճորտատիրական բնույթը: Այն ժամանակվա խիստ փոքրաթիվ այդ հեղափոխականների գլուխն եր կանգնած Ն. Գ. Չերնիշևսկին (52):

1861 թվականի փետրվարի 19-ը հռչակում է նոր, ճորտատիրական ժամանակաշրջանից ծագող բուրժուական Ռուսաստանի սկիզբը: 1860-ական թվականների լիբերալները և Չերնիշևսկին յերկու պատմական ձգտումների ներկայացուցիչներ են, յերկու պատմական ույժերի, վորոնք այն որից սկսած և ընդհուպ մինչև մեր ժամանակը վորոշում են պայքարի յելքը նոր Ռուսաստանի համար: Ահա ինչու փետրվարի 19-ի հիսնամյակի որը գիտակից պրոլետարիատը պիտի իրեն ըստ հնարավորին ավելի պարզ հաշիվ տա այն մասին, թե ինչպիսին եր յերկու ձգտումների եությունը և ինչպիսին է նրանց փոխհարաբերությունը:

Լիբերալները կամենում եյին «վերից ազատագրել» Ռուսաստանը, վոչ կործանելով թագավորի միապետությունը, վոչ հողատիրությունը և վոչ կալվածատերերի իշխանությունը, միայն նրանց մղելով «զիջումներ» անելու ժամանակի վոգուն: Լիբերալներն եյին ու կան բուրժուազիայի գաղափարախոսները, վորը չի կարող հաշտվել ճորտատիրության հետ, բայց վորը յերկյուղ է կրում հեղափոխությունից, մասսաների, վորն ընդու-
յերկյուղ է կրում մասսաների շարժումից,

նակ է տապալելու միապետությունը և վոչնչացնելու կալվածատերերի իշխանությունը: Այս պատճառով լիբերալները սահմանափակվում են «պայքար մղելով ռեֆորմների համար», «պայքար մղելով իրավունքների համար», այսինքն իշխանության բաժանքի խնդրով ճորտատիրականների ու բուրժուազիայի միջև: Վոչ մի այլ «ռեֆորմ», քան այն, վոր ճորտատիրականներն են կիրառում, վոչ մի այլ «իրավունք», քան այն, վոր ճորտատիրականների կամայականությունն է թելադրում, վոչ մի այլ բան չի կարող սպասվել ույժերի նման հարաբերանքի պայմանում:

Չերնիշևսկին սոցիալիստ-ուտոպիստ էր, վորը յերազում էր սոցիալիզմին անցնելու հին, կիսա-ֆեոդալական, գյուղացիական համայնքի միջոցով, վորը չէր տեսնում և չէր կարող նախորդ դարի 60-ական թվականներին տեսնել, թե միայն կապիտալիզմի և պրոլետարիատի զարգացումն է ընդունակ ստեղծելու նյութական պայմաններ և հասարակական ույժ սոցիալիզմի իրագործման համար: Բայց և Չերնիշևսկին վոչ միայն սոցիալիստ-ուտոպիստ էր: Նա նույնպես հեղափոխական դեմոկրատ էր, նա հեղափոխական վոգով էր կարողանում ազդել իր ժամանակաշրջանի բոլոր քաղաքական դեպքերի վրա, գյուղացիական հեղափոխության գաղափարն անցկացնելով գրաքննության բոլոր արգելքների ու պատվարների միջով, մասսաների պայքարի գաղափարը բոլոր հին իշխանությունների տապալման համար: 1861 թվականի «գյուղացիական ռեֆորմը», վորն սկզբում լիբերալները գունավորում էյին, իսկ հետո անգամ փառավորում, նա անվանում էր **զազրելիություն**, վորովհետև նա պարզ էր տեսնում նրա ճորտատիրական բնույթը, պարզ էր տեսնում, վոր պ. պ. լիբերալ ազատագրողները գյուղացուն մաշկում են իբրև մատղաշ ծառի: 60-ական թվականների լիբերալներին Չերնիշևսկին անվանում էր «**շաղակրատներ, սնապարծներ յեվ հիմարներ**», վորովհետև պարզ էր տեսնում նրանց յերկյուղը հեղափոխությունից, նրանց դիմազրկությունը և ստրկամտությունն իշխանություն ունեցողների առաջ:

Փետրվարի 19-ից հետո անցած կիսադարի ընթացքում այդ յերկու պատմական ձգտումները զարգացել ու բաժանվել են ավելի պարզ, ավելի վորոշակի ու վճռական: Աճում էյին լիբերալ-միապետական բուրժուազիայի ույժերը, վորը քարոզում էր գոհանալ «կուլտուրական» աշխատանքով և խուսափում էր հեղափոխական գաղտնագործությունից: Աճում էյին դեմոկրատիայի ու սոցիալիզմի ույժերը—սկզբում ի մի ձուլված ուտոպիստական գաղափարախոսության և նարոդովոլցիների ու հեղափոխական նարոդնիկների ինտելլիգենտական պայքարի մեջ, իսկ նախորդ դարի 90-ական թվականներից նրանք սկսում են բաժանվել այն չափով, վոր չափով տերրորիստների և անհատ պրոպագանդիստ-



ների հեղափոխական պայքարն անցումն էր դեպի բուն հեղափոխական դասակարգերի պայքարը:

Հեղափոխությանը նախորդող տասնամյակը, սկսած 1895-ից մինչև 1904 թվականը, ցույց է տալիս մեզ արդեն բացահայտ յելույթները և անշեղ աճումը պրոլետարական մասսայի, աճումը գործադուլային պայքարի, աճումը սոցիալ-դեմոկրատական բանվորական ագիտացիայի, կազմակերպման, կուսակցության: Պրոլետարիատի սոցիալիստական ավանգարդի յետևից սկսում էր մասսայական պայքարի յելնել, մանավանդ 1902 թվականից սկսած, նաև հեղափոխական-դեմոկրատական գյուղացիությունը:

1905 թվականի հեղափոխության մեջ այն յերկու ձգտումները, վորոնք 1861 թվականին միայն նշանավորվեցին կյանքում, հազիվհազ գծավորվեցին գրականության մեջ,—զարգացան, աճեցին, իրանց արտահայտությունը գտան **մասսաների** շարժման մեջ **կուսակցությունների** պայքարում ամենատարբեր ասպարեզների վրա—մամուլի մեջ, միտինգներում, միություններում, գործադուլներում, ապստամբության մեջ, Պետական Դումաներում:

Լիբերալ-միապետական բուրժուազիան ստեղծեց կադետների և հոկտեմբերյանների կուսակցությունները, վորոնք սկզբում համակեցություն ունեյին մի զեմստվոյական-լիբերալ շարժման մեջ (մինչև 1905 թվականի ամառը), հետո ինքնորոշվեցին իբրև գործոն կուսակցություններ, վորոնք խիստ մրցում էյին (և մրցում են) իրար հետ, առաջ մղելով – մեկն առավելապես լիբերալ, մյուսն առավելապես իր միապետական «**դեմքը**», բայց վորոնք միշտ հաշտվում էյին ամենից էյականի մեջ. պարսավանք հեղափոխականներին, ծաղր ու ծանակ դեկտեմբերյան ապստամբության վրա, յերկրպագություն ինքնակալության «սահմանադրական» թզենու տերևի հանդեպ, իբրև դրոշակի առաջ: Յերկու կուսակցությունները կանգնած էյին ու կանգնած են «խիստ-սահմանադրական» հողի վրա, այսինքն սահմանափակվում են այն շրջանակներով, ինչ կարող էր ստեղծել թագավորի և ճորտատիրականների սև հարյուրակը, չզիջելով իր իշխանությունը, ձեռքից բաց չթողնելով իր ինքնակալությունը. չզոհաբերելով վոչ մի կոպեկ իր «դարերով նվիրագործված» ստրկատիրական յեկամուտներից, մի չնչին իսկ արտոնություն իր «բարեվաստակ» իրավունքներից:

Դեմոկրատիկ ու սոցիալիստական ձգտումները զատվեցին լիբերալ ձգտումից և նրանք սահմանագծվեցին իրարից: Պրոլետարիատը կազմակերպվեց և գյուղացիությունից անջատ իջավ հրապարակ, համախմբվելով իր Բան. Ս.-Դ. կուսակցության շուրջը: Հեղափոխության մեջ գյուղացիությունը կազմակերպված էր անհամեմատ թույլ, նրա յե-

լույթները շատ ու շատ անգամ ավելի տրոհված, ավելի թույլ եյին, նրա գիտակցությունը կանգնած եր ավելի ցածր աստիճանի վրա, և միապետական (այլ և նրանց հետ անխզելիորեն կապված սահմանադրական) պատրանքները հազվադեպ չեր, վոր կարկամում եյին նրա յեռանդը, նրան կախման մեջ եյին դնում լիբերալներից, յերբեմն էլ սևհարյուրակայիններից, ծնունդ եյին տալիս պարապ յերազականության «սրբազան հողի» մասին, փոխարեն գրոհ տալու ազնվական հողատերերի վրա, նպատակ ունենալով լրությամբ վոչնչացնելու այդ դասակարգը: Բայց այնուամենայնիվ գյուղացիությունն իբրև մասսա ընդհանրապես և ամբողջությամբ պայքարում եր հայտնապես կալվածատերերի դեմ, հեղափոխականորեն եր հրապարակ իջնում, և բոլոր Դումաներում—անգամ Յերրորդի մեջ, վորը հօգուտ ճորտատիրականների այլանդակված ներկայացուցչություն ունի—նա ստեղծեց աշխատավորական խմբակներ, վորոնք՝ չնայելով նրանց հաճախակի յերերումներին՝ իսկական դեմոկրատիան եյին ներկայացնում: 1905—1907 թվականների կադետներն ու աշխատավորականները մասսայական շարժման մեջ արտահայտեցին և քաղաքականորեն ձևավորեցին բուրժուազիայի դիրքն ու ձգտումները—մի կողմից՝ լիբերալ-միապետական, իսկ մյուս կողմից՝ հեղափոխական-դեմոկրատական:

1861 թվականը ծնունդ տվավ 1905 թվականին: Առաջին «մեծ» բուրժուական ռեֆորմի ճորտատիրական բնույթը դժվարացրեց զարգացումը, դատապարտեց գյուղացիներին հազարավոր վատթար ու դառնագին տանջանքների, բայց չփոխեց զարգացման ուղղությունը, չխափանեց 1905 թվականի բուրժուական հեղափոխությունը: 1861 թվականի ռեֆորմը յետ ձգեց հանգույցի քակումը, վորոշ դռնակ բանալով, վորոշ ույժ տալով կապիտալիզմին, բայց նա չվերացրեց անխուսափելի վախճանը, վորը 1905 թվականին կատարվեց անհամեմատ ավելի ընդարձակ ասպարեզի վրա, այն գրոհի մեջ, վոր մասսաները տվեցին թագավորի և ճորտատիրական կալվածատերերի ինքնակալության դեմ: Այն ռեֆորմը, վոր ճորտատիրականներն անցկացրին մի ժամանակաշրջանում, յերբ հարստահարված մասսաները լիակատար տհասություն եյին ապրում, այդ ռեֆորմը հեղափոխություն ծնեց այն ժամանակ, յերբ հեղափոխական տարրերը հասունացան այդ մասսաների մեջ:

Յերրորդ Դուման և ստոլիպինյան ագրարային քաղաքականությունը յերկրորդ բուրժուական ռեֆորմն ե, վոր անց են կացնում ճորտատիրականները: Յեթե 1861 թվականի փետրվարի 19-ն առաջին քայլն եր այն ուղիի վրա, վոր անխառն-ճորտատիրական ինքնակալությունը բուրժուական միապետություն եր դարձնում, ապա 1908—1910 թվականների ժամանակաշրջանը մեզ ցույց ե տալիս յերկրորդ և



ավելի լուրջ քայլն այդ նոր ուղիով: 1906 թվականի նոյեմբերի 9-ի հրամանի հրապարակումից անցել ե համարյա $4\frac{1}{2}$ տարի, 1907 թվականի հունիսի 3-ից (53) անցել ե $3\frac{1}{2}$ տարուց ավելի, և այժմ արդեն վոչ միայն կադետները, այլ զգալի չափով և հոկտեմբերյան բուրժուազիան ե համոզվում հունիսի 3-ի «սահմանադրության» և հունիսի 3-ի ագրարային քաղաքականության «անհաջողության» մեջ: «Կադետներից ամենից աջակողմյանը»—ինչպես մեր ժամանակ արդարացիորեն կոչվեց կիսահոկտեմբերյան Մակլակովը (54)—կատարյալ իրավունք ուներ փետրվարի 25-ին Պետ. Դումայում և կադետների ու հոկտեմբերյանների անունից ասելու, թե «դժգոհ են այժմ յերկրի այն կենտրոնական տարրերը, վորոնք ամենից շատ են հաստատ խաղաղություն ցանկանում, վորոնք յերկյուղ են կրում հեղափոխական ալիքի նոր բըռնկումից»: Ընդհանուր լոզունգը մեկն ե. «բոլորն են ասում,—շարունակում եր պ. Մակլակովը,—վոր յեթե մենք պիտի առաջ ընթանանք այն ուղիով, վորով մեզ առաջնորդում են, ապա մեզ կըհասցնեն յերկրորդ հեղափոխության»:

Կադետական-հոկտեմբերյան բուրժուազիայի 1911 թվականի գարունքի ընդհանուր լոզունգը հաստատում ե իրերի կացության այն գընահատանքի ճշտությունը, վոր մեր կուսակցությունն ե տվել 1908 թվականի դեկտեմբերյան կոնֆերենցիայի (55) բանաձևում: «Տնտեսական և քաղաքական կյանքի հիմնական գործոնները,—ասում ե այդ բանաձևը,—վորոնք կյանքի կոչեցին 1905 թվականի հեղափոխությունը, շարունակում են գործել, և նոր հեղափոխական կրիզիսն անխուսափելիորեն հասունանում ե այդպիսի տնտեսական ու քաղաքական կացության մեջ»:

Վերջերս սևհարյուրակային ցարական կառավարության վարձու գրչակ Մենշիկովը հայտարարեց «Новое Время»-ում, թե փետրվարի 19-ի ռեֆորմը «խղճալիորեն տապալվեց», վորովհետև «1861 թվականը չկարողացավ կանխել 905-ը»: Այժմ լիբերալ բուրժուազիայի վարձու փաստաբանները և պարլամենտական գործիչները հայտարարում են 1906 թվականի նոյեմբերի 9-ի և 1907 թվականի հունիսի 3-ի «ռեֆորմների» տապալման մասին, վորովհետև այդ «ռեֆորմները» տանում են դեպի յերկրորդ հեղափոխություն:

Յերկու հայտարարությունները, ինչպես և 1861—1905 թ. թ. լիբերալ ու հեղափոխական շարժման ամբողջ պատմությունը տալիս են հետաքրքրական նյութ պարզելու այն կարևորագույն հարցը, թե ինչպես ե վերաբերում բարենորոգումը հեղափոխության, թե ինչ դեր ունեն ռեֆորմիստներն ու հեղափոխականները հասարակական պայքարում:

Հեղափոխության հակառակորդները,—վոմանք ատելությամբ և ատամների կրճտոցով, վոմանք դառնությամբ և վհատությամբ,—ան-

հաջող են ճանաչում 1861 և 1907—1910 թվականների «ռեֆորմները», վորովհետև նրանք չկանխեցին հեղափոխությունները։ Սոցիալ-դեմոկրատիան, մեր որերի միակ, մինչև վերջը հեղափոխական դասակարգի ներկայացուցիչը, պատասխանում է այդ խոստովանության. հեղափոխականները մեծագույն պատմական դերն են խաղացել հասարակական պայքարում և բոլոր սոցիալական կրիզիսներում **անգամ այն ժամանակ**, չերբ այդ կրիզիսներն անմիջականորեն առաջնորդում եյին միայն գեպի կիսակատար ռեֆորմները։ Հեղափոխականներն առաջնորդներն են այն հասարակական ույժերի, վորոնք ստեղծագործում են բոլոր վերակազմավորումները. ռեֆորմները—հեղափոխական պայքարի կողմնակի արդյունքն են։

1861 թ. հեղափոխականները միայնակ անհատներ մնացին և ըստ չերևույթին կատարյալ պարտություն կրեցին։ Իրականի մեջ հայտնապես նրանք եյին այդ ժամանակաշրջանի մեծ գործիչները և վոր չափով մենք հեռանում ենք այդ որերից, այն չափով մեզ համար պարզ է դառնում նրանց մեծությունը, այն չափով ակներև է դառնում այն ժամանակվա լիբերալ ռեֆորմիստների փոքրությունը, վողորմելիությունը։

1905—1907 թվականների հեղափոխական դասակարգը, սոցիալիստական պրոլետարիատը, ըստ չերևույթին կատարյալ պարտություն է կրել։ Յեվ լիբերալ միապետականներն ու լիկվիդատորներն իբր թե մարքսիստների շարքերից բոլորի ականջներն են խլացրել այն մասին, թե ինչպես նա իբր «չափազանց հեռուն» գնաց, հասավ մինչև «եքսցեսների», ինչպես նա հափշտակվեց «տարերային դասակարգային պայքարով», ինչպես նա թույլ տվավ իրան հրապուրելու «պրոլետարիատի հեգեմոնիայի» կործանարար գաղափարով և այլն, և այլն։ Իրականում պրոլետարիատի «հանցանքը» միայն նրա մեջ եր, վոր նա բավական չափով չե հեռուն գնացել, բայց այդ «հանցանքը» արդարացում է գտնում նրա ույժերի այն ժամանակվա վիճակով և քավվում է անդուլ հեղափոխական-սոցիալ-դեմոկրատական աշխատանքով ռեակցիայի խստաչար ժամանակներում, անհողդողդ պայքարով ռեֆորմիզմի ու ոպպորտյունիզմի բոլոր արտահայտությունների դեմ։ Իրականում բոլորը, ինչ նվաճված է թշնամիներից, բոլորը, ինչ կայուն է նվաճումների մեջ, նվաճված է և պահվում է միայն այն չափով, ինչ չափով ուժեղ ու կենդանի չե հեղափոխական պայքարը պրոլետարական աշխատանքի բոլոր ասպարեզներում։ Իրականում միայն պրոլետարիատն եր, վոր մինչև վերջը պաշտպանում եր հետևողական դեմոկրատիզմը, մերկացնում լիբերալիզմի ամբողջ խախուտ լինելը, դուրս կորզելով նրա ազդեցությունից գյուղացիությունը, հերոսական խիզախությամբ զինված ապստամբության ծառանալով։

Վոչ վոք ի վիճակի չե գուշակելու, թե վոր չափով կիրագործվեն



Ռուսաստանի իսկապես դեմոկրատական վերակազմավորումները նրա
բուրժուական հեղափոխությունների ժամանակաշրջանում, բայց տա-
րակուսանքի և վոչ մի ստվեր չի ընդունում, վոր **միայն** պրոլետա-
րիատի հեղափոխական պայքարը կորոշե վերակազմավորումների աս-
տիճանն ու հաջողությունը։ Բուրժուական վոգով ճորտատիրական «ռե-
ֆորմների» և պրոլետարիատի ղեկավարած դեմոկրատական հեղափո-
խության միջև կարող են միայն լինել լիբերալիզմի և ոպպորտյունիս-
տական ռեֆորմիզմի անզոր, աննկարագիր, անգաղափար չերերումներ։

Ընդհանուր հայացք նետելով Ռուսաստանի վերջին կիսադարի
պատմության, 1861 և 1905 թվականների վրա, մենք միայն կարող
ենք էլ ավելի մեծ համոզմունքով կրկնել մեր կուսակցական բանա-
ձևի խոսքերը. «առաջվա պես մեր պայքարի նպատակն է հանդիսա-
նում ցարիզմի տապալումը, քաղաքական իշխանության նվաճումը պրո-
լետարիատի կողմից, վորը կռթնում է գյուղացիության հեղափոխական
շերտերի վրա և բուրժուա-դեմոկրատական հեղաշրջում է կատարում
կյանքի կոչելով Համաժողովրդական Հիմնադիր ժողովը և ստեղծելով
դեմոկրատական հանրապետություն։

«Սոցիալ-Դեմոկրատ» № 21—22
19 Մարտի (Ապրիլի 1) 1911 թվականի

# ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՐՑԻ ԵՅՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

«Ագրարային հարցը»—յեթե գործադրելու լինենք այդ սովորական,
շրջուն տերմինոլոգիան—գոյություն ունի բոլոր կապիտալիստական
չերկրներում։ Բայց Ռուսաստանում հանուր կապիտալիստական ագ-
րարային հարցի **կողքին** գոյություն ունի **ուրիշ**, «իսկական-ռուսա-
կան» ագրարային հարց։ Յերկու ագրարային հարցերի տարբերու-
թյունը համառոտակի նշելու համար ցույց տանք, վոր քաղաքակիրթ
կապիտալիստական յերկրներից և վոչ մեկում չկա մանր հողատերերի
շատ ու քիչ լայն դեմոկրատիկ շարժում այն ձգտումով, վոր նրանց
անցնի խոշոր հողատիրության հողերը։
Ռուսաստանում նման շարժում կա։ Յեվ դրան համապատասխան
Ռուսաստանից բացի վոչ մի յեվրոպական յերկրում մարքսիստները
չեն առաջադրում և չեն պաշտպանում հողի մանր հողատերերին անց-
նելու պահանջը։ Ռուսական ագրարային հարցն անխուսափելիորեն
ծնունդ է տվել նման պահանջի ճանաչմանը **բոլոր** մարքսիստների
կողմից, անկախ այն տարաձայնություններից, վորոնք կապված են նրա
հետ, թե **ինչպես** պիտի կազմակերպված լինի անցվող հողի տիրումը և
բաշխումը (բաժանք, մունիցիպալիզացիա, ազգայնացում) (56)։
Արդ՝ վորտեղից է բղխում տարբերությունը «Յեվրոպայի» և Ռու-

սստանի միջև։ Գուցե Ռուսաստանի զարգացման ինքնահատուկ լինելուց, գուցե կապիտալիզմի բացակայությունից նրա մեջ, կամ թե մեր կապիտալիզմի առանձնակի անհուսալիությունից, աննկանելիությունից։ Այդպես են մտածում տարբեր չերանգի նարոդնիկները։ Բայց այդ հայացքը հիմքում ճիշտ չէ և կյանքը վաղուց հերքել է այն։

Տարբերությունը «Յեվրոպայի» և Ռուսաստանի միջև ծագում է Ռուսաստանի անչափ հետամնացությունից։ Արևմուտքում ագրարբուրժուական հասարակակարգը նույնպես լիովին կազմավորվել է, ճորտատիրականությունը վաղուց է սրբված, նրա մնացորդներն աննշան են և լուրջ դեր չեն խաղում։ Արևմուտքում գյուղատնտեսության բնագավառում գլխավոր հասարակական հարաբերությունն է հանդիսանում **վարձու բանվորի** հարաբերությունը դեպի ձեռնարկատերը, ֆերմերը, կամ հողի սեփականատերը։ Այնտեղ մանր հողատերը գրավում է միջնավոր դրություն, անցվորելով մի կողմից բանվորական ուժ վաճառող վարձվողների դասակարգը (գյուղացու այսպես կոչվող ժամանակ աշխատանքի կամ կողմնակի վաստակի բազմաթիվ ձևերը), իսկ մյուս կողմից՝ վարձվողների դասակարգը (վարձու բանվորների թիվը մանր հողատերերի մոտ առավել զգալի չէ, քան սովորաբար կարծում են)։

Ռուսաստանում անտարակուսելիորեն արդեն ամրացել է անշեղորեն զարգանում է հողագործության նույնչափ կապիտալիստական մի կառուցում։ Յեվ կալվածատիրական և գյուղացիական տնտեսությունն էվոլյուցիա չէ անում հայտնապես այդ ուղղությամբ։ Բայց մեզ մոտ դեռևս զուտ կապիտալիստական հարաբերությունները **ահագին** չափով ճնշված են **ճորտատիրական** հարաբերություններով։ Բնակչության մասսայի, առաջին գլուխ առհասարակ գյուղացիության մասսայի պայքարը հայտնապես այդ հարաբերությունների դեմ—ահա ինչումն է ռուսական ագրարային հարցի ինքնորինակությունը։ Արևմուտքում **նման** «հարց» ամենուրեք գոյություն է ունեցել հին որերին, բայց նա այնտեղ արդեն վաղուց է լուծված։ Ռուսաստանում ուշացել են նրա լուծումը տալու, 1861 թվականի ագրարային «ռեֆորմը» չի լուծել այն։ Ստոլիպինյան ագրարային քաղաքականությունը տվյալ պայմաններում **չի կարող** այն լուծել։

«Հողատիրությունը Յեվրոպական Ռուսաստանում» հոդվածում ("Невская Звезда„ (57) № 3) մենք բերինք գլխավորագույն տվյալները, վորոնք պարզաբանում են արդի ռուսական ագրարային հարցի էությունը։

Մոտ 70 միլիոն դեսյատին հող ունեն 30,000 խոշորագույն կալվածատեր և մոտավորապես նույնչափ էլ՝ 10 միլիոն գյուղացիական ծխերը—այսպիսին է պատկերի հիմնական ֆոնը։ Ի՞նչ տնտեսական հարաբերությունների մասին է վկայում այս պատկերը։



Յերեսուն հազար խոշորագույն կալվածատեր—դրանք գլխավորապես հին ազնվականության և հին ճորտատիրական տնտեսության ներկայացուցիչներն են։ 500 դեսյատինից ավելի տարածություն ունեցող կալվածների 27833 տերերից ազնվական են 18102, այսինքն **համարյա երկու երրորդը**։ Վիթխարի լատիֆունդիաները, վորոնք նրանց ձեռքին են գտնվում—միջին հաշվով այդ խոշորագույն կալվածատերերից յուրաքանչյուրին 2000 դեսյատին հողից ավելին է ընկնում—չեն կարող մշակվել հողատիրոջ ինվենտարով և վարձու բանվորներով։ Գործի նման վիճակում զգալապես անխուսափելի յե հանդիսանում հին բեգառային սիստեմը, այսինքն մանր կուլտուրայի, մանր տնտեսության գոյությունը խոշոր լատիֆունդիաների վրա, կալվածատիրական հողի մշակումը մանր գյուղացու ինվենտարով։

Հայտնապես այդ բեգառային սիստեմն էլ, ինչպես հայտնի յե, առանձնապես լավ տարածված է Յեվրոպական Ռուսաստանի կենտրոնական, իրենց ռուսական նահանգներում, մեր հողագործության **սրտում**։ Այսպես կոչված փոխաշխատանքները («отработки») ներկայացնում են վոչ այլ ինչ, քան տնտեսության բեգառային սիստեմի շարունակություն և մնացորդ։ Տնտեսության անտանելի ստրկական ձևերը, ինչպես ձմեռային վարձվորություն, աշխատանք կտրոնքահողի համար, «համապարտ մշակում» և այլն և այլն,—դա նույնպես բեգառ է։ Այսպիսի տնտեսական սիստեմում գյուղացիական «բաժնեհողը» հանդիսանում է մի միջոց, վորը **կալվածատիրոջն** ապահովում է բանվորական ձեռքերով և վոչ միայն բանվորական ձեռքերով, այլ և ինվենտարով, վորը՝ ինչքան էլ նա վողորմելի լինի՝ ծառայում է կալվածատիրական հողի մշակության համար։

Գյուղացիական մասսաների ծայրահեղ չքավորությունը, վորոնք կապված են իրանց բաժնեհողին և չեն կարողանում առանց նրան ապրել. հողագործական տեխնիկայի ծայրահեղորեն պրիմիտիվ վիճակը, արդյունաբերության համար ներքին շուկայի ծայրահեղ անզարգացումն—այդպիսին են իրերի այս վիճակի հետևանքները։ Յեվ դրա ամենացայտուն ապացույցը, վոր հիմքում, վոր նկատանի միջ չերևույթն անփոփոխ է մնում ընդհուպ մինչև մեր որերը, դա 30 միլիոն գյուղացիության մասսայի արդի սովն է։ Միայն մանր ստրկացած տնտեսատերերի մասսայի ճորտային ճնշվածությունը, աչքաթող գոյությունը, անօգնությունը **կարող է** տանել դեպի այնպիսի զարհուրելի մասսայական սով մի ժամանակաշրջանում, յերբ արագորեն զարգանում է և համեմատաբար արդեն բարձր է կանգնած (լավագույն կապիտալիստական տնտեսություններում) հողագործական տեխնիկան։

Հիմնական հակասությունը, վորը առաջնորդում է դեպի նման զարհուրելի աղետներ, վորոնք, միջին դարերից դեսը անծանոթ են

Արևմտյան Յեվրոպայի գյուղացիությանը,—դա այն հակասությունն է, վոր կա մեր արդյունաբերության մեջ բարձր զարգացում ունեցող, մեր հողագործության մեջ զգալապես զարգացած կապիտալիզմի և հողատիրության միջև, վորը շարունակվում է մնալ միջնադարյան, ճորտատիրական: Այս վիճակից դուրս գալ անհնարին է, յեթե հին հողատիրությունը կտրուկ փլումն չլինի:

Ճորտատիրական է հանդիսանում վոչ միայն կալվածատիրական, այլ և գյուղացիական հողատիրությունը: Առաջինի նկատմամբ յերևույթն այնքան ակներև է, վոր վոչ մի տարակուսանք չի հարուցանում: Նկատենք միայն, վոր ճորտատիրական լատիֆունդիաների վոչնչացումը—ասենք 500 դեսյատինից ավելի ունեցող տնտեսությունների—չի խախտի խոշոր արտադրությունը հողագործության մեջ, այլ ընդհակառակը կուժեղացնե, կզարգացնե այն: Վորովհետև ճորտատիրական լատիֆունդիաները մանր ստրկական հողագործության հենարանն են, այլ իսպառ վոչ խոշոր արտադրության: Ռուսաստանի շատ տեղերում 500 դեսյատինից ավելի տարածություն ունեցող վիթխարի հողակտորների վրա համարյա անհնարին է կամ գոնե ծայրահեղորեն դժվար է խոշոր տնտեսություն վարել, ամբողջ հողը մշակել տիրոջ ինվենտարով և վարձու աշխատանքով: Այդպիսի կալվածների չափի նվազեցումը մեկն է այն պայմաններից, վոր առաջնորդում է դեպի մանր ստրկական հողագործության վոչնչացում և անցում դեպի կապիտալիստական արտադրություն գյուղատնտեսության մեջ:

Մյուս կողմից Ռուսաստանում գյուղացիական բաժնեհողային հողատիրությունն էլ է միջնադարյան, ճորտատիրական մնում և խընդիրը միայն նրա իրավական ձևի մեջ չէ, վոր այժմ փոփոխվում է համայնքի ֆելֆերելական քայքայումով (58) և մասնավոր հողային սեփականության պատվաստումով,—խնդիրը նաև նրա փաստական կերպարանքի մեջ է, վորը չի շոշափվում համայնքի վորևէ ավերումով:

Մանր և մանրագույն, ըստ մեծի մասին ցրիվ ու գյուղացիական հողի հատկության կողմից վատթար վիճակ ունեցող (այն բանի հետևանքով, վոր գյուղացիական հողը 1861 թվականին ծրվել է ճորտատիրական-կալվածատերերի ղեկավարության ներքո և հողն էլ հողնել է տևական մշակումից), «պարցելլների» (մանրիկ հողակտորների) անհագին մասսայի փաստական վիճակը նրանց անխուսափելիորեն ստրկական հարաբերության մեջ է գցում դեպի լատիֆունդիայի վերջին տիրողը, դեպի հին «աղան»:

Միայն ավելի ակնառու յերևակայեցեք այս պատկերը. յերեսուն հազար հողատերի հանդեպ, վորոնցից յուրաքանչյուրի լատիֆունդիան 2000 դեսյատին հող է հաշվում իր մեջ, կանգնած են 10.000.000 գյուղացիական ծխեր, վորոնցից «միջին» ծուխը 7 դեսյատին ու-



նի: Պարզ է, վոր համայնքի վոչ մի քայքայում, մասնավոր հողային սեփականության վոչ մի ստեղծագործություն դեռ ի վիճակի չպիտի լինի փոփոխելու ստրկացումը, փոխաշխատանքները, բեգառը, ճորտատիրական չքավորությունը և կախումի ճորտատիրական ձևերը, վորոնք այստեղից են բխում:

Իբրև այսպիսի վիճակից ծնունդ առնող «ագրարային հարցը» մի հարց է ճորտատիրական մնացորդների վերացման մասին, վորոնք անտանելի արգելք են դարձել Ռուսաստանի կապիտալիստական զարգացման համար: Ագրարային հարցը Ռուսաստանում դա մի հարց է այն մասին, վորպեսզի կտրականորեն փլվի հին, միջնադարյան հողատիրությունը, թե կալվածատիրական և թե գյուղացիական բաժնեհողային, փլվի, քանի վոր նա բացարձակորեն անհրաժեշտ է դարձել շնորհիվ այդ հողատիրության ծայրահեղ հետամնացության, շնորհիվ այն ծայրահեղ անհամապատասխանության, վոր կա նրա և կապիտալիստական դարձած ժողովրդատնտեսության ամբողջ սիստեմի միջև:

Փլումը պետք է կտրական լինի, վորովհետև անհամապատասխանությունն անչափ մեծ է, վորովհետև հինն անչափ հին է, «հիվանդությունն անչափ աչքաթող արված»: Փլումը համենայն դեպս և բոլոր ձևերով չի կարող իր բովանդակությամբ բուրժուական չլինել, քանի վոր Ռուսաստանի ամբողջ տնտեսական կյանքն արդեն բուրժուական է և հողատիրությունն էլ անպայման կհպատակվի նրան, անպայման կհարմարվի շուկայի թելադրանքներին, մեր արդի հասարակության մեջ ամենազոր կապիտալի ճնշումին:

Բայց յեթե փլումը չի կարող կտրական չլինել, չի կարող բուրժուական չլինել, ապա դեռևս մնում է չլուծված, թե անմիջապես շահագրգռված կալվածատիրական և գյուղացիական յերկու դասակարգերից վո՞ր դասակարգը կըկիրառի այդ վերակազմավորումը, կամ ուղղությունը կտա նրան, կորոշե նրա ձևերը: Այդ «չլուծված հարցին» մենք կնվիրենք հետևյալ հոդվածը.—«Ստոլիպինյան և նարոդնիկական ագրարային ծրագրերի համեմատումը»:

«Նևսկայա Զվեզդա» № 6, 1912 թ. մայիսի 22.

Բ. Ս. ստորագրությամբ:

## ՍՏՈԼԻՊԻՆՅԱՆ ՅԵՎ ՆԱՐՈԴՆԻԿԱԿԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ԾՐԱԳԻՐՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒՄԸ

Նախընթաց հոդվածներում (տես «Նևսկայա Զվեզդա» №№ 3 և 6*) մենք բերինք հիմնական տվյալները Յեվրոպական Ռուսաստանի հո-

ԾԱՆՈԹ. ԽՄԲ.

*) Տես վերը, եջ 59.

գատիրության վերաբերյալ և գծագրեցինք ագրարային հարցի էությունը Ռուսաստանում։ Վոչնչացնել միջնադարը հողատիրության մեջ — ահա ինչ բանի յե հանգում այդ էությունը։

Այն հակասությունը, վոր կա ամբողջ աշխարհում և մեզ մոտ Ռուսաստանում տիրող կապիտալիզմի ու միջնադարյան թե կալվածատիրական և թե բաժնեհողային-գյուղացիական հողատիրության միջև, աննաշտելի յե։ Հին, միջնադարյան հողատիրությունն անխուսափելիորեն պիտի վոչնչացման գնա և վորքան վճռական, անողոք, խիզախորեն լինի այդ փլուզը, այնքան լավ Ռուսաստանի ամբողջ զարգացման համար, այնքան լավ բանվորների ու գյուղացիների համար, վորոնց այժմ ճնշում և հարստահարում են կապիտալիզմից բացի անհամնում միջնադարյան մնացորդներ։

Հարց է՝ ինչպե՞ս կարելի յե իրերի այս վիճակում համեմատել ստոլիպինյան և Նարոդնիկական ագրարային ծրագիրները։ Մեկը մյուսի հանդեպ արդյոք կատարյալ հակադրություն չի՞ հանդիսանում։

Այո, բայց այդ հակադրությունը չի վերացնում հիմնական նշանակությունը ստոլիպինյան և Նարոդնիկական ագրարային ծրագրների միջև։ Հայտնապես նրանք յերկուսն էլ ընդունում են հին հողատիրության փլուզի անհրաժեշտությունը։ Հինը փլել հարկավոր է և շուտ և վճռականորեն, — ասում են ստոլիպինյան «հողաշինարարության» գործիչները, — բայց փլել այնպես, վորպեսզի փլուզի ամբողջ ծանրությունն ընկնի գյուղացիների մեծամասնության վրա, վորոնք ավելի յեն քայքայված, ավելի յեն բախտազուրկ։ Կալվածատերերն այստեղ վոչինչ չպիտի կորցնեն։ Յեթե ա խուսափելի յե, վոր նրանք կորցնեն իրանց հողերի մի մասը, ապա այդ հողերը պիտի ոտարացվեն բացառապես կալվածատերերի հոժարակամ համաձայնությամբ և կալվածատերերի տեսակետից «արդարացի» գնահատանքով։ Ունևոր գյուղացիները պետք է օժանդակություն ստանան և կարիք չկա կանգ առնել «թույլերի» մասսայի քայքայման առաջ։

Այսպիսին է ստոլիպինյան ագրարային ծրագրի էությունը։ Միացյալ ազնվականության խորհուրդը՝ պարտադրելով այն Ստոլիպինին՝ վարվում եր իբրև հետադիմականների իսկական ներկայացուցիչ — վոչ ճամարտակների, այլ գործի մարդկանց։ Միացյալ ազնվականության խորհուրդը կատարելապես հավատարիմ եր իր դասակարգային շահերին, յերբ նա ուժեղ երին եր հենակետ ընտրում։ Յեվ իսկապես, 1905 թվականից հետո պարզ դարձավ, վոր միայն պոլիցեյական, միայն բյուրոկրատական պաշտպանությունն անբավարար է գյուղացիների դեմ։

Իսկել վորտեղ կարող եր իրան դաշնակից փնտռել միացյալ ազնվականության խորհուրդը։ Միայն ունեվոր գյուղացիության



«կուլակների», «գյուղական ցեցերի» չնչին փոքրամասնության մեջ։ Գյուղում ուրիշ դաշնակիցներ նրա համար անկարելի չեր գտնել։ Յեվ «նոր կալվածատերեր» գրավելու համար՝ հետաահա իրանց կողմը «նոր կալվածատերեր» գրավելու համար՝ հետաառաջ, վորպեսզի ամբողջ
դիմականները կանգ չառան այն բանի առաջ, վորպեսզի ամբողջ
գյուղը բառացիորեն կապ կողոպուտի չտան նրանց։
Յեթե անխուսափելի յե փլելը, ապա ավեք փլենք բաժնեհողային
հողատիրությունը մեր ոգտին և նոր կալվածատերերի ոգտին — ահա
այն ագրարային քաղաքականության էությունը, վորը Ստոլիպինին
թելադրեց Միացյալ ազնվականության խորհուրդը։

Բայց զուտ թեորետիկորեն խոսելով՝ անհրաժեշտ է ընդունել, թե փլուզն վոչ պակաս վճռական և անգամ ավելի վճռական՝ հնարավոր է նաև մյուս կողմից։ Փաստը յերկու ծայր ունի։ Որինակ՝ յեթե այն 70 միլիոն դեսյատին հողը, վոր պատկանում է 30,000 կալվածատերերի, անց կենա 10,000,000 գյուղացիական ծխերին իբրև հավելումն նրանց ունեցած 75 միլիոն դեսյատին հողին, յեթե և՛ այն, և՛ մյուս հողերը միատեղ խառնվելին և հետո բաշխվելին ունևոր և միջակ գյուղացիության միջև (չքավորը միևնույն է միջոցներ չպիտի ունենա հերկելու, ցանելու, պարարտացնելու, խնամելու հողը), — ապա ինչպիսի հետևանք կտար նման վերակազմավորումը։

Այս հարցը դրեք զուտ տնտեսական հայեցակետից, քննեցեք այս կան տնտեսության ընդհանուր պայմանների թելադրանքից։ Դուք
սկզբունքային հնարավորությունն ամբողջ աշխարհի կապիտալիստական տնտեսության ընդհանուր պայմանների թելադրանքից։ Դուք
կտեսնեք, վոր մեր յենթադրած վերակազմության հետևանքը կլիներ ավելի հետևողական, ավելի վճռական, ավելի անողոք փլուզն միջնադարյան հողատիրության, քան Ստոլիպինի ծրագրում։

Ինչո՞ւ։ Հայտնապես միջնադարյան և միայն միջնադարյան։ Վորովհետև կապիտալիստական հողատիրությունը, վորքան էլ հողը ձեռքից ձեռք անցնի և անգամ բոլոր հողերն անցնեն պետության ձեռքը (քաղաքատնտեսության գիտության մեջ այսպես կոչվող հողի «ազգայնացումը»), գործը բուն էությանը նայելով՝ չի կարող վոչնչացվել։ Կապիտալիստական հողատիրությունը — դա հողի տիրություն է նրա կողմից, ով կապիտալ ունի և ավելի լավ է հարմարվում շուկային։ Ում էլ իբր սեփականություն չպատկանի հողը — հին կալվածատերերին արդյոք, պետությանը, թե բաժնեհողային գյուղացուն — միևնույն է, հողը չի կարող խուսափել տիրոջ ձեռքից, վորը միշտ էլ կարող է կապալով վերցնել այն։ Բոլոր կապիտալիստական յերկրներում հողատիրության ամենատարբեր ձևերում կապալն աճում է։ Վոչ մի արգելք իվիճակի չե խանգարելու կապիտալիստին, մեկին, վոր կապիտալ ունի և ճանաչում է շուկան, իր ձեռքը ժողովելու հողը, քանի վոր շուկան է տիրապետում ամբողջ հասարակական արտադրության վրա, այսինքն քանի վոր այդ արտադրությունը կապիտալիստական է մնում։

Բավ չէ այդ: Հողի կապալը **նույնիսկ ավելի յե հարմար** անխառն կապիտալիզմի համար, շուկային լիակատարորեն, ազատ, «իդեալականորեն» հարմարվելու համար, քան հողի սեփականությունը: Ինչու: Վորովհետև հողի մասնավոր սեփականությունը **դժվարացնում ե** նրա ձեռքից ձեռք անցնելը, **կասեցնում ե** հողոգտագործման համակերպումը շուկայի պայմաններին, **ամրացնում ե** հողը տվյալ ընտանիքի կամ անձի և նրա ժառանգների ձեռքում, թեկուզ նրանք վատ տնտեսատերեր լինեյին: Կապալն ավելի ճկուն ձև է, վորի գոյությամբ հողոգտագործման համակերպումը շուկային տեղի յե ունենում ավելի պարզ, ավելի հեշտ, ավելի արագ:

Այս պատճառով, ի միջի այլոց, Անգլիան ել բացառություն չի ներկայացնում ուրիշ կապիտալիստական յերկրներից, այլ կապիտալիզմի տեսակետից առավել կատարյալ ագրարային կառուցվածքը, ինչպես և Մարքսն եր մատնանշում Ռոդբերտուսի (59) իր քննադատության մեջ: Իսկ ինչումն է կայանում Անգլիայի ագրարային կառուցվածքը: —Հին հողատիրություն, լենդլորդիզմ, նոր, ազատ, անխառն կապիտալիստական կապալով հանդերձ:

Իսկ յեթե այդ լենդլորդիզմը գոյություն ունենար առանց լենդլորդերի, այսինքն յեթե հողը լիներ չե թե լենդլորդերի, այլ պետության սեփականություն: Դա կլիներ կապիտալիզմի տեսակետից ել ավելի կատարյալ ագրարային կառուցվածք, հողոգտագործման ել ավելի մեծ համակերպումով շուկայի նկատմամբ, իբրև տնտեսության առարկայի՝ հողի մոբիլիզացիայի ել ավելի մեծ հեշտությամբ, յուրաքանչյուր կապիտալիստական հողատիրությանը հատուկ դասակարգային պայքարի ել ավելի մեծ ազատությամբ, լայնությամբ, պարզությամբ և վորոշակիությամբ:

Յեվ ահա՝ վորքան տվյալ յերկիրն ավելի շատ է յետ մնացել համաշխարհային կապիտալիզմից, վորքան նա արագորեն է ստիպված հասնելու հարևաններին, վորքան շատ է նա «աչքաթող արել» իր «հիվանդությունը», միջնադարյան հողատիրության և սարկական մանր տնտեսության հիվանդությունը, վորքան տվյալ յերկրի համար հրատապ անհրաժեշտություն է նրա բոլոր հողային հարաբերությունների, նրա ամբողջ ագրարային կենցաղի հիմնական **փլումը**, —այդքան բնական կլինի հողի ազգայնացման զանազանակերպ գաղափարների ու պլանների ծագումը և լայն տարածումն այդպիսի յերկրի հողագործական բնակչության մեջ:

Յեվ 1905 թվականը, և՛ յերկու առաջին Դումաներն անտարակուսելիորեն ապացուցեցին, —իսկ յերրորդ Դուման չեզակիորեն, իր «գյուղացիական» (կալվածատիրական մաղով մաղված) պատգամավորների միջոցով հաստատեց, —թե հողի ազգայնացման զանազանակերպ գա-



գափարները, պլաններն անչափ լայն տարածում ունեն ռուսական հողագործական բնակչության մեջ: Այդ գաղափարները հավանելուց կամ պարսավելուց առաջ՝ հարկավոր է հարց տալ, թե **ինչո՞ւ** նրանք լայն տարածում են ստացել, թե **ի՞նչ** տնտեսական անհրաժեշտություն է ծնունդ տվել նրանց:

Բավ չէ քննադատել այդ գաղափարները նրանց ներքին ամբողջականության, ներդաշնակության կամ թեորետիքական ճշտության տեսակետից: Անհրաժեշտ է նրանց քննադատել այն տնտեսական անհրաժեշտության տեսակետից, վորն այդ գաղագաղափարների մեջ իր արտացոլումն է ստացել, վորքան ել յերբեմն «քմահաճ», անճիշտ, «ծուռ» լինի այդ արտացոլումը:

Այն տնտեսական անհրաժեշտությունը, վորը XX դարի սկզբում ծնունդ է տվել հողի ազգայնացման գաղափարին ռուսական գյուղացիության մեջ, —դա հին հողատիրության կտրական փլումի անհրաժեշտությունն է: Ամբողջ հողի «հավասարար բաշխման» գաղափարները— —դա **հավասարության** գաղափարներ են, վորոնք անհրաժեշտաբար ծնունդ են առնում ճորտատիրական ճնշողների դեմ մղված պայքարից և **անխուսափելիորեն** հողին են փոխանցվում իբրև մի այնպիսի վիճակում, յերբ 30000 «ճորտատիրական-վերջնակներ» ունեն 70 միլիոն դեսյատին, իսկ 10,000,000 սարկացած գյուղացիներ—75 միլիոն դեսյատին:

Առաջին հողերի յերկրորդ կարգին անցնելը, կամ ավելի ճիշտը՝ յերկրորդ կարգի հողերի տերերի ձեռքն անցնելը բոլորովին ուտոպիական չէ: Ուտոպիական է միայն այն պատրանքը, վոր շուկայի տիրապետության որով կարող է հողի հավասարություն լինել տնտեսատերերի միջև, ուտոպիական է ցնորել կապիտալիզմի որով բոլոր «քաղաքացիների և քաղաքացուհիների» (այս թվում և տնտեսավարողների) «**իրավունքը** հողի նկատմամբ»: **Բայց այդ** գաղափարների ուտոպիականությունը չպիտի թույլատրի մեզ մոռանալու ամենախիստ, կենդանի առարկայականությունն այն բանի, ինչ **իրականի մեջ** թաքնըված է նրանց տակ:

Հողատիրության **բոլոր** միջնադարյան-կալվածատիրական, բաժնեհողային և այլն—զարգացումների վոչնչացման մեջ ուտոպիական վոչինչ չկա: Հողի հետ կապված բոլոր հին հարաբերությունների խզումի մեջ ուտոպիական վոչինչ չկա: Ընդհակառակը, հայտնապես կապիտալիզմի զարգացումն է հրատապորեն **այդպիսի** խզումն պահանջում: Կապիտալիզմի որով **չի կարող** լինել վոչ հողի «հավասարար բաշխում», վոչ «սոցիալիզացիա»: Դա ուտոպիա յե*):

*) Ուտոպիա—անիրագործելի պատրանք. ԾԱՆՈԹ. ԽՄԲ.

Կապիտալիզմի օրով հողի ազգայնացումը տնտեսականորեն լրիվին հնարավոր է և նրա ռեալ նշանակությունը համենայն դեպս—այսինքն ում կողմից և ինչպես էլ նա իրագործված լինի, ինչ պայմաններում, հաստատ և չերկար ժամանակով, թե անհաստատ և կարճ ժամանակով—համենայն դեպս նրա իրական նշանակությունն այն կլիներ, վոր մաքսիմալ չափով կվերացներ բոլոր միջնադարյանը ռուսական հողատիրության և ռուսական ագրարային կենցաղի մեջ, նոր հողագտագործման և հողատիրության առավել ազատ հարմարումն կստեղծեր համաշխարհային շուկայի նոր պայմանների հանդեպ։

Մի րոպե պատկերացնենք մեզ ձախ նարոդնիկների պլանի իրագործումը բոլոր հողերի գեթ հավասար բաժանքի ձևով բոլոր քաղաքացիների ու քաղաքացուհիների մեջ։ Կապիտալիզմի օրով նման բաժանքը մեծագույն անհեթեթությունն է։ Նա չի մնա, կապիտալիզմի օրով չի կարող մնալ մի տարի իսկ։ Բայց միթե դա նշանակում է, թե նրա հետևանքները զրո կամ մինուս կլինեյին։

Ամենևին։ Նրա հետևանքները կլինեյին ահագին մի պլյուս—իսպառ վոչ այն պլյուսը, վորը ձախ նարոդնիկներն են սպասում, բայց խիստ իրական պլյուս։ Այդ պլյուսը կըկայանար նրա մեջ, վոր ամեն մի տարբերություն արդի դասային և կարգային հողատիրության ձևերի մեջ կփլվեր։ Դա մի ահագին շահում կլիներ ամբողջ ժողովրդական տնտեսության համար, կապիտալիզմի համար, պրոլետարիատի համար, վորովհետև չկա ավելի վնասակար մի բան Ռուսաստանի զարգացման համար, քան մեր ժամանակակից հին հողատիրությունը։ Ե՛վ կալվածատիրականը և՛ բաժնեհողայինը—**վողջ էությամբ** ճորտատիրական հողատիրության ձևեր են։

Նրանց հավասարար վերաբաժանումը չեր դիմանա, **բայց դարձ դեպի հինը** անհնարին կլիներ։ Մի անգամ ջնջված սահմանածրերին չեր կարող հարություն տալ և վոչ մի «ռեստավրացիա»։ Աշխարհում վոչ մի քաղաքական ուժ չեր կարող խանգարել, վոր հաստատվեն այնպիսի նոր սահմանածրեր, ցեղրեր, հողագտագործման ձևեր, վորոնք համապատասխանում են շուկայի **նոր** պահանջներին։

«Ցանկաթափել հողը»,—հիշում եմ, ասում եր մի ձախ նարոդնիկ II Դումայում։ Նա չերևակայում եր, թե դրանից «հավասարար հողագտագործում» դուրս կգա։ Նա սխալվում եր։ Բայց **նրա շրթունքներով**—այդպիսին է պատմության հեգնանքը—խոսում եր առավել ջետևողական և աներկյուղ արմատական **բուրժուան**, վորը զգում է մեր «բաժնեհողային», «ավանդական», «եկեղեցական» և այլն հողատիրության **հին**, միջնադարյան «միջնորմների» անհեթեթությունը, զգում է այդ **բոլոր** միջնորմները փլելու անհրաժեշտությունը հողի **նոր** բաշխում կատարելու համար։ Միայն դա կլինի վոչ «ըստ շնչերի», ինչպես չերազում է նարոդնիկը, այլ ըստ **կապիտալի**, ինչպես **կստիպե շուկան**։



Նարոդնիկների ստեղծագործական պլանները—դա ուտոպիա չե։ Բայց նրանց ստեղծագործական պլանների մեջ կործանարար տարր կա միջնադարի վերաբերմամբ։ Իսկ այդ տարրն ամենևին ուտոպիա չե։ Դա խիստ կենդանի մի ռեալականություն է։ Դա կապիտալիզմի և պրոլետարիատի տեսակետից ամենահետևողական և առաջադիմական մի ռեալականություն է։

Համառոտակի ամփոփենք մեր հայացքները։ Ստոլիպինյան և նարոդնիկական ագրարային ծրագրերի ռեալ նմանությունը կայանում է նրանում, վոր **յերկուսն** էլ անց են կացնում հին, միջնադարյան հողատիրության **արմատական** փլումն։ Եվ դա շատ լավ է։ Այլ բանի, քան փլումը, նա արժանի չե։ **Ամենից** հետադիմական են այն սահմ.-ռամկավարները «Речь» (60) և «Русские Ведомости» (61) թերթերից, վորոնք կշտամբում են Ստոլիպինին այդ փլումի համար—փոխարեն նրան, վորպեսզի ապացուցեն ավելի հետևողական և ավելի վճռական փլումի անհրաժեշտությունը։ Հետևյալ հոդվածում (62) մենք կտեսնենք, վոր ստոլիպինյան փլումը **չի կարող** վերացնել սովորացումն ու փոխաշխատանքները, իսկ նարոդնիկականը **կարող է**։

Մենք առ այժմ նշենք, վոր ստոլիպինյան փլումի միակ, լրիվին ռեալ հետևանքը 30 միլիոնի քաղցն է։ Եվ դեռ հայտնի չե, թե ստոլիպինյան փլումը չի սովորեցնի արդյոք ռուս ժողովրդին, թե **ինչպես է հարկավոր** ավելի վճռական փլումն կատարել։ Անտարակուսելի չե, վոր նա այդ սովորեցնում է։ Կսովորեցնե արդյոք վերջնականապես,—կապրենք՝ կտեսնենք։

«Նևսկայա Զվեզդա» № 15,
1912 թ. հուլիսի 1.
Բ. Ս. ստորագրությամբ։

## ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՅԵՐԿՈՒ ԳԾԻ ՄԱՍԻՆ

«Պրիզիվ» (63) («Կոչ») թերթի № 3-ում պ. Պլեխանովը փորձում է դնել հիմնական թեորետիկական հարցը Ռուսաստանի գալիք հեղափոխության մասին։ Նա վերցնում է Մարքսից մի ցիտատ, ուր ասված է, թե 1789 թ. հեղափոխությունը Ֆրանսիայում ընթանում եր վերասլաց գծով, իսկ 1848 թ.՝ վարէջքի։ Առաջին դեպքում իշխանությունն աստիճանաբար ավելի չափավոր կուսակցությունից անցնում եր ավելի ձախին, սահմանադրականներ—ժիրոնդիստներ—յակոբինյաններ։ Յերկրորդում—ընդհակառակը (պրոլետարիատ—մանր բուրժուական դեմոկրատներ—բուրժուական հանրապետականներ—Նապոլեոն III)։ «Ցանկալի չե»,—մտայեզրակացում է տալիս մեր հեղինակը,—«ռու-

սական հեղափոխությունն ուղղել վերասլաց գծով», այսինքն, վորպեսզի իշխանությունը նախ և առաջ անցնի կադետներին և հոկտեմբերյաններին, հետո աշխատավորականներին, ապա սոցիալիստներին։ Այս դատողությունից հարկավ, այն յեզրակացությունն է անվում, թե անխելացի չեն ձախերը Ռուսաստանում, վոր չեն կամենում պաշտպանել կադետներին և վաղաժամորեն վարկաբեկում են նրանց։

Գ. Պլեխանովի այդ «թեորետիքական» դատողությունը ներկայացնում է դարձյալ ու դարձյալ մի նմուշ, թե ինչպես է մարքսիզմը փոխվում լիբերալիզմով։ Գ. Պլեխանովը խնդիրն այն հարցին է բերում, վոր «ճիշտ», թե՞ անճիշտ են յեղել առաջավոր տարրերի «ռազմագիտական հասկացողությունները»։ Մարքսն այլ կերպ եր դատում։ Նա մատնանշում եր փաստը. հեղափոխությունը յերկու դեպքում ընթացել է տարբեր հունով, իսկ այդ տարբերության բացատրությունը Մարքսը չեր վորոնում «ռազմագիտական հասկացողությունների» մեջ։ Մարքսիզմի տեսակետից ծիծաղելի յե հասկացողությունների մեջ վորոնել այն։ Այն հարկավոր է վորոնել **դասակարգերի փոխհարաբերանքի** տարբերության մեջ։ Նույն այդ Մարքսը գրում եր, թե 1789 թ. Ֆրանսիայում բուրժուազիան միացավ գյուղացիության հետ, և վոր 1848 թ. մանր-բուրժուական դեմոկրատիան դավաճանեց պրոլետարիատին։ Գ. Պլեխանովը գիտե Մարքսի այդ կարծիքը, բայց լռում է դրա մասին, վորպեսզի Մարքսին կեղծե «Ստրուվեյի (64) պես»։ Ֆրանսիայում 1789 թ. խնդիրը վերաբերում եր ինքնակալության և ազնվականության տապալմանը։ Այն ժամանակվա տնտեսական ու քաղաքական զարգացման աստիճանի վրա բուրժուազիան հավատում եր շահերի ներդաշնակությանը, վախ չուներ իր տիրապետության կայունության համար և դաշինքի յեր գնում գյուղացիության հետ։ Այդ դաշինքն ապահովեց հեղափոխության կատարյալ հաղթանակը։ 1848 թ. խնդիրը վերաբերում եր բուրժուազիայի տապալմանը պրոլետարիատի կողմից։ Վերջինին չհաջողվեց իր կողմը գրավել մանր բուրժուազիային, և նրա դավաճանությունն առաջ բերավ հեղափոխության պարտություն։ 1789 թ. վերասլաց գիծը հեղափոխության մի ձև եր, վորի մեջ ժողովրդի մասսան հաղթեց ինքնակալությանը։ 1848 թ. վարեջքի գիծը հեղափոխության մի ձև եր, յերբ մանր բուրժուազիայի մասսայի կողմից հանդեպ պրոլետարիատի հայտնաբերած դավաճանությունն առաջացրեց հեղափոխության պարտությունը։

Գ. Պլեխանովը մարքսիզմը փոխել է գռեհիկ իդեալիզմի, հանգեցնելով խնդիրը «ռազմագիտական հասկացողությունների», այլ վոչ թե դասակարգերի փոխհարաբերության։

1905 թվականի ռուսական հեղափոխության և նրան հաջորդած հակահեղափոխական ժամանակաշրջանի փորձը մեզ ասում է, թե մեզ



մոտ դիտվում եր հեղափոխության յերկու գիծ յերկու դասակարգերի— պրոլետարիատի և լիբերալ բուրժուազիայի—պայքարի իմաստով, պայքար ղեկավարող ազդեցություն ունենալու մասսայի վրա։ Պրոլետարիատը հեղափոխականորեն եր հանդես գալիս և իր յետևից տանում դեմոկրատիկ գյուղացիությունը միապետությունն ու կալվածատերերին տապալելու համար։ Վոր գյուղացիությունը դեմոկրատիկ իմաստով հեղափոխական ձգտումներ եր հայտնաբերում,—այդ **մասսայական** չափերով ապացուցեցին **բոլոր** խոշոր քաղաքական դեպքերը, և՛ 1905—1906 թ. թ. գյուղացիական ապստամբությունները, և՛ նույն տարիների զինվորական խլրտումները, և՛ 1905 թվականի «գյուղացիական միությունը» (65), և՛ յերկու առաջին Դումաները, ուր **գյուղացի**-աշխատավորականները հանդես եյին գալիս վոչ միայն «կադետներից ձախ», **այլեվ ավելի հեղափոխականորեն** ինտելիգենտ սոց.-հեղափոխականներից ու աշխատավորականներից։ Այս մասին, ափսոսանքով պետք հիշել, վոր հաճախ են մոռանում, բայց դա փաստ է։ Յեվ 3-րդ և 4-րդ Դումաներում **գյուղացի**-աշխատավորականները, չնայած իրանց ամբողջ թուլության՝ ցույց տվին, վոր գյուղական մասսանները տրամադրված են ընդդեմ կալվածատերերի։

Ռուսական բուրժուա-դեմոկրատական հեղափոխության առաջին գիծը, վերցրած փաստերից, այլ վոչ թե «ռազմագիտական» շաղակրատությունից, կայանում եր նրա մեջ, վոր պրոլետարիատը պայքարում եր վճռականորեն, անվճռական եր գնում նրա յետևից գյուղացիությունը։ Գնում եյին այդ յերկու դասակարգը միապետության դեմ և կալվածատերերի դեմ։ Այդ դասակարգերի ուժի ու վճռականության պակասությունը պարտություն ծնեց (թեև ինքնակալության մեջ մասնակի ճեղքվածք այնուամենայնիվ բացված է)։

Յերկրորդը լիբերալ բուրժուազիայի վարքագիծն է։ Մենք, բայլշևիկներս, միշտ ասել ենք, մանավանդ 1906 թվականի գարունքից սկսած, թե այն՝ իբրև **միասնակի** ուժ՝ կադետները և հոկտեմբերյաններն են ներկայացնում։ 1905—1915 թ. թ. տասնամյակը հաստատեց մեր հայացքը։ Պայքարի վճռական մոմենտներում կադետները հոկտեմբերյանների հետ միասին դավաճանում եյին դեմոկրատիային և օգնելու գնում թագավորին ու կալվածատերերին։ Ռուսական հեղափոխության «լիբերալ» գիծը կայանում եր «խաղաղացնելու» և մասսայի պայքարը տրոհելու մեջ, վորպեսզի բուրժուազիային հաշտեցնե միապետության հետ։ Յեվ ռուսական հեղափոխության միջազգային վիճակը և ռուսական պրոլետարիատի ուժն անխուսափելի եյին դարձնում լիբերալիզմի նման վարքագիծը։

Բալշևիկները գիտակցորեն օգնում եյին պրոլետարիատին առաջին գծով գնալու, պայքարելու անձնվեր խիզախությամբ և իր յետևից տա-

նելու գյուղացիությունը: Մենշևիկները սահում էյին մշտապես դեպի յերկրորդ գիծը, անբարոյացնելով պրոլետարիատը նրանով, վոր համակերպում էյին նրա շարժումը լիբերալներին, ոգևորելով բուլիգինյան Դուման (66) գնալու հրավերից (1905 թվական, օգոստոս), վերջացնելով 1906 թվականի կադետական մինիստրությամբ և բլոկով կադետների հետ ընդդեմ դեմոկրատիայի 1907 թվականին: (Փակագծերի մեջ նկատենք, վոր պ. Պլեխանովի հայեցակետից կադետների և մենշևիկների «ճիշտ ռազմագիտական հասկացողությունները» այն ժամանակ պարտություն կրեցին: Յեվ ինչու: Ինչու մասսաներն ականջ չդրին իմաստուն պ. Պլեխանովի և կադետների խորհուրդներին, վորոնք հարյուրապատիկ ավելի լայն էյին տարածվում, քան բոլշևիկների խորհուրդները):

Միայն այդ հոսանքները, բոլշևիկյան ու մենշևիկյան, մենմիայն նրանք արտահայտեցին իրանց **մասսաների** քաղաքականության մեջ 1904—1908 թ. թ., ինչպես և հետո, 1908—1914 թվականներին: Ինչու: Վորովհետև միայն այդ հոսանքներն ունեյին հաստատ դասակարգային արմատներ, առաջինը՝ պրոլետարական, յերկրորդը՝ լիբերալ-բուրժուական:

Այժմ մենք նորից գնում ենք դեպի հեղափոխություն: Այդ բոլորն են տեսնում: **Ինքը Խվոստովն է** խոսում գյուղացիների տրամադրության մասին, վոր հիշեցնում է 1905—6 թվականները: Յեվ դարձյալ մեր առաջ հեղափոխության **նույն** յերկու գիծն է, դասակարգերի **նույն** փոխհարաբերությունը, միայն ձևափոխված փոփոխված միջազգային կացությամբ: 1905 թ. ամբողջ յեվրոպական բուրժուազիան ցարիզմի կողմն էր և նրան օգնում էր ով միլիարդներով (ֆրանսացիները), ով հակահեղափոխական բանակ նախապատրաստելով (գերմանացիները): 1914 թ. բռնկվեց յեվրոպական պատերազմը, ամենուրեք բուրժուազիան ժամանակավորապես հաղթեց պրոլետարիատին, վողողեց նրան նացիոնալիզմի և շովինիզմի*) պղտոր ալիքներով: Ռուսաստանում մանր-բուրժուական ժողովրդական մասսաները, գլխավորապես գյուղացիությունը, առաջվա պես բնակչության մեծամասնությունն են կազմում: Նրանք առաջին հերթին հարստահարված են կալվածատերերի կողմից: Քաղաքականորեն նրանք մասամբ քնած են, մասամբ տատանվում են շովինիզմի («հաղթություն Գերմանիայի վրա», «հայրենիքի պաշտպանություն») և հեղափոխության միջև: Այդ մասսաների—և այդ տատանումների—քաղաքական արտահայտիչն են հանդիսանում մի կողմից նարոդնիկները (աշխատավորականները և սոց.-հեղափոխականները), մյուս կողմից—օպորտյունիստ սոց.-դեմոկրատ-

*) Շովինիզմ—ազգայնամոլ հայրենասիրություն: ԾԱՆՈԹ. ԽՄԲ.



ները*) («Նաշե Դելո» (67), Պլեխանով, Չխեյիձեյի (68) ֆրակցիան, Կազմ. Կոմիտեն (69), վորոնք 1910 թվականից սկսած վճռականորեն գլորվեցին լիբերալ բանվորական քաղաքականության շավղով և 1915 թվականին հասան մինչև պ. պ. Պոտրեսովի (70), Չերևանինի, Լևիցկու (71), Մասլովի սոցիալ-շովինիզմին, կամ նրանց հետ «միասնականություն» պահպանելու պահանջին:

Այս փաստական վիճակից ակներևորեն բղխում է պրոլետարիատի անելիքը: Անձնվեր խիզախ հեղափոխական պայքար միապետության դեմ (1912 թ. հունվարի կոնֆերենցիայի լոզունգները (72), «յերեք կետ ձկները» (73), պայքար, վոր իր յետևից քաշում է բոլոր դեմոկրատիկ մասսաները, այսինքն գլխավորապես գյուղացիությունը: Յեվ դրա հետ միասին անողոք պայքար շովինիզմի դեմ, պայքար Յեվրոպայի սոցիալիստական հեղափոխության համար՝ դաշնակցած նրա պրոլետարիատին: Մանր բուրժուազիայի տատանումները պատահական չեն, այլ անխուսափելի, նրանք բղխում են **նրա** դասակարգային վիճակից: Ռազմական կրիզիսը **սաստկացրել է** տնտեսական ու քաղաքական գործոնները, վորոնք հրում են նրան—և գյուղացիությանն այդ թվում—դեպի ձախ: Դրա մեջ է կայանում օբյեկտիվ հիմքը, թե դեմոկրատական հեղափոխությունը լիակատար հնարավորություն ունի հաղթություն շահելու Ռուսաստանում: Վոր Արևմտյան Յեվրոպայում լիովին հասունացել են սոցիալիստական հեղափոխության օբյեկտիվ պայմանները,—դա ապացուցելու մենք կարիք չունենք այստեղ, դա պատերազմից առաջ ճանաչել են բոլոր ազդեցիկ սոցիալիստները բոլոր առաջավոր յերկրներում:

Պարզել դասակարգերի փոխհարաբերությունը գալիք հեղափոխության մեջ—դա հեղափոխական կուսակցության գլխավոր անելիքն է: Այդ անելիքից խուսափում է Կազմ. Կոմիտեն, վորը Ռուսաստանում «Նաշե Դելո»-յի հավատարիմ դաշնակիցն է մնում և արտասահմանում վոչինչ չնշանակող «ձախ» ֆրազներ շպրտում: Այդ անելիքն անճիշտ է լուծում «Նաշե Սլովո» (74) թերթում Տրոցկին, վորը կըրկնում է 1905 թվականի իր «ինքնորինակ» թեորիան և չի ցանկանում մտածել այն մասին, թե տասը ամբողջ տարի ինչ պատճառների գոյությամբ է, վոր կյանքն այդ գեղեցիկ թեորիայի մոտով էր անցնում:

Տրոցկու ինքնորինակ թեորիան բոլշևիկներից վերցնում է այն կոչը, վորը պրոլետարիատին հրավիրում է վճռական հեղափոխական պայքար մղելու և քաղաքական իշխանությունը նվաճելու, իսկ մեն-

*) Օպորտյունիստ սոց-դեմոկրատները—բուրժուական ազդեցության հաղորդիչները բանվորական շարժման մեջ: ԾԱՆՈԹ. ԽՄԲ.

շևիկներից — գյուղացիության դերի «ժխտումը»։ Գյուղացիությունը, դեհ, շերտավորվել է, տարրալուծվել, նրա հնարավոր հեղափոխական դերը շարունակ նվազել, Ռուսաստանում անհնարին է ազգային հեղափոխությունը. «Մենք ապրում ենք իմպերիալիզմի դարաշրջանում», իսկ «իմպերիալիզմը հակադրում է չէ թե բուրժուական ազգը հին ռեժիմին, այլ պրոլետարիատը բուրժուական ազգին»։

Ահա «բառախաղի» մի զվարճալի օրինակ—իմպերիալիզմ։ Յեթե Ռուսաստանում արդեն հակադրենք պրոլետարիատը «բուրժուական ազգին», այն ժամանակ նշանակում է Ռուսաստանն ուղղակի կանգնած է **սոցիալիստական** հեղափոխության առաջ!! Այն ժամանակ ճիշտ չէ «**կալվածատիրական** հողերի գրավման» լոզունգը, վորը 1915 թ. կրկնում է Տրոցկին (1912 թ. հունվարի կոնֆերենցիայից հետո), այն ժամանակ հարկավոր է խոսել չէ թե «հեղափոխական բանվորական», այլ «բանվորական սոցիալիստական» կառավարության մասին!! Թե շփոթն ինչ չափերի չէ հասնում Տրոցկու մոտ, դա յերևում է նրա ֆրազից, թե վճռականությամբ պրոլետարիատը կհրապուրե և «վոչ-պրոլետարական (ժողովրդական) մասսաները» (№ 217)!! Տրոցկին չի մտածել, վոր յեթե պրոլետարիատը գրավե գյուղի վոչ-պրոլետարական մասսաները կալվածատիրական հողերի նվաճման համար և տապալե միապետությունը, ապա դա յել կլինի «ազգային բուրժուական հեղափոխության» ավարտումը Ռուսաստանում, հենց դա յել կլինի պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրա!

Ամբողջ տասնամյակը — 1905 — 1915 թ. թ. մեծ տասնամյակը— ապացուցեց, վոր հրապարակի վրա գոյություն ունի ռուսական հեղափոխության յերկու և միայն յերկու դասակարգային գիծ։ Գյուղացիության շերտավորումը սաստկացրել է դասակարգային պայքարը նրա ներսում, զարթեցրել է քաղաքականորեն քնած շատ տարրեր, քաղաքային պրոլետարիատին մոտեցրել է գյուղականը (նրա **առանձին** կազմակերպության մասին բոլշևիկները պնդել են սկսած 1906 թվականից և այդ պահանջը մտցրին Ստոկհոլմի մենշևիկական համագումարի բանաձևի մեջ)։ Բայց «գյուղացիության» և Մարկովների—Ռոմանովների—Խվոստովների ներհակությունը սաստկացել է, աճել, սրվել։ Դա այնպիսի ակներև ճշմարտություն է, վոր **անգամ** հազարավոր ֆրազներ Տրոցկու տասնյակ Պարիզյան հոդվածներում չեն «հերքի» այն։ Տրոցկին իրականում ոգնում է Ռուսաստանի լիբերալ բանվորական քաղաքագետներին, վորոնք գյուղացիության դերի «ժխտումի» տակ **անցանկալի** չեն համարում գյուղացիներին հեղափոխության բարձրացնել։

Իսկ դրա մեջն է այժմ եությունը։ Պրոլետարիատը պայքարում է և պիտի անձնվիրաբար պայքարե իշխանությունը նվաճելու



համար, հանրապետության համար, հողերը գրավելու համար, **այսինքն** գյուղացիությունն իր կողմը գրավելու համար, պիտի պայքարե նրա հեղափոխական ուժերը **սպառելու** համար, պիտի պայքարե նրա համար, վոր «վոչ-պրոլետարական ժողովրդական մասսաներին» մասնակից դարձնի **բուրժուական** Ռուսաստանը **ռազմա-ֆեոդալական** «իմպերիալիզմից» (ցարիզմից) ազատագրելու գործին։ Յեվ բուրժուական Ռուսաստանի ցարիզմից, կալվածատերերի հողի իշխանությունից ազատագրվելու այդ հանգամանքից պրոլետարիատն անհապաղ ոգուտ կը քաղե չէ թե աջակցելու ունևոր գյուղացիներին գյուղական բանվորի դեմ մղած նրանց պայքարի մեջ, այլ սոցիալիստական հեղափոխություն կատարելու՝ դաշնակցած Յեվրոպայի պրոլետարներին։

«Սոցիալ-Դեմոկրատ», (75) № 48.
1915 թ. նոյեմբերի 20.

# ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ ՄԵՐ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵՋ

**(Պրոլետարական կուսակցության պլատֆորմի նախագիծ)** (76)

## ԻՆՔՆՈՐԻՆԱԿ ՅԵՐԿԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆՐԱ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

5. Մեր հեղափոխության ամենագլխավոր առանձնահատկությունը, առանձնահատկություն, վորն առավել հրամայականորեն է պահանջում ներհուն վերաբերմունք դեպի ինքը,—դա հանդիսանում է հեղափոխության հաղթանակի առաջին իսկ օրերից ստեղծված յերկիշխանությունը։

Այդ յերկիշխանությունն արտահայտվում է յերկու կառավարությունների գոյության մեջ. գլխավորը, իսկականը, իրականը բուրժուազիայի կառավարությունն է, Լվովի և ընկ. «Ժամանակավոր Կառավարությունը», վորը իր ձեռքին է պահում իշխանության բոլոր որգանները. լրացուցիչը, ոժանդակը, «վերհսկողը» Բանվորների և Զինվորների Պատգամավորների Պետրոգրադի Խորհուրդն է, վորն իր ձեռքին չունի պետական իշխանության որգանները, բայց անմիջականորեն հենվում է ժողովրդի ակնհայտ անպայման մեծամասնության վրա, զինված բանվորների ու զինվորների վրա։

Այդ յերկիշխանության դասակարգային աղբյուրը և դասակարգային նշանակությունը կայանում է նրանում, վոր 1917 թվականի մարտի ռուսական հեղափոխությունը վոչ միայն սրբեց ամբողջ ցարական միապետությունը, վոչ միայն ամբողջ իշխանությունը բուրժուազիային հանձնեց, այլև ընդհուպ հասավ պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրային։ Հայտ-

նապես նման դիկտատուրա չէ (այսինքն իշխանություն, վորը կռթնում է չէ թե օրենքի, այլ բնակչության զինված մասսաների անմիջական ուժի վրա) և հայտնապես հիշված դասակարգերի դիկտատուրայի հանդիսանում Պետրոգրադի և ուրիշ վայրերի տեղական բանվորների ու զինվորների պատգամավորների խորհուրդները:

6. Ռուսական հեղափոխության հետևյալ խիստ կարևոր առանձնահատկությունն այն է հանդիսանում, վոր Բանվորների ու Զինվորների Պատգամավորների Պետրոգրադի Խորհուրդը, վորը՝ ըստ ամենայնի դատելով՝ օգտվում է տեղական խորհուրդների մեծամասնության վստահությամբ, հոժարակամ հանձնում է պետական իշխանությունը բուրժուազիային և նրա Ժամանակավոր Կառավարությանը, հոժարակամ զիջում է նրան առաջնությունը, նրա հետ համաձայնություն կնքելով նրան պաշտպանելու համար, սահմանափակվում է դիտողի, վերահսկողի դերով Հիմնադիր Ժողովի հրավիրման համար (վորի հրավիրման ժամկետը Ժամանակավոր Կառավարությունը մինչև օրս նույնիսկ չի հրապարակել):

Այդ չափազանց ինքնորինակ, պատմության մեջ այդ ձևով չը տեսնված հանգամանքն առեղծել է յերկու դիկտատուրայի ի մի հյուսելը,—բուրժուազիայի դիկտատուրայի (վորովհետև Լվովի և ընկ. կառավարությունը դիկտատուրա՝ է, այսինքն իշխանություն, վորը կռթնում է չէ թե օրենքի և ժողովրդի կանխորեն արտահայտած կամքի, այլ ուժով զավթածի վրա, ըստ վորում այդ զավթումն իրագործված է վորոշ դասակարգի, այն է՝ բուրժուազիայի կողմից) և պրոլետարիատի ու գյուղացիության դիկտատուրայի (Բանվորների և Զինվորների Պատգամավորների Խորհուրդ):

Նվազագույն իսկ տարակուսանք չկա, թե այդ «հյուսվածքը» ի վիճակի չէ յերկար դիմանալու: Պետության մեջ յերկու իշխանություն չի լինում: Նրանցից մեկը պիտի չքանա, և Ռուսաստանի ամբողջ բուրժուազիան բոլոր ուժով, ամեն մի յեղանակով, ամենուրեք արդեն աշխատանք է թափում վերացնելու և անուժ դարձնելու Բանվորների և Զինվորների Պատգամավորների Խորհուրդները, բուրժուազիայի միահեծան իշխանություն առեղծելու:

Յերկիշխանությունն արտահայտում է միայն հեղափոխության զարգացման մեջ փոխանցման մոմենտը, յերբ նա առաջ է անցել սովորական բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունից, բայց դեռ չի հասել պրոլետարիատի և գյուղացիության «անխառն» դիկտատուրային:

Այդ փոխանցիկ, անկայուն վիճակի դասակարգային նշանակությունը (և դասակարգային բացատրությունը) կայանում է հետևյալի մեջ.—ինչպես և ամեն մի հեղափոխություն՝ մեր հեղափոխությունը



պահանջել է մեծագույն հերոսություն, մասսայի ինքնազոհաբերում ցարիզմի դեմ պայքարելու համար, այլ և միանգամից շարժման մեջ է գրավել չլսված ահագին քանակի թաղականները (обыватель):

Յուրաքանչյուր իսկական հեղափոխության գլխավոր, գիտական և գործնա-քաղաքական նշաններից մեկը կայանում է նրա մեջ, վոր սովորականից դուրս արագ, անվերապահորեն, սաստիկ ավելանում է «թաղականների» թիվը, վորոնք անցնում են ակտիվ, ինքնուրույն, գործոն մասնակցության քաղաքական կյանքում, պետության շինարարության մեջ:

Այսպես և Ռուսաստանը: Ռուսաստանն այժմ յեռում է: Միլլիոնավոր ու տասնյակ միլլիոնավոր մարդիկ, վորոնք քաղաքականորեն քնած էյին տասը տարի, քաղաքականորեն տրորված ցարիզմի զարհուրելի հարստահարությամբ և կալվածատերերի ու ֆաբրիկանտների համար թափած տաժանակիր աշխատանքով,—արթնացել են ու քաղաքականության դիմել: Իսկ ովքեր են այդ միլլիոնավորներն ու տասնյակ միլլիոնավորները: Ըստ մեծի մասին մանր տնտեսատերեր, մանր բուրժուաներ, մարդիկ, վոր կանգնած են կապիտալիստների ու վարձու բանվորների արանքում: Ռուսաստանը բոլոր յեվրոպական յերկրներից առավել մանր բուրժուական յերկիրն է:

Վիթխարի մանր-բուրժուական ալիքը վողողել է ամեն ինչ, ճնշել է գիտակից պրոլետարիատին վոչ միայն իր թվական մեծությամբ, այլ և գաղափարապես, այսինքն քաղաքականության վրա ունեցած մանր-բուրժուական հայացքներով վարակել, ընդգրկել է բանվորների խիստ լայն շրջաններ:

Մանր բուրժուազիան կյանքում կախում ունի բուրժուազիայից, ապրելով ինքն իբր տնտեսատեր, այլ վոչ իբր պրոլետար (հասարակական արտադրության մեջ բռնած տեղի իմաստով), և մըտքի աշխարհում նա բուրժուազիայի յետևից է գնում:

Անգիտակցական-վստահարար վերաբերմունք դեպի կապիտալիստները, դեպի սոցիալիզմի ու խաղաղության այդ վատթարագույն թշնամիները,—ահա ինչ է բնորոշում մասսաների արդի քաղաքականությունը Ռուսաստանում, ահա հեղափոխական արագությամբ ինչ բուսավ բոլոր յեվրոպական յերկրներից առավել մանր-բուրժուական սոցիալ-տնտեսական հողի վրա: Ահա «համաձայնության» դասակարգային հիմքը (ընդգծում եմ, վոր նկատի ունեմ վոչ այնքան ձևական համաձայնությունը, վորքան փաստական պաշտպանությունը, լուռ համաձայնությունը, իշխանության անգիտակցական-վստահաբար զիջումը) Ժամանակավոր Կառավարության և Բանվորների ու Զինվորների Պատգամավորների Խորհրդի միջև,—համաձայնություն, վորը Գուչկովներին (77) տվել է յուղոտ կտոր, իսկական իշխանու-

թյուն, իսկ Խորհրդին—խոստումներ, պատիվ (մի առ ժամանակ), ֆրազի շողոքորթություն, հավաստիացում, Կերենսկիների (78) հաճոյախոսություններ։

Պրոլետարիատի անբավարար քանակը Ռուսաստանում, նրա անբավարար գիտակցությունն ու կազմակերպվածությունը—ահա նույն մեդալի մյուս կողմը։

Բոլոր նարոդնիկական կուսակցությունները, ընդհուպ մինչև սոց.-հեղափոխականները, միշտ մանր բուրժուական են յեղել. Կազմ. Կոմիտեյի կուսակցությունը (Չխեիձե, Ծերեթելի (79) և այլք) նույնպես. անկուսակցական հեղափոխականները (Ստեկլով (80) և մյուսները) հավասարապես յենթարկվել են ալիքին, կամ չեն հաղթահարել, չեն հաջողել հաղթահարելու ալիքը։

## ՆԱԽԸՆԹԱՑԻՑ ԲԽՈՂ ՏԱԿՏԻԿԱՅԻ ԻՆՔՆՈՐԻՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

7. Փաստական վիճակի վերը մատնանշած ինքնորինակությունից բխում է յուրաքանչյուր մարքսիստի համար պարտադիր տվյալ մոմենտի տակտիկայի ինքնորինակությունը. մարքսիստի համար, վորը պարտավոր է հաշվի նստել օբյեկտիվ փաստերի, մասսաների ու դասակարգերի, այլ վոչ թե անձերի հետ և այլն։

Այդ ինքնորինակությունն առաջին պլանն է մղում «քացախի ու լեղու թափումը հեղափոխական-դեմոկրատական ֆրազների քաղցրիկ ջրիկի մեջ» (ինչպես զարմանալի տեղին արտահայտվեց մեր կուսակցության Կ. Կ. իմ ընկեր Տեոդորովիչը յերկաթուղային ծառայողների ու բանվորների Համառուսական Համագումարի յերեկվա նիստի մեջ Պիտերում)։ Քննադատության աշխատանքը պիտի լինի՝ պարզաբանել մանր բուրժուական կուսակցությունների՝ սոց.-հեղ. և սոց.-դեմ.՝ սխալները, նախապատրաստել և համախմբել գիտակից-պրոլետարական, Կոմմունիստական կուսակցության տարրերը, ազատել պրոլետարիատին «ընդհանուր» մանր-բուրժուական արբեցումից։

Այդ թվում է «միայն» պրոպագանդիստական աշխատանք։ Իրականի մեջ—դա ամենագործնական հեղափոխական աշխատանքն է, վորովհետև չի կարելի առաջ շարժել հեղափոխությունը, վորը կանգ է առել, մինչ կոկորդ կշտացել ֆրազով, «քայլ է անում իր տեղում» չե թե արտաքին արգելանքների, չե թե բուրժուազիայի կողմից գործադրած բռնության պատճառով (Գուչկովը դեռ միայն սպառնում է բռնություն գործադրել զինվորների մասսայի դեմ), այլ մասսայի վստահացող անգիտակցության շնորհիվ։

Միայն այդ վստահացող անգիտակցության դեմ պայքարելով է (իսկ դրա դեմ պայքարել կարելի չե և պետք է բացառապես գաղա-



փարապես, ընկերական համոզումով, կյանքի փորձը մատնանշելով), վոր մենք կարող ենք ազատագրվել հեղափոխական ֆրազի իշխող սանձարձակությունից և իսկապես առաջ հրել թե պրոլետարական գիտակցությունը, թե մասսայի գիտակցությունը և թե նրանց խիզախ վճռական ձեռներեցությունը տեղերում, ինքնաբուխ իրագործումը, զարգացումը և ամրացումն ազատությունների, դեմոկրատիայի, ամբողջ հողի համաժողովրդական տիրապետության սկզբունքի։

8. Բուրժուական և կալվածատիրական կառավարությունների համաշխարհային փորձը մշակել է յերկու յեղանակ ժողովրդին ճնշման տակ պահելու համար։ Առաջինը՝ բռնությունն է։ Նիկոլայ Ռոմանով (I), Նիկոլայ Պալկին, և Նիկոլայ (II)-Արյունոտը ցույց տվին ռուս ժողովրդին այդպիսի դահճական յեղանակի հնարավոր և անհնարին մաքսիմումը։ Բայց կա մի ուրիշ յեղանակ, վորը լավագույն կերպով մշակել է անգլիական ու ֆրանսիական բուրժուազիան, «խրատվելով» մի շարք մեծ հեղափոխություններից և մասսաների հեղափոխական շարժումներից։ Դա խաբկանքի, շողոքորթության, ֆրազի, միլլիոնավոր խոստումների, գրոշանոց վողորմության, անկարևորի զիջումի, կարևորի պահպանումի յեղանակն է։

Մոմենտի ինքնորինակությունը Ռուսաստանում—դա գլխապտույտորեն արագ փոխանցումն է առաջին՝ յեղանակից դեպի յերկրորդը, ժողովրդի վրա բռնանալուց դեպի ժողովրդի շողոքորթումը, դեպի նրա խաբելը խոստումներով։ Կատուն լսում է ու խժռում։ Միլյուկովը (81) և Գուչկովն իրանց ձեռքին ունեն իշխանությունը, պաշտպանում են կապիտալի շահը, իմպերիալիստական պատերազմ են մղում ռուսական և անգլո-ֆրանսիական կապիտալի շահերի համար,—և ոծիք են թափում խոստումներով, ճամարտակությամբ, էֆֆեկտավոր հայտարարություններով ի պատասխան այնպիսի «խոհարարների» ճառերի, վորպիսիք են Չխեիձե, Ծերեթելի, Ստեկլով, վորոնք սպառնում են, խղճահարեցնում, նզովում, աղաչում, պահանջում հոչակում... Կատուն լսում է ու խժռում։

Յեվ որն որին վստահացող անգիտակցությունն ու անգիտակից վստահությունը պիտի չքանան, մանավանդ պրոլետարների ու չքավորագույն գյուղացիների կողմից, վորոնց կյանքը (նրանց հասարակական-տնտեսական վիճակը) սովորեցնում է չհավատալ կապիտալիստներին։

Մանր բուրժուազիայի առաջնորդները «պիտի» սովորեցնեն ժողովրդին վստահություն տածելու դեպի բուրժուազիան։ Պրոլետարները պիտի է նրան անվստահություն սովորեցնեն։

## ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆՐԱ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

9. «Համարյա ամեն ինչ» վողողած մանր-բուրժուական ալիքի ամենախոշոր, ամենավատ արտահայտությունը պիտի ճանաչել հեղափոխական պաշտպանողականությունը(82): Հայտնապես դա յե ռուսական հեղափոխության հետագա շարժման ու հաջողության ամենակատաղի թշնամին:

Ով գայթակղվել ե այս կետում և չի կարողացել ազատագրվել,— նա կորել ե հեղափոխության համար: Բայց մասսաներն այլ կերպ են գայթակղվում, քան առաջնորդները, և այլ կերպ, զարգացման այլ ընթացքով, այլ յեղանակով են ազատագրվում:

Հեղափոխական պաշտպանողականությունը մի կողմից՝ այն պըտուղն ե, վոր մասսաների նկատմամբ բուրժուազիայի ձեռքով գործադրված խաբեկանքից ե ծագում, գյուղացիների և բանվորների մի մասի վստահացող անգիտակցության պտուղը, իսկ մյուս կողմից— մանր տնտեսատիրոջ շահերի ու հայեցակետի արտահայտությունն ե, տնտեսատիրոջ, վորը հայտնի չափով շահագրգռված ե աննեքսիաների ու բանկային շահույթների մեջ և վորը «սրբությամբ» ե պահում ցարիզմի ավանդությունները, վորը ստիպելով վելիկառուսներին դաժանություն կատարել մյուս ժողովուրդների վրա՝ անբարոյացնում եր նրանց:

Բուրժուազիան խաբում ե ժողովրդին, խաղալով հեղափոխության ազնիվ հպարտության վրա և այնպես պատկերացնելով գործը, թե իբր հեղափոխության այդ փուլից, ցարական միապետությունը Գուչկով Միլյուկովի համարյա-հանրապետության փոխարինումով Ռուսաստանի կողմից փոխվել ե պատերազմի սոցիալ քաղաքական բնույթը:

Յեվ ժողովուրդն առժամապես հավատաց շնորհիվ այն բանի, վոր նշանակալից չափով խոնարհվում ե հնօրյա նախապաշարումների առաջ, վորոնք ստիպում են Ռուսաստանի մյուս ժողովրդների մեջ, բացի վելիկառուսներից, տեսնել վելիկառուսների մի տեսակ սեփականությունը կամ կալվածքը: Ցարիզմի ձեռքով վելիկառուս ժողովրդի ստոր անբարոյացումը, վորը սովորեցրել ե հանձինս մյուս ժողովրդների մի ցած բան տեսնել, մի ինչ վոր «իրավունքով» Վելիկառուսիային պատկանող բան, չեր կարող միանգամից ցրվել:

Մեզնից հմտություն ե պահանջվում բացատրելու մասսաներին, թե պատերազմի սոցիալ-քաղաքական բնույթը վորոշվում ե չե թե անձանց և խմբակների, անգամ ժողովրդի «բարի կամքով», այլ պատերազմ վարող դասակարգի վիճակով, դասակարգի քաղաքականու-



թյամբ, վորի շարունակությունն ե հանդիսանում պատերազմը, կապիտալի, իբրև արդի հասարակության մեջ տիրապետող տնտեսական ուժի, կապերով, միջազգային կապիտալի իմպերիալիստական բնույթով, Ռուսաստանի ֆինանսական, բանկային, դիպլոմատիական կախումով Անգլիայից ու Ֆրանսիայից և այլն: Հեշտ չե այս հմտորեն, հասկանալիորեն բացատրել մասսաներին, առանց սխալների, և վոչ վոք մեզանից չեր կարող այդ միանգամից անել:

Բայց մեր պրոպագանդայի ուղղությունը, կամ ավելի ճիշտ՝ բովանդակությունը պիտի այդպիսին լինի և միայն այդպիսին: Նվազագույն զիջումն իսկ հեղափոխական պաշտպանողականության—դա դավաճանություն ե սոցիալիզմին, լիակատար հրաժարումք ինտերնացիոնալիզմից, ինչ գեղեցիկ ֆրազներով, ինչ «գործնական» նկատառումներով եւ չարդարացնվի այդ:

«Կորչի պատերազմը» լոզունգը, հարկավ, ճիշտ ե, բայց նա չի հաշվառում մոմենտի խնդիրների ինքնորինակությունը, լայն մասսաներին այլ կերպ մոտենալու անհրաժեշտությունը: Իմ կարծիքով նա նման ե «կորչի թագավորը» լոզունգին, վորով «հին բարի ժամանակների» վոչ հմուտ ագիտատորը պարզ և ուղղակի գյուղ եր գընում—և ծեծ ուտում: Հեղափոխական պաշտպանողականության մասսայական ներկայացուցիչները բարեխիղճ են—վոչ անձնական, այլ դասակարգային իմաստով, այսինքն նրանք պատկանում են այնպիսի դասակարգերի (բանվորներ ու չքավորագույն գյուղացիներ), վորոնք իսկապես չեն շահում աննեքսիաներից և օտար ժողովուրդների խեղդումից: Դա այն չե, ինչ բուրժուաները և պ. պ. «ինտելլիգենտները», վորոնք գեղեցիկ են հասկանում, վոր չի կարելի հրաժարվել աննեքսիաներից՝ չհրաժարվելով կապիտալի տիրապետությունից, և անխըղճորեն խաբում են մասսաներին գեղեցիկ ֆրազով, խոստումներով առանց չափի, հավաստիացումներով առանց համարի:

Պաշտպանողականության մասսայական ներկայացուցիչը գործին նայում ե հասարակ ձևով, թաղականի աչքով.«յես աննեքսիա չեմ ուզում, իսկ վրա յե «գալիս» գերմանացին, նշանակում ե՝ յես պաշտպանում եմ արդարացի մի գործ, այլ վոչ թե ինչ-վոր իմպերիալիստական շահեր»: Այդպիսի մարդուն հարկավոր ե բացատրել ու բացատրել, թե խնդիրը նրա անձնական ցանկությունների մեջ չե, այլ մասսայական, դասակարգային, քաղաքական հարաբերություններում և պայմաններում, պատերազմի այն կապի մեջ, վոր կա կապիտալի շահերի և բանկերի միջազգային ցանցի հետ և այլն: Պաշտպանողականության դեմ մղած միայն այսպիսի պայքարն ե լուրջ և հաջողություն ե խոստանում—գուցե վոչ այնքան արագ, բայց անսխալ և հաստատ...

## ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՐՑ (83)

13. Մենք ներկայումս վորոշակի չենք կարող իմանալ, թե մոտիկ ապագայում հզոր ագրարային հեղափոխություն կզարգանա արդյոք ռուսական գյուղում: Մենք չենք կարող իմանալ, թե վերջին ժամանակներս հայտնապես վորքան խորն է գնացել գյուղացիության անտարակուսելի դասակարգային բաժանումը մի կողմից՝ բատրակների, վարձու բանվորների և չքավորագույն գյուղացիների («կիսապրոլետարների») և մյուս կողմից՝ ունևոր ու միջին գյուղացիների (կապիտալիստների ու կապիտալիստիկների): Այդպիսի հարցեր կլուծե և միայն կարող է լուծել փորձը:

Բայց մենք, իբրև պրոլետարիատի կուսակցություն, անպայման պարտավոր ենք անհապաղ հրապարակ գալ վոչ միայն ագրարային (հողային ծրագրով, այլև անհապաղորեն իրագործելի գործնական միջոցների քարոզով հօգուտ Ռուսաստանի գյուղացիական ագրարային հեղափոխության:

Մենք պիտի պահանջենք բոլոր հողերի ազգայնացում(84), այսինքն պետության մեջ գտնվող բոլոր հողերի անցնելը կենտրոնական պետական իշխանության սեփականության: Այդ իշխանությունը պիտի վորոշե գաղթային ֆոնդի չափը և այլն, նա պիտի վորոշե անտառների պահպանության, մելիորացիայի *) օրենքները և այլն, անպայման արգելե ամեն մի միջնորդության հողի սեփականատեր պետության և նրա կապալառու-տնտեսատիրոջ միջև (արգելել հողի ամեն մի ձ ուքից ձեռք տալը): Բայց հողի ամբողջ տնօրինումը, տիրության և օգտագործման տեղական պայմանների ամբողջ վորոշումը պիտի գտնվի ամբողջապես ու բացառապես չէ թե բյուրոկրատական չինովնիկական ձեռքերում, այլ մարզի ու տեղական Գյուղացիական Պատգամավորների Խորհուրդների ձեռքերում:

Հացի արտադրության տեխնիկայի և արտադրության չափերի բարձրացման նպատակով, այլ և ռացիոնալ խոշոր տնտեսության զարգացման և նրա նկատմամբ հասարակական վերահսկողության համար, մենք գյուղացիական կոմիտեների ներսում պիտի պաշտպանենք, վոր յուրաքանչյուր գրաված կալվածատիրական կալվածքից կազմվի խոշոր օրինակելի տնտեսություն, յենթարկելով այն բատրակների Պատգամավորների Խորհուրդների վերահսկողության:

Իբր հակակշիռ մանր-բուժուական ֆրազին ու քաղաքականությանը, վորն իշխում է սոց-հեղ. մոտ, մանավանդ «սպառողական» կամ «աշխատավորական» նորմայի, «հողի սոցիալիզացիայի» (85) և այլն

*) Մելիորացիա—բարելավումներ գյուղատնտեսության մեջ (ճահիճների չորացում, վոռոգում, ճանապարհների կառուցում և այլն: ԾԱՆՈԹ. ԽՄԲ.



վերաբերյալ դատարկ վրույցներում,—պրոլետարիատի կուսակցությունը պիտի բացատրի, թե ապրանքային արտադրության սրով մանր տնտեսության սիստեմը ի վիճակի չէ փրկելու մարդկությունը մասսաների չքավորությունից ու հարստահարությունից:

Անհապաղորեն և պարտադրաբար չպառակտելով Գյուղացիական Պատգամավորների Խորհուրդները՝ պրոլետարիատի կուսակցությունը պիտի պարզաբանի, թե անհրաժեշտ է կազմել առանձին բատրակների Պատգամավորների Խորհուրդներ և առանձին Պատգամավորների Խորհուրդներ չքավորագույն (կիսապրոլետար) գյուղացիներից, կամ գոնե նման դասակարգային վիճակի պատգամավորների առանձին մշտական խորհրդակցություններ, իբրև առանձին ֆրակցիաներ կամ կուսակցություններ ընդհանուր Գյուղացիական Պատգամավորների Խորհուրդների ներսում: Առանց դրան դուրս կգա, վոր նարոդնիկների բոլոր անուշ մանր-բուրժուական խոսքերը գյուղացիության մասին ընդհանրապես՝ չունևոր մասսային խաբկանքի տակ պահելու մի ծածկոց է ունևոր գյուղացիության կողմից, վոր ներկայացնում է միայն կապիտալիստների մի առանձին տեսակը:

Իբրև հակակշիռ բուրժուա-լիբերալ կամ զուտ չինովնիկական քարոզի, վոր անում են շատ սոց-հեղափոխականներ և Բանվորների ու Զինվորների Պատգամավորների Խորհուրդները, խորհուրդ տալով գյուղացիներին մինչև Հիմնադիր Ժողովի հրավիրումը չվերցնել կալվածատիրական հողերը և ագրարային վերակազմավորումներ չսկսել,—պրոլետարիատի կուսակցությունը պիտի կոչե գյուղացիներին անհապաղորեն ինքնագլուխ կերպով իրագործելու հողային վերակազմավորումները և տեղերում Գյուղացիական Պատգամավորների Խորհուրդների վորոշումներով անհապաղորեն գրավելու կալվածատիրական հողերը:

Ընդ սմին մանավանդ կարևոր է պնդել, վոր անհրաժեշտ է բարձրացնել ուտելիքների արտադրությունը ֆրոնտի զինվորների ու քաղաքների համար,—թե բացարձակապես անթույլատրելի չէ վորևէ վնաս հասցնել կամ փչացնել անասունները, գործիքները, մեքենաները, շինությունները և այլն, և այլն:

Գրված է 1917 թ. ապրիլի 10.
Հրատարակված է 1917 թ սեպտեմբերին.
բրոշյուրով:

# ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

## ՀՈԴՎԱԾ ԱՌԱՋԻՆ

*Այժմ Պիտերում նիստեր ունեցող արհեստակցական միությունների համառուսական կոնֆերենցիայի առաջ պիտի դնել արտակարգ կարևորության մի հարց։ Դա գյուղացիական բանվորների համառուսական միություն հիմնելու հարցն է։*

*Ռուսաստանի բոլոր դասակարգերը կազմակերպվում են։ Ամենից ավելի շահագործվող, ամենից ավելի աղքատ ապրող, ավելի տրորված ու ճնշված Ռուսաստանի գյուղատնտեսական վարձու բանվորների դասակարգը կարծես թե մոռացված է։ Մի քանի վոչ-ռուսական ծայրերկրներում, օրինակ, լատիշական յերկրում, գոյություն ունեն գյուղատնտեսական վարձու բանվորների կազմակերպություններ։ Վելիկառուսական և ուկրայնական նահանգների ահագին մեծամասնության մեջ գյուղական պրոլետարիատի դասակարգային կազմակերպություններ չկան։*

*Ռուսաստանի պրոլետարների առաջավոր ջոկատի—արդյունաբերական բանվորների արհեստակցական միությունների—մեծագույն և անպայման պարտքն է օգնության հասնել իրենց յեղբայրներին, գյուղական բանվորներին։ Գյուղական բանվորների կազմակերպման դժվարություններն ահագին են,—դա ակներև է, և բոլոր կապիտալիստական յերկրների փորձն այդ է հաստատում։*

*Այս պատճառով ավելի չե անհրաժեշտ վորքան կարելի չե փութով և յեռանդագին ձեռք զարկել օգտագործելու քաղաքական ազատությունները Ռուսաստանում և անհապաղորեն հիմնելու գյուղական բանվորների համառուսական միություն։ Հենց արհեստակցական միությունների կոնֆերենցիան կարող է և պիտի անե այդ։ Հենց այժմ կոնֆերենցիայի ժողոված պրոլետարիատի ավելի փորձված, ավելի զարգացած, ավելի գիտակից ներկայացուցիչները կարող են և պիտի կոչ կարդան գյուղական բանվորների հասցեյով, դեպի իրանց կանչեն նրանց, ինքնուրույնաբար կազմակերպվող պրոլետարների շարքերը, նրանց արհեստակցական միությունների շարքերը։ Հենց ֆաբրիկաների վարձու բանվորները պիտի նախաձեռնություն հանձն առնեն, օգտագործեն ամբողջ Ռուսաստանում ցան ու ցրիվ բջիջները, խմբակները, արհեստակցական միությունների բաժանմունքները, վորպեսզի ինքնուրույն կյանքի զարթեցնեն գյուղական բանվորին, գործոն մասնակցության հրավիրեն այն պայքարի մեջ, վոր հետամտում է նրա վիճակի բարելավումը, նրա դասակարգային շահերի պաշտպանությունը։*



*Հավանորեն շատերին կթվա և պիտի յենթադրել այդպիսին կը լինի անգամ գերակշռող կարծիքը տվյալ մոմենտին, թե հենց այժմ, յերբ գյուղացիությունն է կազմակերպվում ամբողջ Ռուսաստանում, հռչակելով հողի մասնավոր սեփականության վերացում և նրա «հավասարար» օգտագործում,—գյուղական բանվորների արհեստակցական միության կազմավորումն անժամանակ է։*

*Ուղղակի ընդհակառակը։ Հենց նման ժամանակ է մանավանդ տեղին և անհրաժեշտաբար անհետաձգելի այն։ Նրանց համար, վորոնք կանգնած են դասակարգային, պրոլետարական տեսակետի վրա, կասկած չի հարուցանում այն սկզբունքի ճշմարտությունը, վոր Ռուսաստանի սոց.-դեմ. Բան. կուսակցության 1906 թ. Ստոկհոլմի համագումարում է ընդունվել մենշևիկների կողմից, առաջարկված լինելով բոլշևիկների ձեռներեցությամբ, և այդ ժամանակից էլ ՌՍԴԲԿ ծրագրի մեջ մտել։ Այդ սկզբունքն ասում է.*

*«Կուսակցությունը* **բոլոր** *դեպքերում և դեմոկրատիկ ագրարային վերակազմավորումների* **ամեն** *վիճակում իր անելիքն է համարում* **անշեղորեն** *ձգտել դեպի* **գյուղական պրոլետարիատի ինքնուրույն դասակարգային** *կազմակերպումը, բացատրել նրան նրա շահերի անհաշտելի հակադրությունը գյուղացիական բուրժուազիայի շահերին, նախազգուշացնել նրան չհրապուրվելու գյուղացիական տնտեսության սիստեմով, վորն ապրանքային արտադրության գոյության օրով ի վիճակի չե վոչնչացնելու մասսաների չքավորությունը, և, վերջապես, մատնանշել լիակատար սոցիալիստական հեղաշրջման անհրաժեշտության վրա, իբրև ամեն մի չքավորություն և ամեն մի շահագործում վոչնչացնելու միակ միջոցի վրա»։*

*Չկա և վոչ մի գիտակից բանվոր, չկա արհեստակցական միության և վոչ մի անդամ, վոր չճանաչեր այս սկզբունքների ճշմարիտ լինելը։ Կիրառել նրանց կյանքում, վոր չափով խնդիրը վերաբերում է* **գյուղական պրոլետարիատի ինքնուրույն դասակարգային կազմակերպմանը**,*—դա արհեստակցական միությունների գործն է հատկապես։*

*Մենք հույս ունենք, վոր հենց հեղափոխական մի ժամանակ, յերբ աշխատող մասսաների մեջ ընդհանրապես՝ բանվորների շարքերում մանավանդ, կենդանի յե իրան արտահայտելու, իր համար ճանապարհ բանալու ձգտումը, յերբ ձգտում կա թույլ չտալ նոր ձևով կառուցել կյանքը, քանի աշխատանքի հարցերն ինքնուրույնաբար չեն լուծել իրանք բանվորները,—հենց նման մի ժամանակ արհեստակցական միությունները չեն ամփոփվի համքարական նեղ շահերի մեջ, չեն մոռանա ավելի թույլ յեղբայրներին, գյուղական բանվորներին, այլ ամբողջ յեռանդով օգնության կգան նրանց, Ռուսաստանի գյուղական բանվորների միություն հիմնելով։*

Հաջորդ հոդվածում մենք կփորձենք մի քանի գործնական քայլեր նշանառելու այդ ուղղությամբ։

## ՀՈԴՎԱԾ ՅԵՐԿՐՈՐԴ

Նախորդ հոդվածում մենք կանգ առանք Ռուսաստանի գյուղական բանվորների միության հարցի սկզբունքային նշանակության վրա։ Այժմ շոշափենք այդ հարցի մի քանի գործնական կողմերը։

Ռուսաստանի գյուղական բանվորների միությանը պիտի պատկանեն նրանք, ովքեր առավելապես կամ գլխավորապես, կամ թե **մասնակիորեն** վարձու աշխատանքով են զբաղված գյուղատնտեսական ձեռնարկություններում։

Անհրաժեշտություն կլինի՞ արդյոք, վոր այդպիսի միությունները ստորաբաժանվեն զուտ գյուղատնտեսական բանվորների միությունների և այն բանվորների միությունների, վորոնք միայն մասամբ են վարձու բանվորներ հանդիսանում,—դա փորձը ցույց կըտա։ Դա համենայն դեպս կարևոր չէ։ Կարևորն այն է, վոր միատեսակ են հիմնական դասակարգային շահերը այն **բոլոր** մարդկանց, ովքեր իրանց բանվորական ույժն են վաճառում, և վոր միատեղ համախմբումը **բոլոր** նրանց, ովքեր ապրուստի միջոցների մի մասն իսկ քաղում են «ոտարների դռներում» վարձու աշխատանք կատարելով—անպայման անհրաժեշտ է։

Քաղաքների, ֆաբրիկաների, գործարանների վարձու բանվորները հազարավոր ու միլիոնավոր թելերով կապված են գյուղի վարձու բանվորների հետ։ Անհետ չի կարող մնալ այն կոչը, վոր առաջինները կուղղեն վերջիններին։ Բայց խնդիրը միայն կոչով չպիտի սահմանափակվի։ Քաղաքների բանվորներն առավել շատ փորձ, գիտություն, միջոցներ և ույժ ունեն։ Պետք է այդ **ուժերի մի մասն** ուղղակի **հատկացնել** նրան, վորպեսզի **բարձրանալու օգնել** կարելի լինի գյուղական բանվորներին։

Պետք է նշանակել մի որ, վորի աշխատավարձը բոլոր կազմակերպված բանվորները պիտի տան քաղաքի և գյուղի վարձու բանվորների միավորման ամբողջ գործը զարգացնելու, ամրացնելու համար։ Թող այդ գումարի վորոշ մասը քաղաքային բանվորներից ամբողջությամբ գնա ոգնելու գյուղական բանվորների դասակարգային միավորմանը։ Թող այդ ֆոնդից ծածկվեն մի շարք խիստ ժողովրդական թռուցիկների հրատարակության ծախքերը, գյուղական բանվորների համար նշանակված լրագրի, սկրնավորման համար գոնե մի շաբաթաթերթի հրատարակության ծախքերը, թող այդ ֆոնդի միջոցներով գոնե փոքրաթիվ ագիտատորներ ու կազմակերպիչներ ուղարկվեն գյուղ, վորպեսզի զանազան վայրերում **անհապաղորեն հիմնեն** գյուղատնտեսական վարձու բանվորների միություններ։



Միայն այդպիսի միությունների սեփական փորձը կարող է ուղիղ ճանապարհ գտնել գործի հետագա զարգացման համար։ Յուրաքանչյուր այդպիսի միության առաջին խնդիրը պիտի լինի բարելավել դրությունն այն մարդկանց, ովքեր գյուղատնտեսական ձեռնարկություններին են վաճառում իրանց բանվորական ույժը, նվաճել ավելի բարձր աշխատավարձ, բնակարանի, սնունդի լավագույն պայմաններ և այլն։

Հարկավոր է ամենավճռական պայքար հայտարարել այն նախապաշարումի դեմ, թե հողի մասնավոր սեփականության գալիք վերացումն ընդունակ է «հող տալու» յուրաքանչյուր բատրակի և որավարձով ապրողի, խախտելու վարձու աշխատանքի բուն արմատները հողագործության մեջ։ Դա նախապաշարում է և ծայրահեղորեն վնասակար նախապաշարում։ Հողի մասնավոր սեփականության վերացումըն ահագին և անպայման առաջադիմական, անպայման տնտեսական զարգացման շահերին և պրոլետարիատի շահերին համապատասխանող վերակազմավորում է, վոր ամբողջ հոգով և ամբողջ ույժերով ամեն մի վարձու բանվոր կպաշտպանե, բայց վորը վոչ չով իսկ չի վերացնում վարձու աշխատանքը։

Հողը ուտել չի կարելի։ Առանց անասունների, գործիքների, սերմի, առանց արտադրանքների պաշարի, առանց փողի չի կարելի հողի վրա տնտեսություն անել։ Հույս դնել «խոստումների» վրա, ումից էլ վոր նրանք բղխելու լինեն,—խոստումներ, թե գյուղերի վարձու բանվորներին «կոգնեն» անասունների, գործիքների տեր դառնալ և այլն—դա կլիներ վատթար մոլորություն, աններելի միամտություն։

Յուրաքանչյուր արհեստակցական շարժման հիմնական կանոնը, առաջին պատվիրանն է—հույս մի դնիր «պետության» վրա, հույս դիր միայն **քո դասակարգի ույժի** վրա։ Պետությունը տիրապետող դասակարգի կազմակերպություն է։

Հույս մի դնիր խոստումների վրա,—հույս դիր միայն քո դասակարգի միավորման ույժի և գիտակցության վրա։

Այս պատճառով գյուղական բանվորների արհեստակցական միության խնդիրը միանգամից պիտի ընդգրկի վոչ միայն պայքարը բանվորների վիճակը բարելավելու համար առհասարակ, այլ մանավանդ նրանց՝ **իբրև դասակարգի՝ շահերի պաշտպանությունը** գալիք հողային մեծ վերակազմավորման պահուն։

«Բանվորական ձեռքերը պիտի հանձնվեն վոլոստային կոմիտեների տնօրինության»—այսպես են դատում հաճախ գյուղացիները և սոց.-հեղափոխականները։ Գյուղատնտեսական վարձու բանվորների

դասակարգի հայեցակետը հենց հակառակն է. «ձեռքերի» տնօրինության մեջ պիտի ընկնեն վոլոստային կոմիտեները: Տնտեսատիրոջ դիրքը և վարձու բանվորի դիրքը նման հակադրությամբ հստակորեն է պարզվում:

«Հողն ամբողջ ժողովրդին»: Դա ճիշտ է: **Բայց ժողովուրդը դասակարգերի է բաժանվում:** Յուրաքանչյուր բանվոր գիտե, տեսնում է, զգում է, վերապրում է այդ ճշմարտությունը, վորը դիտավորյալ կերպով վարագուրվում է բուրժուազիայի կողմից և **մշտապես մոռացվում մանր բուրժուազիայից:**

Չքավորներին զատ-զատ վոչ վոք չի օգնի: Վոչ մի «պետություն» չի օգնի գյուղի վարձու բանվորին, բատրակին, օրավարձով աշխատողին, չքավորագույն գյուղացուն, կիսապրոլետարին, **յեթե նա ինքը չօգնի իրան:** Առաջին քայլը դրա համար - դա գյուղական պրոլետարիատի ինքնուրույն դասակարգային կազմակերպությունն է:

Ցանկանանք, վոր արհեստակցական միությունների համառուսական կոնֆերենցիան մեծագույն յեռանդով ձեռք զարնե այդ գործին, կոչ կարդա ամբողջ Ռուսաստանին, օգնության ձեռք մեկնե, պրոլետարների կազմակերպված առաջապահի հզոր ձեռքը գյուղի պրոլետարներին:

«Պրավդա» №№ 90, 91,
1917 թ. հունիսի 24 և 25,
Ն. Լենին ստորագրությամբ:

## ՃԱՌ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ *(86)*

**(1917 թ. մայիսի 22-ին)**

Ընկերներ. այն բանաձևը, վոր գյուղացիական խորհրդի սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի անունից յես պատիվ ունեմ առաջարկելու ձեր ուշադրությանը՝ տպագրված ու բաժանված է պատգամավորներին: Յեթե բոլորը չեն ստացել, ապա մենք միջոցներ ձեռք կառնենք, վորպեսզի բոլոր ցանկացողներին բաժանելու համար վաղն իսկ այդ բանաձևը տպագրվի լրացուցիչ քանակով:

Հակիրճ զեկուցման մեջ յես, հարկավ, կարող եմ կանգ առնել միայն գլխավոր, հիմնական, գյուղացիության ու բանվոր դասակարգին առավել հետաքրքրող հարցերի վրա: Ով ավելի մանրամասն է հետաքրքրվում հարցով, նրան կարող եմ հանձնարարել մեր կուսակցության, Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական Կուսակցության (բոլշևիկների) բանաձևը, վորը հրատարակված է իբր հավելված «Солдатская Правда» (87) թերթի № 13-ի և մեկից ավելի



անգամ լուսաբանված է մեր «Правда» լրագրում: Այժմ յես ստիպված եմ սահմանափակվել իմ բանաձևի առավել կարևոր, առավել վիճելի կամ թյուրիմացություններ հարուցող կետերի և ագրարային հարցին վերաբերյալ մեր կուսակցական ծրագրի լուսաբանությամբ: Այդպիսի վիճելի կամ թյուրիմացություն հարուցող առաջին կետերից մեկն է հանդիսանում այն հարցը, վորը յերեկ կամ մեկել օրը շոշափվել է Գըլխավոր Հողային Կոմիտեյում, մի նիստում, վորի մասին, հավանորեն, դուք բոլորդ լսել կամ կարդացել եք յերեկվա կամ մեկել օրվա լրագրերում: Գլխավոր Հողային Կոմիտեյի նիստին ներկա յե յեղել մեր կուսակցության ներկայացուցիչներից մեկը, Կենտրոնական Կոմիտեյի անդամ իմ ընկեր Սմիլգան: Նա այնտեղ առաջարկ մտցրեց այն մասին, վորպեսզի Գլխավոր Հողային Կոմիտեն արտահայտվի հօգուտ այն բանի, վոր գյուղացիությունն անհապաղորեն կազմակերպված ձևով գրավե կալվածատիրական հողերը, և այդ առաջարկի համար ընկեր Սմիլգայի վրա մի շարք առարկություններ են թափվել: (Մի ձայն. «Յեվ այստեղ նույնպես»): Ասում են այժմ ինձ, թե այստեղ ևս դրա դեմ, հավասարապես, շատ ընկերներ ասպարեզ կգան: Առավել մեծ հիմունքով ստիպված կլինեմ յես կանգ առնել մեր ծրագրի այդ կետի պարզաբանության վրա, վորովհետև ինձ թվում է, թե մեծ մասը, յես կարծում եմ, բոլոր առարկությունների, վորոնք արվում են մեր ծրագրի դեմ, հիմնված են թյուրիմացության կամ մեր հայացքների անճիշտ լուսաբանության վրա: Ի՞նչ են ասում մեր կուսակցության բոլոր բանաձևերը, մեր օրգանի բոլոր հոդվածները, մեր «Правда» լրագիրը: Մենք ասում ենք, թե ամբողջ հողն առանց բացառության ամբողջ ժողովրդի սեփականությունը պիտի դառնա: Այդպիսի յեզրակացության ենք յեկել մենք ուսումնասիրության հիման վրա, մանավանդ 1905 թվականի գյուղացիական շարժման, առաջին և յերկրորդ պետական Դումաների գյուղացի-պատգամավորների հայտարարությունների ուսումնասիրությամբ, ուր համեմատաբար ազատ, **համեմատաբար**, հարկավ, կարող եյին արտահայտվել շատ գյուղացի պատգամավորներ Ռուսաստանի բոլոր ծայրերից:

Ամբողջ հողը պիտի ամբողջ ժողովրդի սեփականությունը լինի: Այստեղից արդեն բխում է, թե պաշտպանելով կալվածատիրական հողերի անհապաղ ու ձրի փոխանցումը տեղական գյուղացիների ձեռքը, մենք վոչ մի դեպքում չենք պաշտպանում այդ հողերի սեփականացնելը, մենք վոչ մի դեպքում չենք պաշտպանում այդ հողերի բաժանումը, մենք յենթադրում ենք, թե ամբողջ հողը տեղական և գյուղացիական պատվիրակների մեծամասնության վորոշումով պիտի մի ցանքի տակ առնվի տեղական գյուղացիության կողմից: Մենք վոչ մի դեպքում չենք պաշտպանում, վորպեսզի այդ հողը սեփակա-

նությունն դառնա այն գյուղացիների, վորոնք այժմ նրան վերցնում են մի ցանքի համար։ Նման բոլոր առարկությունները մեր առաջարկի դեմ, ինչ յես մշտապես առիթ եմ ունեցել լսել և պատահել կապիտալիստական լրագրերի էջերում, ուղղակի հիմնված են մեր հայացքների անճիշտ մեկնաբանության վրա։ Քանի վոր մենք ասել ենք, իսկ յես կրկնում եմ—մենք այդ ասել ենք մեր բոլոր բանաձևերում, թե հողը պիտի լինի ամբողջ ժողովրդի սեփականությունը և նրան անցնի ձրիաբար, ապա պարզ է, թե այդ հողի բաշխման վերջնական կարգադրությունը, հողային հարաբերությունների վերջին կարգադրությունը պիտի կատարվի միայն կենտրոնական պետական իշխանության կողմից, այսինքն Հիմնադիր Ժողովի կամ Համառուսական Խորհուրդների Խորհրդի կողմից, յեթե այդպիսի մի իշխանություն, Խորհուրդների Խորհուրդ, ստեղծեն գյուղացիական ու բանվորական մասսաները։ Այս մասին վոչ մի տարաձայնություն չկա։ Տարաձայնությունններն սկսվում են հետագայում, յերբ մեզ առարկում և ասում են. «յեթե այդպես է, ապա ինքնիրավություն կլինի կալվածատիրական հողերի ամեն մի անհապաղ ձրի փոխանցումը գյուղացիության ձեռքը»։ Ահա այս հայացքը, վորն ավելի հստակորեն, ավելի հիմնականորեն, առավել մեծ կշիռով է ասվել հողագործության մինիստր Շինգարյովի կողմից Նրա հայտնի հեռագրում, այդ հայացքը մենք համարում ենք առավել սխալական, անձեռնտու գյուղացիության համար, անձեռնտու հողագործների համար, անձեռնտու յերկիրը հացով ապահովելու համար և անարդարացի։ Այդ հայացքը խիստ հստակորեն արտահայտել է մինիստր Շինգարյովն իր հայտնի հեռագրում, վորն ինձ թույլ եմ տալիս կարդալու Նրա համար, վորպեսզի ցույց տամ, թե ինչի դեմ ենք ավելի շատ մենք ուղղում մեր առարկությունները. «Հողային հարցի ինքնաբար լուծումն անթույլատրելի չէ առանց հանուր պետական օրենքի։ Ինքնիրավությունը պետական աղետ կը հասցնի։ Հողային հարցի օրենքով լուծումը—Հիմնադիր Ժողովի գործըն է։ Ներկայումս տեղերում վոլոստային պարենավորման կոմիտեներին կից հողագործների և հողատերերի կողմից կազմավորած են հաշտարար հողագործական կամերաներ»։

Ահա հիմնական հատվածը կառավարության այն հայտարարությունից, վոր այս հարցին է վերաբերում։ Յեթե դուք ծանոթանաք գլխավոր Հողային Կոմիտեյի յերեկ թե մեկել օրը ընդունած այն բանաձևի հետ, վոր այս հարցին է վերաբերում, մի բանաձևի հետ, վորը նույնպես այս օրերին ընդունել է Պետական Դումայի անդամների խորհրդակցությունը, ապա դուք կը տեսնեք, վոր մատնանշված յերկու բանաձևը բխում են միևնույն հայացքից։ Նրանք ինքնիրավության մեջ են մեղադրում այն գյուղացիներին, վորոնք կամենում



են իրագործել հողի անհապաղորեն ու ձրիաբար հանձնումը գյուղացիների ձեռքը և նրա բաշխումը տեղական գյուղացիական կոմիտեյի հետ միասին, մեղադրում են չհասկանալով այն, թե միայն գյուղացիների և հողատերերի, հողագործների և հողատերերի հոժարակամ համաձայնությունը, միայն նա չի իբր համապատասխանում ընդհանուր պետական կարիքներին ու շահերին։ Ահա մենք այդ ժխտում ենք, դրա դեմ էլ մենք վիճում ենք։

Քննենք այն առարկությունները, ինչ արվում են մեր առաջարկի դեմ։ Սովորաբար առարկությունները կայանում են նրա մեջ, թե Ռուսաստանում հողը բաշխված է խիստ անհավասարաչափ և առանձին փոքր-մեծ միավորների միջև, ինչպես գյուղն ու վոլոստը, և մեծ միավորների միջև, ինչպիսին են նահանգն ու մարզը։ Ասում են, յեթե տեղական բնակչությունն իր մեծամասնությամբ հանած վորոշումներով. հաշվի չնստելով կալվածատերերի կամքի հետ, հողն իր ձեռքն առներ և այն էլ ձրիաբար, ապա անհավասարաչափությունը կը մնար, կամ թե անգամ վտանգ կլիներ նրանց ամրացման կողմից։ Մենք դրան պատասխանում ենք, թե նման առարկությունը հիմնված է թյուրիմացության վրա։ Հողի բաշխման անհավասարությունը միևնույն է կը մնա, մինչև վոր Հիմնադիր Ժողովը կամ կենտրոնական պետական իշխանությունն առհասարակ նոր կարգ չհաստատե վերջնականապես։ Մինչև վոր չհաստատվի այդ կարգը,—միևնույն բանն է՝ գյուղացիական տեսակետով կը լուծվի խնդիրը, թե կալվածատիրական տեսակետով, այնպես արդյոք, ինչպես մենք ենք ցանկանում, վոր հողն անհապաղորեն գյուղացիության ձեռքն անցնի, կամ թե ինչպես կալվածատերերն են ցանկանում, վորոնք պատրաստ են հողը կապալով տալ և բարձր վարձով, մի պայմանով, վոր գյուղացի-կապալառուն և կալվածատերը պահպանում են իրանց իրավունքները, այդպես կլինի դա, թե այլ կերպ,—բաշխման անհավասարաչափությունը մնում է։ Մեր դեմ յեղած առարկությունն ակնհայտորեն անհիմն և անարդարացի է։ Մենք խոսում ենք այն մասին, թե անհրաժեշտ է, վորքան կարելի չի փութով կենտրոնական պետական իշխանություն ստեղծել, վորը կաթներ վոչ միայն գյուղացիության մեծամասնության կամքի ու վորոշման վրա, այլ և ուղղակի այդ մեծամասնության կարծիքն արտահայտեր։ Այս մասին վեճ չկա։ Յեթե մենք լսում ենք առարկություններ բոլշևիկների դեմ, հարձակումներ նրանց վրա կապիտալիստական լրագրերի կողմից, պնդումներ—իբր մենք անարխիստներ ենք,—մենք այդ մերժում ենք ամենավճռական կերպով և այդ հարձակումները դիտում ենք իբրև չարամիտ սուտ ու զրպարտության տարածումներ։

Անարխիստներ են կոչվում նրանք, ովքեր ժխտում են պետական

իշխանության անհրաժեշտությունը, իսկ մենք ասում ենք, թե նա անպայման անհրաժեշտ է և ոչ միայն այժմ Ռուսաստանի համար, այլ և ամեն մի պետության համար, որը թեկուզ ուղղակի սոցիալիզմին լիներ անցնելիս: Անպայման, խիստ ամուր իշխանություն է անհրաժեշտ: Մենք միայն ցանկանում ենք, որպեսզի այդ իշխանությունն ամբողջապես և բացառապես բանվորների, զինվորների և գյուղացիական պատգամավորների մեծամասնության ձեռքումը լինի: Ահա ինչով ենք մենք տարբերվում մյուս կուսակցություններից: Մենք ոչ մի կերպ չենք ժխտում ամուր պետական իշխանության անհրաժեշտությունը. մենք միայն ասում ենք, թե տեղական գյուղացիական կոմիտեյի մեծամասնությամբ ընդունված որոշումով ամբողջ կալվածատիրական հողը ձրիաբար գյուղացիների ձեռքը պիտի անցնի, մի պայմանով, որպեսզի գույքի ոչ մի փչացում չլինի: Դա խիստ հստակորեն մատնանշված է մեր բանաձևում: Մենք վճռականորեն մերժում ենք մեր հայացքի դեմ յեղած առարկությունները, իբր թե դա ինքնիրավություն է:

Ո՛չ, մեր կարծիքով, յեթե կալվածատերերն իրանց ոգտին են պահում հողերը, կամ վճար են վերցնում նրանց դիմաց, ահա դա ինքնիրավություն է, իսկ յեթե գյուղացիության մեծամասնությունն ասում է, թե կալվածատիրական հողը չպետք է մնա կալվածատերերի ձեռքին, թե այդ կալվածատերերից, հողատերերից շատ տասնյակ տարիների ընթացքում, դարերի ընթացքում գյուղացիությունը հարստահարությունից բացի ուրիշ բան չի տեսել, դա ինքնիրավություն չէ, դա **իրավունքների վերականգնում է** և իրավունքի վերականգնման գործում չի կարելի ըսպասել: Յեթե այժմ իսկ հողը գյուղացիներին հանձնենք, չի կարելի վերացնել անհավասարաչափությունը մարդերի միջև—դա անվիճելի յէ, բայց այդ անհավասարաչափությունը ոչ վոք չի վերացնի, քանի չի հավաքվել Հիմնադիր Ժողովը: Յեվ ներկայումս Շինգարյովը, որը մեզ առարկում է և պաշտոնական թղթերում մեր հայացքների կողմնակիցներին հայհոյում «ինքնիրավության» համար, յեթե նրան հարցնենք, ինչ է առաջարկում նա այդ անհավասարաչափության դեմ. նա պատասխան տալ չի կարող:

Ոչինչ չի առաջարկում և ոչինչ էլ չի կարող առաջարկել:

Նա ասում է—«գյուղացիների հոժարակամ համաձայնություն կալվածատերերի հետ»: Ի՞նչ է նշանակում այդ: Յես կը բերեմ յերկու հիմնական թվանշան, որ վերաբերում է հողատիրությանը Յեվրոպական Ռուսաստանում: Այդ թվանշանները ցույց են տալիս, որ ռուսական գյուղի մի ծայրը բռնում են շատ հարուստ կալվածատերերը, այդ թվում հաշվելով և Ռոմանովներին, ամենից հարուստ և վատթար կալվածատերերին, իսկ մյուս ծայրն են բռնում չքավորա-



գույն գյուղացիները: Յես կը բերեմ յերկու թվանշան, որպեսզի դուք տեսնեք, թե ինչ նշանակություն ունի այդ քարոզը Շինգարյովի կողմից, բոլոր կալվածատերերի ու կապիտալիստների կողմից: Ահա այդ յերկու թվանշանը. յեթե վերցնենք ամբողջ Յեվրոպական Ռուսաստանի ամենից հարուստ կալվածատերերին, ապա դուրս կգա, որ խոշորագույնները, որոնք թվով 30,000 մարդուց սակավ են. ունեն մոտ 70 միլիոն դեսյատին հող: Դա նշանակում է, 2000 դեսյատինից ավելին է ընկնում յուրաքանչյուրին: Յեթե վերցնենք հարուստ ռուս կալվածատերերի ամենավերջին շերտերն առանց դասային խտրության (մեծամասնությունն այստեղ ազնվական է, բայց կան և այլ հողատերեր), նրանք 30,000 են, իսկ ունին 70 միլիոն դեսյատին: Իսկ յեթե վերցնենք չքավորագույն գյուղացիությունը 1905 թվականի նույն մարդահամարի տվյալներով, որը տալիս է ամբողջ Ռուսաստանում միատեսակ ժողոված վերջին տեղեկությունները,—տեղեկություններ, որոնք ըստ էության մեծ վստահության արժանի չեն, իբրև ամեն-մի վիճակագրություն, որը ցարի որով ցարական չինովնիկներն են ժողովել, բայց այնուամենայնիվ տալիս է ճշմարտության առավել մոտ, առավել համեմատելի տվյալները,—յեթե վերցնենք չքավորագույն գյուղացիությունը, մենք կստանանք 10 միլիոն ծուխ, որոնք ունեն մոտ 70—75 միլիոն դես. հող: Այս նշանակում է.—մեկը 2 հազար դեսյատինից ավելին ունի, իսկ մյուսը—յոթը և կես դեսյատին մի ծխին: Յեվ ասում են, ինքնիրավություն կլինի, յեթե նրանք հոժարակամ համաձայնության չգնան: Յեվ ինչ է նշանակում այդ «հոժարակամ համաձայնությունը»: Դա նշանակում է, թե կալվածատերերը գուցե հողը զիջեն կապալավարձով, բայց ոչ վոքի ձրիաբար չեն տա: Արդարացի՞ է այդ: Ո՛չ, արդարացի չէ: Ձեռնտու յե դա արդյոք գյուղական բնակչության համար: Ո՛չ, ձեռնտու չէ: Ինչ կերպ կը հաստատվի վերջնական հողային սեփականությունը,—դա ապագա կենտրոնական իշխանության գործն է, բայց այժմ անհապաղորեն, առանց փրկանքի կալվածատիրական հողը պիտի անցնի գյուղացիության ձեռքը, կազմակերպված գրավման պայմանով: Գըլխավոր Հողային Կոմիտեյում մինիստր Չերնովը (88), առարկելով մեր ընկեր Սմիլգային, ասաց, թե «կազմակերպված գրավումը,—դա յերկու բառ է, որոնք իրար ոչնչացնում են. յեթե գրավում է՝ նշանակում է կազմակերպված չէ, իսկ յեթե կազմակերպված է—նշանակում է գրավում չէ»: Յես կարծում եմ, որ այդ քննադատությունը ճիշտ չէ, յես կարծում եմ, որ գյուղացիությունը, յեթե նա մեծամասնությամբ որոշում է ընդունում գյուղում կամ վոլոստում, գավառում, նահանգում, իսկ [illegible] նահանգներում, յեթե ոչ բոլորի մեջ, գյուղացիական հա[illegible]ները իշխանություն են կազմել տե-

գերում, վորը ներկայացնում է մեծամասնության շահերն ու կամքը, իշխանություն, վոր ներկայացնում է բնակչության, այսինքն հողագործների մեծամասնության կամքը, քանի վոր նման իշխանություն կազմվել է տեղերում, նրա վորոշումներն այն իշխանության վորոշումներն են, վորին գյուղացիները պիտի ճանաչեն: Այդ իշխանությունն այն է, դեպի վորը գյուղացիական բնակչությունը տեղերում չի կարող կատարյալ հարգանք չտածել, վորովհետև տարակուսանք չկա, վոր այդ իշխանությունը, ազատորեն ընտրված իշխանություն, վորոշում է, թե կալվածատիրական հողն այժմ իսկ պիտի գյուղացիության ձեռքն անցնի. Թող գյուղացին իմանա, վոր նա վերցնում է կալվածատիրական հողը, թող, յեթե նա վճարում է, ապա վճարե գյուղացիական գավառական դրամարկղներին, թող նա իմանա, վոր այդ փողերը կերթան բարելավելու գյուղատնտեսությունը, խճուղիները, ճանապարհները և այլն: Թող նա իմանա, թե էր հողը չէ, վոր վերցնում է, բայց և կալվածատիրականը չէ վերցրածը, այլ համաժողովրդական հողն է վերցնում, վորի մասին Հիմնադիր Ժողովը վերջնական տնօրինություն կանե: Այս պատճառով հեղափոխության բուն սկզբից, առաջին հ դային կոմիտեյի հիմնարկումից հետո կալվածատերը վոչ մի իրավունք չպիտի ունենա հողի նկատմամբ և չըպիտի վորևէ դրամական պահանջ կատարվի այդ հողի դիմաց: Այստեղ հիմնական հակասություն կա այն բանի ըմբռնման մեջ, թե ինչ է կարգը և օրենքը: Մեզ մոտ մինչև որս այնպես են նայել, թե կարգը և օրենքը դա այն է, ինչ հարմար է գալիս կալվածատերերին ու չինովնիկներին, իսկ մենք պնդել ենք, թե կարգն ու օրենքն այն է, ինչ հարմար է գալիս գյուղացիության մեծամասնության: Յեվ քանի դեռ չկա Խորհուրդների Համառուսական Խորհուրդը, քանի գոյություն չունի Հիմնադիր Ժողովը, մինչև այդ՝ ամեն մի իշխանություն տեղերում գավառական կոմիտեներ, նահանգական կոմիտեներ—դա էլ գերագույն կարգն ու օրենքն է: Ինքնիրավություն մենք անվանում ենք այն, վոր մի կալվածատեր հին դարավոր իրավունքների հիման վրա «հոժարակամ» համաձայնություն է պահանջում յերեք հարյուր գյուղացիական ընտանիքների հետ, վորոնցից յուրաքանչյուրը տակ ու գլուխ 7 և կես դեսյատին ունի: Մենք ասում ենք թող վորոշումները մեծամասնությամբ ընդունվեն. մենք ուզում ենք, վորպեսզի այժմ. չկորցնելով վոչ մի ամիս. վոչ մի շաբաթ, վոչ մի օր, գյուղացիները ստանան կալվածատիրական հողերը:

Մեզ առարկում են, չէ՞ վոր գյուղացիները յեթե այժմ իսկ վերցնեն հողը, ապա, հավանորեն, կը վերցնեն ավելի հարուստները, վորոնք ունեն անասուն, գործիքներ և այլն: Այս պատճառով դա վըտանգավոր չէ լինելու հենց չքավորագույն գյուղացիության տեսակե-



տից: Ընկերներ, այդ պատճառաբանության վրա յես պիտի կանգ առնեմ, վորովհետև մեր կուսակցությունը մեր բոլոր վորոշումներում, ծրագիրներում և ժողովրդին արած դիմումներում հայտարարում է—մենք վարձու բանվորների ու չքավորագույն գյուղացիների կուսակցություն ենք, նրանց շահերն ենք ցանկանում պաշտպանել մենք, նրանց միջոցով և միայն նրանց միջոցով, այդ դասակարգերի միջոցով է, վոր մարդկությունը կարող է դուրս գալ այն սարսափներից, ուր նրանց գցել է կապիտալիստների այս պատերազմը:

Այս պատճառով՝ դեպի նման առարկությունները, յերբ մեր վորոշումներն անհամապատասխան են գալիս չքավորագույն գյուղացիների շահերին, դեպի նման առարկությունները մենք խիստ ուշադիր ենք նայում և հրավիրում ենք նրանց վրա առանձնապես ուշադրությամբ կանգ առնել, վորովհետև այդ առարկությունները վերաբերում են գործի բուն էությանը, հարցի բուն արմատին: Չէ վոր գործի բուն էությունը հենց նրա մեջ է կայանում, թե տեղի ունեցող հեղափոխության մեջ, Ռուսաստանի տեղի ունեցող պետական վերակազմավորման մեջ ինչպես կարելի յե և պետք է պաշտպանել վարձու բանվորների—քաղաքային ու գյուղական—շահերը, չքավորագույն գյուղացիների շահերն ընդդեմ կալվածատերերի կամ հարուստ գյուղացիների—նույն կապիտալիստների շահերի: Իհարկե, սրա մեջ է հարցի արմատը, նրա վողջ էությունը: Յեվ ահա մեզ առարկում են, վոր յեթե գյուղացիներին անհապաղ գրավում հանձնարարելու լինենք, ապա կը գրավե նախ և առաջ նա, ով գործիքներ, անասուններ ունի, իսկ չքավորներին վոչինչ չի մնա: Յես ձեզ հարցնում եմ, իսկ միթե հոժարակամ համաձայնությունը կալվածատերերի հետ կօգնե այդ բանում:

Դուք շատ լավ գիտեք, վոր կալվածատերերը սիրով չեն, վոր հողը կապալով են տալիս այն գյուղացիներին, վորոնք կոպեկ չունին գրպանում, և ընդհակառակը «հոժարակամ համաձայնությունների» յեն դիմում, յերբ նրանց լավ վճարում է խոստացված: Կալվածատերերը մինչև որս ձրիաբար իրանց հողը տված չունին, կարծես թե մեզ մոտ Ռուսաստանում այդ բանը վոչ վոք չի նկատել:

Յեթե խոսելու լինենք կալվածատերերի հետ հոժարակամ համաձայնություն կնքելու մասին, ապա դա նշանակում է էլ առավել, սարկացնել, մեծացնել, ամրացնել այն արտոնյալ, նախապատիվ դրությունը, այն առավելությունները, վորով ոգտվում են հարուստ գյուղացիները, վորովհետև հարուստ գյուղացիները հավանորեն կարող են վճարել կալվածատերերին և յուրաքանչյուր կալվածատիրոջ համար հարուստ գյուղացին վճարունակ մարդ է ներկայանում, և կալվածատերը գիտե, վոր նա կարող է վճարել և նրա մոտ կորած չէ, և այս

պատճառով կալվածատերերի հետ նման «հոժարակամ գործարքներ կատարելու դեպքում հայտնապես հարուստ գյուղացիները շահում են ավելի, քան չքավորները, ընդհակառակը — յեթե կա հնարավորություն այստեղ իսկ օգնություն ցույց տալու չքավոր գյուղացուն, ապա կարելի յե միայն այն միջոցով, ինչ յես եմ առաջարկում, այն է՝ հողը այժմ իսկ պիտի ձրիաբար գյուղացիներին անցնի։ Կալվածատիրական սեփականությունը յեղել է և կմնա մեծագույն անարդարությունը։ Այդ հողի ձրիաբար տիրումը գյուղացիների կողմից, յեթե այդ տիրումը մեծամասնությամբ կլինի, ինքնիրավություն չէ, այլ իրավունքի վերականգնում։ Ահա մեր հայեցակետը և ահա ինչու այն պատճառաբանությունը, իբր թե դրանից չքավորագույն գյուղացիությունը կկորցնե, մենք համարում ենք մեծ անարդարություն։ Հոժարակամ համաձայնություն է կոչվում — միայն Շինգարյովը կարող է դա հոժարակամ համաձայնություն անվանել, — յեթե մեկ կալվածատեր 2000 դեսյատին ունի, իսկ 300 գյուղացիներից յուրաքանչյուրը 7 և կես դեսյատին, այդ համաձայնությունը հոժարակամ համարել, — նշանակում է ծիծաղել գյուղացու վրա։ Դա հոժարակամ համաձայնություն չէ, այլ հարկադրական գյուղացիության համար, հարկադրական մինչև այն օրը, մինչև վոր յուրաքանչյուր գյուղացիական վոլոստային, նահանգական, գավառական և Համառուսական Խորհուրդ կհայտարարի, թե կալվածատիրական սեփականությունը մեծագույն անարդարությունն է, վորի վերացումը չի կարելի հետաձգել մի ժամ իսկ, մի րոպե իսկ։

Հողի սեփականությունը պիտի համաժողովրդական լինի, իսկ այն պիտի հաստատե հանուր պետական իշխանությունը։ Քանի նա չի ժողովվել, մի անգամ էլ եմ կրկնում, տեղական իշխանությունները վերցնում են կալվածատիրական հողը և այդ նրանք պիտի անեն մեծամասնությամբ, կազմակերպվածորեն։ Ճիշտ չէ, յեթե լրագիրները ճչում են, իբր թե Ռուսաստանում անկարգություն է իշխում։ Ճիշտ չի, գյուղում ավելի յե կարգ տիրում, քան առաջ էր, վորովհետև վորոշումն ըստ մեծամասնության է հանվում, բռնություններ կալվածատերերի վրա համարյա չեն յեղել, անարդարության և բռնության դեպքերը կալվածատերերի վրա խիստ յեզակի յեն, նրանք աննշան են և ամբողջ Ռուսաստանում չեն գերակշռում բռնության դեպքերի այն քանակը, վորոնք պատահում եյին նաև առաջ։

Այժմ յես կշոշափեմ մի այլ պատճառաբանություն, վորը կապված է հողերի անհապաղորեն գյուղացիների ձեռքն անցնելու հետ և վորը յես առիթ եմ ունեցել լսելու և քննելու մեր «Правда» լրագրում։

Այդ պատճառաբանությունը նրա մեջ է կայանում, վոր յեթե գյուղացուն հանձնարարելու լինենք անհապաղորեն ձրիաբար իր ձեռքը վերց-



նելու կալվածատիրական հողերը, ապա դա ֆրոնտի զինվորների
մեջ կհարուցե դժգոհություն, վրդովմունք, յերկմտություն և անգամ
խռովություն, վորոնք գուցե կասեն. «Յեթե գյուղացիներն այժմ իսկ
վերցնեն հողը, իսկ մենք պետք է կանգնենք ֆրոնտում, ապա մենք
առանց հողի կմնանք», — գուցե բոլոր զինվորները յետ շարժվեն ֆը-
րոնտից և ստացվի քաոս ու անիշխանություն։ Դրան մենք պատաս-
խանում ենք այսպես, վոր այդ առարկությունն իսպառ չի վերաբերում
հիմնական հարցին. միևնույն է՝ հողը վճարով են վերցնում արդյոք,
համաձայնվելով կալվածատերերի հետ, թե՞ գյուղացիության մեծա-
մասնության վորոշումով, — միևնույն է՝ քանի պատերազմը տևում է՝
զինվորները մնում են ֆրոնտում և, իհարկե, նրանք կմնան ֆրոն-
տում և վերադառնալ գյուղը չեն կարող։ Իսկ ինչու զինվորները ֆը-
րոնտում յերկմտություն չպիտի ունենան, թե կալվածատերերը հո-
ժարակամ համաձայնության ձևի տակ անձեռնտու պայմաններ կբար-
դեն, ինչու՞ նրանք պիտի յերկմտություն տածեն, վոր գյուղացիու-
թյունը մեծամասնությամբ ընդդեմ կալվածատերերի կորոշի։ Անհասա-
կանալի յե։ Ինչու՞ զինվորը ֆրոնտում պիտի վստահություն տածե
դեպի կալվածատերը, դեպի «հոժարակամ համաձայնությունը» կալ-
վածատիրոջ հետ։ Յես հասկանում եմ, յերբ այդ ասում են կալ-
վածատերերի ու կապիտալիստների կուսակցությունները, բայց
վոր խնդրին այդպես նայե առուս զինվորը ֆրոնտում, յես չեմ հավա-
տում։ Յեթե կա «հոժարակամ» համաձայնություն կալվածատիրոջ հետ,
զինվորը դա կարգ չի անվանի, դեպի այդ վստահություն չի սնուցա-
նի, նա ավելի շուտ այնպես պիտի նայե, թե շարունակվում է հին
կալվածատիրական անկարգությունը։

Զինվորն առավել վստահություն կլտածե դեպի այն, յեթե նը-
րան ասեն. — հողը ժողովրդին է անցնում, տեղական գյուղացիները
կալվածատիրոջը, այլ հանրօգուտ կարիքների համար, նույն այդ զին-
կապալով են վերցնում այն և կապալավարձ վճարում են չե թե կալ-
վորական ֆրոնտի համար մուծում են իրանց կոմիտեն, բայց վոչ
կալվածատիրոջը։ Յեթե դա մեծամասնությամբ վորոշվի, ապա ֆրոնտում
գտնվող զինվորը կիմանա, թե այլևս վոչ մի «հոժարակամ» համա-
ձայնություն կալվածատիրոջ հետ չի կարող լինել, թե կալվածատերերը
նույն իրավահավասար քաղաքացիներն են, վորոնց զրկել վոչ վոք չի
կամենում։ Հողը համաժողովրդական է — նշանակում է նա կալվածա-
տիրոջն էլ է պատկանում, բայց վոչ ազնվականության արտոնու-
թյունների հիմունքով, այլ իբրև ամեն-մի քաղաքացու. այն օրվանից
ինչ տապալված է ցարական իշխանությունը, ցարի իշխանությունը,
վորն ամենախոշոր կալվածատերն էր, մասսաների կեղեքիչը, վոչ մի
արտոնություն հողատեր-կալվածատերերը չպիտի ունենան։ Ազատու-

թյան հաստատումով, այդ մոմենտից սկսած կալվածատիրական իշխանությունը պիտի համարվի ընդմիշտ տապալված։ Այս հայացքից Փրոնտում գտնվող զինվորը վոչինչ չի կորցնի, այլ, ընդհակառակը, նա կունենա առավել մեծ վստահություն դեպի պետական իշխանությունը և անդորր հավատ տան համար, թե նրա ընտանիքը զրկված, անխընամ չի մնա։

Մնում է դեռ մի պատճառաբանություն, վորը մեր առաջարկի դեմ եր հանվում։ Պատճառաբանությունը նրա մեջ է կայանում, վոր յեթե գյուղացիներն անհապաղորեն գրավեն կալվածատիրական հողը, ապա նման անհապաղ սակավ-նախապատրաստված գրավումը, գուցե, առաջնորդե դեպի հողի մշակման վատթարացումը, գուցե ցանքսն ավելի վատ լինի։ Յես պիտի ասեմ, վոր մեծամասնության իշխանությունը, հանուր պետական իշխանությունը դեռևս չի ստեղծվել, գյուղացիները դեռ բավարար վստահություն չեն ստացել դեպի իրանց, չեն կորցրել վստահությունը կալվածատերերի ու կապիտալիստների նկատմամբ. յես կարծում եմ, վոր մենք որեցոր դրան ենք մոտենում, վոր յուրաքանչյուր օրվա հետ գյուղացիությունը կորցնում է վստահությունը դեպի հին պետական իշխանությունը և գիտակցում, վոր Ռուսաստանում կառավարությունը պիտի լինեն գյուղացիական, զինվորական, բանվորական և այլն ընտրյալներ, և ուրիշ վոչ վոք. յես կարծում եմ, յուրաքանչյուր օրը մեզ այդ ժամանակին է մոտեցնում վոչ թե այն պատճառով, վոր վորևե կուսակցություն է տալիս այդ խորհուրդը—յերբեք միլիոնավոր մարդիկ չեն լսի կուսակցությունների խորհուրդները, յեթե այդ խորհուրդները չեն զուգադիպում այն բանի հետ, ինչ նրանց սովորեցնում է սեփական կյանքի փորձը—մենք արագ քայլերով ենք մոտենում այն ժամանակին, յերբ Ռուսաստանում գյուղացիական ու բանվորական ընտրյալների իշխանությունից բացի վոչ մի այլ իշխանություն չպիտի լինի։ Յեվ յերբ ինձ ասում են, թե հողի անհապաղ գրավումը, հավանորեն, դեպի այն կառաջնորդե, վոր հողը վատ կմշակվի, ցանքսը վատ կլինի, ապա յես պիտի ասեմ, թե մեր գյուղացիները շնորհիվ այն բանի, վոր ճնշված են, դարերերի ընթացքում հարստահարություն են տեսել կալվածատերերից, շնորհիվ այդ բանի խիստ վատ են մշակում։ Իհարկե Ռուսաստանում զարհուրելի կրիզիս է տիրում, վոր նրա կրծքին է նստել, ինչպես և բոլոր կռվող յերկրների վրա, և Ռուսաստանի համար փրկություն չկա, յեթե նա չանցնի լավագույն մշակման, մարդկային աշխատանքի մեծագույն խնայողության։ Բայց այժմ առաջին ցանքսի համար կարող է արդյոք հոժարական համաձայնությունը կալվածատերերի հետ վորևե բան փոխել։ Ինչ է, կալվածատերերը պիտի ավելի լավ հսկեն հողի մշակման վրա. գյուղացիները պիտի ավելի վատ ցանեն հողը, յեթե իմանան,



վոր իրանք ցանում են չէ թե կալվածատիրական, այլ համաժողովրդական հողի վրա, վոր յեթե իրանք վճարում են, ապա չէ թե կալվածատիրոջը, այլ իրանց գյուղացիական դրամարկղներին—դա մի այնպիսի անմտություն է, վոր յես զարմանում եմ, յերբ լսում եմ նման պատճառաբանություններ, դա իսպառ անհավատալի յե և ամբողջապես կալվածատերերի խորամանկությունն է ներկայացնում։

Կալվածատերերը հասկացել են, վոր այլ ևս մահակով չի կարելի տիրապետել, այդ նրանք լավ են հասկացել և նրանք անցնում են տիրապետության այն յեղանակին, վորը Ռուսաստանի համար նորություն է, իսկ Արևմտյան Յեվրոպայում, արևմտա-յեվրոպական յերկրներում գոյություն ունի վաղուց։ Վոր այլևս չի կարելի մահակով տիրապետություն անել, այդ մեզ մոտ ցույց տվին յերկու հեղափոխությունները, իսկ արևմտա-յեվրոպական յերկրներում այդ ցույց են տվել տասնյակ հեղափոխություններ։ Այդ հեղափոխությունները սովորեցնում են կալածվատերերին ու կապիտալիստներին, նրանք սովորեցնում են, թե ժողովրդին պիտի կառավարել խաբկանքով, շողոքորթությամբ, պետք է համակերպվել, պիջակին կարմիր նշան փակցնել և—թեկուզ դա գյուղական ցեց լինի—ասել. «մենք հեղափոխական դեմոկրատիա յենք, բարի յեղեք միայն սպասել և մենք ամեն ինչ կանենք ձեզ համար» (ծափահարություններ)։ Այնպիսի մի պատճաբանություն, թե իբր գյուղացիներն այժմ ավելի վատ կցանեն հողը, յեթե նրանք սերմեն ցանեն վոչ թե կալվածատիրական, այլ համաժողովրդական հողի վրա, հայտնապես մի ծաղր է գյուղացիների վրա, մի փորձ խաբկանքով տիրապետություն պահպանելու նրանց գլխին։

Կրկնում եմ—կալվածատիրական սեփականություն իսպառ չըպիտի լինի. տիրությունը դեռևս սեփականություն չէ, տիրությունը ժամանակավոր միջոց է և տիրությունը փոխվում է յուրաքանչյուր տարի. գյուղացին, վորը կպալով մի կտոր հող է ստանում, իրավունք չունի համարելու, թե հողը իրանն է. հողը վոչ նրանն է և վոչ կալվածատիրոջը, այլ ժողովրդական. և կրկնում եմ—դրանով դաշտերի ցանքսը չի կարող վատանալ. այդ յենթադրությունն այս տարվա, այս գարնան համար այնքան է հրեշավոր ու անհավատալի, վոր յես ձեզ միայն մի բան եմ ասում, թե պետք է զգուշանալ կալվածատերերից, թույլ չտալ խաբվելու փայփայական խոսքերով ու խոստումներով։ Հարկավոր է հիշել, վոր գյուղացիների մեծամասնության վորոշումը, վորոնք իրանց վորոշումների մեջ բավականաչափ զգուշավոր են, դա որինական ու հանուր պետական վորոշում է։ Այս տեսակետից գյուղացիներին վստահանալ կարելի յե։ Որինակ՝ յես ունեմ Պենզայի գյուղացիների վորոշումը, վորն առաջին կետից մինչև վերջինը տոգորված է անչափ զգուշությամբ. վորևե անհապաղ վերա-

կազմավորում ամբողջ Ռուսաստանի համար գյուղացիները չեն ձեռնարկում, նրանք չեն ցանկանում իրանց անտանելի սարկացման յենթարկել և դրա մեջ նրանք իրավացի յեն։ Ամենամեծ սարկացումը յեղել է կալվածատիրականը և մնում է կալվածատիրականը, հողատերերի և հարստահարիչների սարկացումը։ Յեվ այս պատճառով մի շաբաթ իսկ, մի ժամ իսկ սպասել չի կարելի առանց այդ սարկացումը վերացնելու, բայց յուրաքանչյուր գրավում պիտի կազմակերպված գրավում լինի, չէ թե սեփականություն դարձնելու, չէ թե բաժանքի յենթարկելու, այլ համաժողովրդական հողը միայն հանուր օգտագործման տալու համար։ Գրավումի այդ հարցը յես կարող եմ ավարտել, պատասխանելով այս կերպ. թե մեր յենթադրության դեմ առարկությունները կալվածատերերի ու կապիտալիստների կողմից հիմնված են խաբկանքի վրա, իսկ վոչ-կալվածատերերի, վոչ-կապիտալիստների կողմից, այն մարդկանց կողմից, վորոնք ցանկանում են պահպանել աշխատողների շահերը, հիմնված են թյուրիմացության վրա, չափազանց վստահության վրա դեպի այն, ինչ մեր դեմ ստաքար ասում են կապիտալիստներն ու կալվածատերերը։ Յեթե քննելու լինենք մեր պատճառաբանությունները, ապա դուրս է գալիս, թե կալվածատիրական սեփականության այժմ իսկ վոչնչացնելու արդարացի պահանջը, ճիշտ նույնպես և հողային սեփականության անցնելը ժողովրդին, չի կարելի իրագործել մինչև վոր չհավաքվի կենտրոնական պետական իշխանությունը, իսկ հողի տիրության անցնելը բուն գյուղացիներին տեղն ու տեղը մենք խորհուրդ ենք տալիս համոզեցուցիչ կերպով, մի պայմանով, վոր կարգի վոչ մի խախտում չթույլատրվի։ Մենք մեր բանաձևերում այդ խորհուրդը տալիս ենք և գուցե այդ խորհուրդն ավելորդ է, վորովհետև առանց դրան էլ գյուղացիներն այդ կիրառում են կյանքի մեջ։

Յես կանցնեմ յերկրորդ հարցին, վորի վրա հարկավոր է ամենից շատ ուշադրություն բևեռել. այն հարցին, թե ինչպես է մեզ ցանկալի և աշխատող մասսաների շահերի տեսակետից ինչպես է հարկավոր վարվել հողի հետ, յերբ նա արդեն համաժողովրդական սեփականություն կլինի, յերբ կոչնչացվի մասնավոր սեփականությունը։ Ռուսաստանում այդ ժամը շատ է մոտ։

Յեվ ինչպես կալվածատիրական իշխանության մեծ մասը յեթե չի վոչնչացրված, ապա խարխլած է։ Յերբ հողը կլինի բոլոր գյուղացիների տիրության տակ, յերբ կալվածատերեր չեն լինի, ինչպես անել, ինչպես բաշխել հողը։ Ինձ թվում է, թե այս հարցում անհրաժեշտ է սահմանել մի վորոշ ընդհանուր հայացք, հիմնական հայացք, վորովհետև ինքնին հասկանալի յե, թե տեղերում տնօրինումը միշտ էլ գյուղացիության գործը կմնա։ Դեմոկրատիկ պետության մեջ այլ



ձևեր էլ չի կարող լինել. դա այնքան պարզ է, վոր այդ մասին խոսելն էլ ավելորդ է։ Բայց յերբ հարց է հնչվում այն մասին, թե ինչպես անել, վորպեսզի հողը բաժին ընկնի աշխատողներին, ապա մենք ասում ենք. մենք ուզում ենք պաշտպանել վարձու բանվորների և չքավորագույն գյուղացիների շահերը. դա իր խնդիրն է համարում Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատների բոլշևիկների մեր կուսակցությունը և մենք հարց ենք տալիս մեզ. յեթե ասենք, թե հողը կանցնի ժողովրդին, նույն բանն է արդյոք ասել, թե հողը կանցնի աշխատողներին։ Յեվ մենք պատասխան ենք տալիս. չէ, այդ նույն բանը չէ։ Յեթե ասենք, թե հողը ժողովրդին կանցնի—դա նշանակում է, թե կալվածատիրական սեփականությունը կոչնչացվի, դա նշանակում է թե ամբողջ հողն ամբողջ ժողովրդին է պատկանում, դա նշանակում է, թե յուրաքանչյուր վոք, ով հող է վերցնում, վերցնում է այն իբրև կապալ ամբողջ ժողովրդից։ Յեթե այս կարգը սահմանվի, դա նշանակում է հողատիրության տեսակետից վոչ մի տարբերություն չի մնում, ամբողջ հողը միատեսակ է։ Ինչպես գյուղացիներն են հաճախ ասում—հողի ամեն կարգի հին կոպարները, ցանկապատերը կփլվեն, հողը ցանկաթափ կլինի—կլինի ազատ հող և ազատ աշխատանք։

Նշանակվում է դա արդյոք, թե հողը տրվում է բոլոր աշխատողներին։ Չէ, չի նշանակում։ Ազատ աշխատանք ազատ հողի վրա,—դա նշանակում է, թե հողատիրության բոլոր հին ձևերը ջնջված են, չկա վորևէ այլ հողատիրություն, քան համապետականը, և յուրաքանչյուր վոք հողը պետությունից կապալով է վերցնում—կա պետական ընդհանուր իշխանություն, բոլոր բանվորների ու գյուղացիների իշխանություն. այդ իշխանությունից գյուղացին վերցնում է, իբրև կապալառու, պետության և գյուղացիության միջև վորևէ միջնորդ չկա, յուրաքանչյուր վոք վերցնում է հավասար սկզբունքներով—սա յէ ազատ աշխատանքն ազատ հողի վրա։ Նշանակվում է դա արդյոք, թե հողը տրվում է բոլոր աշխատողներին։

Չէ, չի նշանակում։ Հողն ուտել չի կարելի, իսկ տնտեսություն անելու համար հարկավոր է ունենալ գործիքներ, անասուններ, սարք, փող. առանց փողի, առանց գործիքների չի կարելի տնտեսություն անել։ Այս պատճառով, յերբ մենք սահմանենք, յերբ դուք սահմանեք այնպիսի կարգ, վոր ազատ աշխատանք լինի ազատ հողի վրա, վոչ մի կալվածատիրական հողատիրություն, վոչ մի կոպար հողի վրա չլինի, այլ կլինի միայն համաժողովրդական սեփականություն և հողի ազատ կապալառուներ վողջ պետության հանդեպ, յերբ դուք կսահմանեք այդ—դա չի լինի հողի անցնելը բոլոր աշխատողներին, դա կը նշանակի միայն այն, վոր յուրաքանչյուր տնտեսատեր հողի ազատ տնօրինողը կլինի։ Ով կուզենա, նա յել ազատորեն համապետական

հող կվերցնի — դա մի մեծ քայլ կլինի դեպի առաջ՝ համեմատած ցարական, կալվածատիրական Ռուսաստանի հետ։ Դա մի մեծ քայլ կլինի դեպի առաջ, վորովհետև կալվածատիրական, ցարական Ռուսաստանը մի Ռուսաստան եր, ուր 70,000,000 դեսյատին տրված եր 30,000 Մարկովների, Ռոմանովների և նման կալվածատերերի. դա կլինի այնպիսի Ռուսաստան, ուր կլինի ազատ աշխատանք ազատ հողի վրա։ Այժմ իսկ դա արված է շատ տեղերում։ Ռուսաստանն այժմ իսկ առաջ է քայլել համեմատ ցարական կալվածատիրական Ռուսաստանի, բայց դա հողի անցնելը չէ աշխատողներին, դա հողի անցնելն է տնտեսատիրոջը, վորովհետև յեթե հողը համապետական է, և այն պիտի վերցնեն նրանք, ովքեր կամենում են տնտեսություն անել նրա վրա, — դա քիչ բան է, քիչ բան է մեն-միայն տնտեսություն անելու ցանկությունը, հարկավոր է և հմտություն, բայց հմտությունն էլ է քիչ։ Ամեն մի բատրակ ու չքավոր հմտություն ունի, բայց նրանք չունեն անասուններ, գործիքներ, կապիտալ, և այս պատճառով վորքան էլ դուք վորոշելու լինեք, վորքան էլ խոսելու, դրանով մենք չենք սահմանի ազատ աշխատանք ազատ հողի վրա։ Յեթե մենք ազատ հողի մասին անգամ գրություններ կախենք յուրաքանչյուր վոլոստային վարչության մեջ, դրանով գործը հողուտ աշխատողների չի բարելավվի, ինչպես արևմտա-յեվրոպական հանրապետություններում ուր բանտերում գրված է՝ «ազատություն, հավասարություն և յեղբայրություն», — դրանով բանտերը չեն դադարում բանտեր լինելուց։ Յեթե, ինչպես Ամերիկայում և. ֆաբրիկայի վրա գրված են այս խոսքերը «ազատություն, հավասարություն և յեղբայրություն», — ապա դրանով ֆաբրիկան չի դադարում տաժանակիր աշխատանքի տեղ լինելուց բանվորների և արքայություն՝ կապիտալիստների համար։ Նշանակում է, այժմ հարկավոր է մտածել հետագայի մասին — ինչպես անել, վորպեսզի վոչ միայն ազատ աշխատանք լինի — դա քայլ է դեպի առաջ, բայց դա քայլ չէ դեպի աշխատողների շահերի պաշտպանությունը, դա մի քայլ է ազատագրվելու կալվածատիրական գիշակերությունից, կալվածատերերի շահագործումից, ազատագրվելու Մարկովներից, վոստիկանությունից և այլն բայց դա քայլ չէ դեպի աշխատողների շահերի պաշտպանությունը, վորովհետև առանց անասունների, առանց գործիքների, առանց կապիտալի հողի հետ վարվել չի կարող աղքատ, չունեվոր գյուղացին։ Ահա ինչու յես մեծ անվստահությամբ եմ վերաբերվում դեպի այսպես կոչված յերկու չափերի կամ յերկու նորմաների հարցը — դեպի աշխատավորական ու պարենավորման նորման։ Յես գիտեմ, վոր այդ նորմաների մասին նարոդնիկական կուսակցությունների մեջ միշտ պատահում են դատողություններ ու լուսաբանություններ, յես գիտեմ, վոր այդ կուսակցությունները կանգնած են այդ յերկու նոր-



մաների, այդ յերկու չափերը սահմանելու անհրաժեշտության տեսակետի վրա, աշխատավորական նորմա — հողի մի քանակ, վորից ավելին ընտանիքը մշակել չի կարող, և պարենավորման նորմա — հողի մի քանակ, վորից պակաս ստանալ կնշանակեր արդեն սով։ Յես ասում եմ, թե այդ նորմաների կամ չափերի հարցին յես մեծ անվստահությամբ եմ վերաբերվում և մտածում եմ, վոր դա չինովնիկական մի պլան է, վորից ոգուտ չի լինելու, վորը կյանքի մեջ մտնել չի կարող, թեև դուք այստեղ և սահմանեք այդ պլանը։ Դրա մեջ է ամբողջ եյությունը։ Այդ պլանը վորևե նկատելի թեթևացում չի բերի վարձու բանվորների ու չքավորագույն գյուղացիների վիճակին, այդ պլանը, յեթե անգամ դուք այն ընդունեք, թղթի վրա կմնա մինչև այն ժամանակ, քանի կապիտալիզմն է տիրապետում։ Այդ պլանը մեզ չի ոգնում, վորպեսզի ճիշտ ճանապարհ գտնենք կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու։ Յերբ խոսում են այդ յերկու չափերի, այդ յերկու նորմաների մասին, գործն իրանց այնպես են ներկայացնում, կարծես գոյություն ունեն միայն հող ու քաղաքացիներ, կարծես թե ուրիշ վորևե այլ բան չկա աշխարհում։

Յեթե դա այդպես լիներ, ապա այդ պլանը լավ կլիներ։ Բայց խնդրի վիճակն այդ չէ. գոյություն ունի կապիտալի իշխանություն, փողի իշխանություն։ Առանց փողի ամենից ազատ հողի վրա իսկ, ինչ «չափեր» էլ վոր չլինեն՝ տնտեսություն չի լինի, վորովհետև քանի մնում է փողը — մնում է վարձու աշխատանքը։ Իսկ այդ նշանակում է, վոր հարուստ գյուղացիները, իսկ նրանք այստեղ, Ռուսաստանում, մի միլիոն ընտանիքից պակաս չեն, հարստահարում, շահագործում են վարձու բանվորներին և պիտի նրանց հարստահարեն նաև «ազատ» հողի վրա։ Այդ հարուստ գյուղացիները, — վոչ իբրև բացառություն, այլ մշտապես իբրև ընդհանուր կանոն, դիմում են բանվորների վարձման — տարեկան, ժամկետային, որավարձով, այսինքն չքավորագույն գյուղացիների, պրոլետարների շահագործման։ Իսկ դրա կողքին կան միլիոնավոր ու միլիոնավոր ձիազուրկ գյուղացիներ, վորոնք չեն կարող գոյություն պահպանել, չվաճառելով իրանց բանվորական ուժը, պանդխտության չդիմելով և այլն։ Քանի փողի իշխանությունը մնում է՝ ինչ «նորմաներ» էլ դուք չսահմանեք, լավագույն դեպքում նրանք պիտանի չեն լինի կյանքի համար, վորովհետև նրանք հաշվի չեն նստում այն գլխավոր գործոնի հետ, թե գործիքների, անասունների, փողի սեփականությունն անհավասարաչափ է բաշխված, հաշվի չեն առնում այն, թե գոյություն ունի վարձու աշխատանք, վորը շահագործման է յենթարկվում։ Դա Ռուսաստանի արդի կյանքի հիմնական փաստն է, այն չի կարելի անտեսել և յեթե մենք սահմանենք վորևե «չափեր», կյանքը նրանց մոտով կանցնի և «չափերը» թղթի վրա կմնան։

Ցեվ ուստի նրա համար, վորպեսզի կարելի լինի չունևոր և չքավորագույն գյուղացիների շահերը պաշտպանել Ռուսաստանի այս մեծագույն վերակազմավորման մեջ, վորը դուք այժմ կատարում եք և վորը անտարակուսորեն կկատարեք, յերբ կոչնչացվի հողի մասնավոր սեփականությունը, յերբ մի քայլ կանվի դեպի առաջ՝ մոտենալու լավագույն սոցիալիստական ապագային, նրա համար, վորպեսզի այդ մեծ վերակազմավորման մեջ, վորը դուք հենց նոր սկսում եք, վորը շատ առաջ կերթա և վորը, կարելի չե առանց չափազանցության ասել, անտարակուսորեն կկատարվի Ռուսաստանում, վորովհետև չկա այնպիսի ույժ, վորը խանգարե դրան,—նրա համար, վորպեսզի պաշտպանել կարելի լինի բանվորների ու չքավորագույն գյուղացիների շահերը, չի կարելի նորմաներ կամ չափեր սահմանելու ուղիով ընթանալ, հարկավոր է ուրիշ ուղի վորոնել։

Ցես և իմ կուսակցական ընկերները, այն կուսակցության, վորի անունից յես պատիվ ունեմ խոսելու, մենք գիտենք գյուղատնտեսական վարձու բանվորների և չքավորագույն գյուղացիների շահերի պաշտպանության միայն այդպիսի յերկու ուղի, մենք այդ յերկու ուղիներն ել հանձնարարում ենք գյուղացիական Խորհրդի ուշադրությանը։

Առաջին ուղին—դա գյուղատնտեսական վարձու բանվորների և չքավորագույն գյուղացիների կազմակերպումն է։ Մենք ցանկանում ենք և խորհուրդ տալիս, վորպեսզի յուրաքանչյուր գյուղացիական կոմիտեյում, յուրաքանչյուր վոլոստում, գավառում, նահանգում կազմավորվի գյուղատնտեսական վարձու բանվորների և չքավորագույն գյուղացիների առանձին ֆրակցիա կամ առանձին խմբակ, այնպիսի մարդկանց խմբակներ, վորոնք պիտի իրանց ասեն—յեթե վաղը հողը համաժողովրդական դառնա,—իսկ նա անպայման այդպիսին պիտի դառնա, վորովհետև ժողովուրդն այդ է կամենում,—ինչ պիտի անենք մենք։

Մենք, վոր անասուն, գործիքներ չունենք, վո՞րտեղից կստանանք մենք այդ բոլորը։ Ինչպե՞ս տնտեսություն անենք մենք։ Ինչպե՞ս պիտի պաշտպանենք մեր շահերը։ Ինչպե՞ս պիտի հոգանք այն մասին, վորպեսզի հողը, վորը համաժողովրդական պիտի լինի, վորը իսկապես համաժողովրդական կլինի, վորպեսզի նա միայն **տնտեսատերերի** ձեռքը չընկնի։ Յեթե նա ընկնի նրանց ձեռքը, վորոնք բավարար չափով անասուններ ու գործիքներ ունեն, շատ կշահե՞նք արդյոք մենք։

Սրա համա՞ր ենք միթե մենք կատարել այս մեծ հեղաշրջումը։ Այս եր միթե հարկավոր մեզ։ Դա նշանակում է հողը «ժողովրդին» տալ, բայց դա **բավ չե** գյուղատնտեսական վարձու բանվորների շահերի պաշտպանության համար։ Հիմնական ուղին նրա մեջ չի կայանում, վոր այստեղից, վերևից, կամ գյուղացիական կոմիտեն կսահմանե հողի տիրության դատ-դատ «չափը»։ Այդ չափերը չեն ոգնի, քանի կապիտալն է տիրապետում, և այդ չափերը չեն ազատագրի կապիտալիզմի տիրապետությունից։ Նրա համար, վորպեսզի ազատագրվել կարելի լինի կապիտալիզմի լծից, նրա համար, վորպեսզի համաժողովրդական հողն **աշխատողների** ձեռքն անցնի,—կա միայն մի հիմնական ուղի.—դա գյուղատնտեսական վարձու բանվորների կազմակերպման ուղին է, վորոնք կղեկավարվեն իրանց փորձով, իրանց դիտումներով, իրանց անվստահությամբ դեպի այն, ինչ նրանց գյուղական յեսերն են ասում, թեև նրանք կարմիր են կապում և իրանց «հեղափոխական դեմոկրատիա» անվանում։



Միայն ինքնուրույն կազմակերպությունը տեղերում, միայն սեփական փորձով սովորելը կխրատե չքավորագույն գյուղացիներին։ Իսկ այդ փորձը հեշտ չի լինի, մենք չենք կարող խոստանալ և չենք խոստանում, թե կհոսեն մեղրածոր ափերով կաթնե գետեր. ոչ, կալվածատերերը կտապալվեն նրա համար, վորովհետև ժողովուրդն այդ է կամենում, բայց **կապիտալիզմը** մնում է. Նրան տապալելը առավել դժվար է, դեպի նրա տապալումն ուրիշ ուղի չի տանում.—դա գյուղատնտեսական վարձու բանվորների և չքավորագույն գյուղացիների ինքնուրույն, առանձին կազմակերպությունների ուղին է—ահա առաջին հերթին ինչ է առաջադրում մեր կուսակցությունը։

Միայն այդ ուղիից կարելի յե սպասել հողի աստիճանական, վոչ-հեշտ, բայց հաստատուն անցումը իսկապես աշխատողների ձեռքը։

Յերկրորդ քայլը, վորը հանձնարարում է մեր կուսակցությունը, կայանում է նրանում, վորպեսզի յուրաքանչյուր խոշոր տնտեսությունից, յուրաքանչյուր, որինակ, խոշորագույն կալվածատիրական տնտեսությունից, վորոնց թիվը Ռուսաստանում 30,000 է, ըստ հնարավորին փութով կազմավորվեն որինակելի տնտեսություններ և տրվեն ընդհանուր ու միատեղի մշակման գյուղատնտեսական բանվորներին և ուսյալ գյուղատնտեսներին, գործադրելով դրա վրա կալվածատիրական անասունները, գործիքները և այլն։ Առանց այդ **ընդհանուր** մշակումի, գյուղատնտեսական բանվորների Խորհրդի ղեկավարությամբ, այնպես չի դուրս գա, վորպեսզի ամբողջ հողը **աշխատողների** ձեռքին լինի։ Իհարկե, ընդհանուր մշակումը դժվար բան է, ինարկե, յեթե վորևե մեկը յերևակայեր, թե նման ընդհանուր մշակումը կարելի յե վերևից սահմանել ու պարտադրել,—դա խելագարություն կլիներ, վորովհետև առանձին տնտեսությունների դարավոր սովորությունները միանգամից չեր կարող չքանալ, վորովհետև այստեղ փող է պահանջվում, համակերպումն է պահանջվում կյանքի նոր հիմունքներին։ Յեթե այդ խորհուրդները, այդ կարծիքն ընդհանուր մշակումի, ընդհանուր

իմվենտարի, ընդհանուր անասունների մասին գործիքների լավագույն գործադրումով հանդերձ, գյուղատնտեսների հետ միասին, չեթե այդ խորհուրդներն առանձին կուսակցությունների մտածածին մի գյուտը լինեն, ապա գործը վատ կընթանար, որովհետև որևէ կուսակցության խորհրդով որևէ փոփոխություն տեղի չի ունենում ժողովրդի կյանքում, որովհետև կուսակցության խորհրդով տասնյակ միլիոնավոր մարդիկ հեղափոխություն չեն գնում, իսկ նման փոփոխությունն ավելի մեծ հեղափոխություն կլինի, քան թուլամիտ Նիկոլայ Ռոմանովի տապալումը. կրկնում եմ, պատմերով տասնյակ միլիոնավոր մարդիկ հեղափոխություն չեն գնում, այլ գնում են այն ժամանակ, երբ վրա յե հասնում անելանելի կարիքը, երբ ժողովուրդն անհնարին վիճակի մեջ է ընկել, երբ տասնյակ միլիոնավոր մարդկանց ընդհանուր գրոհը, վճռականությունը փլում է բոլոր հին միջնորմները և իսկապես ի վիճակի յե նոր կյանք ստեղծագործել։ Յեթե մենք հանձնարարում ենք նման մի միջոց, խորհուրդ ենք տալիս նրան դիմել զգուշորեն, ասելով, թե նա անհրաժեշտ է դառնում, ապա մենք այդ յեզրակացնում ենք վոչ միայն մեր ծրագրից, մեր սոցիալիստական ուսմունքից, այլ միայն նրա համար, որ սոցիալիստ լինելով և դիտելով արևմտա-յեվրոպական ժողովրդների կյանքը, մենք այդ յեզրակացությանը հանգեցինք։ Մենք գիտենք, որ այնտեղ շատ հեղափոխություններ են յեղել, վորոնք ստեղծում եյին դեմոկրատիկ հանրապետություններ, մենք գիտենք, որ Ամերիկայում 1865 թվականին պարտություն կրեցին ստրկատերերը և ապա ձրիաբար, կամ համարյա ձրիաբար հարյուրավոր միլիոն դեսյատին հող բաժանվեց գյուղացիներին, և այնուամենայնիվ այնտեղ ավելի, քան որևէ մի այլ տեղ տիրապետում է կապիտալիզմը և ճնշում աշխատող մասսաներին նույնպես, յեթե վոչ ավելի սաստիկ, քան ուրիշ յերկրներում։ Ահա այն սոցիալիստական ուսմունքն է, ահա այն դիտողությունն է ուրիշ ժողովուրդների կյանքի վրա, վորը մեզ առաջնորդել է դեպի մի հաստատ համոզում, թե յելք չկա կապիտալիզմի լծից, յեթե չլինի հողի ընդհանուր մշակում գյուղատնտեսական բանվորների կողմից, գործադրելով լավագույն մեքենաները և ղեկավար ունենալով գիտնականորեն-ուսյալ գյուղատնտեսներին։ Բայց յեթե մենք միայն հիմք ունենայինք արևմտա-յեվրոպական պետությունների փորձը, մեր գործը Ռուսաստանում վատ կընթանար, վորովհետև ռուս ժողովուրդը մասսայորեն այդ նոր ուղիի վրա միայն այն ժամանակ է ընդունակ նոր քայլ անելու, յերբ ստեղծվում է ծայրահեղ կարիք։ Յեվ մենք ասում ենք,—հասել է հենց այնպիսի ժամանակ, յերբ ամբողջ ռուս ժողովրդի այդ ծայրահեղ կարիքը դուռը բախում է։ Այդ ծայրահեղ կարիքը նրա մեջ է կայանում, վոր հին ձևով անկարելի յե տնտեսություն վարել։ Յեթե հին



ձևով մենք շարունակենք նստել մանր տնտեսությունների վրա, թե-
կուզ և ազատ քաղաքացիներ լինելով՝ ազատ հողի վրա, միենույն է,
մեզ անխուսափելի կործանում է սպառնում, վորովհետև ամեն որ, ամեն
ժամ փլուզումը մոտենում է։ Դրա մասին բոլորն են խոսում, դա փաստ
է, վորը կյանքի յե կոչվել չէ թե առանձին անհատների չար կամքով,
այլ հարուցվել է համաշխարհային կողոպտիչ պատերազմի կողմից,
հարուցվել է կապիտալիզմի կողմից։
Պատերազմը վոչնչացրել է մարդկային բազմությունններ, ամբողջ
աշխարհն արյունով է վողողված. ամբողջ աշխարհին պատերազմը կո-
րուստի յե հասցրել. սա չափազանցություն չէ, վոչ վոք չի կարող յերաշխա-
վորել վաղվան որվա համար, բոլորն են խոսում այս մասին։ Վերցրեք
«Известия Совета Рабочих и Солдатских Депутатов» լրագիրը,
այնտեղ բոլորն են ասում. կապիտալիստները դիմում են իտալական
գործադուլի և լոկաուտների*)։ Այդ նշանակում է աշխատանք չկա և
կապիտալիստները կազմակերպում են բանվորների մասսայական ար-
ձակում,—ահա մինչև ուր հասցրեց այդ վոճրագործ պատերազմը վոչ
միայն Ռուսաստանին, այլ և բոլոր յերկրներին։
Ահա ինչու մենք ասում ենք.—տնտեսություն առանձին հողաբաժին-
ների վրա, թեկուզ «ազատ աշխատանք ազատ հողի վրա» դա յելք չէ
փրկվելու ահավոր կրիզիսից, ընդհանուր քայքայումից, դա փրկություն չէ։
Անհրաժեշտ է ընդհանուր աշխատավորական պարհակ, հարկավոր է
մարդկային աշխատանքի յուրաքանչյուր մասի մեծագույն խնայողու-
թյուն, հարկավոր է անսովոր ուժեղ և ամուր իշխանություն, վորն
ի վիճակի լիներ կիրառելու այդ ընդհանուր աշխատավորական պար-
հակը. այն չեն կարող կիրառել չինովնիկները, այն կարող են կիրա-
ռել միայն Բանվորների, Զինվորների և Գյուղացիական Պատգամա-
վորների Խորհուրդները, վորովհետև դա ինքը ժողովուրդն է, ինքը
ժողովրդական մասսաները, վորովհետև դա չինովնիկական իշխանու-
թյուն չէ, վորովհետև նրանք վոտից գլուխ ճանաչելով ամբողջ գյու-
ղացիական կյանքը՝ կարող են աշխատավորական պարհակ սահմանել,
կարող են սահմանել մարդկային աշխատանքի այն պահպանությունը,
վորի ժամանակ չի կարող հափշտակվել գյուղացու աշխատանքը և այս
կերպ ընդհանուր մշակումին անցնելը կկատարվեր աստիճանաբար ու
շրջանկատորեն։ Սա դժվար գործ է,—բայց անհրաժեշտ է անցնել
ընդհանուր մշակումի որինակելի խոշոր տնտեսություններում. առանց
դրան չի կարելի դուրս գալ այն փլուզումից, այն ուղղակի հուսահա-

*) Լոկաուտ—մի միջոց, վորին հաճախ կապիտալիստներն են դիմում բանվորների
դեմ մղած պայքարում։ Այդ միջոցը կայանում է նրանում, վոր մի շարք կապիտա-
լիստներ՝ համաձայնվելով իրար հետ՝ միանգամից փակում են արտադրությունը և
փողոց շպրտում հազարավոր բանվորների։ ՑԱՆԻԹ. ԽՄԲ.

տական փձակից. որի մեջ Ռուսաստանն է գտնվում, չի կարելի և
մեծագույն սխալը կլիներ, յեթե որևէ մեկը մտածեր, թե նման մե-
ծագույն վերակազմավորումը ժողովրդի կյանքում կարելի յե մի հար-
վածով կատարել։ Ոչ, դա պահանջում է մեծագույն աշխատանք,
պահանջում է յուրաքանչյուր անհատ գյուղացու և բանվորի վճռակա-
նության ու յեռանդի լարումն իր տեղում այն գործի մեջ, որը նա
գիտե, այն արտադրության մեջ, որը նա վարում է տասնյակ տարի-
ներով։ Նման բան չի կարելի անել որևէ մեկի կարգադրությամբ,
բայց նման բան անելն անհրաժեշտ է, որովհետև կողոպտիչ պատե-
րազմն ամբողջ մարդկությանը կորստի յեզրին է հասցրել, տասնյակ
միլիոնավոր կյանքեր են փչացել, կփչանան էլ ավելի այս զարհուրե-
լի պատերազմից, յեթե չլարենք բոլոր ուժերը, յեթե Բանվորների ու
Գյուղացիական Պատգամավորների Խորհուրդների բոլոր կազմակեր-
պությունների ընդհանուր վճռական քայլեր չանեն այն ուղիով, որը
տանում է դեպի հողի ընդհանուր մշակումն առանց կապիտալիստների,
առանց կալվածատերերի։ Միայն այդ ուղին կտա հողի իսկական
անցումն աշխատողների ձեռքը։

Տպագրված է «Նյութեր ագրարային հարցի
մասին» բրոշյուրում 1917 թ. նոյեմբեր։
Հրատարակված է 1917 թ. վերջում։

## ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՐՑԻՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԲԱՆԱՁԵՎԻ ՆԱԽԱԳԻԾ

Սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի անունից ներկայացված
Ն. Լենինի կողմից գյուղացիական Պատգամավորների Համառուսական
Խորհուրդում։

1. Բոլոր կալվածատիրական և մասնավոր տիրապետություն,
այլև հավասարապես ուդելի. յեկեղեցական և այլն հողերը անհապաղ
ժողովրդին պիտի փոխանցվեն առանց որևէ փրկանքի։

2. Գյուղացիությունը կազմակերպված ձևով, իր Գյուղացիական
Պատգամավորների Խորհրդների միջոցով, անհապաղ տեղերում պի-
տի վերցնի ամբողջ հողը տնտեսական տնօրինության համար, դրա-
նով ամենևին չնախորոշելով հողային կարգերի վերջնական սահմա-
նումը Հիմնադիր ժողովի կամ Խորհուրդների Համառուսական Խոր-
հրդի կողմից, յեթե ժողովուրդը տա կենտրոնական պետական իշխա-
նությունը Խորհուրդների նման Խորհրդի ձեռքը։

3. Հողի մասնավոր սեփականությունն առհասարակ պիտի վո-
չընչացվի, այսինքն սեփականության իրավունքն ամբողջ հողի նը-
կատմամբ պիտի պատկանե միայն ողջ ժողովրդին, իսկ հողը տնօ-
րինում են տեղական դեմոկրատիկ հաստատությունները։



4. Գյուղացիները պիտի մերժեն կապիտալիստների, կալվածա-
տերերի և նրանց ժամանակավոր Կառավարության խորհուրդը տեղե-
րում կալվածատերերի հետ «համաձայնությունների» գալու մասին հո-
ղի անհապաղ տնօրինում սահմանելու համար. հողի տնօրինումը պի-
տի որոշվի տեղական գյուղացիների մեծամասնության կազմակերպ-
ված ձևով, այլ ոչ թե մեծամասնության, այսինքն գյուղացիության
համաձայնությամբ փոքրամասնության հետ, և այն էլ չնչին փոքրա-
մասնության, այսինքն կալվածատերերի հետ։

5. Բոլոր կալվածատիրական հողերի առանց փրկանքի գյուղա-
ցիությանը փոխանցելու դեմ բոլոր միջոցներով պայքարում են և
պիտի պայքարեն ոչ միայն կալվածատերերը, այլև կապիտալիստ-
ները, որոնք հզոր են ոչ միայն դրամական մեծ ուժով, այլ դեռ
ևս խավար մասսաների վրա ունեցած ազդեցության այն ուժով, որ
լրագրներն են տալիս, որ կապիտալի տիրապետությանն ընտելա-
ցած շատ ու շատ չինովնիկներն են նյութում և այլն։ Այս պատճառով
առանց փրկանքի բոլոր կալվածատիրական հողերի փոխանցումը գյու-
ղացիության չի կարող ոչ իր վախճանին հասցնվել, ոչ ամրացվել,
յեթե գյուղացիական մասսաների մեջ չի խորտակված վստահությու-
նը դեպի կապիտալիստները, յեթե սերտ դաշինք չկա գյուղացիության
և քաղաքային բանվորների միջև, յեթե ողջ պետական իշխանու-
թյունը լրությամբ չի փոխանցվել Բանվորների, Զինվորների, Գյու-
ղացիների և այլոց Պատգամավորների Խորհրդի ձեռքը։ Միայն այն
պետական իշխանությունը, որ գտնվում է նման Խորհուրդների ձեռ-
քում և կառավարում է պետությունը ոչ թե վոստիկանության, ոչ թե
չինովնիկների, ոչ թե ժողովրդից կտրված մշտական բանակի, այլ հա-
մաժողովրդական, բանվորների ու գյուղացիների գլխովին զինված
միլիցիայի միջոցով, միայն այդ իշխանությունն է ի վիճակի ապահո-
վելու վերը հիշատակված և ամբողջ գյուղացիության կողմից պահան-
ջած հողային վերակազմավորումները։

6. Գյուղատնտեսական վարձու բանվորները և չքավորագույն
գյուղացիները, այսինքն այնպիսիները, որոնք կյանքի միջոցներ են
հայթայթում մասամբ վարձու աշխատանքով, չունենալով բավարար
հող, անասուններ, գործիքներ, դրանք բոլոր ուժով պիտի ձգտեն ինք-
նուրույն կազմակերպության առանձին Խորհուրդների ձևով կամ ա-
ռանձին խմբակներ պիտի կազմեն հանուր գյուղացիական Խորհուրդ-
ների ներսում, որպեսզի պաշտպանել կարողանան իրանց շահերը հա-
րուստ գյուղացիների դեմ, որոնք անխուսափելիորեն ձգտում են
դաշնակցելու կապիտալիստների ու կալվածատերերի հետ։

7. Պատերազմի հետևանքով Ռուսաստանն. ինչպես և բոլոր
կռվող, այլև շատ չեզոք (չկռվող) յերկրների ստանում է փլուզում.

կատաստրոֆ, սով, պատճառ՝ վոր պակասում են բանվորական ձեռքերը, պակասում է ածուխը, յերկաթը և այլն: Յերկիրը միայն այն կարող է փրկել, վոր Բանվորների ու Գյուղացիների Պատգամավորներն իրանց հսկողության ու ղեկավարության տակ առնեն ամբողջ արտադրությունը և մթերքների բաշխումը: Այս պատճառով անհրաժեշտ է այժմ իսկ գյուղացիական Պատգամավորների Խորհուրդների համաձայնություններ նախապատրաստել Բանվորների Պատգամավորների Խորհուրդների հետ, համաձայնություններ՝ փոխանակելու հացը և ուրիշ գյուղական մթերքներ գործիքների, կոշիկների, հագուստի և այլն հետ առանց կապիտալիստների միջնորդության և հեռացնելով նրանց ֆաբրիկաները վարելու գործից: Նույն այդ նպատակներով պետք խրախուսել կալվածատիրական անասունների ու գործիքների փոխանցումը գյուղացիական կոմիտեների ձեռքը՝ կազմակերպելու համար գործիքների և այդ անասունների ընդհանուր օգտագործումը: Հավասարապես պետք խրախուսել յուրաքանչյուր խոշոր կալվածատիրական սեփականությունից օրինակելի տնտեսություն կազմելը՝ հողի ընդհանուր մշակում կիրառելով լավագույն գործիքների օգնությամբ ագրոնոմների ղեկավարության ներքո և գյուղատնտեսական բանվորների ընտրված Պատգամավորների Խորհուրդների վորոշումներով:

*Տպագրված է «Նյութեր ագրարային հարցի մասին» գրքույկում, վոր «Прибой»-ն է հրատարակել 1917 թվականի վերջին:*

## ՀՈՂԻ ՄԱՍԻՆ

**(ճառ Խորհուրդների II համագումարում 1917 թ. հոկտեմբերի 26-ին)**

Մենք յենթադրում ենք, թե հեղափոխությունն ապացուցեց և ցույց տվավ, թե վորքան կարևոր է, վորպեսզի հողի հարցը պարզ դրվի: Յերկրորդ Հոկտեմբերյան հեղափոխության զինված ապստամբության ծագումը պարզ ապացուցում է, թե հողը պետք գյուղացիների ձեռքը տրվի: Վոճիր էր կատարում այն կառավարությունը, վորը տապալված է, վոճիր եյին կատարում մենշևիկները ու սոց.-հեղափոխականների համաձայնողական կուսակցությունները, վորոնք զանազան պատրվակներով ձգձգում եյին հողային հարցի լուծումը և դրանով իսկ յերկիրը հասցրին փլուզումի և գյուղացիական ապստամբության: Կեղծիք ու յերկչոտ խաբկանք է նրանց խոսքերը գյուղում տիրող ջարդերի ու անիշխանության մասին: Ո՞ւր և յե՞րբ է պատահել, վոր անիշխանություն ծագի խելացի միջոցներից: Յեթե կառա-



վարությունը խելացի վարվեր և յեթե նրա ձեռնարկումներն ընդառաջ գնային գյուղացիական չքավորության կարիքներին՝ ապա միթե գյուղացիական մասսան հուզվել կըսկսեր: Բայց կառավարության բոլոր ձեռնարկումները, հավանություն գտնելով Ավկսենտևի ու Դանի ղեկավարած խորհուրդների (39) կողմից, գյուղացիների դեմ եյին գնում և հարկադրեցին նրանց ապստամբության բարձրանալու:

Ապստամբություն հարուցելով՝ նա սկսեց ճչալ ջարդերի և անիշխանության մասին, վոր հենց ինքն էր հարուցել: Նա կամեցավ այն ճնշել յերկաթով ու արյունով, բայց ինքը սրբվեց հեղափոխական զինվորների, նավաստիների և բանվորների զինված ապստամբությամբ: Բանվորա-գյուղացիական հեղափոխության կառավարությունն առաջին հերթին պետք լուծե հողի հարցը,—մի հարց, վորը կարող է հանգըստացնել ու գոհացնել գյուղացիական չքավորության ահագին մասսաներին: Յես կըկարդամ ձեզ դեկրետի այն կետերը, վորը պետք հրապարակե ձեր Խորհրդային կառավարությունը: Այդ դեկրետի մի կետում զետեղված է հրահանգ հողային կոմիտեներին, վորը կազմված է տեղական Գյուղացիական Պատգամավորների Խորհուրդների 242 հրահանգի հիման վրա:

Այստեղ ձայներ են հնչվում, թե բուն դեկրետը և հրահանգը կազմված է սոց.-հեղափոխականների կողմից: Թող վոր այդպես է: Միևնույն չէ, թե ով է այն կազմել, բայց իբրև դեմոկրատիկ կառավարություն մենք չենք կարող աչքաթող անել ժողովրդական վարի խավերի վորոշումը, թեև համաձայն չլինենք նրա հետ: Կյանքի բովում, գործադրելով այն գործնականում, անցկացնելով այն տեղերում՝ գյուղացիներն իրանք կըմբռնեն, թե ուր է ճշմարտությունը: Յեվ յեթե անգամ գյուղացիները հետագայում էլ գնան սոց.-հեղափոխականների յետևից և յեթե անգամ այդ կուսակցությանը նրանք մեծամասնություն տան Հիմնադիր ժողովում, ապա այստեղ էլ կասենք մենք—թող այդպես լինի: Կյանքը լավագույն ուսուցիչն է,—նա ցույց կտա, թե ով է իրավացին, և թող գյուղացիները մի ծայրից, իսկ մենք մյուս ծայրից լուծենք այդ հարցը: Կյանքը մեզ կստիպե իրար մոտենալ հեղափոխական ստեղծագործության ընդհանուր հոսանքի, նոր պետական ձևերի մշակման մեջ: Մենք պետք է կյանքին հետևենք, մենք պետք է ստեղծագործելու լիակատար ազատություն տանք ժողովրդական մասսաներին: Հին կառավարությունը, վոր տապալված է զինված ապստամբությամբ, կամենում էր հողային հարցը լուծել չփոփոխված հին ցարական բյուրոկրատիայի օգնությամբ: Բայց հարցը լուծելու փոխարեն՝ բյուրոկրատիան միայն պայքարում էր գյուղացիների դեմ: Գյուղացիները մի բան սովորել են մեր հեղափոխության ութ ամսվա ընթացքում, նրանք իրանք են կամենում լուծել

հողին վերաբերյալ բոլոր հարցերը։ Այս պատճառով մենք դեմ ենք արտահայտվում այս օրինագծի առիթով լինելիք ամեն մի ուղղագրման, մենք չենք ուզում մանրամասնություններ գծել, վորովհետև մենք դեկրետ ենք գրում, այլ վոչ թե գործողությունների ծրագիր։ Ռուսաստանն ընդարձակ է, և տեղական պայմանները տարբեր են նրա մեջ. մենք հավատում ենք, վոր գյուղացիությունն ինքը մեզնից ավելի լավ կարող է ճշտորեն, այնպես, ինչպես հարկավոր է, լուծել հարցը։ Արդյո՞ք մեր վոգով, արդյո՞ք սոց.-հեղափոխականների ծրագրի վոգով,—դրա մեջ չի եյությունը։ Եյությունը նրա մեջ է, վորպեսզի գյուղացիությունը հաստատ վստահություն ունենա այն մասին, թե գյուղում այլևս կալվածատերեր չկան, թող վոր գյուղացիներն իրանք լուծեն բոլոր հարցերը, թող իրանք կառուցեն իրանց կյանքը։

## ԴԵԿՐԵՏ ՀՈՂԻ ՄԱՍԻՆ

(Ընդունված Խորհրդների II համագումարի կողմից, հոկտ. 26. գիշերվա ժ. 2-ին)։

1) Հողի կալվածատիրական սեփականությունը վերացվում է անհապաղորեն, առանց վորևե փրկանքի։

2) Այսուհետև մինչև Հիմնադիր ժողովը վոլոստային հողային կոմիտեների և գավառական գյուղացիական պատգամավորների Խորհուրդների տնօրինության են անցնում կալվածատիրական հողերը, այլ և հավասարապես ուդելի, վանքապատկան, յեկեղեցապատկան բոլոր հողերը նրանց ամբողջ շնչավոր և անշունչ ինվենտարով, շինություններով և բոլոր պարագաներով։

3) Այսուհետև ամբողջ ժողովրդին պատկանող գրաված գույքի վորևե փչացում հռչակվում է ծանր հանցանք, վոր պատժվում է հեղափոխական դատարանով։ Գյուղացիական Պատգամավորների Գավառական Խորհուրդները ձեռք են առնում բոլոր անհրաժեշտ միջոցները խստագույն կարգ պահպանելու կալվածատիրական հողերի գրավման ժամանակ, վորոշելու այն, թե ինչ չափի հողաբաժիններ և հատկապես վորոնք են յենթակա գրավման, կազմելու ամբողջ գրավվող գույքի ճիշտ ցուցակը և խստագույն հեղափոխական պահպանություն անելու ժողովրդին անցնող ամբողջ տնտեսությանը հողի վրա՝ իր բոլոր շինություններով, գործիքներով, անասուններով, մթերքների պաշարներով և այլն։

4 Հողային մեծ վերակազմավորումների իրագործման համար, մինչև նրանց վերջնական վորոշումը Հիմնադիր ժողովի կողմից, ամենուրեք պիտի ղեկավարության ընդունվի այն գյուղացիական հրա-



հանգը, վորը 242 տեղական գյուղացիական հրահանգների հիման վրա կազմել է «Известия Всероссийского Совета Крестьянских Депутатов» լրագրի խմբագրությունը և հրատարակված է այդ «Известия»-յի № 88-ում (Պետերբուրգ, 1917 թ. օգոստոսի 19)։

Դեկրետը գրել է ԼԵՆԻՆԸ.

«Բանվորա-գյուղացիական կառավարության օրենքների յեվ կարգադրությունների ժողովածու» (ռուսերեն) 1918 թ.։

## ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԴԱՇԻՆՔՆ ԱՇԽԱՏՈՂ ՅԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՎՈՂ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՀԵՏ

(Նամակ խմբագրության)

Այսօր, շաբաթ 1917 թվականի նոյեմբերի 18-ին, յերբ յես առիթ ունեցա հանդես գալու գյուղացիական համագումարում, ինձ հրապարակական հարց տրվեց, վորին յես իսկույն և յեթ պատասխանեցի։ Անհրաժեշտ է, վորպեսզի այդ հարցը և իմ պատասխանն անհապաղորեն հայտնի դառնա վողջ ընթերցող հասարակության, վորովհետև խոսելով ձևականորեն միայն իմ սեփական անունից՝ յես ըստ գործի եյության խոսել եմ բոլշևիկների ամբողջ կուսակցության անունից։

Բանն այսպես եր։

Շոշափելով բանվոր-բոլշևիկների դաշինքի հարցը ձախ սոց.-հեղափոխականների հետ, վորոնց հանդեպ այժմ վստահություն են տածում շատ գյուղացիներ, յես ապացուցում եյի իմ ճառում, թե այդ դաշինքը **կարող է** լինել «շիտակ կոալիցիա», շիտակ դաշինք, վորովհետև վարձու բանվորների շահերն արմատապես հակառակ **չեն** գալիս աշխատող և շահագործվող գյուղացիների շահերին։ Սոցիալիզմը **լիովին** գոհացնել կարող է մեկի և մյուսի շահերը։ **Միայն** սոցիալիզմը կարող է գոհացնել նրանց շահերը։ Այստեղից եվ «շիտակ կոալիցիայի» հնարավորությունն և անհրաժեշտությունն է բղխում պրոլետարների և աշխատող ու շահագործվող գյուղացիների միջև։ Ընդհակառակը, «կոալիցիան» (դաշինքը) մի կողմից՝ աշխատող և շահագործվող դասակարգերի, մյուս կողմից՝ բուրժուազիայի միջև չի կարող «շիտակ կոալիցիա» լինել, քանի վոր այդ դասակարգերի շահերն արմատապես հակառակ են գալիս իրար։

Յերևակայեցեք,—ասում եյի յես,—թե կառավարության մեջ մեծամասնությունը լինեն բոլշևիկներ և փոքրամասնությունը ձախ սոց.-հեղափոխականներ (90), ընդունենք անգամ, ընդամենը մեկ ձախ սոց.-հեղափոխական, հողագործության կոմիսարը։ Կարո՞ղ են արդյոք նման դեպքում բոլշևիկները շիտակ կոալիցիա իրագործել։

կարող են, վորովհետև անհաշտ պայքար մղելով հակահեղափոխական տարրերի դեմ (այդ թվում աջ սոց.-հեղափոխական և պաշտպանողական). բոլշևիկները պարտավոր եյին **ձեռնպահ** մնալ այնպիսի հարցերի քվեարկության ժամանակ, վորոնք վերաբերում են Խորհուրդների յերկրորդ Համառուսական Համագումարի կողմից հաստատված հողային ծրագրի զուտ սոց.-հեղափոխական կետերին։ Այդպիսին է, որինակ, հավասարարար հողօգտագործման և մանր տնտեսատերերի միջև հողի վերաբաժանման կետը։

Ձեռնպահ մնալով այս կետի քվեարկության ժամանակ՝ բոլշևիկները մի նշանախեց իսկ չեն դավաճանում իրանց ծրագրին։ Վորովհետև սոցիալիզմի հաղթության պայմանում (բանվորական վերահսկողություն ֆաբրիկաների վրա, դրան հետևող նրանց եքսպրոպրիացիան, բանկերի ազգայնացումը, գերագույն տնտեսական խորհրդի ստեղծումը, վորը պիտի ղեկավարի յերկրի վողջ ժողովրդական տնտեսությունը), նման պայմանում բանվորները պարտավոր են համաձայնվել այն փոխանցման միջոցներին, վոր աշխատող և շահագործվող գյուղացիներն են առաջարկում, յեթե այդ միջոցները չեն վնասում սոցիալիզմի գործին։ Յեվ Կաուցկին, յերբ նա դեռ մարքսիստ եր (1899-1909 թ. թ.) մեկից ավելի անգամ է ընդունել—ասում եյի յես—թե դեպի սոցիալիզմ տանող անցման միջոցները չեն կարող միատեսակ լինել խոշոր հողագործության և մանր հողագործության յերկրներում։

Նման կետի քվեարկության ժամանակ մենք, բոլշևիկներս, պարտավոր եյինք ձեռնպահ մնալ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդում կամ ԿԳԿ, վորովհետև քանի ձախ սոց.-հեղափոխականները (այլև հավասարապես նրանց կողմը կանգնած գյուղացիները) համաձայն եյին բանվորական վերհսկողության, բանկերի ազգայնացման և այլն. հավասարար հողօգտագործումը կլիներ միմիայն դեպի լրակատար սոցիալիզմը տանող **փոխանցման** միջոցներից մեկը։ Անհեթեթություն կլիներ այդպիսի փոխանցման միջոցները պրոլետարիատի **օձիքին փաթաթել**. սոցիալիզմի հաղթանակի շահը նկատի ունենալով՝ նա պարտավոր է աշխատող և շահագործվող գյուղացիներին **զիջում անել** այդ փոխանցման միջոցների ընտրության մեջ, **վորովհետեվ վնաս** սոցիալիզմի գործին նրանք չպիտի բերեյին։

Մի ձախ սոց.-հեղափոխական (յեթե չեմ սխալվում դա ընկեր Ֆեոֆիլակտովն եր) տվավ ինձ այն ժամանակ հետևյալ հարցը.

Իսկ ինչպես կվարվեն բոլշևիկները, յեթե Հիմնադիր Ժողովում գյուղացիները ցանկանան անցկացնել հավասարար հողօգտագործման օրենքը, բուրժուազիան գյուղացիների դեմ լինի, վճիռն էլ կախված լինի բոլշևիկներից։

Յես պատասխանեցի. նման դեպքում, յերբ սոցիալիզմի գործը



ապահոված լինի բանվորական վերահսկողության, բանկերի ազգայնացման կիրառումով և այլն, աշխատող և շահագործվող գյուղացիների հետ կնքած բանվորների դաշինքը կպարտավորեցնի պրոլետարիատի կուսակցությանը քվեարկել գյուղացիների օգտին ընդդեմ բուրժուազիայի։ Իմ կարծիքով այն ժամանակ քվեարկության պահուն բոլշևիկներն իրավունք կունենան մտցնելու իրենց առանձին հայտարարություն, պատճառաբանելու իրանց անհամաձայնությունը և այլն, բայց ձեռնպահ մնալ նման դեպքում - կնշանակի մասնակի տարաձայնության պատճառով դավաճանել սոցիալիզմի համար պայքարող իր դաշնակիցներին։ Նման դրության մեջ յերբեք բոլշևիկները չեն դավաճանի գյուղացիներին։ Յերբեք հավասարար հողօգտագործումը և նման միջոցները չեն վնասի սոցիալիզմին, յեթե իշխանությունը բանվորական ու գյուղացիական կառավարության ձեռքին է, յեթե մտցրված է բանվորական վերհսկողություն, մտցրված է բանկերի ազգայնացում, ստեղծված է բանվորական ու գյուղացիական գերագույն տնտեսական հիմնարկ, վորն ուղղություն է տալիս վողջ ժողովրդական տնտեսության և այլն—այդպիսին եր իմ պատասխանը։

Գրված է 1917 թ նոյեմբերի 18։

Հրատարակված է առանձին թռուցիկով։

## ՃԱՌ ՀՈՂԱՅԻՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ, ՉՔԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ՅԵՎ ԿՈՄՄՈՒՆԱՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՒՍԱԿԱՆ I ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

**(1918 թ. դեկտեմբերի 11-ի նիստ)**

Ընկերներ, իմ կարծիքով արդեն ներկա համագումարի կազմն իսկ ցույց է տալիս այն լուրջ փոփոխությունը և այն խոշոր քայլը հառաջ, վորը սոցիալիստական շինարարության գործում, մանավանդ գյուղատնտեսական հողագործական հարաբերությունների բնագավառում, վորոնք ամենից կարևորն են մեր յերկրի համար, մենք ենք արել։ Ներկա համագումարն իր մեջ միացնում է հողային բաժինների, չքավորության կոմիտեների և գյուղատնտեսական կոմմունաների ներկայացուցիչներին, և այդ միացումը ցույց է տալիս, թե մեր հեղափոխությունը մի կարճ ժամանակում, մի տարվա մեջ, հաջողել է շատ առաջ քայլել այն հարաբերությունների վերակառուցման բնագավառում, վորոնք ամենից դժվար են վերակառուցման յենթարկվում, վորոնք բոլոր առաջվա հեղափոխությունների մեջ ամենից շատ են խանգարել սոցիա-

լիզմի գործը և վորոնց անհրաժեշտ է ավելի խորը վերակառուցել, վորպեսզի ապահովել կարելի լինի սոցիալիզմի հաղթանակը:

Հոկտեմբերից հետո մեր հեղափոխության զարգացման մեջ առաջին փուլը, առաջին շրջանը գլխավորապես նվիրված եր ամբողջ գյուղացիության ընդհանուր թշնամու դեմ, կալվածատերերի դեմ հաղթություն վաստակելու:

Դուք բոլորդ, ընկերներ, լավ գիտեք, թե դեռ փետրվարի հեղափոխությունը — բուրժուազիայի հեղափոխությունը, համաձայնողականների հեղափոխությունը, այդ հաղթությունը կալվածատերերի դեմ խոստացել է գյուղացիներին, ինչպես նա այդ խոստումը չի կատարել: Միայն Հոկտեմբերյան հեղաշրջումը, միայն բանվոր դասակարգի հաղթությունը քաղաքներում, միայն Խորհրդային իշխանությունն իրականի մեջ հնարավորություն տվավ ծայրից ծայր մաքրելու ամբողջ Ռուսաստանը, մաքրելու հին ճորտատիրական խոցի ժառանգությունից, հին գյուղացիական շահագործումից, կալվածատիրական հողատիրությունից և կալվածատերերի հարստահարությունից ամբողջ գյուղացիության վրա, բոլոր գյուղացիների վրա անխտիր:

Կալվածատերերի դեմ մղված այդ պայքարի համար բարձրացան և իսկապես բարձրացան բոլոր գյուղացիները: Այդ պայքարը միավորեց չքավորագույն աշխատող գյուղացիությանը, վորն ոտարի աշխատանքի շահագործումով չի ապրում: Այդ պայքարը միավորեց նույնպես և առավել ունևոր և անգամ գյուղացիության ամենից հարուստ մասին, վորը չի կարողանում գլուխ թափել առանց վարձու աշխատանքի:

Քանի դեռ մեր հեղափոխությունը զբաղված եր այդ խնդրով, քանի դեռ մենք ստիպված եյինք մեր բոլոր ուժերը լարել այն բանին, վորպեսզի գյուղացիների ինքնուրույն շարժումով, բանվորների քաղաքային շարժման ոգնությամբ, իսկապես սրբել և վախճանապես վոչնչացնել կարողանանք կալվածատերերի իշխանությունը — մինչև այդ հեղափոխությունը մնում եր հանուր-գյուղացիական և այդ պատճառով չեր կարող դուրս գալ բուրժուական շրջանակներից:

Նա չեր շարժում ավելի ուժեղ, բոլոր աշխատողների ավելի ժամանակակից թշնամուն — կապիտալին: Այս պատճառով նա սպառնում եր նույնպես թերակատար ավարտվել, ինչպես ավարտվում եր հեղափոխությունների մեծամասնությունը Արևմտյան Յեվրոպայում, ուր քաղաքային բանվորների ու ամբողջ գյուղացիության ժամանակավոր դաշինքով հաջողվում եր սրբել միապետությունը, սրբել միջնադարի մնացորդները, սրբել առավել կամ պակաս լրությամբ կալվածատիրական հողատիրությունը կամ կալվածատիրական իշխանությունը, բայց յերբեք չեր հաջողվում խախտել կապիտալի իշխանության բուն հիմքերը:



Յեվ ահա ընթացիկ տարվա ամառվանից ու աշունքից այդ առավել կարևոր ու ավելի դժվարին գործին սկսեց անցնել մեր հեղափոխությունը: Հակահեղափոխականների ապստամբությունների ալիքը, վորը բարձրացավ ընթացիկ տարվա ամառը, յերբ Ռուսաստանի դեմ ձեռնարկած արևմտա-յեվրոպական իմպերիալիստների արշավանքին, նրանց վարձկանների՝ չեխո-սլովակների արշավանքներին միացավ բոլորը, ինչ շահագործական ու հարստահարական եր ռուս կյանքում: Յեվ այդ ալիքը զարթեցրեց նոր հովեր ու նոր կյանք գյուղում:

Գործնականում, Խորհրդային իշխանության դեմ մղած կատաղի պայքարի մեջ, այդ բոլոր ապստամբությունները միավորեցին և՛ յեվրոպական իմպերիալիստներին, և՛ նրանց վարձկան չեխո-սլովակներին, և՛ այն բոլորը, ինչ դեռ կալվածատերերի ու կապիտալիստների կողմնակիցն եր մնացել Ռուսաստանում: Դրան հետևեցին և բոլոր գյուղական կուլակները:

Խախտվեց գյուղի միասնականությունը: Այն գյուղում, վորն իբրև մի մարդ եր կռվում կալվածատերերի դեմ, ծագեցին յերկու բանակ — աշխատող չքավորագույն գյուղացիության բանակ, վորը բանվորների հետ միասին հաստատակամորեն շարունակում եր ընթանալ դեպի սոցիալիզմի իրագործումը և կալվածատերերի դեմ մղած պայքարից անցնում եր պայքար մղելու կապիտալի դեմ, դրամի իշխանության դեմ, հողի մեծ վերակազմավորման կուլակային ոգտագործման դեմ — և ավելի ունևոր գյուղացիների բանակ: Այդ պայքարն ունենալով, շահագործող դասակարգերին վերջնականորեն զատելով հեղափոխությունից, մեր հեղափոխությունն ամբողջովին դրավ այն սոցիալիստական ռելսերի վրա, վորոնց վրա հոկտեմբերին հաստատակամորեն ու վճռականորեն քաղաքների բանվոր դասակարգն եր կամենում դնել այն, բայց նա չի կարող յերբեք հաղթականորեն այդ պայքարի գծով ուղղել հեղափոխությունը, յեթե գիտակցական, կուռ համախմբված աջակցություն չգտնի գյուղերում:

Ահա ինչումն է այն հեղաշրջման նշանակությունը, վորը ներկա ամառը և ներկա աշնանը տեղի ունեցավ Ռուսաստանի ամենախուլ գյուղական անկյուններում, վորն աղմկալից չեր, չեր տեսնվում այնպես շոշափելիորեն և այնպես բոլորի աչքով չեր ընկնում, ինչպես անցյալ տարվա հոկտեմբերյան հեղաշրջումը, բայց վորն ունի ել անհամեմատ ավելի խոր ու կարևոր նշանակություն:

Գյուղում չքավորների կոմիտեների կազմավորումը մի դարձակետ եր և ցույց տվեց, թե քաղաքների բանվոր դասակարգը, վոր հոկտեմբերին միավորվել եր գյուղացիության հետ, վորպեսզի ջարդե ազատ, աշխատող և սոցիալիստական Ռուսաստանի գլխավոր թշնամուն, վորպեսզի ջարդե կալվածատերերին, — թե բանվոր դասակարգն

այդ խնդրից առաջ և անցել դեպի առավել դժվար ու պատմականորեն ավելի բարձր, իսկապես սոցիալիստական մի խնդիր—գյուղում էլ վարել գիտակցական սոցիալիստական պայքար և գյուղում էլ զարթեցնել գիտակցություն, թե մեծագույն հողային հեղաշրջումը, այն է՝ հողի մասնավոր սեփականության վերացման հռչակումը հոկտեմբերին, հողի սոցիալիզացիայի հռչակումը,—թե այդ հեղաշրջումն անխուսափելիորեն թղթի վրա կմնար, յեթե քաղաքային բանվորները կյանքի չկոչեյին գյուղական պրոլետարիատին, գյուղական չքավորությանը, աշխատող գյուղացիությանը, վորն ահագին մեծամասնություն է կազմում, վորը միջին գյուղացիության հետ չի շահագործում ուրիշի աշխատանքը, չի շահագրգռված շահագործության մեջ և այդ պատճառով ընդունակ է ընթանալ և այժմ կալվածատերերի դեմ մղած պայքարից՝ առաջ ընթացավ դեպի համապրոլետարական պայքարն ընդդեմ կապիտալի, ընդդեմ շահագործողների իշխանության, վորոնք կռթնում են դրամի ուժի վրա, շարժական գույքի ուժի վրա, առաջ ընթացավ մի աշխատանքից, վոր Ռուսաստանի մաքրումն էր կալվածատերերից, դեպի սոցիալիստական կարգի կազմավորումը:

Ընկերնե՛ր, այդ քայլն ամենամեծ դժվարություն ներկայացնող մի քայլ էր: Այդ քայլի նկատմամբ բոլոր նրանք, ովքեր կասկածի տակ եյին դնում մեր հեղափոխության սոցիալիստական բնույթը, գուշակում եյին մեզ անխուսափելի անաջողություն, և այդ քայլից է կախված այժմ սոցիալիստական շինարարության ամբողջ գործը գյուղում: Չքավորության կոմիտեների կազմավորումը, այդ կոմիտեների լայն ցանցը, վորը փռվել է ամբողջ Ռուսաստանում, այժմ կատարելի և մասամբ արդեն սկսված է նրանց վերակազմավորումը, վոր հետամտում է նրանց դարձնել պատգամավորների լիակատար իշխանություն ունեցող գյուղական խորհուրդներ, վորոնք գյուղում պիտի կիրառեն հիմնական սկզբունքները խորհրդային շինարարության—աշխատողների իշխանության,—հենց սա է իսկական գրավականն այն բանի, վոր մենք չենք սահմանափակել մեր աշխատանքը նրանով, ինչով սահմանափակել են սովորական բուրժուա-դեմոկրատական հեղափոխություններն արևմտաեվրոպական յերկրներում: Վոչնչացնելով միապետությունը և կալվածատերերի միջնադարյան իշխանությունը՝ մենք այժմ անցնում ենք իսկական սոցիալիստական շինարարության գործին: Գյուղում այդ գործն ամենից դժվարինն է, բայց և միաժամանակ ամենից կարևորը: Այդ աշխատանքն ամենից խոստումնալիցն է: Յեթե հաջողվել է բուն գյուղում գիտակցություն զարթեցնել գյուղացիության աշխատող մասի մեջ, յեթե կապիտալիստական ապստամբությունների ալիքով հայտնապես նա վերջնականորեն զատված է կապիտալիստների դասակարգի շահերից, յեթե աշխատավոր գյուղացիությունը չքավորության կոմի-



տեներում և վերակազմավորվող խորհուրդներում ավելի ու ավելի սերտորեն է ձուլվում քաղաքային բանվորների հետ,—ապա դրա մեջ մենք տեսնում ենք միակ և միևնույն ժամանակ ամենաճիշտ և անտարակուսելիորեն հաստատ գրավականն այն բանի, թե Ռուսաստանում սոցիալիստական շինարարության գործն այժմ ավելի ամուր է դարձել: Այժմ նա հիմք է նվաճել նաև հողագործական գյուղական բնակչության ահագին մասսայի մեջ:

Կասկած չը կա, վոր մի այնպիսի գյուղացիական յերկրում, ինչպես Ռուսաստանն է, սոցիալիստական շինարարությունը մի շատ դըժվարին խնդիր է ներկայացնում: Կասկած չկա, վոր սրբել մի այնպիսի թշնամի, վորպիսին ցարիզմն է, վորպիսին կալվածատերերի իշխանությունն էր, վորպիսին կալվածատիրական հողատիրությունն էր, համեմատաբար հեշտ բան էր: Կարելի յեր այդ խնդիրը կենտրոնում լուծել մի քանի որում, կարելի յեր ամբողջ յերկրում լուծել մի քանի շաբաթում, բայց այն խնդիրը, վորին այժմ մենք դիմում ենք, իր իսկ էությամբ կարող է լուծվել միայն անչափ համառ ու տևական աշխատանքով: Այստեղ մեր առաջ ծառացած է մի պայքար, քայլ առ քայլ վերշոկ առ վերշոկ ստիպված ենք նվաճել: Հարկադրված կլինենք ձեռք բերել նոր սոցիալիստական Ռուսաստանի նվաճումները, պայքարելու հողի հասարակական մշակման համար:

Յեվ ինքնին հասկանալի յե, թե նման տեսակի մի հեղաշրջում—մանր զատ-զատ գյուղացիական տնտեսություններից փոխանցում դեպի հողի հասարակական մշակումը—պահանջում է յերկար ժամանակ, թե նա վոչ մի դեպքում չի կարող միանգամից կատարվել:

Մենք շատ լավ գիտենք, վոր մանր գյուղացիական տնտեսության յերկրներում անհնարին է սոցիալիզմին փոխանցումը, յեթե չեն մշակել մի շարք աստիճանական նախնական սանդուղքներ: Գիտակցելով այդ՝ հոկտեմբերյան հեղաշրջումը առաջին այդ խնդիրը համարեց միայն կալվածատիրական իշխանության սրբումն և վոչնչացումը: Փետրվարյան հիմնական որենքը հողի սոցիալիզացիայի մասին, վորը, ինչպես դուք գիտեք, անց է կացվել և կոմմունիստների և խորհրդային իշխանության այն մասնակիցների միաձայն վորոշումով, վորոնք կոմմունիստների տեսակետի վրա չեյին կանգնած, այդ որենքը միաժամանակ հանդիսանում է և գյուղացիների ահագին մեծամասնության թե կամքի և թե գիտակցության արտահայտություն և ապացույց այն բանի, թե բանվոր դասակարգը, բանվորական Կոմմունիստական կուսակցությունը, գիտակցելով իր խնդիրը, համառորեն, համբերատարությամբ, մի շարք աստիճանական փուլերով զարթեցնելով գյուղացիության աշխատող մասի գիտակցությունը և միայն առաջ ընթանալով այն չափով, վոր չափով այդ գիտակցությունն է զարթնել, վոր չափով գյուղա-

ցիությունն է ինքնուրույնաբար կազմակերպվել,—շարժվում է մի ուղիով, որը դեպի նոր սոցիալիստական շինարարությունն է տանում:

Մենք շատ լավ գիտենք, որ այնպիսի մեծագույն հեղաշրջումներ, ինչ տասնյակ միլիոնավոր մարդկանց կյանքում է կատարվում, ինչ վերաբերվում է կյանքի ու կենցաղի ամենախորը հիմքերին, այնպիսի հեղաշրջումներ, ինչպես մանր զատ-զատ գյուղացիական տնտեսությունից փոխանցումն է հողի ընդհանուր մշակման, կարող են միայն ստեղծվել տևական աշխատանքով, որ նրանք առհասարակ իրագործելի յեն միայն այն ժամանակ, յերբ անհրաժեշտությունը ստիպում է մարդկանց վերափոխել ամբողջ կյանքը:

Իսկ ամբողջ աշխարհում տեղի ունեցած կատաղի տևական պատերազմից հետո՝ մենք սոցիալիստական հեղափոխության սկիզբն ենք տեսնում պարզապես: Ամբողջ աշխարհում, անգամ ամենից հետամնաց յերկրների համար ստեղծվել է այդ անհրաժեշտությունը. որը՝ անկախ վորևե թեորետիքական հայացքներից կամ սոցիալիստական ուսմունքներից՝ ասում է ամենապարզ լեզվով ամեն մեկին ու յուրաքանչյուրին, թե հին յեղանակով անկարելի յե ապրել:

Յերբ յերկիրը կրել է այնպիսի հսկայական քայքայում և այնպիսի սնանկացում, յերբ մենք տեսնում ենք, թե այդ սնանկացումը տարածվում է ամբողջ աշխարհի վրա, թե կուլտուրայի, գիտության և տեխնիկայի նվաճումները, որ մարդկությունն է ձեռք բերել շատ դարերի ընթացքում, չորս տարվա մեջ սրբված են այդ հանցավոր, քայքայիչ և կողոպտչական պատերազմի կողմից և որ ամբողջ Յեվրոպան, այլ չե թե միայն Ռուսաստանն է վերադառնում բարբարոսության վիճակին,—այն ժամանակ ամենալայն մասսաների և մանավանդ գյուղացիության առաջ, որը գուցե ամենից շատ է տառապել այդ պատերազմից, առարկայորեն կանգնում է գիտակցությունն այն բանի, թե հարկավոր են արտակարգ ճիգեր, հարկավոր է բոլոր ուժերի լարում, վորպեսզի փրկվել կարելի լինի նզովյալ պատերազմի այդ ժառանգությունից, որը մեզ թողել է միայն քայքայում և կարիքներ: Ապրել հին յեղանակով, ինչպես ապրել ենք պատերազմից առաջ, անկարելի յե, և մարդկային ուժերի ու աշխատանքի այնպիսի հափշտակում ինչպիսին կապված է մանր առանձին գյուղացիական տնտեսության հետ, այլևս շարունակվել չի կարող: Յերկապատիկ, յեռապատիկ կբարձրանար աշխատանքի արտադրողականությունը, յերկապատիկ և յեռապատիկ կխնայվեր մարդկային աշխատանքը հողագործության և մարդկային տնտեսության համար, յեթե այդ ցրված մանր տնտեսությունից փոխանցումն կատարվեր դեպի հասարակական տնտեսությունը:

Այն քայքայումը, որ մեզ ժառանգություն է թողել պատերազմը,



ուղղակի չի թույլատրում վերականգնել այդ հին մանր գյուղացիական տնտեսությունը: Բավ չէ այն, որ պատերազմը զարթեցրել է գյուղացիների բազմությունը, բավ չէ այն, որ պատերազմը ցույց է տվել նրանց, թե տեխնիկայի ինչպիսի հրաշալիքներ գոյություն ունեն ներկայումս և որ տեխնիկայի այդ հրաշալիքները հարմարեցված են վոչնչացնելու մարդկանց, բայց նա զարթեցրել է միտքը, թե տեխնիկայի հրաշալիքներն առաջին հերթին պիտի գործադրվեն վերակազմափոխելու ամենից հասարակական, ամենից շատ մարդ զբաղեցնող, ամենից հետամնաց արտադրությունը, հողագործականը: Բավ չէ այն, որ այդ գիտակցությունը զարթեցված է, այլ արդի պատերազմի հրեշավոր սարսափների շնորհիվ մարդիկ համոզվեցին, թե ինչպիսի ուժեր է ստեղծել ժամանակակից տեխնիկան և ինչպես են վատնվում այդ ուժերը սարսափելի, անմիտ պատերազմում և որ այդ սարսափներից փրկվելու միակ միջոցն են հանդիսանում տեխնիկայի այդ նույն ուժերը: Մեր պարտավորությունն ու պարտքն է ուղղել նրանց այն բանին, վորպեսզի ամենից հետամնաց հողագործական, գյուղատնտեսական արտադրությունը դնենք նոր ռելսերի վրա, վորպեսզի կարելի լինի նրան վերակազմավորել ու անգիտակցաբար, հնորյա ձևով տարվող հողագործության զբաղմունքը դարձնել մի այնպիսի զբաղմունք, որը հիմնված է գիտության և տեխնիկայի նվաճումների վրա: Պատերազմն անչափելի շատ է զարթեցրել այս գիտակցությունը, քան մեզնից մեկը կարող է գտնել: Բայց բացի նրանից, որ պատերազմը զարթեցրել է այդ գիտակցությունը, նա նույնպես խափանել է հնարավորությունը հին ձևով վերականգնելու արտադրությունը:

Նրանք, ովքեր յերազում են, թե այս պատերազմից հետո կարելի կլինի այն դրության վերականգնումը նվաճել, որը պատերազմից առաջ էր, սխեմի վերականգնումը և տնտեսության կառուցումը հին ձևերով,—նրանք սխալվում են և օրավուր ավելի յեն տեսնում իրենց սխալը: Պատերազմն առաջ է բերել այնպիսի սոսկալի քայքայում, որ մեզ մոտ առանձին մանր տնտեսություններն այժմ չունեն վոչ լծկան անասուններ, վոչ ինվենտար, վոչ գործիքներ: Մենք այլևս չենք կարող հանդուրժել ժողովրդական աշխատանքի նման հափշտակումը: Աշխատող չքավորագույն գյուղացիությունը, որ ամենից շատ է զոհաբերություններ արել հեղափոխության համար և ամենից շատ է նեղություն կրել պատերազմից, նրա համար չի կալվածատերերից խլել հողը, վորպեսզի այդ հողերը նոր կուլակների ձեռքն ընկներ: Այդ աշխատող գյուղացիության առաջ ինքը կյանքն այժմ մի հարց է դնում դեմ-հանդիման—անցնել հողի հասարակական մշակման, վորովհետև դա յե միակ միջոցը վերականգնելու այն կուլտուրան, որը

այժմ քայքայվել ու ավերվել է պատերազմի կողմից, վորովհետև դա յե միակ միջոցը դուրս գալու այն խավարից, ստորված ու ճնշված վիճակից, վորին կապիտալն եր դատապարտել գյուղական բնակչության վողջ մասսային, այն խավարից ու ճնշվածությունից, վորը թույլատրում եր կապիտալիստներին չորս տարի պատերազմով ճզմելու մարդկությունը և վորից այժմ ինչ էլ վոր լինի բոլոր յերկրներում բոլոր աշխատավորները հեղափոխական յեռանդով ու խանդով ազատվել են վճռում։

Ահա, ընկերներ, ինչպիսի պայմաններ պիտի ստեղծվեյին համաշխարհային մասշտաբով, վորպեսզի այդ դժվարագույն և միևնույն ժամանակ ամենագլխավոր սոցիալիստական ռեֆորմի հարցը, այդ ամենագլխավոր և հիմնական սոցիալիստական վերակազմավորման հարցը, վորպեսզի նա օրակարգի դրվեր, և նա Ռուսաստանում օրակարգի յե դրված։ Չքավորության կոմիտեների կազմավորումը, հողային բաժինների, չքավորության կոմիտեների և գյուղատնտեսական կոմմունաների այժմյան միատեղի համագումարը — այս բոլորը ցույց է տալիս մեզ հարակից այն պայքարին, վորը ներկա տարվա ամառը և աշնանը տեղի ուներ գյուղի ներսում, այս բոլորը ցույց է տալիս մեզ։ Թե աշխատող գյուղացիության ամենալայն մասսաներում զարթնել է գիտակցությունը և վոր բուն գյուղացիության մեջ, աշխատող գյուղացիության մեծամասնության մեջ կա ձգտում հողի մշակման հասարակական ձև սահմանելու։ Իհարկե, կրկնում եմ, դեպի վերակազմավորումներից այդ մեծագույնը մենք պիտի աստիճանաբար մոտենանք։ Անհապաղորեն այստեղ վոչինչ չի կարելի անել, բայց յես պիտի ձեզ հիշեցնեմ, վոր և հողի սոցիալիզացիայի այն հիմնական օրենքում, վորը կանխորոշված եր Հոկտեմբերի 25-ի հեղաշրջումից հետո մյուս օրն իսկ, Խորհուրդների Յերկրորդ Համառուսական Համագումարի ստեղծած Խորհրդային իշխանության առաջին օրգանի առաջին իսկ նիստում հրատարակվեց օրենք վոչ միայն այն մասին, թե հողի մասնավոր սեփականությունը վերացվում է ընդմիշտ, վոչ միայն այն մասին, թե վոչնչացվում է կալվածատիրական սեփականությունը, այլ ի միջի այլոց նաև այն մասին, թե ինվենտարը, լծկան անասունները և գործիքները, վորոնք անցնում են ժողովրդի տիրության և տնտեսությունների աշխատողների տիրության, նույնպես հասարակական սեփականության պիտի անցնեն, նույնպես պիտի դադարեն առանձին տնտեսությունների մասնավոր սեփականությունը լինելուց, և հողի սոցիալիզացիայի օրենքում, վորն ընդունված է 1918 թվականի փետրվարին, և այդ օրենքում այն հիմնական հարցին, թե ինչ նպատակներ ենք այժմ մենք մեզ դնում, հողի տնօրինության ինչպիսի խնդիրներ ենք մենք կամենում իրագործել և ինչ բան ենք



հրավիրում իրագործելու այդ հարցում Խորհրդային իշխանության կողմնակիցներին, աշխատող գյուղացիությանը,— այդ հարցին հողի սոցիալիզացիայի օրենքը հոդված 11-ում պատասխանում է, թե այնպիսի խնդիր հանդիսանում է կոլլեկտիվ տնտեսության զարգացումը հողագործության մեջ, վորն աշխատանքի ու մթերքների խնայողության իմաստով ավելի յե ձեռնտու, զարգացում է հանդիսանում ի հաշիվ անհատական տնտեսությունների, սոցիալիստական տնտեսության անցնելու նպատակով։

Ընկերներ, մեզ մոտ, յերբ մենք ընդունում եյինք այդ օրենքը, ամենևին կոմմունիստների լիակատար միաբանություն և համաձայնություն չկար մյուս կուսակցությունների հետ. ընդհակառակը, մենք այդ օրենքն ընդունում եյինք այն ժամանակ, յերբ Խորհրդային իշխանության և Խորհրդային կառավարության մեջ կոմմունիստների միասնականություն գոյություն ուներ ձախ սոց-հեղափոխականների կուսակցության հետ, վորոնք չեյին ընդունում կոմմունիստական հայացքները, և այնուամենայնիվ մենք հանգեցինք միաբան ու միաձայն վճռի, վորի հողի վրա յել կանգնած ենք և այժմ, հիշելով, մի անգամ էլ կասեմ, թե անհատական տնտեսություններից նման փոխանցումը հողի հասարակական մշակման չի կարող իրագործվել միանգամից, թե այն պայքարը, վոր քաղաքներում եր բռնկվել, նա հարցն ավելի պարզ եր դնում։ Այնտեղ հազար բանվորի դեմ մի կապիտալիստ եր կանգնած և մեծ աշխատանք չեր պահանջվում նրան որբելու համար։ Իսկ գյուղում բռնկված պայքարն առավել բարդ եր։ Սկզբում գյուղացիների ընդհանուր գրոհն եր կալվածատերերի դեմ, սկզբում կալվածատիրական իշխանության լիակատար վոչնչացումն եր մի այնպիսի ձևով, վորպեսզի նա վերստեղծվել իսկ չկարողանա. ապա՝ պայքար գյուղացիության ներսում, ուր հանձին կուլակների, հանձին շահագործողների և սպեկուլյանտների, վորոնք օգտվում եյին հացի ավելցուկով, վորպեսզի շահվեն ի հաշիվ Ռուսաստանի վոչ-հողագործական սոված մասի, վերականգնվեյին նոր կապիտալիստներ։ Այստեղ բացվում եր նոր պայքարի ասպարեզ և դուք բոլորդ գիտեք, թե ինչպես այս տարվա ամռան այդ պայքարը մի ամբողջ շարք ապստամբական բռնկումների հասավ։ Ապա դեռ հնում եյին աշխատող գյուղացիության չքավորագույն մասի հարաբերությունները դեպի միջին գյուղացիությունը, և մեր քաղաքականությունն այստեղ միշտ վարել է այնպիսի անողոք պայքար, ինչպես և կալվածատերերի ու կապիտալիստների դեմ։ Կուլակի վերաբերմամբ մենք չենք ասում, թե նա պիտի զրկվի ամբողջ սեփականությունից այնպես, ինչպես կալվածատիրոջ, կապիտալիստի վերաբերմամբ։ Մենք ասում ենք, թե պետք է կոտրել այդ կուլակի դիմադրությունն այն անհրաժեշտ մի-

ջոցների դեմ, ինչպես, օրինակ, հացի մոնոպոլիան է, վորը նա չի կատարում, վորպեսզի շահվի հացի ավելցուկների սպեկուլյատիվ վաճառքից. այն ինչ վոչ-հողագործական վայրերի բանվորներն ու գյուղացիները տանջվում են քաղցից: Միջին գյուղացիության վերաբերմամբ մեր քաղաքականությունը միշտ յեղել է դաշինքի քաղաքականություն նրանց հետ: Նա վոչ մի դեպքում Խորհրդային հիմնարկների թշնամին չէ, և պրոլետարիատի թշնամին չէ, և սոցիալիզմի թշնամին չէ: Նա,հարկավ,պիտի տատանվի և կը համաձայնվի սոցիալիզմի կողմըն անցնել միայն այն ժամանակ, յերբ նա կը տեսնի հաստատ, իրականի մեջ ցուցադրական օրինակ այն բանի, թե այդ փոխանցումն անհրաժեշտ է: Այդ միջին գյուղացիությանը, հարկավ, չի կարելի համոզել թեորետիքական դատողություններով, կամ ագիտացիոն ճառերով. դրա վրա մենք հույս չենք դնում, բայց նրան կը համոզի գյուղացիության աշխատող մասի օրինակն ու խմբվածությունը, նրան կը համոզի այդ աշխատող գյուղացիության դաշինքը պրոլետարիատի հետ, և այստեղ մենք հույս ենք դնում տեսական, աստիճանական համոզումի վրա, փոխանցման մի շարք միջոցների վրա, վորոնք իրագործում են բնակչության պրոլետարական սոցիալիստական մասի համաձայնությունը, կապիտալի բոլոր ձևերի դեմ վճռական պայքար մղող կոմմունիստների համաձայնությունը, նրանց համաձայնությունը միջին գյուղացիության հետ:

Ահա հաշվառելով այս կացությունը, հաշվառելով այն, վոր մենք գյուղում գործ ունենք անհամեմատ ավելի դժվարին մի խնդրի հետ, մենք էլ հարցն այնպես ենք դնում, ինչպես նա դրված է հողի սոցիալիզացիայի օրենքում: Դուք գիտեք, վոր այնտեղ հռչակված է հողի մասնավոր սեփականության վերացում, հռչակված է հողի հավասար բաժանք, դուք գիտեք,վոր այդ կերպ էլ սկսվել է այդ օրենքի իրագործումը, և վոր մենք այն կիրառել ենք գյուղացիական վայրերի մեծամասնության մեջ. և միևնույն ժամանակ և կոմմունիստների ընդհանուր միաբան համաձայնությամբ և նրանց համաձայնությամբ, վորոնք այն ժամանակ կոմմունիզմի հայացքները չեյին ընդունում, օրենքում արձանագրված է այն դրույթը, վորն այժմ իսկ յես կարդացի ձեզ և վորն ասում է, թե մեր ընդհանուր խնդիրը, մեր ընդհանուր նպատակն է հանդիսանում անցնել սոցիալիստական տնտեսության, կոլլեկտիվ հողատիրության, հողի հասարակական մշակման: Վորքան առաջ է ընթանում շինարարության շրջանը, այնքան այժմ պարզ է դառնում և արդեն հողի վրա նստած գյուղացիների համար, և այն ռազմագերիների համար, վորոնք տանջված ու խոշտանգված այժմ հազարներով ու միլիոններով գերությունից են վերադառնում, ավելի ու ավելի պարզ է ծառանում նրանց առաջ ամբողջ հսկայական



չափը այն բանի, ինչ մենք պիտի անենք տնտեսության վերականգնման համար, նրա համար, վորպեսզի ընդմիշտ դուրս հանել կարելի լինի գյուղացիությունը հին անգիտացված, տրորված ու խավարի վիճակից, և էլ ավելի պարզ է դառնում, թե այն յելքը, վոր իսկապես ամուր է և գյուղացիական մասսային մոտեցնում է կուլտուրական կյանքի, իսկապես նրանց մի վիճակում է դնում, հավասար մյուս քաղաքացիների վիճակին,—վոր այնպիսի յելք միայն հողի հասարակական մշակումն է հանդիսանում, և հողի այդ հասարակական մշակման այժմ սիստեմատիկորեն, աստիճանական միջոցներով Խորհրդային իշխանությունն է ձգտում: Հողի այդ հասարակական մշակման համար էլ կազմավորվում են կոմմունաներ ու խորհրդային տնտեսություններ: Նման տեսակի տնտեսությունների նշանակությունն էլ մատնանշված է հողի սոցիալիզացիայի օրենքում, նրա այն մասում, ուր հարց է դրվում, թե ով կարող է օգտվել հողից. դուք կը կարդաք, վոր այն անձանց ու հիմնարկների շարքում, վորոնք կարող են օգտվել հողից, առաջին տեղն է բռնում պետությունը, յերկրորդ տեղը—հասարակական կազմակերպությունները, ապա—գյուղատնտեսական կոմմունաները և չորրորդ տեղը—գյուղատնտեսական ընկերությունները: Դարձյալ յես ձեր ուշադրությունն եմ դարձնում այն բանի վրա, վոր հողի սոցիալիզացիայի օրենքի այդ հիմնական դրույթները կազմված են այն ժամանակ, յերբ կոմմունիստական կուսակցությունն անց էր կացնում վոչ միայն իր կամքը, յերբ նա գիտակցաբար զիջումներ էր անում նրանց, վորոնք այս կամ այն կերպ արտահայտում էյին միջին գյուղացիության կամքը և գիտակցությունը: Նման տեսակի զիջումներ մենք արել ենք և անում ենք: Մենք գնել ենք ու գնում ենք այդ տեսակի համաձայնությունների, վորովհետև փոխանցումը հողատիրության այդ կոլլեկտիվ ձևին, հողի հասարակական մշակման, խորհրդային տնտեսություններին, կոմմունաներին,—միանգամից անհնարին է. այստեղ պահանջվում է Խորհրդային իշխանության համառ ու հետամուտ ներգործությունը, վորը մի միլիարդ ռուբլի յե հատկացրել գյուղական տնտեսության բարելավմանը, մի պայմանով, վոր անցումն կատարվի դեպի հողի հասարակական մշակումը: Այդ օրենքը ցույց է տալիս, վոր մենք կամենում ենք ավելի շատ օրինակի զորությամբ, դեպի բարելավված տնտեսությունը գրավելու զորությամբ ներգործել միջին գյուղացիների մասսայի վրա, հույս ենք դնում միայն նման տեսակի միջոցների ներգործության վրա, վորպեսզի կարելի լինի այդ խորը և կարևորագույն հեղաշրջումն առաջացնել հողագործական Ռուսաստանի տնտեսության մեջ:

Չքավորների կոմիտեների, գյուղատնտեսական կոմմունաների և հողային բաժինների դաշինքը, վորը մենք ունենք ներկա համագու-

մարում, նա մեզ ցույց է տալիս և կատարյալ վստահություն ներշնչում, թե անցնելով հողի հասարակական մշակման, դրանով մենք այժմ խնդիրն ուղիղ իսկական սոցիալիստական ձևով չենք դնում։ Այդ անշեղ ու սիստեմատիկ աշխատանքով պիտի նվաճենք աշխատանքի արտադրողականության բարձրացում։ Դրա համար մենք պետք է գործադրենք հողագործության լավագույն ձևերը և գրավենք Ռուսաստանի ագրոնոմիական ուժերն այնպես, որպեսզի մենք կարողանանք օգտագործել ամենից լավ դրված բոլոր տնտեսությունները, որոնք մինչև օրս միայն աղբյուր էին ծառայում առանձին անհատների հարստանալու համար, որոնք աղբյուր էին ծառայում կապիտալիզմի, նոր ստրկացման, վարձու բանվորների նոր ճորտացման վերածննդի համար և որոնք այժմ, սոցիալիզացիայի օրենքի և հողի մասնավոր սեփականության լիակատար վերացման գոյությամբ, պիտի ծառայեն գյուղատնտեսական գիտության և կուլտուրայի և արտադրողականության բարձրացման աղբյուր միլլիոնավոր բոլոր աշխատողների համար։ Քաղաքային բանվորների և աշխատող գյուղացիության այդ դաշինքի մեջ, չքավորության կոմիտեների այդ կազմավորման և նրանց խորհրդային հիմնարկները վերընտրելու մեջ դրված է այն գրավականը, թե հողագործական Ռուսաստանն այժմ բռնել է մի ուղի, որը մեզնից ուշ, բայց դրա փոխարեն մեզնից ավելի ճշտորեն մեկը մյուսի յետևից արևմտա-յեվրոպական պետությունները կը բռնեն։ Նրանց համար ավելի դժվարին էր սկսել հեղաշրջումը, որովհետև նրանց թշնամին փթած ինքնակալությունը չէր, այլ առավել կուլտուրական ու միավորված կապիտալիստական դասակարգը. բայց դուք գիտեք, որ այդ հեղաշրջումը սկսվել է, և դուք գիտեք, որ հեղափոխությունը չը սահմանափակվեց Ռուսաստանի սահմաններով. որ մեր գլխավոր հույսը, մեր գլխավոր պատվանդանը — դա արևմտա-յեվրոպական, ավելի առաջավոր յերկրների պրոլետարիատն է, որ համաշխարհային հեղափոխության այդ գլխավոր նեցուկը սերձեցում է սկսել. և մենք հաստատորեն վստահ ենք, և գերմանական հեղափոխության ընթացքն էլ իրականում ցույց է տալիս այդ, թե այնտեղ փոխանցումը սոցիալիստական տնտեսության, օգտագործումն ավելի բարձր հողագործական տեխնիկայի, գյուղի աշխատող բնակչության ավելի արագ միավորումը, — այնտեղ նա ավելի արագ ու ավելի հեշտ կը կատարվի, քան մեզ մոտ։ Դաշինքի մեջ լինելով քաղաքների բանվորների հետ, դաշինքի մեջ լինելով ամբողջ աշխարհի սոցիալիստական պրոլետարիատի հետ՝ ռուսական աշխատող գյուղացիությունն այժմ կարող է վստահ լինել, որ նա կը հաղթահարե բոլոր ձախորդությունները, բոլոր գրոհները իմպերիալիստների և կյանք կտա մի գործի, առանց որի աշխատողների ա-



զատագրում չի կարող լինել, կյանք կտա հողի հասարակական մշակման գործին, կիրագործի մանր անհատական տնտեսություններից աստիճանաբար, բայց անշեղորեն անցումը հողի հասարակական մշակման։

Հողային կոմիտեների և կոմմունաների Համառուսական I. համագումարի աշխատանքները։ Գիրք I. Հողժողկոմի հրատ. (ռուսերեն) 1918 թ.,

## ԳՅՈՒՂԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

**(Ճառ կուսակցության VIII համագումարում)**

Ընկերներ, միանգամայն բնական է, որ պրոլետարական հեղափոխության զարգացման մեջ մենք ստիպված ենք առաջին տեղը դասել հասարակական կյանքի առավել բարդ և կարևոր հարցերից կամ մեկը, կամ մյուսը։ Միանգամայն բնական է, որ մի հեղաշրջման ժամանակ, որը շոշափում է և չի կարող չշոշափել կյանքի ամենախոր հիմքերը, բնակչության ամենալայն մասսաները, — բնական է, որ ոչ մի կուսակցություն, ոչ մի կառավարություն, անգամ ամենից մերձավորը մասսաներին, բացարձակապես ի վիճակի չէ միանգամից ընդգրկելու կյանքի բոլոր կողմերը։ Յեթե այժմ մենք ստիպված ենք կանգ առնել գյուղի աշխատանքի հարցի վրա և այդ հարցից զատել առավելապես միջին գյուղացու դրությունը, ապա այստեղ պրոլետարական հեղափոխության զարգացման տեսակետից առհասարակ փոքրինչ չկա տարօրինակ ու աննորմալ։ Հասկանալի յէ, թե պրոլետարական հեղափոխությունը հարկադրված էր սկսել այն հիմնական հարաբերություններից որ կա յերկու թշնամի դասակարգերի, պրոլետարիատի ու բուրժուազիայի միջև։ Հիմնական խնդիրն էր տալ իշխանությունը բանվոր դասակարգի ձեռքը, ապահովել այդ դիկտատուրան, տապալել բուրժուազիային և նրանից խլել նրա իշխանության այն տնտեսական աղբյուրները, որոնք անպայման խանգարող յերևույթ են հանդիսանում ամեն մի սոցիալիստական շինարարության գործում առհասարակ։ Մենք բոլորս, որչափով ծանոթ ենք մարքսիզմին, յերբեք չենք կասկածել այդ ճշմարտության մեջ, թե կապիտալիստական հասարակության մեջ, այդ հասարակության բուն տնտեսական կառուցվածքի համեմատ, վճռական նշանակություն կարող է ունենալ կամ պրոլետարիատը, կամ բուրժուազիան։ Այժմ մենք տեսնում ենք շատ նախկին մարքսիստների, — օրինակ՝ մենշևիկների բանակից, — որոնք պնդում են, թե իբր այն շրջանում, յերբ պրոլետարիատը վճռական պայքար է մղում բուրժուազիայի դեմ, կարող է տիրապետել դեմոկրատիան առ-

հասարակ։ Այդպես են ասում մենշևիկները, վորոնք ամբողջապես խոսքը մեկ են արել սոց.-հեղափոխականների հետ։ Կարծես թե ինքը բուրժուազիան չի ստեղծում կամ վերացնում դեմոկրատիան, նայելով այն բանին, թե ինչն է իրան ձեռնտու։ Իսկ քանի այդպես է, ապա չի կարող վորևե խոսք լինել դեմոկրատիայի մասին՝ առհասարակ, յերբ բուրժուազիան սուր պայքար է մղում պրոլետարիատի դեմ։ Մնում է միայն զարմանալ, թե ինչ արագությամբ այդ մարքսիստները կամ իբր մարքսիստները,—որինակ՝ մեր մենշևիկները,—ինչ արագությամբ նրանք մերկացնում են իրանց, ինչ արագությամբ է դրսևորվում նրանց իսկական բնույթը, մանր-բուրժուական դեմոկրատների բնույթը։

Մարքսն ամբողջ կյանքում պայքարել է մանր-բուրժուական դեմոկրատիայի պատրանքների և բուրժուական դեմոկրատիզմի դեմ։ Մարքսն ամենից շատ է ծաղրել բանվորների սովից մեռնելու ազատությունը, կամ իր բանվորական ուժը վաճառող մարդու հավասարությունն այն բուրժուայի հետ, վորն իբր թե ազատ շուկայում ազատ ու իրավահավասար կերպով գնում է նրա աշխատանքը և այլն։ Իր բոլոր տնտեսական աշխատություններում Մարքսը ծաղրել է այդ։ Կարելի յե ասել, թե Մարքսի ամբողջ «Կապիտալը» (91) նվիրված է պարզաբանելու այն ճշմարտությունը, վոր կապիտալիստական հասարակության հիմնական ուժերն են հանդիսանում և կարող են հանդիսանալ միայն բուրժուազիան ու պրոլետարիատը։ Բուրժուազիան—իբրև այդ կապիտալիստական հասարակության շինարարը, իբրև նրա ղեկավարը,—պրոլետարիատը—իբրև նրա գերեզմանափորը, իբրև միակ ուժը, վորն ընդունակ է նրան փոխարինելու։ Հազիվ թե գեթ միգուցե գտնվի Մարքսի մի վորևե աշխատության մեջ, վորը նվիրված չլինի այդ բանին։ Կարելի յե ասել, թե ամբողջ աշխարհի սոցիալիստները II-րդ Ինտերնացիոնալում անհաշիվ անգամ բանվորների առաջ յերդվել են և աստված հիշել այդ ճշմարտության ընբռնումի համար։ Իսկ յերբ գործը հասավ իսկական և այն էլ վճռական պայքարի, մի պայքարի, վոր իշխանության համար մղվում եր պրոլետարիատի ու բուրժուազիայի միջև, այն ժամանակ մենք տեսանք, վոր մեր մենշևիկներն ու էսէռները, այլ և հին սոցիալիստական կուսակցությունների առաջնորդներն ամբողջ աշխարհում, տեսանք, վոր նրանք մոռացան այդ ճշմարտությունը և սկսեցին զուտ մեխանիկորեն քաղքենիական ֆրազներ կրկնել դեմոկրատիզմի մասին առհասարակ։

Մեզ մոտ յերբեմն փորձում են այդ բառերին տալ իբր ավելի «թունդ» բովանդակություն, յերբ ասում են—«դեմոկրատիայի դիկտատուրա»։ Դա արդեն կատարյալ անմտություն է։ Մենք պատմությունից շատ լավ գիտենք, թե դեմոկրատական բուրժուազիայի դիկ-



տատուրան նշանակում եր վոչ այլ ինչ, քան դատաստան ապստամբված բանվորների հետ։ Այդպես է յեղել սկսած 1848 թ., համենայն դեպս վոչ ուշ, բայց առանձին որինակներ կարելի յե ճարել և դրանից վաղ։ Պատմությունը մեզ ցույց է տալիս, թե հայտնապես բուրժուական դեմոկրատիայի միջավայրում է լայն ու ազատորեն սփռվում ամենասուր պայքարը պրոլետարիատի ու բուրժուազիայի միջև։ Մենք առիթ ունեցանք գործնականի մեջ համոզվելու, թե ուղիղ է այս ճշմարտությունը։ Յեթե խորհրդային կառավարության քայլերը սկսած 1917 թվականի հոկտեմբերից հատկանշվում եյին մի հաստատամտությամբ բոլոր հիմնական հարցերում, ապա դա հայտնապես նրա համար, վոր մենք այդ ճշմարտությունից յերբեք չենք նահանջել, այն յերբեք չենք մոռացել։ Միայն մի դասակարգի դիկտատուրան, պրոլետարիատի դիկտատուրան կարող է լուծել տիրապետության համար մղվող պայքարի հարցը։ Բուրժուազիային կարող է հաղթել միայն պրոլետարիատի դիկտատուրան։ Բուրժուազիան կարող է տապալել միայն պրոլետարիատը։ Իր յետևից մասսաներ տանել բուրժուազիայի դեմ—դա կարող է միայն պրոլետարիատը։

Սակայն այստեղից վոչ մի դեպքում չի բխում,—դա կլիներ խոշորագույն մի սխալ,—թե նաև կոմմունիզմի հետագա շինարարության մեջ, յերբ բուրժուազիան արդեն տապալված է, յերբ քաղաքական իշխանությունն արդեն պրոլետարիատի ձեռքին է գտնվում,—թե իբր այնուհետև էլ մենք կարող ենք գործ տեսնել առանց միջին և միջնավոր տարրերի մասնակցությունն ունենալու։

Բնական է, վոր հեղափոխության, պրոլետարական հեղափոխության սկզբում, նրա գործիչների վողջ ուշադրությունը բևեռվում է գլխավորի, հիմնականի վրա—պրոլետարիատի տիրապետության և այն բանի ապահովման վրա, վորպեսզի բուրժուազիան նորից չկարողանա իշխանությանը վերադառնալ։ Մենք շատ լավ գիտենք, վոր մինչև օրս բուրժուազիայի ձեռքին մնում են առավելություններ, վորոնք կապված են նրա ուրիշ յերկրների հարստությունների հետ, կամ յերբեմն նույնիսկ մեզ մոտ կայանում են դրամական հարստության մեջ։ Մենք լավ գիտենք, վոր բուրժուազիան չի թողել իր իշխանությունը դարձնելու միտքը, չի դադարեցրել փորձերն իր տիրապետության վերականգնման համար։

Բայց սա դեռ բոլորը չէ։ Բուրժուազիան, վորն ամենից շատ է առաջադրում այն սկզբունքը—«վորտեղ լավ, այնտեղ հայրենիք», բուրժուազիան, վորը փողի տեսակետից միշտ էլ միջազգայնական է յեղել, բուրժուազիան համաշխարհային մասշտաբով այժմ դեռ մեզնից ուժեղ է։ Նրա տիրապետությունն արագորեն խախտվում է, նա տեսնում է այնպիսի որինակներ, ինչպես Հունգարական հեղափոխությունը,

—վորի մասին մենք յերեկ բախտ ունեցանք հաղորդելու ձեզ, և
վորի մասին այսոր հաստատող տեղեկությունններ են գալիս,—նա ար-
դեն սկսում է հասկանալ, թե իր տիրապետությունը տատանվում է,
գործողությունների ազատություն էլ չի մնում նրան։ Բայց այս վայր-
կյանին, յեթե համաշխարհային մասշտաբով հաշվառելու լինենք նյու-
թական միջոցները, չի կարելի չխոստովանվել, թե այժմ նյութապես
բուրժուազիան դեռ ավելի յե ուժեղ մեզանից։

Ահա ինչու մեր ուշադրության, մեր գործնական աշխատանքի
ինը տասներորդականը նվիրված եր և պիտի նվիրված լինի այդ
հիմնական հարցին—բուրժուազիայի տապալմանը, պրոլետարիատի
իշխանության հաստատմանը, այն բանին, վոր բուրժուազիայի համար
վերացվի ամեն մի հնարավորություն իշխանության վերադառնալու։
Դա միանգամայն բնական է, օրինական, անխուսափելի և այդ տեսա-
կետից շատ բան է արված հաջողությամբ։

Իսկ այժմ մենք օրակարգի մեջ պիտի դնենք մի հարց մյուս շեր-
տերի մասին։ Մենք պետք է,—դա մեր ընդհանուր յեզրակացությունն
եր ագրարային սեկցիայում և դրա հետ մենք վստահ ենք համաձայն
կլինեն բոլոր կուսակցական աշխատավորները, վորովհետև մենք մի-
այն գումար ենք տվել նրանց դիտումների փորձին,—մենք պետք է
իր ամբողջ բովանդակությամբ օրակարգի մեջ դնենք միջին գյուղա-
ցիության հարցը։

Իհարկե, կգտնվեն մարդիկ, վորոնք փոխարեն խորամուխ լինելու
մեր հեղափոխության ընթացքի մեջ, փոխարեն մտածելու այն մասին,
թե ինչ խնդիրներ են կանգնած այժմ մեր առաջ,—դրա փոխարեն
կօգտագործեն Խորհրդային իշխանության յուրաքանչյուր քայլը դաղ-
տուկ քրքիջի և ծուռ քննադատության համար, կըգտնվեն այն տիպի
մարդիկ, վորոնց մենք տեսնում ենք պարոնայք մենշևիկների ու աջ
սոց. հեղափոխականների մոտ։ Դրանք մարդիկ են, վորոնք մինչև օրս
չեն հասկացել, թե նրանք պիտի ընտրություն անեն մեր ու բուրժու-
ական դիկտատուրայի միջև։ Մենք դեպի նրանց շատ համբերություն
և անգամ բարեհոգություն ենք արտահայտել, մենք նրանց հնարավո-
րություն կտանք մի անգամ էլ փորձելու մեր այդ բարեհոգությունը, բայց
վոչ հեռու ապագայում մենք այդ համբերությանն ու բարեհոգությանը
վերջ կդնենք և յեթե նրանք իրենց ընտրությունը չեն անի՝ մենք մի-
անգամայն լրջորեն կառաջարկենք նրանց Կոլչակի մոտ գնալու։

Մենք առանձին փայլուն մտավոր ընդունակություններ չենք
սպասում այդ մարդկանցից (ծիծաղ)։ Բայց կարելի կլիներ սպասել,
վոր իրենց վրա փորձելով Կոլչակի գազանությունները, նրանք պետք է
վոր հասկանային, թե մենք իրավունք ունենք նրանցից պահանջելու,
վորպեսզի ընտրություն անեն մեր ու Կոլչակի միջև։ Յեթե Հոկտեմբերից



հետո առաջին ամիսները շատ միամիտ մարդիկ հիմարություն են ու-
նեցել մտածելու, թե պրոլետարիատի դիկտատուրան դա մի անցողակի,
պատահական բան է, ապա այժմ նույնիսկ մենշևիկներն ու սոց.-հե-
ղափոխականները պետք է վոր հասկանային, թե ինչ վոր օրինաչա-
փական բան կա այն պայքարում, վորն ընթանում է վողջ միջազ-
գային բուրժուազիայի գրոհի տակ։

Իրականում ստեղծվել են միայն յերկու ույժ.—բուրժուազիայի
դիկտատուրան և պրոլետարիատի դիկտատուրան։ Ով այս չի յեզրակաց-
րել Մարքսից, ով այս չի յեզրակացրել բոլոր մեծ սոցիալիստների
աշխատություններից,—նա յերբեք սոցիալիստ չի յեղել, վոչինչ սո-
ցիալիզմի մեջ չի ըմբռնել, այլ միայն սոցիալիստ է անվանել իրան։
Մենք այդ մարդկանց կարճ ժամանակ ենք տալիս մտածելու համար
և պահանջում ենք, վորպեսզի նրանք վճռեն այդ հարցը։ Յես նրանց
մասին հիշատակեցի այն պատճառով, վոր նրանք այժմ ասում են,
կամ պիտի ասեն. «Բոլշևիկները հարց են դրել միջին գյուղացիու-
թյան մասին, ուզում են խաղ անել նրանց հետ»։ Յես անչափ լավ
գիտեմ, վոր նման տեսակի պատճառաբանություն և ավելի վատթարը
լայն տեղ է գրավում մենշևիկական մամուլի մեջ։ Մենք այն մերժում
ենք, մենք յերբեք նշանակություն չենք տալիս մեր հակառակորդների
շաղակրատությանը։ Մարդիկ, վորոնք մինչև օրս ընդունակ են չափ-
չփել բուրժուազիայի ու պրոլետարիատի միջև, կարող են խոսել, ինչ
ուզում են։ Մենք մեր ճանապարհովն ենք գնում։

Մեր ճանապարհը նախ և առաջ վորոշվում է ուժերի դասակար-
գային հաշվառումով։ Կապիտալիստական հասարակության մեջ զար-
գանում է բուրժուազիայի ու պրոլետարիատի պայքարը։ Քանի այդ
պայքարը դեռ չի ավարտված, մեր սաստկացրած ուշադրությունը
պիտի կենտրոնացրված լինի այն բանի վրա, վորպեսզի այն իր վախ-
ճանին հասցնենք։ Նա դեռ վախճանի չե հասցրված։ Այդ պայքարի
մեջ շատ բան է հաջողվել անելու։ Այժմ միջազգային բուրժուազիան
այլևս չի կարող ազատ կերպով գործել։ Դրա լավագույն ապացույցն
այն է, վոր տեղի ունեցավ հունգարական պրոլետարական հեղափո-
փոխությունը։ Ուստի պարզ է, վոր մեր շինարարությունը գյուղում
արդեն դուրս է յեկել այն շրջանակներից, յերբ ամեն ինչ յենթարկ-
ված եր իշխանության համար մղված պայքարի հիմնական պահանջին։
Այդ շինարարությունն արդեն անցել է յերկու փուլ։ 1917 թվի
հոկտեմբերին մենք ամբողջ գյուղացիության հետ միասին իշխանու-
թյունն էյինք վերցնում։ Դա բուրժուական հեղափոխություն եր, վոր
չափով դասակարգային պայքարը դեռ չեր ծավալվել գյուղում։ Ինչ-
պես յես արդեն ասել եմ, միայն 1918 թվականի ամառը սկսվեց իս-
կական պրոլետարական հեղափոխությունը գյուղում։ Յեթե մենք չը-

կարողանայինք հարուցել այդ հեղափոխությունը, մեր աշխատանքը պետքական չեր լինի։ Առաջին փուլն իշխանության գրավումն եր քաղաքում, կառավարման խորհրդային ձևի սահմանումը։ Յերկրորդ փուլն այն եր, ինչ բոլոր սոցիալիստների համար հիմնականն ե հանդիսանում, առանց վորի սոցիալիստները—սոցիալիստներ չեն.—գյուղում զատել պրոլետարական և կիսապրոլետարական տարրերը, համախմբել նրանց քաղաքային պրոլետարիատի հետ՝ գյուղում պայքար մղելու բուրժուազիայի դեմ։

Այդ փուլը հիմնականի մեջ նույնպես ավարտված ե։ Այն կազմակերպությունները, ինչ մենք սկզբում ստեղծեցինք դրա համար, չքավորության կոմիտեները, այնքան են նրանք ամրացել, վոր մենք հնարավոր գտանք փոխարինելու նրանց կանոնավորապես ընտրված խորհուրդներով, այսինքն գյուղական խորհուրդներն այնպես վերակազմեցինք, վորպեսզի գյուղում նրանք դառնան դասակարգային տիրապետության որգաններ, պրոլետարական իշխանության որգաններ։ Այդպիսի ձեռնարկումներ, ինչպես սոցիալիստական հողաշինարարության և սոցիալիստական հողագործության անցնելու միջոցների օրենքն ե, վորը վաղ չե, վոր անցկացավ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի միջոցով և, հարկավ, ծանոթ ե բոլորին,—այդպիսի ձեռնարկումները մեր պրոլետարական հեղափոխության տեսակետից գումար են տալիս վերապրածին։

Գլխավորը, ինչ պրոլետարական հեղափոխության առաջին և հիմնական խնդիրն ե հանդիսանում, մենք արել ենք։ Հայտնապես նրա համար, վոր մենք այդ արել ենք,—հերթի յե կանգնել մի ավելի բարդ խնդիր—վերաբերմունքը դեպի միջին գյուղացիությունը։ Ով մտածում ե. թե այդ խնդրի առաջադրումը մի այնպիսի բան ե, վոր կարող ե թուլացնել մեր իշխանության բնույթը, թուլացնել պրոլետարիատի դիկտատուրան, փոփոխել գեթ մասնակիորեն, գեթ ամենաթույլ ձևով փոփոխել մեր հիմնական քաղաքականությունը,—նա իսպառ չի հասկանում պրոլետարիատի խնդիրները, կոմմունիստական հեղաշրջման խնդիրները։ Յես վստահ եմ, թե մեր կուսակցության մեջ նման մարդիկ չեն գտնվիլ։

Յես կամենում եյի միայն նախազգուշացնել ընկերներին այն մարդկանց դեմ, վորոնք կգտնվեն բանվորական կուսակցության շարքերից դուրս և պիտի այդպես խոսեն չե թե նրա համար, վոր դա բղխում ե վորևե մտահայեցողությունից, այլ պարզապես նրա համար, վորպեսզի փչացնեն մեր գործը և ոգնեն սպիտակ գվարդիականներին,—ավելի պարզ խոսելով, վորպեսզի մեր դեմ ուղղեն միջին գյուղացուն, վորը միշտ տատանվել ե, չի կարող չտատանվել և դեռ բավականաչափ յերկար պիտի տատանվի։ Վորպեսզի մեր դեմ ուղղեն նրան՝



նրանք պիտի ասեն. «տեսեք, նրանք խաղ են անում ձեզ հետ, նշանակում ե հաշվի չեն առել ձեր ապստամբությունները, նշանակում ե տատանվել են» և այլն, և այլն։ Մեզ հարկավոր ե, վորպեսզի մեր բոլոր ընկերներն սպառազինված լինեն այդ ագիտացիայի դեմ։ Յեվ յես վստահ եմ, վոր նրանք սպառազինված կլինեն, յեթե այժմ մենք հասնենք նրան, վոր դնենք այդ հարցը դասակարգային պայքարի տեսակետից։

Իսպառ պարզ ե, վոր այդ հիմնական հարցն ավելի բարդ խնդիր ե հանդիսանում, բայց վոչ պակաս հրատապ. ինչպես վորոշել ստուգապես պրոլետարիատի վերաբերմունքը դեպի միջին գյուղացիությունը։

Ընկերներ, այդ հարցը մարքսիստների համար դժվարություն չի ներկայացնում թեորետիքական տեսակետից, վորը յուրացրել ե բանվորների ահագին մեծամասնությունը։ Յես կհիշեցնեմ, որինակ, թե ագրարային հարցին վերաբերյալ Կաուցկու գրքում, վորը գրված ե դեռ այն ժամանակ, յերբ Կաուցկին ուղիղ եր տալիս Մարքսի ուսմունքը և ճանաչվում եր անվիճելի հեղինակություն այդ բնագավառում,—ագրարային հարցի վերաբերյալ այդ գրքում նա խոսում ե կապիտալիզմից դեպի սոցիալիզմի անցնելու առթիվ. Կաուցկին ասում ե. սոցիալիստական կուսակցության խնդիրն ե հանդիսանում գյուղացու չեզոքացումը, այսինքն այն, վորպեսզի գյուղացին չեզոք մնա պրոլետարիատի ու բուրժուազիայի միջև ընթացող պայքարում, վորպեսզի գյուղացին հակառակ մեզ չկարողանա ակտիվ ոգնություն ցույց տալ բուրժուազիային։

Բուրժուազիայի տիրապետության մի ահագին ժամանակաշրջանում գյուղացիությունը պաշտպանում եր այդ իշխանությունը, բուրժուազիայի կողմն եր։ Դա հասկանալի յե, յեթե ուշադրության առնենք բուրժուազիայի տնտեսական ույժը և նրա տիրապետության քաղաքական միջոցները։ Մենք չենք կարող հույս դնել, վորպեսզի միջին գյուղացին անհապաղորեն մեր կողմն անցնի։ Բայց յեթե մենք ուղիղ վարենք քաղաքականությունը, ապա մի քանի ժամանակից հետո այդ տատանումները կվերջանան և գյուղացին կարող կլինի մեր կողմն անցնել։

Դեռ Ենգելսը, վոր Մարքսի հետ միասին գիտական մարքսիզմի հիմքերը դրեց, այսինքն մի ուսմունքի, վորով մշտապես ղեկավարվում ե մեր կուսակցությունը և մանավանդ հեղափոխության ժամանակ,—դեռ Ենգելսն եր սահմանում գյուղացիության ստորաբաժանումը մանրի, միջակի և խոշորի։ Յեվ այդ ստորաբաժանումը յեվրոպական յերկրների ահագին մեծամասնության համար այժմ ել համապատասխանում ե իրականության։ Ենգելսն ասում եր. «Գուցե շատ

տեղերում ստիպված չլինենք բռնությամբ ընկճելու խոշոր գյուղացիությանը»։ Իսկ վոր մենք կարող լինեյինք վորևէ ժամանակ բռնություն գործադրել միջակ գյուղացիության նկատմամբ (մանրը մեր բարեկամն ե) այդ մասին վոչ մի խելացի սոցիալիստ յերբեք չի մտածել։

Այդպես եր ասում Ենգելսը 1894 թվականին, իր մահից մի տարի առաջ, յերբ ագրարային հարցն օրակարգի յեր գրված։ Այդ տեսակետը մեզ ցույց ե տալիս այն ճշմարտությունը, վորը յերբեմն մոռանում են, բայց վորի վերաբերմամբ թեորիայի մեջ մենք բոլորս ենք համաձայն։ Կալվածատերերի, կապիտալիստների նկատմամբ մեր անելիքն ե—լիակատար եքսպրոպրիացիա։ Բայց վոչ մի բռնություն միջին գյուղացիության նկատմամբ մենք թույլ չենք տալիս։ Անգամ հարուստ գյուղացիության նկատմամբ մենք այնպիսի վճռականությամբ չենք ասում, ինչ բուրժուազիայի նկատմամբ—հարուստ գյուղացիության ու կուլակների բացարձակ եքսպրոպրիացիա։ Մեր ծրագրի մեջ այդ տարբերությունն անց ե կացրված։ Մենք ասում ենք—ընկճել հարուստ գյուղացիության դիմադրությունը, ընկճել նրա հակահեղափոխական փոտնձգությունները։ Դա լիակատար եքսպրոպրիացիա չե։

Հիմնական տարբերությունը, վորը բնորոշում ե մեր վերաբերմունքը դեպի բուրժուազիան և դեպի միջակ գյուղացիությունը— բուրժուազիայի լիակատար եքսպրոպրիացիա, դաշինք միջին գյուղացիության հետ, վորը ուրիշներին չի շահագործում,— թեորիայի մեջ այդ հիմնական գիծը ճանաչվում ե բոլորի կողմից։ Բայց գործնականի մեջ այդ գիծը հետևողականորեն չի պահպանվում, տեղերում դեռ չեն սովորել այն պահպանել։

Յերբ տապալելով բուրժուազիային և ամրացնելով իր իշխանությունը՝ պրոլետարիատը զանազան կողմերից ձեռք զարկեց ստեղծագործելու նոր հասարակություն, միջին գյուղացիության հարցն առաջին պլանը մղվեց։ Աշխարհում վոչ մի սոցիալիստ չեր ժխտում այն, թե կոմմունիզմի ստեղծագործումը տարբեր կերպով կընթանա խոշոր հողագործության և մանր հողագործության յերկրներում։ Սա ամենից տարրական, այբուբենական ճշմարտություն ե։ Այդ ճշմարտությունից բղխում ե, թե վոր չափով մենք մոտենում ենք կոմմունիստական շինարարության խնդիրներին, մեր կենտրոնական ուշադրությունը հայտնի չափով պիտի բևեռվի միջին գյուղացիության վրա։

Շատ բան ե կախված նրանից, թե ինչպես կորոշենք մեր վերաբերմունքը դեպի միջին գյուղացիությունը։ Թեորետիկորեն այդ հարցը լուծված ե, բայց մենք շատ լավ ենք փորձել, մենք մեր անձնական փորձով գիտենք տարբերությունը հարցի թեորետիքական լուծման և նրա գործնական կենսագործման միջև։ Մենք ընդհուպ մոտեցել ենք այն



տարբերության, վորն այնպես բնորոշ ե ֆրանսիական մեծ հեղափոխության համար, յերբ ֆրանսիական կոնվենտը (92) բազուկները տարածում եր լայն ձեռնարկությունների, իսկ նրանց կյանքում կիրառելու համար հարկավոր հենցուկը չուներ, չգիտեր անգամ, թե վոր դասակարգի վրա պիտի կռթներ այս կամ այն միջոցը կիրառելու համար։

Մենք կանգնած ենք, անչափելի բախտավոր պայմաններում։ Շնորհիվ զարգացման մի ամբողջ դարի, մենք գիտենք, թե վոր դասակարգի վրա յենք մենք կռթնում։ Բայց մենք գիտենք նույնպես և այն, վոր այդ դասակարգի գործնական փորձը շատ ե դեռ անբավարար։ Հիմնականը բանվոր դասակարգի, բանվորական կուսակցության համար պարզ եր—տապալել բուրժուազիայի իշխանությունը և տալ իշխանությունը բանվորներին։ Բայց ինչպես անել այդ։ Ամենքն են հիշում, թե ինչ դժվարություններով, թե քանի սխալների միջով ե, վոր մենք բանվորական վերահսկողությունից անցնում եյինք արդյունաբերության բանվորական կառավարմանը։ Բայց չե վոր դա աշխատանք եր մեր դասակարգի ներսում, պրոլետարական միջավայրի ներսում, վորի հետ մենք միշտ ել գործ ենք ունեցել։ Իսկ այժմ մենք ստիպված ենք վորոշել մեր վերաբերմունքը դեպի մի նոր դասակարգ, դեպի այն դասակարգը, վորին քաղաքային բանվորը չգիտե։

Անհրաժեշտ ե վորոշել մեր վերաբերմունքը դեպի մի դասակարգ, վորը հայտնի, կայուն վիճակ չունի։ Պրոլետարիատը մասսայորեն սոցիալիզմի կողմն ե, բուրժուազիան մասսայորեն հակառակ ե սոցիալիզմին. վորոշել վերաբերմունքն այս յերկու դասակարգերի միջև հեշտ ե։ Իսկ յերբ մենք անցնում ենք դեպի մի այնպիսի շերտ, վորպիսին միջին գյուղացիությունն ե, ապա դուրս ե գալիս, թե դա մի այնպիսի դասակարգ ե, վորը տատանվում ե։ Նա մասամբ սեփականատեր ե, մասամբ աշխատող։ Նա չի շահագործում աշխատողների մյուս ներկայացուցիչներին։ Տասնյակ տարիներով, մեծագույն աշխատանքով նա ստիպված եր պաշտպանել իր վիճակը, նա իր վրա փորձել ե կալվածատերերի ու կապիտալիստների շահագործումը. նա կրել ե ամենը, և միևնույն ժամանակ նա սեփականատեր ե։

Այս պատճառով մեր վերաբերմունքը դեպի այդ տատանվող դասակարգն առանձին դժվարություններ ե ներկայացնում։ Հիմնվելով մեր ավելի քան մի տարվա փորձի վրա, մեր ավելի քան տարի ու կեսվա գյուղում կատարած պրոլետարական աշխատանքի վրա, այն բանի վրա, վոր արդեն դասակարգային շերտավորում ե տեղի ունեցել գյուղում,—մենք այստեղ ամենից շատ պիտի զգուշանանք հապճեպությունից, անհմուտ թեորետիքականությունից, հավակնությունից պատրաստի համարելու այն, ինչ մենք մշակում ենք, ինչ մենք դեռ չենք

մշակել։ Այն բանաձևում, ինչ առաջարկում է ձեզ սեկցիայի կողմից ընտրված հանձնաժողովը և վորը կը կարդա հետագա հռետորներից մեկը, դուք բավարար չափով նախազգուշացումներ կը գտնեք այս տեսակետից։

Տնտեսական տեսակետից պարզ է, վոր մեզ հարկավոր է ոգնության հասնել միջին գյուղացիությանը։ Դրա մեջ թեորետիքորեն վոչ մի տարակուսանք չկա։ Բայց մեր ունեցած բարքերում, մեր ունեցած կուլտուրական մակարդակի վրա, գյուղին առաջարկելիք մեր կուլտուրական ու տեխնիքական ուժերի պակասության պայմանում, և այն անզորության մեջ, վորով մենք հաճախ գյուղին ենք մոտենում,— ընկերները շատ հաճախ հարկադրանք են կիրառում, վորով փչացնում են ամբողջ գործը։

Հենց յերեկ եր, վոր մի ընկեր ինձ տվավ «Հրահանգ կուսակցական աշխատանքի համար Նիժնի-Նովգորոդի նահանգում» վերնագիրը կրող բրոշյուրը, հրատարակություն ՌԿԿ (բոլշևիկների) Նիժնի-Նովգորոդի Կոմիտեյի,— և այդ բրոշյուրի մեջ, որինակ, 41 եջի վրա յես կարդում եմ. «արտակարգ հարկի դեկրետն ամբողջ ծանրությամբ պիտի բարդվի գյուղական կուլակների, սպեկուլյանտների և առհասարակ գյուղացիության միջին տարրի վրա»։ Ահա սա կարելի յե ասել, թե «հասկացել են»։ Կամ սա վրիպակ է, բայց անհանդուրժելի յե, վորպեսզի այդպիսի վրիպակներ թույլատրվեն! Կամ սա շտապ, հապճեպ աշխատանք է, վորը ցույց է տալիս, թե ինչպես վտանգավոր է ամեն մի հապճեպությունն այս գործում։ Կամ այստեղ (սա ամենավատթար յենթադրությունն է, վորը յես չեմ ուզում անել Նիժնի-Նովգորոդի ընկերների նկատմամբ), կամ այստեղ պարզ անհասկացողություն է։ Շատ կարելի յե դա պարզ թերատեսություն է։

Գործնականում տեղի յեն ունենում այնպիսի դեպքեր, ինչպես պատմում եր մի ընկեր հանձնաժողովում։ Նրան շրջապատել են գյուղացիները և ամեն վոք հարցնում եր. «Վորոշիր, միջակ եմ յես, թե վոչ։ Յես յերկու ձի և մի կով ունեմ։ Յես յերկու կով և մի ձի ունեմ» և այլն։ Յեվ ահա այդ ագիտատորը, վորը շրջում է բոլոր գավառները, անհրաժեշտ է վոր ունենա այնպիսի անսխալ ջերմաչափ, վորպեսզի այն կարելի լինի գյուղացու թևի տակ դնել և ասել—միջակ է նա, թե վոչ։ Դրա համար հարկավոր է իմանալ այդ գյուղացու տնտեսության վողջ պատմությունը, նրա վերաբերմունքը դեպի ստորին ու բարձր խմբերը,—իսկ իմանալ այդ մենք ստուգապես չենք կարող։

Այստեղ շատ գործնական հմտություն, տեղական պայմանների ճանաչողություն է հարկավոր։ Այդ մենք դեռ չունենք։ Խոստովանել այդ իսպառ ամոթ չե. մենք պետք է բացահայտորեն այդ խոստովանենք։ Մենք յերբեք ուտոպիստ չենք յեղել և չենք յերևակայել, թե



կոմմունիստական հասարակությունը մենք պիտի կառուցենք մաքուր կոմմունիստների մաքուր ձեռքերով, վորոնք պիտի ծնվեն ու դաստիարակվեն զուտ կոմմունիստական հասարակության մեջ։ Դա մանկական հեքիաթներ են։

Կոմմունիզմը մենք պիտի կառուցենք կապիտալիզմի բեկորներից և միայն այն դասակարգը կարող է այդ անել, վորը կոփված է կապիտալիզմի դեմ մղած պայքարում։ Դուք այդ լավ գիտեք, վոր պրոլետարիատը զուրկ չե կապիտալիստական հասարակության թերություններից ու թուլություններից։ Նա պայքարում է սոցիալիզմի համար և դրա հետ միասին պայքարում է իր սեփական թերությունների դեմ։ Պրոլետարիատի լավագույն առաջավոր մասը, վորը տասնյակ տարիներով քաղաքներում կատաղի պայքար եր մղում, կարող եր այդ պայքարի մեջ յուրացնել մայրաքաղաքի կյանքի ամբողջ կուլտուրան և հայտնի չափով յուրացրել է այն։ Դուք գիտեք, վոր անգամ առաջավոր յերկիրներում գյուղը դատապարտված եր խավարի։ Ի հարկե, գյուղի կուլտուրականությունը մենք կը բարձրացնենք, բայց դա տարիների ու տարիների գործ է։ Ահա ինչ բան են մոռանում մեզ մոտ ընկերները և ահա ինչ է առանձնապես առարկայորեն մեզ նկարում տեղերից յեկած մարդկանց յուրաքանչյուր խոսքը, վոչ այստեղի ինտելիգենտների, վոչ գերատեսչության մարդկանց,—նրանց մենք շատ ենք լսել,—այլ այն մարդկանց, վորոնք գործնականորեն դիտել են աշխատանքը գյուղում։ Ահա այդ ձայները մեզ համար առանձնապես արժեքավոր եյին ագրարային սեկցիայում։ Յես վստահ եմ դրանում, վոր այդ ձայներն առանձնապես արժեքավոր կլինեն ամբողջ համագումարի համար, վորովհետև նրանք վերցրված են չե թե գրքերից, չե թե դեկրետներից, այլ բուն կյանքից։

Այս բոլորը դրդում է մեզ աշխատել այն իմաստով, վորպեսզի ավելի պարզություն մտցնենք դեպի միջին գյուղացիությունն ունեցած մեր վերաբերմունքի մեջ։ Դա շատ դժվար է, վորովհետև այդ պարզությունը կյանքում չկա։ Այդ հարցը վոչ միայն լուծված չե, այլ և անլուծելի յե, յեթե կամենում են այն լուծել մի անգամից և իսկույն եեթ։ Կան մարդիկ, վորոնք ասում են. «չպետք եր այդ քանակի դեկրետներ գրել»—և կշտամբում են Խորհրդային իշխանությանը նրա համար, վոր նա ձեռք է զարկել դեկրետներ գրելու, չիմանալով ինչպես կիրառել նրանց կյանքում։ Այդ մարդիկ ըստ եյության չեն նկատում, թե ինչպես են նրանք գլորվում դեպի սպիտակ գվարդիականները։ Յեթե մենք սպասեյինք, թե մի հարյուր դեկրետ գրելուց կը փոխվի ամբողջ գյուղական կյանքը, մենք կատարյալ ապուշներ կլինեյինք։

Իսկ յեթե մենք հրաժարվեյինք այն բանից, վորպեսզի ուղի նշանառենք դեկրետներում, մենք կլինեյինք սոցիալիզմի դավաճաններ։

Այդ դեկրետները, վորոնք գործնականորեն չէին կարող միանգամից ու լրությամբ կիրառվել, մեծ դեր խաղացին պրոպագանդայի համար։ Յեթե առաջվա ժամանակ մենք պրոպագանդա էինք մղում ընդհանուր ճշմարտություններով, ապա այժմ մենք պրոպագանդա յենք մղում աշխատանքով։ Դա նույնպես քարոզ է, բայց դա քարոզ է գործողությամբ—միայն թե վոչ ինչ-վոր արկածախնդրի անհատական գործողության իմաստով, վորի վրա մենք շատ ենք ծիծաղել անարխիստների և հին սոցիալիզմի ժամանակաշրջանում։

Մեր դեկրետը կոչ է, բայց վոչ կոչ առաջվա վոգով. «բանվորներ յելե՛ք, տապալեցե՛ք բուրժուազիային»։ Վոչ, դա կոչ է մասսաներին, դա կոչ է դեպի գործնական աշխատանք։ Դեկրետները—դրանք հրահանգներ են, վորոնք մասսայական գործնական աշխատանքի յեն կանչում։ Ահա ինչն է կարևոր։ Թող վոր այդ դեկրետներում անպետք բան շատ կա, այնպիսի շատ բան, վոր կյանքի մեջ չի մտնի։ Բայց նրանց մեջ նյութ կա գործնական աշխատանքի համար և դեկրետի խնդիրը նրա մեջ է կայանում, վորպեսզի գործնական քայլերի ընտելացնե այն հարյուրավոր, հազարավոր, միլիոնավոր մարդկանց, վորոնք ունկնդրում են Խորհրդային իշխանության ձայնին։ Սա գյուղում գործնական աշխատանքի մի փորձ է սոցիալիստական շինարարության բնագավառում։ Յեթե մենք այսպես նայենք, այն ժամանակ մեր որենքների, դեկրետների և վորոշումների գումարից անչափ շատ բան կըշահենք։ Մենք նրանց վրա չենք նայի, իբրև բացարձակ վորոշումների վրա, վորոնց պետք է ինչ էլ վոր լինի, իսկույն եեթ, միանգամից կյանքի մեջ կիրառել։

Պետք է խուսափել այն բոլորից, ինչ կարող է գործնականում խրախուսել առանձին չարաշահումները։ Տեղ-տեղ մեզ կպել են կարյերիստներ, բախտախնդիրներ, վորոնք իրանց կոմմունիստ անունն են տվել և խաբում են մեզ, վորոնք մեզ մոտ են սողացել նրա համար, վոր կոմմունիստներն այժմ իշխանության գլուխ են կանգնած, նրա համար, վորովհետև ավելի շիտակ «ծառայող» տարրերը նրանց հետամնաց գաղափարների հետևանքով չեկան աշխատելու մեզ մոտ, իսկ կարյերիստները վոչ մի գաղափար չունեն, վոչ մի շիտակություն չունեն։ Դրանք մարդիկ են, վորոնք միայն ձգտում են ծառայություն հանել, տեղերում հարկադրանք են գործադրում և կարծում են, թե դա լավ է։ Իսկ իրականում դա յերբեմն հանգում է նրան, վոր գյուղացիներն ասում են. «կեցցե Խորհրդային իշխանությունը, բայց կորչի կոմմունիան» (այսինքն կոմմունիզմը)։ Այսպիսի դեպքերը մտացածին չեն, այլ վերցրված են կենդանի կյանքից, տեղերի ընկերների հաղորդագրություններից։ Մենք չպետք է մոռանանք այն, թե ինչ հսկայական վնաս է նյութում ամեն մի անչափավորություն, ամեն մի շտապողականություն և հապճեպություն։



Մենք հարկադրված էինք ինչ էլ վոր լինի շտապելու, մի որհասական թռիչք կատարելու, վորպեսզի դուրս գանք իմպերիալիստական պատերազմից, վորը մեզ սնանկության եր հասցրել, հարկավոր եր ամենաորհասական ճիգերը գործադրել, վորպեսզի տրորել կարելի լիներ բուրժուազիային և այն ուժերը, վորոնք սպառնում էին մեզ տրորել։ Այդ բոլորն անհրաժեշտ էր, առանց դրան մենք հաղթել չէինք կարող։ Բայց յեթե նման ձևով գործենք միջին գյուղացիության նկատմամբ,—ապա դա կլինի այնպիսի ապուշություն, այնպիսի ըթամտություն և գործի այնպիսի կորուստ, վոր գիտակցորեն այդպես կարող են աշխատել միայն պրովոկատորները։

Խնդիրն այստեղ միանգամայն այլ կերպ պիտի դնվի։ Խոսքն այստեղ այն մասին չէ, վորպեսզի կոտրենք բացահայտ շահագործողների դիմադրությունը. հաղթել նրանց ու տապալել—մի խնդիր, վորը մենք առաջ էինք դնում։ Վոչ, վոր չափով մենք այդ գլխավոր խնդիրը լուծել ենք, հերթի յեն կանգնում ավելի բարդ խնդիրներ։ Այստեղ բռնությամբ վոչինչ չես ստեղծի։ Բռնությունը միջին գյուղացիության վերաբերմամբ մեծագույն վնասն է ներկայացնում։ Դա բազմաթիվ բազմամիլիոն մի շերտ է։ Նույնիսկ Յեվրոպայում, ուր նա վոչ մի տեղ այնպիսի ուժի չի հասնում, ուր հսկայորեն զարգացած է տեխնիկան ու կուլտուրան, քաղաքական կյանքը, յերկաթուղիները, ուր ամենից հեշտ կլիներ այդ մասին մտածել, վոչ վոք, վոչ մեկն ամենահեղափոխական սոցիալիստներից յերբեք բռնի միջոցներ չի առաջարկել միջին գյուղացիության նկատմամբ։

Յերբ մենք վերցնում էինք իշխանությունը, մենք կռթնում էինք ամբողջ գյուղացիության վրա։ Այն ժամանակ բոլոր գյուղացիները մի խնդիր ունեին—պայքար կալվածատերերի դեմ։ Բայց մինչև այսօր նրանց մեջ նախապաշարում է մնացել խոշոր տնտեսության դեմ։ Գյուղացին մտածում է. «Յեթե խոշոր տնտեսություն լինի, նշանակում է՝ յես կրկին բատրակ եմ»։ Իհարկե, դա սխալ է։ Բայց խոշոր տնտեսության պատկերի հետ գյուղացին ունի ատելություն, հիշողություն այն մասին, ինչպես կալվածատերերն էին հարստահարում ժողովրդին։ Այդ զգացումը մնացել է, նա դեռ չի մեռել։

Ամենից ավելի մենք պիտի հենվենք այն ճշմարտության վրա, վոր գործի բուն էությանը նայելով այստեղ բռնության մեթոդներով վոչ մի բանի հասնել չի կարելի։ Այստեղ տնտեսական խնդիրը միանգամայն այլ կերպ է կանգնած։ Այստեղ չկա այն կատարը, վորը կարելի յե կտրել, թողնելով ամբողջ պատվանդանը, ամբողջ շենքը։ Այն կատարը, վորը քաղաքում կապիտալիստներն էին, այստեղ չկա։ Բռնությամբ գործել այստեղ, նշանակում է կորստի մատնել ամբողջ գործը։ Այստեղ տևական դաստիարակության գործ է հարկավոր։

Գյուղացուն, վորը վոչ միայն մեզ մոտ, այլև ամբողջ աշխարհում գործնական ու ռեալիստ ե հանդիսանում, մենք պիտի տանք կոնկրետ որինակներ՝ իբրև ապացույց այն բանի, թե «կոմմունիզմն» ամենից լավն ե։ Իհարկե, վոչ մի շահ չի լինի, յեթե գյուղում կերևան փութկոտ մարդիկ, վորոնք քաղաքից են թռել այնտեղ, յեկել են, խոսք ու զրույց արել, մի քանի ինտելիգենտական, նույնիսկ և վոչ ինտելիգենտական բանսարկություն սարքել և թքելով հեռացել։ Այդ լինում ե։ Հարգանքի փոխարեն՝ նրանք հեգնանք են առաջացնում և այդ որինական ե միանգամայն։

Այս հարցում մենք պիտի ասենք, թե կոմմունաները մենք խրախուսում ենք, բայց նրանք այնպես պիտի լինեն դրված, վորպեսզի գյուղացու վստահությունը նվաճեն։ Իսկ մինչև այդ մենք սովորողներ ենք գյուղացու մոտ, այլ վոչ նրա ուսուցիչները։ Չկա ավելի հիմար բան, յերբ մարդիկ, վորոնք չգիտեն գյուղական տնտեսությունը և նրա առանձնահատկությունները, մարդիկ, վորոնք գյուղն են վազել միայն նրա համար, վոր նրանք լսել են հասարակական տնտեսության ոգուտի մասին, հոգնել են քաղաքային կյանքից և ցանկանում են գյուղում աշխատել,—յերբ նման մարդիկ ամեն բանում իրանց համարում են գյուղացիների ուսուցիչը։ Չկա ավելի հիմար բան, քան ինքը միտքը բռնության մասին միջին գյուղացու տնտեսական հարաբերության բնագավառում։

Այստեղ խնդիրը հանգում ե չե թե միջին գյուղացու եքսպրոպրիացիային, այլ նրան, վորպեսզի կարելի լինի հաշվի առնել գյուղացու կյանքի առանձին պայմանները, նրան, վորպեսզի գյուղացուց սովորենք լավագույն կարգին անցնելու յեղանակները և հրամայել չհամարձակվել։ Ահա կանոն, վոր մենք սահմանել ենք մեզ համար (**Ամբողջ Համագումարի ծափահարություններ**)։

Ահա կանոն, վորը մենք ջանացել ենք տալ մեր բանաձևի նախագծում, վորովհետև այդ տեսակետից, ընկերներ, մենք իսկապես մեղք քիչ չենք գործել։ Խոստովանել այդ ամենևին ամոթ չե։ Մենք փորձ չունեինք։ Բուն պայքարը շահագործողների դեմ մենք փորձից ենք վերցրել։ Յեթե մեզ յերբեմն դատապարտել են դրա համար, ապա մենք կարող ենք ասել. «Պարոնայք կապիտալիստներ, դրա մեջ դուք եք մեղավոր։ Յեթե դուք ցույց չտայիք այդպիսի վայրենի, այդպիսի անմիտ, լկտի ու որհասական դիմադրություն, յեթե դուք դաշինք չկնքեիք ամբողջ աշխարհի բուրժուազիայի հետ,—հեղաշրջումն ավելի խաղաղ ձևեր կընդուներ»։

Այժմ յետ վանելով բոլոր կողմերից տեղացող կատաղի գրոհը, մենք կարող ենք անցնել այլ մեթոդների, վորովհետև մենք գործում ենք վոչ իբրև խմբակ, այլ իբրև կուսակցություն, վորն իր յետևից



միլիոնավոր մարդիկ ե տանում։ Միլիոնավորները չեն կարող միանգամից ըմբռնել կուրսի փոփոխումը, և այս պատճառով կուլակներին վերապահված հարվածները համարյա գլխովին միջին գյուղացուն են հասնում։ Դա զարմանալի չե։ Միայն պետք ե հասկանալ, թե դա ծնունդ ե առնում պատմական պայմաններից, վորոնք մաշված են և վոր նոր պայմաններն ու նոր խնդիրներն այդ դասակարգի վերաբերմամբ նոր հոգեբանություն են պահանջում։

Գյուղացիական տնտեսության վերաբերյալ մեր դեկրետները հիմքում ճիշտ են։ Մենք հիմք չունենք հրաժարվելու նրանցից և վոչ մեկից, ափսոսալու և վոչ մեկի մասին։ Բայց յեթե դեկրետները ճիշտ են, ապա ճիշտ չե ույժով նրանց գյուղացու շլինքին փաթաթելը։ Վոչ մի դեկրետի մեջ այդ մասին չի խոսվում։ Նրանք ճիշտ են իբրև նշանառված ուղիներ, իբրև կոչ դեպի գործնական ձեռնարկումներ։ Յերբ մենք ասում ենք. «խրախուսեցեք միավորումը», մենք տալիս ենք դիրեկտիվներ, վորոնք շատ անգամ պիտի փորձվեն, վորպեսզի գտնել կարելի լինի նրանց կիրառման վերջին ձևը։ Քանի ասված ե թե անհրաժեշտ ե հոժարակամ համաձայնություն վաստակել, նշանակում ե, հարկավոր ե գյուղացուն համոզել և պետք ե համոզել գործնականորեն։ Խոսքով նրանք չեն թույլ տա իրանց համոզելու և շատ լավ կանեն, վոր չեն թույլ տա։ Վատ կլիներ, յեթե նրանք թույլ տային իրանց համոզելու դեկրետների լոկ ընթերցանությամբ և ագիտացիոն թռուցիկներով։ Յեթե այդպես կարելի լիներ վերափոխել տնտեսական կյանքը, ապա այդ վերափոխումը մի պուտ գրոշ իսկ չեր արժենա։ Պետք ե նախ ապացուցել, թե նման միավորումն ավելի լավ ե, միավորել մարդկանց այնպես, վորպեսզի նրանք իսկապես միավորվեն, այլ վոչ թե խռովեն, ապացուցել, թե դա ձեռնտու յե։ Գյուղացին այդպես ե դնում հարցը և այդպես են դնում հարցը մեր դեկրետները։ Յեթե մինչև որս մենք այդ վաստակել չենք կարողացել, դրա մեջ վոչինչ ամոթալի չկա, մենք այդ պետք ե հրապարակով խոստովանենք։

Մենք դեռ միայն լուծել ենք յուրաքանչյուր սոցիալիստական հեղաշրջման հիմնական խնդիրը,—հաղթության խնդիրը բուրժուազիայի վրա։ Այդ հարցը հիմնականում մենք լուծել ենք, թեև այժմ սկսվում ե վարհուրելի դժվարին կիսամյակ, յերբ ամբողջ աշխարհի իմպերիալիստները վերջին ճիգերն են անում, վորպեսզի մեզ ճզմեն։ Առանց իսկ չափազանցելու մենք կարող ենք այժմ ասել, թե նրանք իրանք են հասկացել, վոր այս կիսամյակից հետո նրանց գործը բացարձակապես անհուսալի յե։ Կամ այժմ նրանք կոգտվեն մեր ըսպառված վիճակով և կհաղթեն մեր յերկիրը, կամ մենք դուրս կգանք հաղթողներ վոչ միայն մեր յերկրի, այլ ամբողջ աշխարհի նկատմամբ։

Այս կիսամյակին, յերբ պարենավորման ու փոխադրական կրիզիսները կուտակվել են և իմպերիալիստական պետությունները փորձում են առաջ խաղալ մի քանի ֆրոնտներով, մեր դրությունն անչափ ծանր է, բայց սա վերջին ծանր կիսամյակն է։

Առաջվա պես անհրաժեշտ է լարել բոլոր ճիգերը պայքար մղելու արտաքին թշնամու դեմ, վորը հարձակվում է մեզ վրա։ Բայց յերբ մենք խոսում ենք գյուղական աշխատանքի խնդիրների մասին, չնայելով բոլոր դժվարություններին, չնայելով նրան, վոր մեր ամբողջ փորձը բևեռված է շահագործողների անմիջական ճնշման վրա,—մենք պետք է հիշենք ու չմոռանանք, վոր գյուղում միջին գյուղացիության նկատմամբ խնդիրներն այլ կերպ են ծառացած։

Բոլոր գիտակից բանվորները—Պետերբուրգի, Իվանովո-Վոզնեսենսկի, Մոսկվայի, վորոնք յեղել են գյուղում, բոլորը պատմել են մեզ որինակներ այն բանի, թե մի ամբողջ շարք թյուրիմացությունների, վորոնք թվում եր թե անվերացնելի յեն, մի ամբողջ շարք կոնֆլիկտների, վորոնք թվում եր թե խոշոր են, վոր դրանք վերացվում ու թուլացվում են նրանով, վոր հանդես եյին գալիս բանիմաց բանվորներ, վորոնք խոսում եյին չե թե գրքի, այլ գյուղացուն հասկանալի լեզվով, խոսում եյին վոչ իբրև հրամայել թույլատրող հրամանատարներ, թեև նրանք չգիտեն գյուղական կյանքը, այլ իբրև կացությունը պարզաբանող ընկերներ, վորոնք կոչ են անում նրանց աշխատողների զգացումին ընդդեմ շահագործողների։ Ընկերական պարզաբանման այդ հողի վրա շահվում եր այն, ինչ չեյին կարողանում վաստակել հարյուրավոր ուրիշները, վորոնք իրանց պահում եյին իբրև հրամանատարներ ու գլխավորներ։

Ահա ինչ վոգով է տոգորված ամբողջ բանաձևը, վորը մենք այժմ ձեր ուշադրությանն ենք առաջարկում։

Յես փորձեցի իմ համառոտ զեկուցման մեջ կանգ առնել այդ բանաձևի սկզբունքային կողմի, ընդհանուր քաղաքական նշանակության վրա։ Յես փորձեցի ապացուցել,—և յես կուզենայի մտածել, թե ինձ հաջողվեց ապացուցել,—վոր ամբողջ հեղափոխության շահերի տեսակետից մենք վոչ մի շրջադարձ չունենք, գծի վոչ մի փոփոխություն չկա։ Սպիտակ գվարդիականները և նրանց ոգնականները ճչում են, կամ պիտի ճչան այդ մասին։ Թող ճչան։ Մեզ դա չի խանգարում։

Մենք խիստ հետևողականորեն ենք զարգացնում մեր խնդիրները։ Բուրժուազիային ընկճելու խնդրից անհրաժեշտ է, վոր մեր ուշադրությունը դարձնենք միջին գյուղացիության կյանքի կարգավորման խնդրի վրա։ Մենք նրա հետ հաշտության մեջ պիտի ապրենք։ Կոմմունիստական հասարակությունում միջին գյուղացիությունը



միայն այն ժամանակ կլինի մեր կողմը, յերբ մենք կթեթևացնենք ու կլավացնենք նրա կյանքի տնտեսական պայմանները։ Յեթե վաղը մենք կարողանայինք տալ 100,000 առաջնակարգ տրակտոր, կարողանայինք բենզին մատակարարել նրանց, մեքենավարներ տալ (դուք շատ լավ գիտեք, վոր սա դեռ ֆանտազիա յե), ապա միջին գյուղացին կասեր—«Յես կողմնակից եմ կոմմունիային» (այսինքն կոմմունիզմին)։ Բայց այս անելու համար հարկավոր է նախ և առաջ հաղթել միջազգային բուրժուազիային, հարկավոր է նրան հարկադրել տալու մեզ այդ տրակտորները, կամ թե հարկավոր է մեր արտադրությունը բարձրացնել այն չափ, վորպեսզի մենք ինքներս կարողանանք տալ այդ տրակտորները։ Միայն այսպես կլինի ճիշտ դրված հարցը։

Գյուղացին քաղաքային արդյունաբերության կարիքն է զգում, առանց նրան նա չի կարող ապրել, իսկ այն մեր ձեռքին է։ Յեթե մենք ճիշտ տանենք գործը, այն ժամանակ գյուղացին շնորհակալ կըլինի մեզնից այն պատճառով, վոր մենք նրա համար քաղաքից տանում ենք այդ արտադրանքները, այդ գործիքները, այդ կուլտուրան։ Այդ բարիքները նրա համար չեն տանի շահագործողները, չեն տանի կալվածատերերը, այլ կտանեն նույնպիսի ընկեր-աշխատողներ, վորոնց նա անչափ խորն է գնահատում։ Բայց գնահատում է գործնականորեն, գնահատում է միայն նրանց փաստական ոգնությունը, մերժելով—և լիովին արդարացի մերժելով—հրամայելը, վերից «պարտադրելը»։

Նախ ոգնեցեք, ապա վստահության ձգտեցեք։ Յեթե ճիշտ տարվի այս գործը, յեթե ճիշտ լինի դրված մեր յուրաքանչյուր քայլը գավառում, վոլոստում, պարենահավաք խմբում, ուզածդ կազմակերպության մեջ, յեթե այս տեսակետից ուշադրությամբ վերստուգվի յուրաքանչյուր մի քայլ,—մենք կնվաճենք գյուղացու վստահությունը և միայն այն ժամանակ կարող կլինենք առաջ ընթանալ։ Այժմ մենք պիտի ոգնություն հասցնենք նրան, խորհուրդ տանք։ Սա հրամանատարի հրաման չի լինի, այլ ընկերոջ խորհուրդ։ Այդ ժամանակ գյուղացին լիովին մեր կողմը կլինի։

Ահա, ընկերներ, ինչ է պարունակում մեր բանաձևը, ահա, ինձ թվում է, ինչը պիտի լինի համագումարի վորոշումը։ Յեթե մենք ընդունենք այդ, յեթե դա վորոշե մեր կուսակցական կազմակերպությունների ամբողջ աշխատանքը, այն ժամանակ մենք կհաղթահարենք և յերկրորդ մեծ խնդիրը, վորը ծառացած է մեր առաջ։

Ինչպես տապալել բուրժուազիային, ինչպես ընկճել նրան,—մենք այդ սովորել ենք և դրանով պարծենում ենք։ Ինչպես կարգավորել հարաբերությունները միլիոնավոր միջին գյուղացիության հետ,

ինչ ճանապարհով նվաճել նրա վստահությունը,—այդ բանը մենք դեռ չենք սովորել։ Այդ պիտի պարզ խոստովանենք, բայց խնդիրը մենք ըմբռնել ենք, մենք այն դրել ենք և մենք լիակատար հույսով, լիակատար ճանաչողությամբ և լիակատար վճռականությամբ ենք ասում մեզ—այդ խնդիրը մենք կհաղթահարենք և այն ժամանակ սոցիալիզմը բացարձակորեն անպարտելի կլինի։

(Ճառ ՌԿԿ (բ) VIII համագումարի նիստում—1919 թ. մարտի 23)

---

# ԲՆԱՀԱՐԿԸ

## (1921 թ. մարտի 15-ի ճառ)

Ընկերնե՛ր, պարենի մասնատրումը հարկով փոխարինելու խնդիրն ամենից առաջ ու ամենից ավելի քաղաքական խնդիր է, վորովհետև այս խնդրի եյությունը կազմում է բանվոր դասակարգի հարաբերությունը դեպի գյուղացիությունը։ Այս խնդիրը դնել նշանակում է, վոր մենք պետք է նոր քննության կամ, յես կասեյի նույնիսկ, թերևս, ավելի զգույշ ու լրացուցիչ քննության ու վորոշ վերաքննության յենթարկենք այս յերկու գլխավոր դասակարգերի հարաբերությունները, դասակարգերի, վորոնց միջև տեղի ունեցող կռիվը կամ վորոնց միջև կնքվող համաձայնությունը վորոշում են մեր ամբողջ հեղափոխության բախտը։ Կարիք չկա, վոր յես մանրամասն կանգ առնեմ այսպիսի վերաքննության պատճառների խնդիրների վրա։ Դուք բոլորդ, իհարկե, շատ լավ գիտեք, թե պատերազմից, քայքայումից, զորացրումից ու անբերրիությունից առաջացած կարիքը ծայրահեղ չափերով սրվեց և այս սրվելու հողի վրա հատկապես անցքերի ինչպիսի ամբողջություն, հանգամանքների ինչպիսի գումար՝ գյուղացիության վիճակը դարձրեց առանձնապես ծանր, դժվարին և անխուսափելի կերպով սաստկացրեց նրա տատանումը պրոլետարիատից դեպի բուրժուազիայի կողմը։

Յերկու խոսք այս խնդրի թեորիական նշանակության կամ թեորետիկ մերձեցման մասին։ Կասկած չկա, վոր այնպիսի մի յերկրում, վորտեղ բնակչության վիթխարի մեծամասնությունը պատկանում է մանր հողագործ արտադրողներին, սոցիալիստական հեղափոխությունը հնարավոր է մի շարք հատուկ անցողական միջոցներով միայն, վորոնք բոլորովին ավելորդ կլինեյին զարգացած կապիտալիզմի յերկրներում, վորտեղ վարձու բանվորներն արդյունաբերության ու հողագործության մեջ ահագին մեծամասնություն են կազմում։ Զարգացած կապիտալիզմի յերկրներում հողագործության վարձու բանվորների



դասակարգ կա, վոր գոյացել է տասնյակ տարիների ընթացքում։ Միայն այսպիսի դասակարգը կարող է սոցիալիզմին անմիջաբար անցնելու հենարանը լինել սոցիալապես, տնտեսապես ու քաղաքականապես։ Կապիտալիզմից դեպի սոցիալիզմ անցնելը հնարավոր է միմիայն այնպիսի յերկրներում, վորտեղ այս դասակարգը բավականաչափ զարգացած է։ Մի շարք աշխատությունների մեջ, մեր բոլոր յելույթների ժամանակ, ամբողջ մամուլում մենք ընդգծել ենք, վոր Ռուսաստանում գործն այս դրության մեջ չէ, վոր Ռուսաստանում մենք ունենք բանվորների փոքրամասնություն արդյունաբերության մեջ ու մանր հողագործների ահագին մեծամասնություն։ Այսպիսի յերկրում սոցիալական հեղափոխությունը կարող է վերջնական հաջողություն ունենալ յերկու պայմանում միայն. նախ՝ այն դեպքում, յեթե սրան իր ժամանակին ոգնության հասնի մեկ կամ մի քանի առաջավոր յերկրների սոցիալական հեղափոխությունը։

Ինչպես գիտենք, այս պայմանի համար մենք առաջվան համեմատությամբ շատ-շատ բան ենք արել, սակայն վոչ յերբեք այնքան, վոր իրականություն դառնար այս։

Մյուս պայմանն այն համաձայնությունն է, վոր կարող է կնքվել իր դիկտատուրան իրականացնող կամ պետական իշխանությունն իր ձեռքում պահող պրոլետարիատի ու գյուղացիական բնակչության մեծամասնության միջև։ Այս համաձայնությունը մի շատ ընդարձակ գաղափար է, վոր բովանդակում է մի ամբողջ շարք միջոցներ ու անցումներ։ Այստեղ պետք է ասել, վոր մենք պետք է մեր ամբողջ պրոպագանդայի ու ագիտացիայի ժամանակ գործը պարզ դնենք։ Այն մարդիկ, վորոնք քաղաքականություն ասելով հասկանում են յերբեմն համարյա թե խաբեբայության հասնող մանր հնարներ, ամենավճռական դատապարտության պիտի հանդիպեն մեր միջավայրում։ Դասակարգերին խաբել չի կարելի։ Այս 3 տարվա ընթացքում մենք շատ-շատ բան ենք արել մասսաների մեջ քաղաքական գիտակցությունը զարգացնելու համար։ Մասսաներն ամենից ավելի բան սովորել են սուր կռվից։ Մեր աշխարհահայացքի, մեր հեղափոխական տասնամյա փորձի, մեր հեղափոխական դասերի համաձայն՝ մենք պետք է հարցերը դնենք ուղղակի. դասակարգերի շահերը տարբեր են, մանր հողագործը չի ցանկանում այն, ինչ ցանկանում է բանվորը։

Մենք գիտենք, վոր գյուղացիության հետ կնքած համաձայնությունը միայն կարող է փրկել սոցիալիստական հեղափոխությունը Ռուսաստանում, քանի հեղափոխություն չի կատարվել մյուս յերկիրներում։ Յեվ այս կերպ, ուղղակի պետք է ասել բոլոր ժողովներում, ամբողջ մամուլի մեջ։ Մենք չպետք է աշխատենք վորևե բան թագցնել, այլ պետք է ուղղակի ասենք, վոր գյուղացիությունն անբավա-

կան ե հարաբերությունների այն ձևից, վոր հաստատվել ե մեզանում, վոր նա փոխհարաբերությունների այս ձևը չի կամենում, և վոր այսուհետև այսպես չի լինի: Այս անվիճելի յե: Նրա այս կամքն արտահայտվել ե վորոշակի: Այս—աշխատավոր բնակչության ահագին մասսաների կամքն ե: Մենք պետք ե այս հաշվի առնենք, և մենք բավականաչափ զգաստ այնպիսի քաղաքագետներ ենք, վոր ուղղակի ասում ենք. «Յեկեք վերաքննենք»:

Մենք պետք ե ասենք. «Դուք կամենում եք յետ գնալ, դուք կամենում եք մասնավոր սեփականությունն ու ազատ առևտուրն ամբողջությամբ վերահաստատել, այն ժամանակ այս նշանակում ե անպայման ու անխուսափելիորեն գլորվել ու ընկնել կալվածատերերի ու կապիտալիստների իշխանության տակ: Մի շարք պատմական որինակներն ու հեղափոխությունների որինակներն այդ են վկայում: Կոմմունիզմի այբբենարանից, քաղաքատնտեսության այբբենարանից քաղած շատ փոքրիկ կշռադատությունը կհաստատե սրա անխուսափելիությունը: Յեկեք, ուրեմն, քննենք: Ձեռնտո՞ւ յե արդյոք գյուղացիությանը, վոր սա անջատվի պրոլետարիատից այնպես, վոր գլորվի յետ և թույլ տա, վոր յերկիրը հասնի կապիտալիստների ու կալվածատերերի իշխանությանը, թե՞ ձեռնտու չե: Հաշվեցեք և յեկեք միասին հաշիվ անենք»:

Յեվ մենք կարծում ենք, վոր յեթե ուղիղ հաշիվ արվի, ապա, չնայած պրոլետարիատի ու մանր հողագործի տնտեսական շահերի խորը տարբերությունն ամբողջովին գիտակցելուն, հաշիվը կլինի մեր ոգտին: Վորքան էլ դժվարին լինի մեր դրությունը ռեսուրսների տեսակետից, այնուամենայնիվ միջին գյուղացիությանը բավարարություն տալու խնդիրը պետք ե լուծվի: Գյուղացիությունը շատ ավելի միջին ե դարձել, քան առաջ: Հակասությունները հարթվել են, հողը բաժանված ե ոգտագործելու համար շատ ավելի հավասարար կերպով, համփայլի մեջքը կոտրված ե, և սա մեծ մասամբ եքսպրոպրիացիայի յե յենթարկված: Ռուսաստանում ավելի, քան Ուկրաինայում, Սիբիրում ավելի քիչ, սակայն ընդհանուր առմամբ ու ամբողջությամբ վերցրած՝ վիճակագրական տվյալները միանգամայն անվիճելի կերպով ցույց են տալիս, վոր գյուղը համահարթվել, հավասարվել ե, այսինքն՝ սուր անջատումն ու համախմբումը դեպի համփայլի կողմը ու անցանքս գյուղացու կողմը հարթվել ե: Ամեն ինչ ավելի հարթ ե դարձել, գյուղացիությունն ընդհանրապես միջակ գյուղացու դրությունն ունի:

Արդյոք մենք կարո՞ղ ենք բավարարություն տալ միջակ գյուղացիությանը՝ իբրև այսպիսին, վոր ունի իր տնտեսական առանձնահատկությունները, իր տնտեսական արմատները: Յեթե կոմմունիստներից վորևե մեկը յերազում եր, թե յերեք տարվա ընթացքում կա-



րելի յե վերակերտել մանր հողագործի տնտեսական բազան, տնտեսական արմատները, ապա նա, իհարկե, ֆանտազյոր ե յեղել և, ինչու մեղքներս թագցնենք, այսպիսի ֆանտազյորներ քիչ չեն յեղել մեր մեջ: Յեվ այստեղ մի առանձին վատ բան չկա: Ի՞նչպես կարելի յեր այսպիսի յերկրում սոցիալիստական հեղափոխություն սկսել առանց ֆանտազյորների: Հասկանալի յե, պրակտիկան ցույց տվեց, թե ինչ վիթխարի դեր կարող են խաղալ ամեն տեսակի փորձերն ու սկզբունքները կոլլեկտիվ հողագործական տնտեսություն վարելու ասպարեզում: Սակայն պրակտիկան ցույց տվեց, վոր այս փորձերն, իբրև այդպիսիք, բացասական դեր էլ խաղացին, յերբ ամենաբարի դիտավորություններով ու ցանկություններով լիովին տոգորված մարդիկ գյուղ եյին գնում. կոմմունաներ, կոլլեկտիվներ հիմնելու՝ չկարողանալով տնտեսավարություն անել, վորովհետև չունեյին կոլլեկտիվ փորձ: Դուք շատ լավ գիտեք, թե այդպիսի որինակներ ինչքան յեղան: Կրկնում եմ, վոր այս զարմանալի չե, վորովհետև մանր հողագործին վերափոխելու գործը, նրա ամբողջ հոգեբանությունն ու սովորությունները վերամշակելու գործը սերունդներ պահանջող գործ ե: Միայն նյութական բազան, տեխնիկան, հողագործության մեջ մասսայական մասշտաբով տրակտորներ ու մեքենաներ կիրառելը, մասսայական մասշտաբով ելեկտրիֆիկացիան կարող ե լուծել այս խնդիրը մանր հողագործների նկատմամբ, այսպես ասած՝ առողջացնել նրանց ամբողջ հոգեբանությունը: Ահա թե ինչը կվերափոխեր մանր հողագործին արմատից ու ահագին արագությամբ: Յեթե յես ասում եմ, թե սերունդներ են հարկավոր, այս չի նշանակում թե հարկավոր են դարեր: Դուք շատ լավ ըմբռնում եք, վոր տրակտորներ, մեքենաներ ձեռք բերելն ու վիթխարի յերկիրը ելեկտրիֆիկացիայի յենթարկելը—այսպիսի գործը համենայն դեպս կարող ե գլուխ գալ տասնամյակներից վոչ պակաս ժամանակաշրջանում: Ահա թե ինչպիսի յեն ոբյեկտիվ պայմանները:

Այժմ հարց ե առաջ գալիս, թե ինչպես անենք այս: Մենք պետք ե աշխատենք բավարարել պահանջները գյուղացիների, վորոնք բավարարված չեն, վորոնք անբավական են և իրավունք ունեն դժգոհ լինելու և չեն էլ կարող դժգոհ չլինել: Մենք պետք ե ասենք. «Այո, այս դրությունը չի կարող յերկար շարունակվել»: Ի՞նչպես բավարարենք գյուղացուն, և ինչ ե նշանակում բավարարել նրան: Վո՞րտեղից մենք կարող ենք պատասխան առնել այն հարցմանը, թե ինչպես պետք ե բավարարել նրան: Իհարկե, հենց նույն այն պահանջներից: Այս պահանջները մենք գիտենք, սակայն պետք ե ստուգենք այս պահանջները տնտեսագիտության վերածենք այն բոլորը, ինչ գիտենք հողագործի տնտեսական պահանջների մասին: Թափանցելով այս խնդրի մեջ,

մենք մեզ ու մեզ միանգամից կասենք. ինչպես գործի էությունն է ցույց տալիս, մանր հողագործին կարելի յե բավարարել յերկու բանով, նախ՝ **հարկավոր է շրջանառության վորոշ ազատություն, ազատություն մասնավոր մանր տնտեսատիրոջ համար**, իսկ յերկրորդ՝ **հարկավոր է ապրանքներ ու արդյունքներ ձեռք բերել**: Ինչացու յե շրջանառության ազատությունը, յեթե բան չկա շրջանառության հանելու, և ինչացու յե առևտրի ազատությունը, յեթե առևտուր անելու բան չկա: Այս կմնա թղթի մի կտոր, իսկ դասակարգերը բավարարվում են վոչ թե թղթիկներով, այլ նյութեղեն առարկաներով: Այս յերկու պայմանը պետք է լավ ու լավ հասկանալ: Թե ինչպես մենք պետք է ապրանքներ ձեռք բերենք, այս մասին հետո կխոսենք: Կարո՞ղ ենք արդյոք ապրանքներ ձեռք բերել. սրա վրա պետք է կանգ առնել: Ի՞նչ բան է շրջանառության ազատությունը: Շրջանառության ազատությունն առևտրի ազատություն է, իսկ առևտրի ազատությունն նշանակում է վերադարձ դեպի կապիտալիզմ: Շրջանառության ազատություն ու առևտրի ազատություն նշանակում է ապրանքային փոխանակություն առանձին մանր տնտեսատերերի միջև: Մենք բոլորս, ով սովորել է մարքսիզմի այբուբենը թեկուզ, գիտենք, վոր այս շրջանառությունից ու առևտրի ազատությունից անխուսափելիորեն բղխում է այն, վոր ապրանք արտադրողը տրոհվում է և դառնում կապիտալի սեփականատեր ու աշխատող ձեռքերի սեփականատեր: վոր նա տրոհվում է կապիտալիստի ու վարձու բանվորների, այսինքն՝ նորից վերաստեղծվում է կապիտալիստական վարձու ստրկությունը, վորը յերկնքից չի իջնում, այլ ամբողջ աշխարհում առաջ է գալիս հենց ապրանքային հողագործությունից: Մենք այս շատ լավ գիտենք թեորիապես, և ամեն վոք Ռուսաստանում, վոր դիտել է կյանքն ու մանր հողագործի տնտեսության պայմանները, չի կարող չնկատել այս:

Հարց է առաջ գալիս, թե հապա ինչպես, կարո՞ղ է արդյոք Կոմմունիստական Կուսակցությունը ճանաչել առևտրի ազատությունը, անցնել առևտրի ազատությանը: Արդյոք անհաշտելի հակասություններ չկա՞ն այստեղ: Սրան պետք է պատասխանել, վոր հասկանալի յե, չափազանց դժվար է այս խնդրին գործնական լուծում տալ: Յես առաջուց նախատեսում եմ և ընկերների հետ ունեցած զրույցից գիտեմ, վոր պարենի մասնատրումը հարկով փոխարինելու այն նախնական նախագիծը, վոր այստեղ բաժանել են ձեզ, ամենից ավելի յե առաջ բերում որինական ու անխուսափելի հարցումներ այն մասին, թե փոխանակությունն թույլատրվում է տեղական տնտեսական շրջանառության սահմաններում: Ի՞նչ է նշանակում այս, վորո՞նք են նրա սահմանները, ինչպես իրականացնենք այս: Յեթե վորևէ մեկը մտածում է, վոր այսպիսի հար-



ցին պատասխան կտանա այս համագումարում, նա սխալվում է: Այս հարցման պատասխանը մենք կտանանք մեր որենսդրությունից: **Մեր անելիքն սկզբունքային գիծ սահմանելը, լոզունգը հրապարակ հանելն է միայն**: Մեր կուսակցությունը կառավարական կուսակցություն է, և այն վորոշումը, վոր կկայացնե կուսակցական համագումարը, ամբողջ Հանրապետության համար պարտադիր է լինելու, և մենք այստեղ պետք է սկզբունքորեն լուծենք այս խնդիրը: Մենք պետք է խնդիրը վճռենք սկզբունքորեն, այս մասին տեղեկացնենք գյուղացիությանը, վորովհետև ցանքսի ժամանակն առաջներս է, իսկ այնուհետև պետք է շարժողության մեջ դնենք մեր ամբողջ ապպարատը, մեր բոլոր թեորետիկ ուժերը, մեր ամբողջ գործնական փորձը, վոր տեսնենք, թե ինչպես անենք այս: Կարելի՞ յե արդյոք այս անել, թեորիապես ասած՝ կարելի՞ յե արդյոք մինչ վորոշ աստիճան վերականգնել առևտրի ազատությունը, կապիտալիզմի ազատությունը մանր հողագործների համար՝ առանց հենց սրանով խախտելու պրոլետարիատի քաղաքական իշխանության արմատները: Այս կարելի՞ յե արդյոք:--Կարելի յե, վորովհետև խնդիրը չափի մեջն է: Յեթե մենք ի վիճակի լինեյինք թեկուզ փոքր քանակությամբ ապրանք ստանալ և այս ապրանքները պահեյինք պետության ձեռքում, քաղաքական իշխանություն ունեցող պրոլետարիատի ձեռքում, կարողանայինք այս ապրանքները շրջանառության հանել,—մենք, իբրև պետություն, մեր քաղաքական իշխանությանը կավելացնեյինք տնտեսական իշխանություն: Այս ապրանքները շրջանառության մեջ մտցնելը կկենդանացներ մանր հողագործությունը, վորն այժմ սարսափելի ընկճված ու թուլացած է պատերազմի, քայքայման ծանր պայմանների ճնշման տակ և այն բանի ճնշման տակ, վոր հնարավորություն չունի ծավալելու մանր հողագործությունը: Հարկավոր է մի փոքրիկ զարկ, մի դրդիչ, վոր համապատասխանում է նրա տնտեսական բազային, այսինքն առանձին մանր տնտեսությանը: Այս դեպքում շրջանառության տեղական ազատությունից պրծնելու հնար չկա: Յեթե արդյունքների հետ փոխանակելու միջոցով այս շրջանառությունը պետությանը տալիս է վորոշ, մինիմալ քանակով հացահատիկ, վոր բավական է քաղաքի, ֆաբրիկայի, արդյունաբերության պահանջները ծածկելու համար, այն ժամանակ տնտեսական շրջանառությունը վերականգնվում է այնպես, վոր պետական իշխանությունը մնում է պրոլետարիատի ձեռքում և ամրապնդվում: Գյուղացիությունը գործնականում պահանջում է ցույց տալ իրեն, վոր ֆաբրիկաները, գործարանները, արդյունաբերությունն իր ձեռքում պահող բանվորը կարող է կազմակերպել գյուղացիության հետ կատարելիք շրջանառությունը: Յեվ մյուս կողմից՝ վիթխարի հողագործական յերկիրը, վոր

ունի հաղորդակցության վատ ճանապարհներ, անծայրածիր տարածություններ, գյուղատնտեսական տարբեր պայմաններ և այլն. տեղական հողագործության ու տեղական արդյունաբերության ասպարեզում անխուսափելիորեն շրջանառության վորոշ ազատություն է յենթադրում։

Այս տեսակետից պարզապես բազմաթիվ սխալանքներ են յեղել, և այստեղ ամենամեծ վոճիր կլիներ տեսնել ու չըմբռնել այն, վոր մենք միջոցներ ձեռք չեյինք առնում և չգիտեյինք, թե ինչպես պետք է ձեռք առնել։ Սակայն հարկադրված անհրաժեշտություն ել կար այստեղ—մինչև այժմ մենք ապրում եյինք այնպիսի կատաղի, անլուր ծանր պատերազմի պայմաններում, յերբ տնտեսական ասպարեզում ել մեզ այլ բան չեր մնում, բայց յեթե գործել պատերազմավարի։ Յեվ մի հրաշք եր, վոր այսպիսի պատերազմի դիմացավ մի ավերված յերկիր, և այս հրաշքը յերկնքից չընկավ, այլ ծլեց ու բարձրացավ բանվոր դասակարգի ու գյուղացու տնտեսական շահերից, վորոնք այս հրաշքն ստեղծեցին իրենց մասսայական վոգևորությամբ։ Այս հրաշքը պատճառ յեղավ, վոր յետ մղեյինք կալվածատերերին ու կապիտալիստներին։ Սակայն, միևնույն ժամանակ, անկասկածելի փաստ է, և այս չպետք է թաքցնել ագիտացիայի ու պրոպագանդայի ժամանակ, վոր մենք ավելի հեռու գնացինք, քան այս անհրաժեշտ եր թեորիապես ու քաղաքականապես։ Մենք կարող ենք կարգին թուլատրել տեղական ազատ շրջանառություն, թուլատրել վոչ թե կործանելով, այլ ամրապնդելով պրոլետարիատի քաղաքական իշխանությունը։ Թե ինչպես պիտի այս անել—պրակտիկայի գործն է։ Իմ նպատակն է ապացուցել, վոր թեորիապես այդ մտածելի յե։ Միանգամայն հնարավոր է, վոր պետական իշխանությունն իր ձեռքում պահող պրոլետարիատը, յեթե վորևէ ռեսուրսներ ունի, վերջիններս շրջանառության հանե և սրանով վորոշ չափով բավարարե միջակ գյուղացուն, բավարարե տեղական տնտեսական շրջանառության հիման վրա։

Այժմ մի քանի խոսք տեղական տնտեսական շրջանառության մասին։ Նախապես պիտի շոշափեմ կոոպերացիայի խնդիրը։ Տեղական տնտեսական շրջանառության միջոցին կոոպերացիան, ի հարկե, մեզ հարկավոր է։ Մեր ծրագիրն ընդգծում է, վոր բաշխման լավագույն ապարատը կապիտալիզմից մնացած կոոպերացիան է, վոր այս ապարատը պետք է պահպանել։ Այս ասված է ծրագրում։ Արդյոք մենք ոգտագործում եյինք կոոպերացիան։ Շատ անբավարար չափով, և ելի մասամբ սխալվելով, մասամբ ռազմական կարիքից ստիպված։ Կոոպերացիան առաջ մղելով ավելի տնտեսարար տարրեր, տնտեսական տեսակետից ավելի բարձր տարրեր, հենց սրանով քաղաքականության



մեջ առաջ եր մղում մենշևիկներին ու ես-երներին։ Այս քիմիական որենք է, այստեղ վոչինչ անել չես կարող...։ Մենշևիկներն ու ես-երներն այն մարդիկն են, վորոնք գիտակցորեն կամ անգիտակցորեն վերականգնում են կապիտալիզմն ու ոգնում Յուդենիչներին։ Այդ ել որենք է։ Մենք պետք է նրանց դեմ կռվենք, նրանց դեմ պատերազմենք. յեթե պատերազմում ես, պատերազմաբար ել վարվիր։ Մենք պետք է պաշտպանեյինք մեզ և մենք պաշտպանեցինք։ Սակայն կարելի՞ յե արդյոք անպայման մնալ այժմյան դրության մեջ։ Չի կարելի։ Յեվ սրանով ձեռքերը կաշկանդելն անպայման սխալ կլինի։ Ահա թե ինչու կոոպերացիայի խնդրի մասին յես առաջարկում եմ մի բանաձև, վոր շատ կարճ է, և յես այն կկարդամ.

«Նկատի ունենալով, վոր Ռ. Կ. Կ. IX համագումարի բանաձևը կոոպերացիայի վերաբերմամբ ամբողջովին կառուցված է պարենի մասնատրման սկզբունքն ընդունելու վրա, վորն այժմ փոխարինվում է բնահարկով, Ռ. Կ. Կ. X համագումարը վորոշում է.

Հիշյալ բանաձևը վերացնել։

Համագումարը Կ. Կ.-ին հանձնարարում է մշակել և կուսակցական ու խորհրդային կարգով իրականացնել վորոշումներ, վորոնք բարելավեյին և զարգացնեյին կոոպերատիվների կազմությունն ու գործունեյությունը Ռ. Կ. Կ. ծրագրի համաձայն և հարմարեցնելով պարենի մասնատրումը բնահարկով փոխարինելուն»։

Սակայն IX համագումարի բանաձևը կաշկանդում է ձեռքերը, այն ասում է. «Յենթարկել պարենավորման ժողկոմատին»։ Պարենկոմը գեղեցիկ հիմնարկություն է, սակայն անպայման նրան յենթարկել կոոպերացիան և մեր ձեռքերը կապել, յերբ վերաքննում ենք դեպի մանր հողագործներն ունեցած վերաբերմունքը,—այս կնշանակեր քաղաքականապես ակներև սխալ գործել։ Մենք պետք է ընտրված Կ. Կ.-ին հանձնարարենք միջոցներ ու փոփոխություններ մշակել ու սահմանել։ Թեորիապես ասած՝ մենք այս տեսակետից կանգնած ենք մի շարք անցողակի աստիճանների, անցողակի միջոցների հանդեպ։ Մեզ համար պարզ է մի բան. IX համագումարի բանաձևը յենթադրում եր, վոր մեր շարժումը գնալու յե ուղիղ գծով։ Բանից դուրս յեկավ, ինչպես վոր շարունակ լինում եր հեղափոխությունների ամբողջ պատմության ընթացքում, վոր մեր շարժումը գնաց զիգզագներով։ Նման բանաձևով ձեռքներս կաշկանդելը քաղաքական սխալ է։ Բանաձևը վերացնելով՝ մենք ասում ենք, վոր պետք է ղեկավարվել ծրագրով, վորն ընդգծում է կոոպերատիվ ապարատի նշանակությունը։

Բանաձևը վերացնելով՝ մենք ասում ենք. հարմարվեցեք պարենի մասնատրումը հարկով փոխարինելուն։ Սակայն այս յերբ կիրակա-

նացնենք մենք։— Բերքից վոչ շուտ, այսինքն մի քանի ամիս հետո։ Միատեսակ կլինի այս զանազան տեղերում։ Վոչ մի դեպքում։ Մեծագույն հիմարություն կլինի կենտրոնական Ռուսաստանը, Ուկրաինան, Սիբիրը շաբլոնացնել, վորոշ շաբլոնի յենթարկել։ Յես առաջարկում եմ տեղական շրջանառության ազատության այս հիմնական միտքը համապատասխան հանել իբրև վորոշում։ Ինքս ինձ մտածում եմ, վոր սրանից հետո, մոտիկ օրերում Կ. Կ.-ն անպայման նամակ կհրապարակե, վորը կասե և, իհարկե, ավելի լավ կասե, քան յես եմ ասում այժմ. «Վոչ մի բան բեկման մի յենթարկեք, մի շտապեք, խելքներիդ ուժ մի տվեք շտապով, վարվեցեք այնպես, վոր մաքսիմալ չափերով բավարարություն տաք միջակ գյուղացիությանը՝ առանց խանգարելու պրոլետարիատի շահերը։ Փորձեցեք այս մեկը, փորձեցեք այն մյուսը, փորձով գործնականապես ուսումնասիրեցեք, հետո մեզ հաղորդակից արեք հետևանքներին և ասացեք, թե ինչ բան հաջողվեց ձեզ, և մենք կստեղծենք մի հատուկ հանձնաժողով կամ նույնիսկ մի քանի հանձնաժողովներ, վորոնք գումարված փորձը հաշվառքի կենթարկեն, վորպեսզի հետո կարողանանք փորձի վրա հիմնվելով ընթանալ. հարկավոր է, վոր մենք տասն անգամ ստուգենք ձեռնարկված միջոցները։

Մեզ հարց կառաջարկեն և կուզենան իմանալ, թե վորտեղից պետք է ապրանքներ ճարել։ Այժմ մենք կկարողանանք, վորովհետև մեր տնտեսական դրությունը միջազգային մասշտաբով բարելավվել է շատ մեծ չափով։ Թե ինչպես մենք կկարողանանք այս անել, այդ ուրիշ խնդիր է, բայց վորոշ հնարավորություն կա։

Կրկնում եմ, տնտեսական հարաբերությունների այն տիպը, վոր համամիութենական պետությունների այս բլոկն ընդունում է վերեվում, պրոլետարական պետական իշխանությանը հնարավորություն կտա ազատ շրջանառություն կազմակերպել գյուղացիության հետ ներքևում։ Յես գիտեմ, յես արդեն հարկ եմ ունեցել ասելու, վոր վորոշ քմծիծաղներ է առաջ բերում այս։ Մոսկվայում կա ինտելիգենտական-բյուրոկրատական մի ամբողջ շերտ, վորը փորձում է «հանրային կարծիք» ստեղծել։ Այս շերտն սկսել է զվարճանալ, ասելով. ա՛յ թե ինչպիսի կոմմունիզմ դուրս յեկավ, այս նման է այն մարդին, վոր ներքևից հենակներ ունի, իսկ դեմքի փոխարեն՝ ամբողջովին շորերի մի փաթթոց, և այս կոմմունիզմից մի առեղծվածային պատկեր է մնում։ Այս տեսակ կատակներ յես բավական լսել եմ, սակայն այս կատակները կամ բյուրոկրատական են, կամ լուրջ չեն։ Ռուսաստանը պատերազմից դուրս յեկավ այն դրությամբ, վոր ամենից ավելի նման է այն մարդու վիճակին, վորին ծեծելով կիսամահ են արել։ Յոթը տարի ծեծ ու ջարդ են տվել նրան, և այժմ, փառք աստծու, վոր գեթ



հենակներով շարժվում է։ Ահա թե ինչ դրության մեջ ենք մենք։ Այս դեպքում կարծել, վոր մենք կարող ենք առանց հենակների դուրս մագլցել, նշանակում է վոչինչ չհասկանալ։ Քանի մյուս յերկրներում հեղափոխություն չկա, մենք պետք է դուրս մագլցենք տասնամյակներ շարունակ, և այս դեպքում չպետք է ափսոսալ հարյուրավոր միլլիոններ, նույնիսկ միլլիարդներ զոհաբերել մեր անբավ հարստություններից, մեր հում նյութի հարուստ աղբյուրներից, միայն թե առաջավոր, խոշոր կապիտալիզմի օգնությունն ստանանք։ Մենք հետո մեր կորցրածը տոկոսներով յետ կստանանք։ Իսկ պրոլետարական իշխանությունը պահել ու պահպանել մի այնպիսի յերկրում, վոր անլուր չափերով քայքայված է, վորտեղ հսկայական գերակշռություն ունի նույնպես քայքայված գյուղացիությունը, պահել ու պահպանել առանց կապիտալի օգնության, վորի համար, իհարկե, այս կապիտալը հարյուրավոր տոկոսներ կքերթե,—չի կարելի։ Այս պետք է ըմբռնել և այդ պատճառով էլ կամ տնտեսական հարաբերությունների տիպ է այս և կամ վոչինչ։ Ով այլ կերպ է դնում հարցը, նա գործնական տնտեսականությունից վոչինչ չի հասկանում բացարձակապես և օձիքն ազատում է այս կամ այն սրախոսություններով։ Պետք է ընդունել այնպիսի մի փաստ, վորպիսին է գերհոգնածությունը և ուժասպառությունը։ Պատերազմի յոթը տարինե՛ր. վո՛ր աստիճան պետք է սրանց հետևանքները յերևան գային, յեթե պատերազմի չորս տարվա հետևանքները մինչև այժմ զգալի յեն առաջավոր յերկրներում։

Իսկ մեզանում, մեր հետամնաց յերկրում, յոթնամյա պատերազմից հետո, մեր դրությունն ուղղակի ուժասպառության վիճակ է։ Ուժասպառություն է այս, մի կացություն, վոր համարյա մոտ է աշխատունակության լիակատար անհնարինության։ Այստեղ հարկավոր է ժամանակ՝ տնտեսապես շունչ քաշելու համար։ Յես կհայտարարեմ այն տեղեկանքը, վոր ստացել եմ ընկեր Լեժավայից։ Այս տեղեկանքից մենք տեսնում ենք, վոր մի քանի հարյուր հազար փութ պարենավորման բազմազան առարկաներ արդեն գնված են և ամենաշտապ կարգով գալիս են Լիտվայից, Ֆինլանդիայից ու Լատվիայից։ Այսօր լուր է ստացված, վոր Լոնդոնում ստորագրված է $18^{1}/_{2}$ միլլիոն փութ ածխի գործարքը, վոր մենք վորոշեցինք գնել, վորպեսզի կենդանացնենք Պիտերի ու մանածագործական արդյունաբերությունը։ Յեթե մենք ապրանքներ ստանանք գյուղացու համար, ապա, իհարկե, ծրագրի խախտում է այս, անկանոնություն է այս, սակայն հարկավոր է ժամանակ տալ շունչ քաշելու, վորովհետև ժողովուրդը գերհոգնած է այն աստիճան, վոր այլապես իվիճակի չէ աշխատելու։

Պետք է մի քանի խոսք ասեմ անհատական ապրանքափոխանակության վերաբերմամբ էլ։ Յեթե մենք խոսում ենք շրջանառու-

թյան ազատության մասին, ապա այս նշանակում է անհատական ապրանքափոխանակություն, այսինքն նշանակում է համփաներին խրախուսել: Իսկ ինչպես անենք: Չպետք է աչք գոցենք այն փաստի հանդեպ, վոր պարենի մասնատրումը հարկով փոխարինել՝ նշանակում է այն, վոր համփայությունն այս հասարակակարգից կբողբոջե, կաճե ել ավելի, քան մինչև այժմ: Համփայությունն այժմ կսկսե ծլել ու աճել այնտեղ, վորտեղ առաջ չէր կարող աճել: Սակայն այս յերևույթի դեմ պետք է կռվել վոչ թե արգելիչ միջոցներով, այլ պետական միավորությամբ ու պետական միջոցներով: Յեթե դու կարող ես պետությանը տալ մեքենաներ, ապա դու կը բարձրացնես պետությունը, և յերբ դու կարող ես տալ մեքենաներ կամ ելեկտրիֆիկացիա, այն ժամանակ տասնյակ-հազարավոր ու հարյուր-հազարավոր մանր համփաներ կոչնչանան: Քանի չես կարող այս տալ, վորոշ քանակությամբ ապրանք տուր: Յեթե ապրանքները քո ձեռքումն են,— քո ձեռքումն է իշխանությունը, սակայն կանգնեցնել, կրճատել, ջնջել այս հնարավորությունը, այս նշանակում է խլել շրջանառության ամեն մի հնարավորություն, այս նշանակում է բավարարություն չտալ միջակ գյուղացիությանը: Ռուսաստանում գյուղացիությունն ավելի միջակ է դարձել, և կարիք չկա վախենալու, վոր փոխանակությունը կդառնա անհատական: Ամեն մարդ կարող կլինի փոխանակությամբ մի բան տալ պետությանը. մեկը կարող կլինի հացահատիկի ավելցուկները տալ, մյուսը փոխանակությամբ կտա բանջարանոցային արդյունքներ, յերրորդը՝ աշխատանքային պարհակ: Հիմնականում դրությունն այնպես է, վոր մենք պետք է տնտեսապես բավարարություն տանք միջակ գյուղացիությանը և համաձայնենք Ռուսաստանում պահպանել պրոլետարիատի իշխանությունը տնտեսապես. չի կարելի այս. քանի վոր դանդաղել է միջազգային հեղափոխությունը: Այս պետք է պարզ գիտակցել և ամենևին չվախենալ այս ասելուց: Նախագծի մեջ, ինչպես տեսնում եք, շատ անհամաձայնություններ կան, հակասություններ կան, ուստի և վերջում գրել ենք. «Հիմնականում հավանություն տալով այն թեզիսներին, վոր Կ. Կ.-ն առաջարկել է պարենի մասնատրումը բնահարկով փոխարինելու մասին, համագումարը կուսակցության Կ. Կ.-ին հանձնարարում է շտապ կարգով համաձայնեցնել այս թեզիսները»: Մենք գիտենք, վոր այս թեզիսները համաձայնեցրած չեյին. մենք ժամանակ չունեցանք այս անելու, մենք չշոշափեցինք այս մանրամասն աշխատանքը: Հարկը կյանքում իրագործելու ձևերը մանրամասն կմշակե և կիրագործե Հ.-Ռ. Կ. Գ. Կ.-ի ու Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի համապատասխան օրենքը: Յեթե դուք այս ընդունեք այսօր, ապա այս բանը կորոշվի Հ. Ռ. Կ. Գ. Կ.-ի առաջին նստաշրջանում, վորը



նույնպես վոչ թե օրենք կը հրատարակե, այլ ձևափոխած թեզիսը միայն, այնուհետև Ժողկոմխորհը և Աշխատանքի ու Պաշտպանության Խորհուրդը օրենք կդարձնեն այս և, վոր էլ ավելի կարևոր է, գործնական հրահանգներ կտան: Կարևոր է, վոր տեղերում հասկանային սրա նշանակությունը և մեզ ընդառաջ գային:

Պարենի մասնատրումը հարկով փոխարինելն ինչու է հարկավոր մեզ: **Պարենի մասնատրումը յենթադրում էր առնել բոլոր ավելցուկները, պետական պարտադիր մոնոպոլիա հաստատել: Մենք չեյինք կարող այլ կերպ վարվել, մենք ծայրահեղ կարիքի մեջ եյինք:** Թեորիապես այս պարտադիր չէ **պետական մոնոպոլիան ամենալավ բանն է սոցիալիզմի տեսակետից, բայց միայն իբրև անցողակի միջոց գյուղացիական յերկրում, վոր արդյունաբերություն ունի յեվ այս արդյունաբերությունը գործում է:** Յեվ յեթե վորոշ քանակությամբ ապրանքներ կան, հնարավոր է կիրառել հարկի ու ազատ շրջանառության սիստեմը: Հենց այս շրջանառությունը մի դրդապատճառ, մի շարժառիթ, մի խթան է գյուղացու համար: Տնտեսատերը կարող է և պետք է ջանա իր սեփական շահի համար, վորովհետև նրանից չեն խլել բոլոր ավելցուկները, այլ միայն հարկը, վորն ըստ հնարավորության կորոշվի առաջուց: Հիմնականն այն է, վոր դրդապատճառ, շարժառիթ, խթան լինի մանր հողագործի համար: **Հարկավոր է, վոր մենք կերտենք մեր պետական տնտեսությունը՝ հարմարեցնելով միջակ գյուղացու տնտեսականությանը,** վորը յերեք տարվա ընթացքում մենք չկարողացանք վերակերտել և դեռ տասը տարվա ընթացքում չենք վերակերտելու: Պետության առաջ ծառացած էր պարենավորման վորոշ պարտականություն: **Անցած տարի մեր պարենի մասնատրումը մեծացրել եյինք: Հարկը պետք է ավելի քիչ լինի:**

Յեթե անբերրիություն լինի, ավելցուկներն առնել չի կարելի, վորովհետև ավելցուկներ չեն լինի: Հարկավոր կլիներ գյուղացիների բերնից առնել այն: Յեթե անբերրիություն լինի, այն ժամանակ բոլորը սոված կը մնան մի քիչ, և պետությունը կփրկվի, կամ յեթե չկարողանանք առնել այն մարդկանցից, վորոնք իվիճակի չեն կուշտ ուտելու, պետությունը կը կործանվի: Այս է մեր պրոպագանդայի անելիքը գյուղացիների մեջ: Յեթե բերքը տանելի լինի, մինչև կես միլիարդ ավելցուկներ կլինեն: Սրանք ծածկում են սպառումն ու տալիս են վորոշ ֆոնդ: Ամբողջ խնդիրն այն է, վոր գյուղացիներին դրդապատճառ, շարժառիթ տանք տնտեսականության տեսակետից: Պետք է ասել գյուղական տնտեսատիրոջը. «Դո՛ւ, տնտեսատեր, տուր արդյունքները, իսկ պետությունն առնում է նվազագույն հարկ»: Ուստի և մենք առաջարկում ենք բանաձևն իբրև հիմք ընդունել և հանձնարարում ենք այն համաձայնեցնելու: Տեղերի գործիչները կաշխա-

տեն համաձայնեցնել ու լրացնել: Չի կարելի համաձայնեցնել մինչև վերջ. այս անլուծելի խնդիր է, վորովհետև կյանքը չափազանց խայտաբղետ է: Անցողիկ միջոցներ վորոնելը շատ դժվարին խնդիր է: Յեթե չհաջողվի արագ ու ուղղագիծ կերպով այս անել, մենք չենք վհատվի, մենք մերը կանենք: Քիչ-շատ գիտակից գյուղացին չի կարող չըմբռնել, վոր մենք, իբրև կառավարություն, ներկայացուցիչն ենք բանվոր դասակարգի ու այն աշխատավորների, վորոնց հետ կարող են համաձայնել աշխատավոր գյուղացիները (իսկ սրանք $^{9}/_{10}$-ն են), վոր ամեն մի հետաշրջում նշանակում է վերադարձ դեպի հին, ցարական կառավարությունը: Այս ցույց է տալիս Կրոնշտադտի փորձը: Սպիտակ գվարդիականներին չեն ուզում այնտեղ, իսկ ուրիշ իշխանություն չկա: Չեն ուզում մեր իշխանությունը և գտնվում են այնպիսի դրության մեջ, վորն ամենալավ ագիտացիան է մեր օգտին ու ընդդեմ ամեն մի նոր կառավարության:

Մենք այժմ հնարավորություն ունենք համաձայնելու գյուղացիների հետ, և պետք է գործնականապես իրականացնել այս, հմտությամբ, բանիմացությամբ, ճկունությամբ. Մենք ճանաչում ենք մեր պարենկոմի ապպարատը, գիտենք, վոր մեր լավագույն ապպարատներից մեկն է այն: Վերջերս մյուսների հետ համեմատելով՝ մենք տեսնում ենք, վոր այս լավագույն ապպարատն է և պետք է պահպանվի, սակայն ապպարատը պետք է հպատակվի քաղաքականությանը: Եվ մեզ ինչի՞ չի պետք պարենկոմի ամենահոյակապ ապպարատը, յեթե մենք չենք կարողանալ կարգի բերել մեր հարաբերությունը գյուղացիների հետ: Այն ժամանակ այս ամենահոյակապ ապպարատը կծառայի վոչ թե մեր դասակարգին, այլ Դենիկինին ու Կոլչակին: Մի անգամ վոր քաղաքականությունը պահանջում է վճռական փոփոխություն, ճկունություն, հմտորեն անցումն, ղեկավարները պետք է հասկանան այս: Ամուր ապպարատը պետք է պիտանի լինի ամեն տեսակ զորախաղերի համար: Իսկ յեթե ապպարատի ամրությունը փերածվում է վոսկրացածության, խանգարում է շրջադարձ կատարելուն, այն ժամանակ կռիվն անխուսափելի յե, ուստի և հարկավոր է բոլոր ուժերը գործադրել, վոր անպայման հասնենք մեր ցանկացածին, հասնենք այն բանին, վոր ապպարատը լիովին հպատակվի քաղաքականությանը: Քաղաքականությունը մի հարաբերություն է դասակարգերի միջև—նա վորոշում է Հանրապետության բախտը: Ապպարատը, իբրև օժանդակ միջոց, վորքան ավելի ամուր է, այնքան լավ ու պիտանի յե զորախաղերի համար, իսկ յեթե ապպարատն ի վիճակի չէ այս կատարելու, վո՛չ մի բանի պետք չէ այն: Յեվ յես հրավիրում եմ ձեզ նկատի ունենալ հիմնականը, այն է՝ պարենի մասնատրումն իր մանրամասնություններով ու մեկնաբա-



նություններով մի քանի ամսվա գործ է, իսկ այժմ մենք պետք է ի նկատի ունենանք հիմնականը, մեզ հարկավոր է, վոր հենց այս յերեկոյան ռադիոյով հաղորդենք աշխարհի բոլոր ծայրերին, վոր կառավարական կուսակցության համագումարը հիմնականում պարենի մասնատրումը փոխարինում է հարկով, սրանով մի շարք դրդապատճառներ ընձեռելով մանր հողագործին, վոր սա ընդլայնե իր տնտեսությունը, մեծացնե ցանքսը, վոր համագումարը վոտք դնելով այս ուղին՝ շտկում է պրոլետարիատի ու գյուղացիության միջև յեղած հարաբերությունների սիստեմը և վստահություն է հայտնում, վոր այս յեղանակով ամուր հարաբերություն կը սահմանվի պրոլետարիատի ու գյուղացիության միջև:

«Ռ. Կ. Կ. X Համագումար».
Ստենոգրաֆիկան հաշվետվություն.
Պետհրատ 1921 թ. (Ռուսերեն հրատարակություն):

## ՅԵԶՐԱՓԱԿՄԱՆ ԽՈՍՔ

**(1921 թ. մարտի 15-ի նիստ)**

Ընկերներ, յես կկամենայի հենց սկզբից մի քանի խոսք ասել կոոպերացիայի խնդրի մասին: Ընկ. Ցյուրուպայի զեկուցումը, ինչպես հենց ինքը հայտարարեց, և ինչպես մենք բոլորս լսեցինք այստեղ, կից-զեկուցում չէր այն իմաստով, վոր զեկուցողն սկզբունքորեն այլ տեսակետ հակադրեր: Կ. Կ.-ի պարենի մասնատրումը հարկով փոխարինելու մասին արած վորոշումը համերաշխ էր այնքան, և, վոր գլխավորն է, մենք դեռ համագումարի աշխատանքներն սկսելուց առաջ միանգամից տեսանք, թե տեղերում տարբեր ընկերներ գործնական փորձի ցուցումների հիման վրա սրանից անկախ յեկել են միևնույն յեզրակացություններին, թե հնարավոր չէ ըստ էության կասկածել այն մասին, վոր այս միջոցը նպատակահարմար է ու անհրաժեշտ: Յեվ ընկեր Ցյուրուպայի զեկուցումը ներկայացնում էր լրացումներ ու նախազգուշացումներ մի շարք խնդիրների մասին, բայց այլ քաղաքականության առաջարկ չէր պարունակում: Ընկեր Ցյուրուպայի զեկուցման մեջ կոոպերացիայի խնդիրն էր միայն, վոր մի շեղում էր ընդհանուր գծից: Այս կետում ընկեր Ցյուրուպան առարկում էր իմ առաջարկած բանաձևի դեմ, բայց ինձ թվում է, վոր նրա առաջարկությունները չի կարելի համոզիչ համարել: Թե տեղական տնտեսական ազատ շրջանառության հարաբերություններն ինչ կերպ կզարգանան—կոոպերացիայի՞ միջոցով, թե՞ մանր մասնավոր առևտուրը վերստեղծելու միջոցով, մենք դժվար թե այժմ կարողանանք վերջնականապես վորոշել: Այս խնդիրը պետք է քննել,—այս անկախած

է—և այս տեսակետից մենք այսուհետև պետք ե ավելի ուշադիր քննենք տեղական փորձը. սրան, իհարկե, մենք բոլորս կհամաձայնենք։ Սակայն, յես կարծում եմ, վոր կոոպերացիայի վորոշ առավելությունը մնում ե։ Յեթե կոոպերացիան, ինչպես արդեն յես մատնանշել եմ, քաղաքականապես ծառայում ե իբրև մի վայր այնպիսի տարրերի կազմակերպման, կենտրոնացման, միավորության, վորոնք քաղաքականապես մեզ թշնամի յեն և ըստ եության Կոլչակի ու Դենիկինի քաղաքականությունն են վարում, ապա, իհարկե, կոոպերացիան մանր տնտեսությունների, մանր առևտրի համեմատությամբ գործի ձևն ե միայն փոխում։ Հասկանալի յե, վոր համփայության ամեն մի գոյացում ու մանր բուրժուական հարաբերությունների զարգացում համապատասխան քաղաքական կուսակցություններ են ծնում, վորոնք Ռուսաստանում կազմակերպվել եյին տասնամյակների ընթացքում և վորոնք մեզ լավ հայտնի յեն։ Այստեղ պետք ե ընտրություն անենք վոչ թե այն բանի միջև, թե արդյոք ասպարեզ տանք այս կուսակցություններին—այս կուսակցություններն անխուսափելիորեն ծնվում են մանր բուրժուական տնտեսական հարաբերություններից,—այլ մենք պետք ե ընտրություն անենք, և այն էլ վորոշ չափով, այս կուսակցությունների կոնցենտրացիայի, միավորության ու գործողությունների ձևերի միջև միայն։ Ամենևին չի կարելի ապացուցել, թե կոոպերացիան այս տեսակետից ավելի վատ ե։ Ընդհակառակը, կոմունիստներն, այնուամենայնիվ, մի քիչ ավելի շատ միջոցներ կունենան կոոպերացիայի նկատմամբ սիստեմատիկ ներգործություն ու վերահսկողություն անելու համար։

IX համագումարի կոոպերացիայի մասին ընդունած բանաձևն այստեղ վճռականապես պաշտպանվեց ընկեր Ցյուրուպայի կողմից և վճռական առարկության հանդիպեց ընկ. Միլյուտինի կողմից։

Ընկեր Ցյուրուպան իմ մասին ասում եր, ի միջի այլոց, վոր յես ինքս վկա եյի այն պայքարին, վոր տեղի ունեցավ կոոպերացիայի խնդրի առթիվ, նախքան այս խնդիրը համագումարի կողմից լուծվելը։ Այս փաստը յես պետք ե հաստատեմ։ Իրոք պայքար կար, և IX համագումարի բանաձևը նրան վերջ տվեց՝ պարենավորման գերատեսչության համար ավելի մեծ գերակշռություն, կամ ավելի ճիշտ կլիներ ասել, լիակատար գերակշռություն ապահովելով։ Անկասկած քաղաքականապես սխալ կլիներ արդեն այս նկատառման պատճառով այժմ չհրաժարվել կոոպերացիայի նկատմամբ գործողությունների ավելի մեծ ազատությունից ու ձեռնարկելիք քաղաքական միջոցների ընտրության ազատությունից։ Ինձ համար, ասենք, իբրև Ժողկոմխորհի նախագահի, իհարկե, ավելի անհաճո չե դատապարտված լինել դիտելու տասնյակ նիստերում տեղի ունեցող մանր պայքարը, քան ծոցում ու-



նենալ համագումարի բանաձևը, վորը պարտադիր ե բոլորի համար և վորը վերջ կդնե այս պայքարին։ Սակայն պետք ե հաշվի առնել վոչ այս կարգի հարմարությունները, այլ վորոշ տնտեսական քաղաքականություն անցկացնելու շահերը։ Դուք բոլորդ այստեղ տեսաք տոմսերի այն մեծ քանակը, վոր յես ստացա—տոմսերի մի ամբողջ սար—այս էլ ավելի ակնառու հաստատում եր, վոր մեր քաղաքականության այս փոփոխությունն իրագործելու ժամանակ մանրամասնությանը վերաբերող բազմաթիվ դժվարություններ են ծագում այս կոնկրետ խնդրում։ Գործի եությունը հենց այս ե։ Յեվ վոչ մի կասկած չկա, վոր մենք միանգամից չենք կարող այս դժվարությունները լուծել։ Յեթե մենք անփոփոխ թողնենք IX համագումարի բանաձևը կոոպերացիայի մասին, ապա կկաշկանդենք մեր ձեռքերը։ Մենք մեզ այնպիսի դրության մեջ կգնենք, վոր ամբողջովին համագումարին հաշվետու լինելով և պարտական լինելով իրագործելու նրա քաղաքականությունը՝ չենք կարող այս բանաձևի տառից նահանջել։ Բանաձևը շարունակ հիշեցնում ե պարենի մասնատրման մասին, իսկ դուք այն փոխարինում եք հարկով։ Մենք վորոշ չափով պետք ե անփոփոխ թողնենք տնտեսական շրջանառության ազատությունը,—այս անկասկած ե։ Սրա տնտեսական պայմանները պետք ե հաշվի առնել ու ստուգել։ Ուստի և IX համագումարի բանաձևի վերացումը մեզ, իհարկե, նորից հասցնում ե այն վիճակին, վոր այն խնդիրը, վոր կարծեք թե փակվել եր, վորոշ չափով մնում ե բաց։ Սակայն այս լիովին անխուսափելի յե։ Այս անուշադիր թողնել՝ նշանակում ե հիմնովին փչացնել տնտեսական քաղաքականության այն հարաբերությունները, վոր մատնանշել ենք մենք, և վորոնք, անկասկած, ավելի ընդունելի յեն գյուղացիների համար։

Վոր պարենի մասնատրումը հարկով փոխարինելը տնտեսական քաղաքականություն ե, վոր ավելի ընդունելի յե գյուղացիների համար, այս կետի նկատմամբ, ըստ յերևույթին, այս համագումարում յերկու կարծիք չկա, և յերկու կարծիք չկա ընդհանրապես կոմունիստների մեջ էլ։ Այս մասին մի շարք հայտարարություններ ունենք անկուսակցական գյուղացիության կողմից էլ։ Այս միանգամայն հաստատված փաստ ե։ Արդեն հենց միայն սրա համար մենք պետք ե համաձայնենք այսպիսի փոփոխության։ Ուստի և կոոպերացիայի մասին բանաձևը յես մի անգամ էլ եմ հայտարարում. «Նկատի ունենալով վոր Ռ. Կ. Կ. IX համագումարի բանաձևը կոոպերացիայի վերաբերմամբ ամբողջովին կառուցված ե պարենի մասնատրման սկզբունքն ընդունելու վրա, վորն այժմ փոխարինվում ե բնահարկով, Ռ. Կ. Կ. X համագումարը վորոշում ե.

Հիշյալ բանաձևը վերացնել։ Համագումարը Կ. Կ-ին հանձնարա-

րում է մշակել և կուսակցական ու խորհրդային կարգով իրականացնել վորոշումներ, վորոնք բարելավեյին ու զարգացնեյին կոոպերատիվների կազմությունն ու գործունեյությունը Ռ. Կ. Կ.-ի ծրագրի համաձայն և հարմարեցնելով պարենի մասնատրումը բնահարկով փոխարինելուն»։

Յես Կ. Կ.-ի անունից առաջարկելու չեմ համագումարին ընդունել առաջին բանաձևը—պարենի մասնատրումը հարկով փոխարինելու նախնական նախագիծը,—հիմնականում հավանություն տալ դրան և կուսակցության Կ. Կ.-ին հանձնարարել համաձայնեցնել, մշակել ու Հ. Ռ. Կ Գ. Կ. մտցնել, այլև ընդունել կոոպերատիվների մասին յեղած յերկրորդ բանաձևն էլ։

Այժմ յես անցնում եմ այն նկատողություններին, վոր այստեղ արվեցին։ Պետք է ասեմ, վոր իմ ստացած տոմսերի հարցերն այնքան շատ են, տոմսերն այնպիսի սար են կազմում, վոր յես վոչ միայն չեմ կարող թվել այն բոլոր հարցերը, վոր նրանք շոշափում են, այլև հարկադրված եմ միանգամայն հրաժարվել այս բոլոր հարցերն այնպես խմբավորելու խնդրից, վոր նույնիսկ հնարավոր լիներ նրանց առթիվ այժմ գեթ զրույց շարունակել։ Ցավոք սրտի յես հարկադրված եմ այս անելուց հրաժարվելու և տոմսերը պահում եմ իբրև նյութ՝ խնդրի հետագա քննության համար։ Այս տոմսերը թերևս հաջողվի ավելի մանրամասն օգտագործել մամուլի համար կամ գոնե հավաքել ու խմբավորել այնպես, վոր մանրամասն և իրոք լիակատար ամփոփում տրվի այն բոլոր եկոնոմիստ, ադմինիստրատոր ու քաղաքական ղեկավար ընկերներին, վորոնք պետք է մոտիկից զբաղվեն պարենի մասնատրումը հարկով փոխարինելու օրենքների պատրաստման գործով։ Յես կարող եմ այժմ միայն յերկու հիմնական վտակներ զատել ու մատնանշել և մի քանի խոսք ասել յերկու հիմնական առարկությունների կամ նկատողությունների մասին, այն խնդիրների յերկու հիմնական տիպերի կամ խմբերի մասին, վորոնք հարուցված են տոմսերում։

Առաջինն այն մատնանշումն է, վոր արվում է տեխնիկայի նկատմամբ։ Մի շարք բազմաթիվ ու մանրամասն ցուցումներ այն մասին, թե ինչպես դժվար է լինելու և թե վորքան բազմաթիվ չվճռված խնդիրներ են ծագում այս ձեռնարկումները կյանքում կոնկրետ կերպով իրականացնելիս։ Յես իմ առաջին զեկուցման մեջ արդեն վերապահությամբ ասել եմ, վոր այս կարգի ցուցումները միանգամայն անխուսափելի յեն, և վոր այժմ վոչ մի հնարավորություն չկա միանգամից իմանալու, թե ինչպես պետք է դիմենք այս դժվարությունները վճռելուն։

Յերկրորդն ընդհանուր ցուցում է, վոր արդեն վերաբերում է տընտեսական քաղաքականության հիմունքներին։ Յեվ այն, ինչ վոր այս-



տեղ շատերը, կամ արտահայտված հռետորների նույնիսկ մեծամասնությունն ասում եյին իրենց ճառերում, և վոր մատնանշում են տրված տոմսերը,—մանր բուրժուազիայի ու կապիտալիզմի անխուսափելի հզորանալն է։ Այսպիսով դուք,—գրում եյին մի քանիսն իրենց տոմսերում,—դռները կրնկի վրա բաց եք անում բուրժուազիայի, մանր արդյունաբերության զարգացման, կապիտալիստական հարաբերությունների զարգացման հանդեպ։ Այս առթիվ յես պետք է ասեմ, ընկերներ, կրկնելով վորոշ չափով այն, ինչ վոր ասել եմ իմ առաջին զեկուցման մեջ. վոչ մի կասկած չկա, վոր անցումը կապիտալիզմից դեպի սոցիալիզմ մտածելի չէ զանազան ձևերով, նայած թե յերկրում մենք ունենք արդեն խոշոր կապիտալիստական հարաբերությունների գերակշռություն, թե այստեղ գերակշռում է մանր տնտեսությունը։ Յեվ այս կողմից, յես պետք է նկատեմ, վոր հռետորներից վոչ վոք, և տոմսերից վոչ մեկը (յես, այնուամենայնիվ, դրանց մեծ մասը կարդացել եմ, իսկ դրանք մի քանի տասնյակ եյին) չէր քննադատում այս թեզիսները։ Յեթե մենք ունենայինք այնպիսի պետություն, վորտեղ գերակշռում է խոշոր արդյունաբերությունը, կամ, ասենք նույնիսկ, վոչ թե գերակշռում է, այլ շատ սաստիկ զարգացած է արդյունաբերությունը և շատ զարգացած է խոշոր արտադրությունը հողագործության մեջ, այն ժամանակ ուղղակի անցումը դեպի կոմմունիզմ հնարավոր է։ Առանց դրա՝ անցումը դեպի կոմմունիզմ անհնարին է տընտեսապես։ Ընկեր Միլյուտինն այստեղ խոսում էր այն մասին, վոր մենք ունեյինք մի բարեկազմ սիստեմ, և վոր մեր օրենսդրությունը,—ինչպես նա արտահայտվեց,—այսպիսի անցման վորոշ չափով բարեկազմ սիստեմ է, սակայն այս սիստեմը նկատի չուներ մանր բուրժուազիային մի շարք զիջումներ անելու անհրաժեշտությունը։ Այս ասելով՝ ընկեր Միլյուտինն այն յեզրակացությունը չարեց, ինչ վոր յես եմ անում։ Այն բարեկազմ սիստեմը, վոր ստեղծվել էր, թելադրել եյին ռազմական և վոչ թե տնտեսական պահանջները, նկատառումներն ու պայմանները։ Թելադրել եյին այն անլուր քայքայման պայմաններում, վորոնց մեջ գտնվում եյինք, յերբ հարկադրված եյինք, մեծ պատերազմներից հետո, մի շարք քաղաքացիական պատերազմների բեռը կրել։ Ուրիշ յելք չկար։ Այո, վորոշ քաղաքականություն կիրառելիս վորոշ սխալներ յեղել են, մի շարք չափազանցություններ յեղել են,—այս միանգամայն վորոշակի պետք է ասել։ Սակայն հիմնականում, պատերազմի այն պայմաններում, վորոնց մեջ մենք դրված եյինք, այս քաղաքականությունն ուղիղ էր։ Մենք ուրիշ վոչ մի հնարավորություն չունեյինք, բացի մոնոպոլիան առավելագույն չափերով անհապաղ կիրառելուց, վորի ժամանակ մենք առնում եյինք մինչև անգամ բոլոր ավելցուկները, թեկուզ առանց վորևէ փոխհատուցման։

Յեվ այս խնդրին այլ կերպ մոտենալ չեյինք կարող։ Այս չեր նշանակում տնտեսական բարեկազմ սիստեմ։ Այս մի միջոց եր, վոր ծնունդ եր առել վոչ տնտեսական պայմաններից, այլ մեծ մասամբ մեզ թելադրել եյին ռազմական պայմանները։ Ինչ վերաբերում ե տնտեսական նկատառումներին, ապա այստեղ հիմնական նկատառումն այժմ — արդյունքների քանակը մեծացնելն ե։ Մենք գտնվում ենք գլխավոր արտադրող ուժերի — գյուղացիների ու բանվորների այնպիսի աղքատացման, քայքայման, գերհոգնածության և հյուծման պայմաններում. վոր ժամանակավորապես ամեն ինչ պետք ե յենթարկենք այս հիմնական նկատառումին — այն ե՝ արդյունքների քանակը մեծացնել՝ ինչ գնով ուզում ե լինի։

Ինձ հարց են տալիս. պարենի մասնատրումը հարկով փոխարինելն ինչ առնչություն ունի ցանքսի այն պայքարի (կամպանիայի) հետ, վորը մղվում ե այժմ, և ընկերները տոմսերով աշխատում են այստեղ մերկացնել մի շարք հակասություններ։ Յես կարծում եմ, վոր այստեղ, հիմնականում գոյություն ունի տնտեսական համաձայնեցված դրություն և վոչ թե հակասություն։ Ցանքսի պայքարը նկատի ունի մի շարք միջոցներ, վորոնք առավելագույն չափերով կօգտագործեյին բոլոր տնտեսական հնարավորությունները՝ ցանքսի քանակը մեծացնելու նպատակով։ Սրա համար հարկավոր ե վերաբաշխել սերմերը, պահպանել ու փոխադրել։ Սակայն մենք սերմացուի ֆոնդի նույնիսկ այսքան աղքատիկ ֆոնդ ունենալով՝ չենք կարող սերմացուն փոխադրել։ Ամեն քայլափոխում հարկ ե լինում փոխօգնության մի շարք միջոցների դիմելու, վորպեսզի կահույքի (ինվենտար) ապշելի պակասի պայմաններում թերացանքսը նվազեցնենք, վորպեսզի վերջինս վերացնենք։ Մի շարք նահանգներում այս մասին հարկ չի լինիլ մտածելու։ Յեթե անկուսակցական գյուղացին, վորը շատ ու շատ դեպքերում ինքն եր հրապարակ հանում պարենի մասնատրումը հարկով փոխարինելու պահանջը, այս փոխարինման շնորհիվ դրդապատճառ կունենա իր տնտեսությունը զարգացնելու տվյալ տնտեսական հիմքի վրա, յեթե նա նախքան գարնանային պայքարն արդեն լսել ե պետական իշխանության կողմից հայտարարություն այն մասին, վոր այս փոխարինումը վճռական ե և այս պետք ե իրագործվի, — արդյոք այս հակասում ե ցանքսի պայքարի ընդհանուր քաղաքականությանը։ Վոչ, չի հակասում։ Իսկ այս մի միջոց ե, վորը խրախուսանքի տարր ե մտցնում։ Վոր շոգենավերն ածուխ ու պարենի փոքրիկ քանակ բարձած՝ դուրս են գալիս Անգլիայից, այս՛ մենք գիտենք։ Գիտենք, վոր նախքան առևտրային դաշնագիր կնքելը, վորը դեռևս չի ստորագրված, առևտուր ե կատարվում առանձին առևտրականների հետ, վորոնց, ինարկե, բուրժուական կառավարությունը չի կարող արգելել, վոր առևտուր անեն



մեզ հետ։ Դժվար գործ ե ճեղք բաց անել տնտեսական համապաշարման (բլոկադա) այն օղակի մեջ, վորում գտնվում ենք, և մենք, ինարկե, չենք կարող խոստանալ վորևե այլ ընդարձակ միջոց։ Համենայն դեպս, ինչ վոր կարելի յե անել, մենք անում ենք, այս տեսակետից ներմուծման պլանի փոփոխություն մենք կատարում ենք։

Մանր տնտեսատիրոջ, մանր հողագործի տեսակետից հարկը, վոր պարենի մասնատրումից ավելի փոքր գումարով ե սահմանվելու, վորը վորոշվելու յե ավելի մեծ ճշտությամբ և վորը նրան հնարավորություն կտա ավելի ցանելու, նրան հնարավորություն կտա վստահ լինելու, վոր ավելցուկները կգործադրվեն տնտեսությունը բարելավելու նպատակով, — ջանասեր տնտեսատիրոջն առավելագույն չափով ոժանդակելու գիծն ե այս, վոր առաջ եր մղվում ցանքսի պայքարի ժամանակ ել։ Վերջիվերջո բոլոր առարկությունները վերածվում են այսպիսի մի հարցմունքի. արդյոք ավելի օգտվում ե մանր բուրժուազիան, վոր տնտեսապես թշնամի յե կոմմունիզմին, թե՛ ավելի օգտվում ե խոշոր արդյունաբերությունը, վորը սոցիալիզմին անցնելու հիմքն ե կազմում և վորը, արտադրական ուժերի կացության տեսակետից, այսինքն ամբողջ հանրային զարգացման հիմնական չափանիշի տեսակետից, հանդիսանում ե սոցիալիստական տնտեսական կազմակերպության հիմքը՝ միացնելով առաջավոր արդյունաբերական բանվորներին, միացնելով այն դասակարգը, վոր իրականացնում ե պրոլետարիատի դիկտատուրան։

Այստեղ միքանիսը փորձում եյին ասել կամ տնտեսագիտորեն յեզրակացնել, վոր անկասկած ավելի օգտվում ե մանր բուրժուազիան, տնայնագործական ապրանքային արտադրությունը, և հատկապես փորձում եյին այս հիմնավորել այն տեսակետից, վոր հենց խոշոր արդյունաբերությունը, շնորհիվ կոնցեսիաների, կլինի վոչ-սոցիալիստական։ Յես կարծում եմ, վոր այս դատողությունների մեջ տնտեսական հիմնական անճշտություն կա։ Յեթե նույնիսկ միանգամայն ճիշտ ապացուցված ե, վոր համեմատաբար ու նույնիսկ, յենթադրենք, բացարձակորեն շատ ավելի օգտվում ե մանր արդյունաբերությունն, ապա այս ամենևին չի հերքում վոչ թեորիապես, վոչ ել գործնականապես մեր ձեռնարկած քայլերի ճշտությունը։ Յեզրակացությունն այն ե, վոր այլ հենարան չի կարող լինել սոցիալիստական շինարարության մեր ամբողջ գործը տնտեսապես ամրապնդելու համար։ Այժմ յենթադրենք, լոկ օրինակի համար, — յես այս վերցնում եմ ակնառու կերպով պարզաբանելու նպատակով, — վոր մանր արդյունաբերությունն արտահայտվում ե 100-ի մեծությամբ (արդյոք այս 100 միլիոն աշխատավորական միավո՞ր ե, թե վորևե այլ բանի 100 միավոր, միևնույն ե), իսկ խոշորը՝ 200 թվով։ Օրինակի համար, յենթադրենք, վոր կապիտա-

լիստական հիմքի վրա մանր-արդյունաբերությունն աճում է և ն պանում 175-ի հասնող մի մեծություն, իսկ խոշորը մնում է միայն 200: Յենթադրենք խոշոր արդյունաբերության լճացում ու մանրի վիթխարի զարգացում: Յես նույնիսկ կարծում եմ, վոր այս վատթարագույն յենթադրությունն է, վոր յես արի, սակայն այս էլ, անկասկած, ձեռնտու յերևույթ կհանդիսանար մեզ համար:

Անցնենք կոնցեսիաներին: Կոնցեսիաների բնույթը պետք է պարզ պատկերացնել: Այս մի տնտեսական պայմանագիր է առաջավոր յերկրների, առաջավոր ֆինանսական կապիտալի հետ, մի պայմանագիր, վորի հետևանքը կլինի արդյունքների փոքրիկ մեծացում, բայց և կոնտրագենտների արդյունքների մեծացում էլ: Յեթե մենք հանքանյութը կամ անտառը տանք կոնցեսիոներին, նա այս արդյունքից վիթխարի բաժին կառնե իրեն և մեզ փոքրիկ բաժնեմաս կտա: Սակայն մեզ համար կարևոր է ընդհանրապես արդյունքների քանակը մեծացնելը, ուստի և փոքրիկ բաժնեմասը, այնուամենայնիվ, պլյուս է մեզ համար:

Այսպես, ուրեմն, հիմք չկա վախենալու այն բանից, վոր մանր հողագործությունն ու մանր արդյունաբերությունը կպարգավաճեն այն աստիճան, վոր կարող կլինեն վտանգավոր հանդիսանալ մեր խոշոր արդյունաբերության համար:

Յեթե մեզանում անբերրիություն լինի (յես արդեն մատնանշել եմ Պոպովի բրոշյուրը), յեթե մենք անբերրիություն ունենանք և նույնպիսի տգքատիկ միջոցներ, ինչպես է անցյալ տարի, ապա խոսք էլ չի կարող լինել կրիզիսի վորևէ նվազման մասին ու մանր արդյունաբերության զարգացման մասին: Այն խնդիրը, թե արդյոք մանր արդյունաբերությունն է ավելի ոգտվում, թե խոշորը, մեր ֆոնդի ու շուկայի զարգացման այն ոգտագործումը միավորելու ու համադրելու խնդիրն է, վորին մենք հասնում ենք կապիտալիզմի հետ համաձայնության գալով, կոնցեսիաների միջոցով, իսկ սրա հետևանքն այն կլինի, վոր մեր գյուղատնտեսական արտադրությունը կմեծանա: Թե մեզանից ով ավելի կոգտագործե այս միջոցները, սրանից էլ կախված են հենց հետևանքներն էլ: Յես կարծում եմ, վոր բանվոր դասակարգն իր ձեռքում ունենալով խոշոր արդյունաբերության ամենակարևոր ճյուղերը, յեթե իր ուշադրությունը կենտրոնացնե սրանցից ամենից ավելի կարևորների վրա, ապա նա կոգտվի ավելի, քան ոգտվում է մանր արդյունաբերությունը, թեկուզ վերջինս համեմատաբար ավելի արագ էլ աճեր: Մեզանում մանածագործական արդյունաբերության դրությունն այնպես էր, վոր 1920 թվի վերջերքին անկասկածելի բարելավումներ էր նկատվում, սակայն վառելիքը պակասում էր, և յեթե մենք բավականաչափ վառելիք ունենայինք, ապա մինչև 800 միլիոնի գործվածք կստանայինք և կունենայինք սեփական արտադրության նյութ



գյուղացիական արդյունքների հետ փոխանակելու համար: Սակայն, վառելիքի կրիզիսի հետևանքով, մեր արտադրությունը վիթխարի չափերով ընկել է: Յեթե այժմ ածխի գնում կատարվում էլ է արտասահմանում, և մենք մի շաբաթից հետո կամ յերկու շաբաթից հետո ածուխ բարձած շոգենավեր կստանանք, մենք, միևնույն է, արդեն կորցրել ենք միքանի շաբաթ կամ նույնիսկ ամիսներ:

Խոշոր արտադրության վիճակի ամեն բարելավումը, միքանի խոշոր ֆաբրիկաները գործի գցելու հնարավորությունն այնքան կամրապնդե պրոլետարիատի դրությունը, վոր կարիք չկա վախենալու մանր բուրժուազիայի տարերքից, յեթե վերջինս նույնիսկ աճելու լինի: Վոչ թե այն բանից պետք է վախենալ, վոր մանր բուրժուազիան ու մանր կապիտալը կաճեն ու կզորանան, պետք է վախենալ այն բանից, վոր չափազանց յերկար է շարունակվում կարիքի, արդյունքների պակասության վիճակը, վորից բղխում է արդեն պրոլետարիատի թուլացումը, այն, վոր հնարավորություն չի ունենալ դիմադրելու մանր բուրժուական տատանումների տարերքին: Արդյունքների քանակը մեծացնելու դեպքում մանր բուրժուազիայի վոչ մի զարգացում չի կարող մեծ մինուս լինել, վորչափով վոր այս հնարավոր է դարձնում խոշոր արդյունաբերության զարգացումը, և մենք պետք է խրախուսենք մանր գյուղական տնտեսությունը: Այն բոլորը, ինչ մենք կարող ենք անել գյուղական տնտեսությունը խրախուսելու համար, մենք պարտավոր ենք անելու: Այս տեսակետից հարկը մի համեստ միջոց է, սակայն մեկն է անկասկածելի միջոցներից, վորը կխրախուսե գյուղական մանր տնտեսությունը, և վորն անպայման պետք է ընդունել:

«Ռ. Կ. Կ. X Համագումար».
Ստենոգրաֆիական հաշվետվություն.
Պետհրատ, 1921 թ. (Ռուսերեն հրատարակություն):

## ՌԿԿ ՏԱՔՏԻԿԱՆ

**(Կոմինտերնի III կոնգրեսում 1921 թ. հուլիսի 5-ին արած զեկուցումից)**

Սոցիալիզմի խնդիրն է հանդիսանում դասակարգերի վոչնչացումը: Շահագործողների դասակարգն առաջին հերթին բաղկացած է խոշոր հողատերերից և կապիտալիստ արդյունաբերողներից: Այստեղ վոչնչացման աշխատանքը շատ հեշտ է և կարող է անցկացվել մի քանի ամիսներում, յեթե վոչ շաբաթներում: Ռուսաստանում մեր կալվածատերերին ու կապիտալիստներին մենք ամբողջովին յենթարկել ենք եքսպրոպրիացիայի: Բացի շահագործողների այդ դասակարգից համարյա բոլոր կապիտալիստական յերկրներում, բացառությամբ

գուցե Անգլիայի, գոյություն ունեն նաև մանր ապրանքաարտադրողների և մանր հողագործների դասակարգեր: Հեղափոխության գլխավոր հարցն է հանդիսանում պայքարն այդ յերկու դասակարգերի դեմ: Նրանցից ազատվելու համար հարկավոր է կիրառել այլ մեթոդներ, քան խոշոր կապիտալիստների ու կալվածատերերի վերաբերմամբ: Պարզ էքսպրոպրիացիան ու արտաքսումն այստեղ չեն կարող տեղի ունենալ: Այն ժամանակաշրջանի նշանակությունը, վորն այժմ Ռուսաստանում սկսվում է միջազգային տեսակետից, յեթե քննելու լինենք միջազգային հեղափոխությունն իբրև միասնական պրոցես, այդ ժամանակաշրջանի նշանակությունը կայանում է նրանում, վոր մեր առաջ գործնականորեն ծառացած է մի հարց, վորը պրոլետարիատի հարաբերությունների լուծման խնդիրն է շոշափում դեպի վերջին կապիտալիստական դասակարգը: Թեորետիկորեն այդ հարցը բոլոր մարքսիստները լուծել են հեշտ ու լավ: Բայց թեորիան ու պրակտիկան յերկու տարբեր բան են:

Առաջին անգամն է պատմությունում, վոր պետության մեջ գոյություն ունեն միայն յերկու դասակարգ—պրոլետարիատը և գյուղացիությունը: Գյուղացիությունը կազմում է բնակչության ահագին մեծամասնությունը: Նա, իհարկե, սաստիկ հետամնաց է: Հարցը հանգում է նրան, թե ով պիտի ղեկավարե գյուղացիությանը՝ պրոլետարիատը, թե՞ բուրժուազիան: Մենք դաշինք ենք կնքել գյուղացիության հետ. պրոլետարիատը ազատագրում է գյուղացիությանը շահագործումից և բուրժուազիայի ազդեցությունից, գյուղացիությունը միավորվում է պրոլետարիատի հետ միատեղ հաղթություն վաստակելու շահագործողների վրա: Մենշևիկներն ասում են. գյուղացիությունը մեծամասնություն ունի, մենք անխառն դեմոկրատներ ենք, մեծամասնությունը պիտի վճռե: Բայց քանի վոր գյուղացիությունն ինքնուրույն չէ, ապա դա գործնականորեն հանգում է կապիտալիզմի վերականգնման: Սակայն վճիռը սկզբունքի մեջ նույնն է.—դաշինք գյուղացիության հետ:

Յերբ մենք խոսում ենք դաշինքի մասին, մենք այդ պայմանի տակ հասկանում ենք և պրոլետարիատի ամրացումը: Մեր դաշինքի առաջին ստադիան ռազմական դաշինքն էր: Պատերազմը շահագործողների դեմ, կալվածատերերի դեմ գյուղացիությանը հեշտ էր հասկանալի: Գյուղացիությունն իր ահագին մասսաներով մեր կողմն էր. չնայելով բնակչության հսկայական անգրագիտության՝ մեր պրոպագանդան հեշտությամբ ընդգրկեց նրան: Դա ցույց է տալիս, վոր ահագին մասսաներն առավել շատ սովորում են գործնական իրականության, քան թե գրքերի վրա: Սիբիրում և Ուկրայինայում հակահեղափոխությունը ժամանակավոր հաղթություն տարավ նրա համար,



վոր բուրժուազիան այնտեղ իր կողմից գյուղացիությունն ուներ: Բայց արդեն կարճ ժամանակում գյուղացիների աչքը բացվեց և նրանք ասացին. բոլշևիկները—«բավականաչափ անհաճելի» հասարակություն են, բայց համենայն դեպս նրանք ավելի յեն լավ, քան սպիտակ գվարդիականները և Հիմնադիր Ժողովը: Նրանք գործնական փորձից ճանաչեցին, վոր Հիմնադիր Ժողովի կողմից սպիտակ գվարդիականներն են գալիս, իսկ վերջիններս իրանց կողմից կալվածատերերին են բերում: Մենշևիկները նույնպես օգտագործում են այդ դաշինքի փաստը, սակայն հաշիվ չտալով իրանց այն մասին, թե մեն միայն դաշինքը բավ չէ: Ռազմական դաշինքն առանց տնտեսականի չի կարող գոյություն ունենալ: Մեր դաշինքը գյուղացիության հետ առանց տնտեսական պատվանդանի վոչ մի դեպքում չէր կարող յերկար տևել և առանց նրան մենք չէյինք դիմանա բուրժուազիայի դեմ մղված պատերազմին: Այդ տնտեսական դաշինքը մեր ու գյուղացիության միջև իր հիմքում շատ էր պարզ, շատ էր կոպիտ. գյուղացին մեզնից ստացավ հող և պաշտպանություն կալվածատերերի դեմ, մենք էլ դրա դիմաց պիտի պարեն ստանայինք: Դա բավականին ինքնորինակ մի դաշինք էր, վորը չէր հանգչում ապրանքարտադրողի և ապրանք սպառողի սովորական հարաբերանքների վրա: Մեր գյուղացիներն այդ դրությունն առավել լավ ըմբռնեցին, քան II և $2^1/_2$ Ինտերնացիոնալների հերոսները: Գյուղացիներն իրանց մթերքներն էյին տալիս Կարմիր բանակին և նրանից պաշտպանություն ստանում իրանց տիրության համար: Դաշինքի այդ առաջին ձևը բավականաչափ պրիմիտիվ էր, մենք շատ սխալներ արինք, բայց մեզ հարկավոր էր ըստ հնարավորին արագ գործել, մենք պիտի կազմակերպեյինք պարենային մատակարարում:

Քաղաքացիական պատերազմից հետո մեր խնդիրն այլ դարձավ: Յեթե յերկիրն այնպես քայքայված չլիներ անընդհատ յոթնամյա պատերազմից՝ փոխանցումը պրոլետարիատի և գյուղացիության դաշինքի նոր ձևին համենայն դեպս ավելի հեշտ կլիներ: Այդ առանց այն էլ ծանր հանգամանքներին ավելացան անբերրիությունները, կերի պակասը. գյուղացիության վիճակն անտանելի դարձավ և մենք պետք է անհապաղորեն մի վորևե բան ձեռնարկեյինք, վորպեսզի պարզորեն ցույց տայինք գյուղացիության խոշոր մասսային, թե մենք պատրաստ ենք հեղափոխական կարգով փոփոխել մեր քաղաքականությունը: Այս կերպ մենք հանգեցինք մեր տնտեսական քաղաքականության փոփոխմանը—պարենի մասնատրումը փոխարինեցինք պարենհարկով: Մենք միշտ ասել ենք, թե հեղափոխությունը զոհեր է արժենում: Մի պրոպագանդա, վոր չի պարզաբանում այդ հանգամանքը, կոմմունիստական չէ, հեղափոխական չէ. ամեն մի հեղափո-

խությունն մեծ զոհեր է նշանակում այն դասակարգի համար, որը կատարում է այն: Հեղափոխությունը սովորական պայքարից նրանով է տարբերվում, որ շարժման մեջ մասնակցում են հարյուրապատիկ ավելի շատ մարդ և նրան զոհեր են տալիս ոչ միայն առանձին անհատներ, ոչ միայն կուսակցություններ, այլ և դասակարգն իր ամբողջությամբ: Պրոլետարիատի դիկտատուրան Ռուսաստանում նշանակում է այնքան զոհեր, կարիք և զրկանքներ տիրապետող դասակարգի. պրոլետարիատի համար, ինչ յերբեք չի յեղած պատմության մեջ: Սկզբում բանվոր դասակարգը հսկայական զրկանքներ էր կրում: Տարեց տարի մեր պարենավորման քաղաքականությունն ավելի մեծ հաջողություններ էր անում և ընդհանուր առմամբ դրությունն անտարակուսելիորեն լավացավ, բայց ռուսական գյուղացիությունը հեղափոխությունից առավել շատ շահեց, քան բանվոր դասակարգը: Դրանում ոչ մի տարակուսանք չկա: Թեորետիքորեն դա, իհարկե, նշանակում է, թե մինչև որոշ մոմենտ մեր հեղափոխությունը բուրժուական էր: Յերբ Կաուցկին այդ պատճառաբանությունն է գործադրում մեր դեմ, ապա միայն ծիծաղել է մնում: Միանգամայն բնական է, որ առանց կալվածատերերի էքսպրոպրիացիայի, առանց հողի բաշխման դա կլիներ բուրժուական, այլ ոչ սոցիալական հեղափոխություն: Բայց մենք միակ կուսակցությունն էինք, որ իր վախճանին հասցրինք բուրժուական հեղափոխությունը և հեշտացրինք պայքարը սոցիալականի համար: Խորհրդային իշխանությունը և խորհրդային սիստեմը, որ մենք ենք իրագործել, սոցիալիստական պետության հաստատություններ են: Ինչպես վերն յես արդեն ասացի՝ ընդհանուր առմամբ բարելավում տեղի ունեցավ գյուղացիության վիճակում և դա ի հաշիվ բանվոր դասակարգի այն պատճառով, որ դիկտատուրան պրոլետարիատի ձեռքին է գտնվում: Առանց գյուղացիական մասսաների, առանց նրան, որպեսզի լավ հարաբերությունների մեջ գտնվենք նրանց հետ, մենք գոյություն ունենալ չեյինք կարող: Յեվ այժմ, յերբ գյուղացիության վիճակը վատթարացել է, մեր անելիքն է օգնության հասնել նրան: Բանվորների համար դա նշանակում է նոր զրկանքներ, բայց նրանք հանդիսանում են միակ քաղաքականորեն զարգացած տարրը և բանվոր դասակարգի լավագույն խավերը հասկացել են, թե պրոլետարիատի դիկտատուրայի շահերի տեսակետից անհրաժեշտ է մեծագույն լարումն նրա համար, որպեսզի ինչ գնով էլ լինի օգնենք գյուղացիությանը: Բանվոր դասակարգի, անգամ նրա ավանգարդի առանձին մասերը չհասկացան այդ: Նրանք դրա մեջ սխալ տեսան, այդ օպպորտյունիզմ անվանեցին: Գյուղացին մեր շահագործողն է, ասում եյին նրանք, ստանում է այն բոլորը, ինչ նա կամենում է, իսկ բանվորները քաղցում են: Միթե



սա օպպորտյունիզմ չէ: Բայց յեթե դաշինք չլինի գյուղացիության հետ՝ անհնարին է պրոլետարիատի քաղաքական իշխանությունը: Սա մեզ համար վճռականն էր: Բնական միջոցը օգնության հասնելու գյուղացիությանը՝ փոխանցումն էր բնահարկին: Այն դեռ գործնականորեն չի փորձված, բայց դա մեզ համար թեորետիքական միակ հնարավորությունն է սոցիալիստական հասարակության իսկապես հաստատ տնտեսական պատվանդանին հանգելու մի յերկրում, ուր մանր գյուղացիությունը բնակչության մեծամասնությունն է կազմում:

Ճիշտ է, բնահարկը նշանակում է, իհարկե, առևտրի ազատություն: Առևտրի ազատությունը նշանակում է կապիտալիզմի ազատություն: Մենք այս հրապարակով ենք ասում, ամենևին չծածկելով:

Բայց սա արդեն կապիտալիզմի նոր ձևն է—պետական կապիտալիզմի: Պետական կապիտալիզմ մի հասարակության մեջ, ուր տիրապետում է կապիտալիզմը, և պետական կապիտալիզմը պրոլետարական պետության մեջ—յերկու տարբեր հասկացողություններ են: Առաջին դեպքում դա նշանակում է, թե կապիտալիզմը ճանաչվում է և պետության կողմից վերհսկվում բուրժուազիայի շահերի համար ընդդեմ պրոլետարիատի: Բայց յերկրորդ դեպքում դա տեղի է ունենում բանվոր դասակարգի շահերի համար:

## ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՈՒ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԵԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՁՈԴՄԱՆ ՄԱՍԻՆ

**(ՌԿԿ XI Համագումարում ՌԿԿ ԿԿ գործունեյության մասին արած զեկուցումից)**

Շրջադարձը պիտի նոր տնտեսական քաղաքականությունը վճռված էր անցյալ համագումարում մի արտակարգ միաբանությամբ, անգամ ավելի մեծ միաբանությամբ, քան մյուս հարցերի լուծման օրինակները մեր կուսակցության կողմից (որը, պետք է խոստովանել, առհասարակ աչքի չի ընկնում մեծ միաբանությամբ):

Այդ միաբանությունը ցույց տվավ, թե բացարձակորեն հասունացել է նոր մոտեցումի անհրաժեշտությունը դեպի սոցիալիստական եկոնոմիկան:

Մարդիկ, որոնք տարակարծիք էյին շատ հարցերի մեջ, տարբեր տեսակետներից էյին գնահատում դրությունը, միաբանորեն և շատ արագ, առանց որևէ տատանումների հանգեցին նրան, թե մենք իսկական մոտեցում դեպի սոցիալիստական եկոնոմիկան, դեպի նրա պատվանդանի կառուցումը—չունենք, և որ կա միակ յեղանակը գտնելու այդ մոտեցումը, դա—նոր տնտեսական քաղաքականությունն

է: Մեզ վիճակվեց ռազմական դեպքերի զարգացման զորությամբ, քաղաքական դեպքերի զարգացման զորությամբ, հին կուլտուրական արևմուտքում կապիտալիզմի զարգացման զորությամբ և գաղութներում հասարակական ու քաղաքական պայմանների զարգացման զորությամբ,—մեզ վիճակվեց առաջինը լինել, վոր ճեղք բացենք հին բուրժուական աշխարհում և այն մոմենտում, յերբ մեր յերկիրը տնտեսականորեն պատկանում եր յեթե վոչ ամենից հետամնաց, ապա ամենից հետամնաց յերկիրներից մեկի շարքին: Մեր յերկրի գյուղացիության ահագին մեծամասնությունը մանր անհատական տնտեսություն է վարում: Կառուցումը այն բանի, ինչ մենք կարող եյինք մի անգամից իսկ իրագործել կոմմունիստական հասարակայնության նշանառած մեր ծրագրից, հայտնի չափով մեկուսի յեր ընթանում նրանից, ինչ կատարվում եր ընդարձակագույն գյուղացիական մասսայի մեջ, վորի վրա մենք բարդում եյինք շատ ծանր պարհակներ, արդարացնելով այդ նրանով, թե պատերազմն այդ տեսակետից վոչ մի տատանում չի թույլատրում: Յեվ այդ արդարացումը, յեթե այն իր ամբողջ ծավալով վերցնենք, գյուղացիությունն ընդունեց, չնայելով այն սխալներին, վորոնցից մենք խուսափել չկարողացանք: Գյուղացիական մասսան ընդհանրապես տեսավ և հասկացավ, թե այն ահագին ծանրությունները, վոր նրա վրա յեն բարդվում, անհրաժեշտ եյին, վորպեսզի կալվածատերերից պաշտպանել կարելի լինի բանվորագյուղացիական իշխանությունը և խեղդել չտային մեզ կապիտալիստական արշավանքին, վորը սպառնում եր յետ խլել հեղափոխության բոլոր նվաճումները: Բայց զոդում չկար ազգայնացրած, սոցիալիզացիայի յենթարկված ֆաբրիկաներում, գործարաններում, խորհրդային տնտեսություններում կառուցվող եկոնոմիկայի և գյուղացիական եկոնոմիկայի միջև:

Անցյալ գարունքին այդ մենք պարզ տեսանք կուսակցական անցյալ համագումարում: Դա մենք այնքան պարզ տեսանք, վոր կուսակցության մեջ վոչ մի տատանում չկար այն հարցի առթիվ, թե անխուսափելի յե նոր տնտեսական քաղաքականությունը:

Զվարճալի յե մեր այդ վճռի գնահատականը դիտել արտասահմանում գտնվող զանազան ռուսական կուսակցությունների անչափ հարուստ մամուլի մեջ: Տարբերությունն այդ գնահատականների միջև մի չնչին բան է միայն. ապրելով անցյալով նրանք այժմ իսկ պնդում են այն մասին, թե ձախ կոմմունիստները մինչև որս էլ դեմ են նոր տնտեսական քաղաքականության: 1921 թ. մարդիկ հիշել այն, ինչ յեղել է 1918 թ., այն, ինչ ձախ կոմմունիստները մեզ մոտ մոռացել են, և ծամում ու վորոճում այդ մինչև որս, հավատացնելով, թե այդ բայլշևիկները—հայտնի յե, վոր նենգ ու ստախոս մարդիկ են. նրանք



թագցնում են Յեվրոպայից, վոր այստեղ իրանց իսկ մեջ տարաձայնություններ կան: Յերբ կարդում ես այդ,—ապա մտածում ես. թող մոլորվեն: Յեթե նրանք նման պատկերացումներ ունեն այն մասին, ինչ է մեզ մոտ տեղի ունենում, ապա կարելի յե նրանցով դատել այդ իբր թե կրթված հին մարդկանց գիտակցության աստիճանի մասին, վորոնք այժմ արտասահման են ապաստանել:

Մենք գիտենք, թե մենք վորևե տարաձայնություն չենք ունեցել և չենք ունեցել այն պատճառով, վոր բոլորի համար պարզ եր այլ մոտեցումի գործնական անհրաժեշտությունը դեպի սոցիալիստական եկոնոմիկայի պատվանդանի կառուցումը:

Զոդումն գյուղացիական եկոնոմիկայի հետ, այն նոր եկոնոմիկայի հետ, վոր փորձում եյինք մենք ստեղծել, մենք չունեյինք: Կա՞ արդյոք նա այժմ: Դեռ չկա: Մենք նրան միայն մոտենում ենք: ՆԵՊ-ի ամբողջ նշանակությունը, վորը մեր մամուլի մեջ դեռ հաճախ շարունակում են փնտրել ամենուրեք, ուր հաճելի յե, բայց վոչ այնտեղ, ուր հարկավոր է, ամբողջ նշանակությունը նրա մեջ է, միայն նրա մեջ,—գտնել զոդումն այն նոր եկոնոմիկայի, վորը մենք ահագին ճիգերով ստեղծում ենք: Յեվ դրա մեջ է մեր ծառայությունը: Յեվ առանց դրան մենք կոմմունիստ-հեղափոխականներ չեյինք լինի:

Նոր եկոնոմիկան մենք սկսեցինք կառուցել միանգամայն նոր ձևով, վոչ մի հնի հետ հաշվի չնստելով: Յեվ յեթե մենք չսկսեյինք այն կառուցել, ապա մենք գլխովին ջարդված կլինեյինք առաջին իսկ ամիսներում, առաջին իսկ տարիներում: Բայց դա չի նշանակում, թե մենք կառչել ենք նրան, վոր յեթե դա սկսել ենք այնպիսի բացարձակ խիզախությամբ՝ ապա մենք անպատճառ էլ այդպես պիտի շարունակենք: Դա վոչ մի տեղից էլ չի բղխում:

Մենք հենց սկզբից ենք ասել, թե մեզ վիճակվել է անել անչափ նոր գործ և յեթե մեզ արագորեն չօգնեն կապիտալիստական տեսակետից ավելի զարգացած յերկրների ընկեր բանվորները, ապա մեր գործում, անհավատալի դժվար գործում, տեղի պիտի ունենան, անտարակույս, մի շարք սխալներ: Գլխավորը սա յե. հարկավոր է զգաստ նայել իմանալ, թե ուր են թույլատրված նման սխալները և բոլորը վերափոխել սկզբից: Յեթե վոչ յերկու, այլ նույնիսկ շատ անգամ կարիք կլինի ամեն ինչ վերափոխել սկզբից, ապա դա ցույց կտա, թե մենք առանց նախապաշարումների, զգաստ աչքով ենք մոտենում մեր խնդրին, վոր մեծագույնն է աշխարհում:

Այժմ հիմնականն այն է նոր տնտեսական քաղաքականության հարցում, վորպեսզի ուղիղ յուրացնենք անցած տարվա փորձը: Այդ պետք է անել և այդ մենք անել ուզում ենք: Յեվ յեթե ինչ էլ վոր լինի մենք ուզում ենք դրան հասնել (իսկ մենք այդ ուզում ենք և

կըհասնենք), ապա հարկավոր է իմանալ, վոր ՆԷՊ-ի խնդիրը, հիմնականը, վճռականը, բոլոր մնացածն իրան յենթարկող խնդիրը,—դա խնդիր է զոդումն սահմանել այն նոր էկոնոմիկայի, վորը մենք ենք սկսել կառուցել (շատ վատ, շատ անհմուտ, բայց սկսել ենք կառուցել միանգամայն նոր սոցիալիստական էկոնոմիկայի վոգով, նոր արտադրության, նոր բաշխման վոգով), և գյուղացիական էկոնոմիկայի միջև, վորով ապրում են միլիոնավոր ու միլիոնավոր գյուղացիներ: Այդ զոդումը չի յեղել և այդ զոդումը մեզ հարկավոր է նախ և առաջ ստեղծել: Այդ նկատառումին հարկավոր է յենթարկել ամեն ինչ:

Մեզ հարկավոր է դեռ պարզել, թե նոր տնտեսական քաղաքականությունը վորքան է հաջողվել ստեղծելու այդ զոդումը և չկործանել այն, ինչ մենք սկսել ենք անվարժորեն կառուցել: Մենք մեր էկոնոմիկան գյուղացիության հետ ենք կառուցում: Մենք մեկից ավելի անգամ պիտի վերափոխենք այն, բայց վոչ կործանենք մինչև վախճանը, և կառուցենք այնպես, վորպեսզի զոդումն լինի մեր խոշոր արդյունաբերության մեջ տարած սոցիալիստական աշխատանքի և այն աշխատանքի միջև, վորով զբաղված է յուրաքանչյուր գյուղացի և վորը նա վարում է այնպես, ինչպես կարող է, կքած կարիքի տակ, խորը չդատելով (վորովհետև յերբ կարող է նա դատել), նրա համար, վորպեսզի կարողանա խուսափել ու փրկվել տաժանելի սովամահության ուղղակի վտանգից:

Պետք է ցույց տալ այդ զոդումը, վորպեսզի այն պարզ տեսնենք, վորպեսզի ամբողջ ժողովուրդն այն տեսնի և վորպեսզի ամբողջ գյուղացիական մասսան տեսնի, թե այժմ կապ կա նրա ծանր, հլված քայքայում ունեցող, հլված չքավոր, տաժանելի կյանքի և այն աշխատանքի միջև, վորը վարում են հանուն հեռավոր սոցիալիստական իդեալների: Հարկավոր է այնպես անել, վորպեսզի շարքային հասարակ աշխատող մարդը հասկանա, վոր նա վորևե բարելավում է ստացել և ստացել է վոչ այնպես, ինչպես գյուղացիներից քչվորներն էյին ստանում կալվածատիրական իշխանության և կապիտալիզմի ժամանակաշրջանում, յերբ հին կարգի ուղով բարելավման յուրաքանչյուր քայլ (բարելավումներ, անտարակույս, լինում էյին և շատ խոշոր) կապված էր գեղջուկի վրա կատարած ծաղրի, անարգանքի, ծանակի հետ, մասսայի վրա կատարած բռնության հետ, վորը գյուղացիներից վոչ վոք չի մոռացել և Ռուսաստանում տասնյակ տարիներով չի մոռանա: Մեր նպատակն է վերականգնել զոդումը, ապացուցել գյուղացուն, թե մենք սկսում ենք նրանից, ինչ նրան հասկանալի յե, ծանոթ և այժմ մատչելի նրա ամբողջ չքավորության մեջ, վոր չենք սկսում գյուղացու տեսակետից մի ինչ-վոր հեռավոր, ֆանտաստիկ բանից,—ապացուցել, թե մենք գիտենք նրան ոգնել, թե քայ-



քայված, աղքատացած, տաժանելիորեն քաղցող մանր գյուղացու ծանր վիճակի վայրկյանին կոմմունիստները իսկույն և յեթ ոգնում են իրականում: Կամ մենք այդ կապացուցենք, կամ նա մեզ սատանաների մոտ կը ճամբե: Դա միանգամայն անխուսափելի յե, և ահա ինչումն է Նեպ-ի նշանակությունը, ահա ինչումն է մեր ամբողջ քաղաքականության պատվանդանը: Այստեղ է մեր գլխավոր դասը, վոր անցյալ տարի յենք ստացել նոր տնտեսական քաղաքականությունը գործադրելուց, և մեր գլխավոր, այսպես ասած, քաղաքական կանոնը յեկող տարվա համար: Գյուղացին մեզ վարկ է ցույց տալիս և, իհարկե, վերապրածից հետո չի կարող ցույց չտալ: Գյուղացին մասսայականորեն ապրում է համաձայնվելով—«Եհ, յեթե դուք չեք կարողանում, մենք կըսպասենք, գուցե դուք կը սովորեք»: Բայց այդ վարկը չի կարող անսպառելի լինել:

Պետք է իմանալ այս և վարկ ստանալով՝ այնուամենայնիվ շտապել: Հարկավոր է իմանալ, վոր մոտենում է մոմենտը, յերբ գյուղացիական յերկիրը մեզ այլևս վարկ չի տա, յերբ նա, յեթե կարելի յե գործածել առևտրական այս տերմինը, հնչուն դրամով յետ կը պահանջե: «Բայց այժմ, այնուամենայնիվ, այսքան ամիսների ու այսքան տարիների հետաձգումից հետո, դուք շատ սիրելի կառավարիչներ, ձեռք եք բերել ամենաճիշտ, հուսալի յեղանակն ոգնելու մեզ դուրս գալ կարիքից, չքավորությունից, սովից, քայքայումից: Դուք կարող եք, դուք այդ ապացուցել եք»: Ահա թե անխուսափելիորեն վորպիսի քննություն է գալիս մեզ վրա և նա, այդ քննությունը, բոլորը կը լուծե վերջին հաշվով— և Նեպ-ի բախտը, և կոմմունիստական իշխանության բախտը Ռուսաստանում:

Կարող ենք մենք ավարտել մեր անմիջական գործը, թե վոչ: Այդ Նեպ-ը կը հարկավորվի մի վորևե բանի, թե վոչ: Յեթե ճիշտ կը դատվի նահանջը, ապա նահանջելով՝ շաղկապվել գյուղացիական մասսայի հետ և նրա հետ միասին հարյուրապատիկ դանդաղ, բայց հաստատ և անշեղ առաջ ընթանալ, վորպեսզի նա միշտ տեսնի, վոր մենք այնուամենայնիվ առաջ ենք ընթանում: Այն ժամանակ մեր գործը բացարձակորեն անպարտելի կլինի, և աշխարհում վորևե ույժ մեզ չի հաղթի: Դեռ մինչև այսոր, առաջին տարվա ընթացքում, մենք չենք հասել դրան: Դա պետք է ուղղակի ասել: Այդ է իմ համոզումը, և մեր նոր տնտեսական քաղաքականությունը հնարավորություն կտա այդ յեզրակացությունն անել միանգամայն պարզ ու հաստատ: Յեթե մենք յուրացնենք այն ահագին վտանգը, վորը Նեպ-ն է բովանդակում և մեր բոլոր ույժերն ուղղենք թույլ կետերի վրա, այն ժամանակ մենք կը լուծենք այդ խնդիրը:

Շաղկապվել գյուղացիական մասսայի հետ, շարքային աշխատա-

վոր գյուղացիության հետ և սկսել առաջ շարժվել անչափելի, անհունորեն դանդաղ, քան մենք չերազել ենք, բայց դրա փոխարեն այնպես, վոր իսկապես ամբողջ մասսան շարժվի մեզ հետ։ Այդ դեպքում և այդ շարժման արագացումը իր ժամանակ կլինի այնպիսին, վորի մասին մենք այժմ չերազել իսկ չենք կարող։ Իմ կարծիքով սա նեպ-ի առաջին, հիմնական քաղաքական դասն է։

Յերկրորդ, ավելի մասնակի դասը,— դա պետական ու կապիտալիստական ձեռնարկությունների մրցումով ստուգումն է։ Մեզ մոտ այժմ ստեղծվում են խառն ընկերություններ,— յես նրանց մասին մի քիչ կը խոսեմ հետո,— բայց, ընդհանրապես խոսելով, և կազմակերպվող խառն ընկերությունները, և ամբողջ մեր պետական առևտուրը, և ամբողջ մեր տնտեսական քաղաքականությունը— այդ բոլորը մեր, կոմմունիստների կողմից, գործադրումն է առևտրական միջոցների, կապիտալիստական միջոցների, նա ունի և այն նշանակությունը, վոր այստեղ մարմնավորում է կապիտալիստական ցեղանակների գործնական մրցումը։ Համեմատեցեք գործնականորեն։ Մենք մինչև օրս ծրագիր եյինք գրում և խոստանում։ Իր ժամանակ դա միանգամայն անհրաժեշտ եր։ Առանց ծրագրի և խոստումների չի կարելի հրապարակ գալ համաշխարհային հեղափոխությամբ։ Յեթե դրա համար սպիտակգվարդիականները և այդ թվում մենշևիկները հայհոյում են մեզ, ապա դա միայն ցույց է տալիս, թե մենշևիկները և յերկրորդ ու յերկրորդ և կես ինտերնացիոնալների սոցիալիստները վոչ մի հասկացողություն չունեն այն մասին, թե առհասարակ ինչպես է կատարվում հեղափոխության զարգացումը։ Այլ կերպ, քան դրա միջոցով, մենք սկսել չեյինք կարող։ Բայց այժմ կացությունն այնպիսին է, վոր մենք մեր աշխատանքի ստուգումը պիտի արդեն լուրջ հողի վրա դնենք, վոչ այնպես, վոր լինում է նույն կոմմունիստների ձեռքով ստեղծված վերստուգող հիմնարկների միջոցով։ Թեև այդ վերստուգող հիմնարկները հոյակապ լինեյին և թեև նրանք լինեյին և՛ խորհրդային հիմնարկների սիստեմում և՛ կուսակցական հիմնարկների սիստեմում, թեև նրանք լինեյին համարյա թե իդեալական վերստուգող հիմնարկներ, նման ստուգումը ծաղր է գյուղացիական եկոնոմիկայի իսկական պահանջի տեսակետից, բայց դա ամենևին ծաղր չէ մեր շինարարության տեսակետից։ Մենք այժմ ստեղծում ենք այդ վերստուգող հիմնարկները, բայց յես այժմ այդ ստուգման մասին չէ, վոր խոսում եմ, այլ նրա մասին, վորը ստուգումն է հանդիսանում մասսայական եկոնոմիկայի տեսակետից։

Կապիտալիստը գիտեր մատակարարել։ Նա այդ վատ եր անում, նա այդ անում եր կողոպտելով, նա մեզ վիրավորում եր, նա մեզ կողոպտում եր։ Մենք այդ գիտենք, մենք, հասարակ բանվորներս ու



գյուղացիներս, վոր կոմմունիզմի մասին չենք դատում, վոր չգիտենք, թե ինչ բան է դա։

Բայց կապիտալիստներն եյ, նրանք մատակարարել գիտեյին, իսկ դուք կարողանո՞ւմ եք... Իսկ դուք չեք կարողանում։ Ահա թե,— վոչ միշտ պարզ,— ինչպիսի ձայներ եյին լսվում անցյալ տարվա գարունքին, բայց կազմում եյին անցյալ տարվա գարնան ամբողջ կրիզիսի բուն հիմքը։ Ասենք, դուք հիանալի մարդիկ եք, բայց այն գործը, տնտեսական գործը, վորին դուք եք ձեռք զարկել, դուք անել չգիտեք։ Ահա ամենապարզ և ամենասպանիչ քննադատությունը, վորըն անցյալ տարի գյուղացիությունը— իսկ գյուղացիության միջոցով բանվորների մի ամբողջ շարք շերտեր— ուղղում եյին կոմմունիստական կուսակցության դեմ։ Յեվ ահա ինչու նեպ-ի հարցում այդ հին կետն այդպիսի նշանակություն է ստանում։ Ստուգումը իսկականն է։ Կողքին գործում է կապիտալիստը, գործում է կողոպտչաբար, շահույթ է վերցնում, բայց նա կարողանում է։ Իսկ դուք— դուք նոր ձևով եք փորձում. շահույթ դուք չունեք, կոմմունիստական սկզբունքներ, լավ իդեալներ կան և այնպես են նախշած, վոր սուրբ մարդիկ վողջ-վողջ արքայություն եք ուզում գնալ, իսկ գործ անել կարողանո՞ւմ եք... Ահա դիմացեք այսպիսի ստուգման, իսկական ստուգման, վոչ այնպիսի ստուգման, վոր ԿՎՀ կը քննե և պարսավանք կը հանե, իսկ ՀԿԳԿ վարչական պատիժ կը նշանակե— վո՛չ, այլ ժողովրդական եկոնոմիկայի տեսակետից իսկական ստուգման դիմացեք։

Հետաձգումներ կոմմունիստներին տրվել են ամեն կարգի, իսկ վարկ տրվել է այնքան, վորքան չի տրվել վոչ մի ուրիշ կառավարության։ Ինարկե, կոմմունիստները ոգնել են ազատվելու կապիտալիստներից, կալվածատերերից, գյուղացիությունն այդ գնահատում է և նա վարկով հետաձգումներ եր տալիս. բայց բոլորը մինչև մի հայտնի ժամկետ... Յեվ ապա ստուգումն է գալիս. գիտե՞ք դուք արդյոք տնտեսություն վարել վոչ վատ, քան ուրիշները։

## ԳՅՈՒՂԻ ՎՐԱ ԿՈՒԼՏՇԵՖՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(«[illegible]»)

Հարկավոր է սիստեմատիկորեն սատկացնել ժողովրդական ուսուցիչների կազմակերպման գործը, վորպեսզի նրանց դարձնենք բուրժուական կարգի նեցուկից, վորպիսին մինչև օրս նրանք հանդիսանում են առանց բացառության բոլոր կապիտալիստական յերկրներում, խորհրդային կարգի նեցուկ, վորպեսզի նրանց միջոցով գյուղացիությանը յետ կանգնեցնենք բուրժուազիայի դաշինքից և գրավենք նրանց դեպի պրոլետարիատի դաշինքը։

Կարճ եմ նշում, որ դրա համար առանձին դեր պիտի խաղան գյուղի սիստեմատիկ այցելությունները, որոնք, ասենք, մեզ մոտ արդեն կիրառվում են և որոնք պետք է պլանաչափ զարգացվեն։ Նման միջոցների վրա, ինչպես այդ այցելություններն են, ափսոս չէ դրամ ծախսելը, որը մենք միշտ ու գլխովին անտեղի շպրտում ենք պետական ապարատի վրա, որը համարյա ամբողջովին հին պատմական ժամանակաշրջանին է վերաբերում։

Յես նյութեր եմ ժողովել իմ այն ճառի համար, որ չկայացավ 1922 թվականի դեկտեմբերի Խորհուրդների Համագումարում, նյութեր քաղաքային բնակավայրերի բանվորների շեֆության մասին գյուղերի բնակիչների վրա։ Որոշ նյութեր այդ մասին հասցրել է ինձ ընկեր Խոդորովսկին և այժմ յես այդ թեման մշակելու յեմ առաջարկում ընկերներին, քանի որ յես ինքս չկարողացա մշակել այն և հրապարակության տալ Խորհուրդների համագումարի միջոցով։

Այստեղ հիմնական քաղաքական հարցը քաղաքի դեպի գյուղն ունեցած հարաբերանքի մեջ է, որը վճռական նշանակություն ունի մեր ամբողջ հեղափոխության համար։ Այն ժամանակ յերբ բուրժուական պետությունը սիստեմատիկորեն բոլոր ջանքերն է ուղղում այն բանի վրա, որպեսզի բթացնի քաղաքի բանվորներին, պատշաճեցնելով այդ նպատակի համար պետության հաշվին, ցարական ու բուրժուական կուսակցությունների հաշվին հրատարակվող ամբողջ գրականությունը,—մենք կարող ենք և պիտի մեր իշխանությունը գործադրենք նրա վրա, որպեսզի հաջողենք, որ քաղաքային բանվորն իսկապես կոմմունիստական գաղափարների հաղորդիչ դառնա գյուղական պրոլետարիատի համար։

Յես ասացի «կոմմունիստական» և շտապում եմ վերապահում մտցնել, վախենալով թյուրիմացություն առաջացնել կամ խիստ շեշտակի հասկացվել։ Ոչ մի կերպ այդ չի կարելի այնպես հասկանալ, թե իբր մենք միանգամից պիտի զուտ և նեղ կոմմունիստական գաղափարներ տանենք գյուղը։ Քանի որ մենք գյուղում նյութական պատվանդան չունենք կոմմունիզմի համար, մինչև այդ, կարելի յե ասել, դա վնասակար կլինի, կարելի յե ասել, դա կործանարար կլինի կոմմունիզմի համար։

Ոչ։ Սկսել հարկավոր է նրանից, որպեսզի հաղորդակցություն սահմանենք քաղաքի ու գյուղի միջև, ամենևին կանխամտածված նպատակ չդնելով կոմմունիզմ մտցնել գյուղում։ Նման նպատակի այժմ չի կարելի հասնել։ Նման նպատակն անժամանակ է։ Նման նպատակի հետամտումն օգուտի փոխարեն վնաս կբերի գործին։

Բայց հաղորդակցություն սահմանել քաղաքի բանվորների ու գյուղի բանվորների միջև, սահմանել նրանց մեջ ընկերության այն



ձևը, որը հեշտությամբ կարող է նրանց միջև ստեղծվել, դա մեր պարտականությունն է, դա իշխանության գլխին կանգնած բանվոր դասակարգի հիմնական խնդիրներից մեկն է։ Դրա համար պետք է ֆաբրիկա գործարանային բանվորներից հիմնել մի շարք միավորներ (կուսակցական, արհեստակցական, մասնավոր), որոնք իրանց սիստեմատիկ նպատակ դնեյին օգնելու գյուղին նրա կուլտուրական զարգացման մեջ։

Կը հաջողվի՞ արդյոք բոլոր քաղաքային բջիջները «ստորաբաժանել» բոլոր գյուղականների վրա նրա համար, որպեսզի յուրաքանչյուր քաղաքային բջիջ, որը «կցված է» համապատասխան գյուղականին, սիստեմատիկորեն հոգ տանե ամեն մի առթիվ, ամեն մի դեպքում բավարարելու իր համբջիջի այս կամ այն կուլտուրական պահանջը։ Կամ գուցե կհաջողվի կապի ուրիշ ձևեր գտնել։ Յես այստեղ սահմանափակվում եմ միայն հարցի կարգումով, որպեսզի ընկերների ուշադրությունը դարձնեմ նրա վրա, որպեսզի մատնանշեմ Արևմտյան Սիբիրի ունեցած փորձի վրա (այդ փորձի վրա իմ ուշադրությունը հրավիրեց ընկ. Խոդորովսկին) և որպեսզի իր ամբողջ հասակով ցուցադրեմ այդ հսկայական համաշխարհային-պատմական կուլտուրական խնդիրը։

Մենք բացի պաշտոնական բյուջեյից կամ բացի մեր պաշտոնական հարաբերություններից, համարյա ոչինչ չենք անում գյուղի համար։ Ճիշտ է, քաղաքի կուլտուրական հարաբերությունները գյուղի հետ մեզ մոտ ընդունում են և անխուսափելիորեն ընդունում են այլ բնույթ։ Քաղաքը կապիտալիզմի օրով գյուղին տալիս էր այն, ինչ նրան փչացնում էր քաղաքականորեն, տնտեսականորեն, բարոյականորեն, ֆիզիքորեն և այլն։ Քաղաքը մեզ մոտ ինքնին սկսում է տալ գյուղին ուղղակի հակառակը։ Բայց այդ բոլորն արվում է հայտնապես ինքնին, տարերայնորեն, և այդ բոլորը կարելի յե սաստկացնել (և ապա հարյուրապատիկ ընդարձակել), մտցնելով այդ աշխատանքի մեջ գիտակցություն, պլանաչափություն և սիստեմատիկություն։

Մենք միայն այն ժամանակ կսկսենք առաջ շարժվել (իսկ այդ ժամանակ մենք հավանաբար շարժվել կսկսենք հարյուր անգամ ավելի արագ), յերբ ուսումնասիրության կենթարկենք այս հարցը, կսկսենք հիմնել բանվորների զանազան միավորներ—ամեն կերպ խուսափելով նրանց բյուրոկրատացումից—հիմնել նրա համար, որպեսզի դնենք այս հարցը, քննենք այն և գործ դարձնենք այն։

1923 թ. հունվարի 2-ին

«Պրավդա» № 2
1923 թ. հունվարի 4.

# ԳՅՈՒՂԱԿԱՆ ՁԻՈՒՑ ՓՈԽԱՆՑՈՒՄ ԽՈՇՈՐ ՄԵՔԵՆԱՅԱԿԱՆ ԻՆԴՈՒՍՏՐԻԱՅԻ ՁԻՈՒՆ

## («Լավ է սակավ, բայց լավ» հոդվածից)

*Մեր կենցաղի ընդհանուր գիծն է հանդիսանում այժմ հետևյալը. —մենք կործանել ենք կապիտալիստական արդյունաբերությունը, ջանացել ենք մինչև հիմք կործանել միջնադարի հիմնարկները, կալվածատիրական հողատիրությունը և այդ հողի վրա ստեղծել ենք մանր ու մանրագույն գյուղացիություն, վորը պրոլետարիատի յետևից է գնում, վստահություն տածելով դեպի նրա հեղափոխական աշխատանքի արդյունքները։ Սակայն այդ վստահությանը կառչած մեզ համար հեշտ չե դիմանալ ընդհուպ մինչև սոցիալիստական հեղափոխության հաղթանակն ավելի զարգացած յերկրներում, վորովհետև մանր ու մանրագույն գյուղացիությունը, մանավանդ Նեպ-ի որով, տնտեսական անհրաժեշտությունից դրդված ապրում է աշխատանքի արտադրողականության ծայրաստիճան ցածր մակարդակի վրա։ Բայց և միջազգային կացությունն առաջացրել է այն, վոր Ռուսաստանն այժմ յետ է շպրտված, վոր ընդհանրապես ու ամբողջապես ժողովրդական աշխատանքի արտադրողականությունը մեզ մոտ այժմ զգալիորեն քիչ է բարձր, քան մինչև պատերազմը։ Արևմտա-յեվրոպական կապիտալիստական պետությունները մասամբ գիտակցաբար, մասամբ տարերայնորեն արին բոլոր հնարավորը, վորպեսզի մեզ յետ շպրտեն, վորպեսզի օգտագործեն քաղաքացիական պատերազմի տարրերը Ռուսաստանում ըստ հնարավորին ավելի քայքայելու յերկիրը։ Հայտնապես նման յելքը իմպերիալիստական պատերազմից ներկայացնում է, իհարկե, զգալի օգուտներ. յեթե մենք չենք տապալի հեղափոխական կարգը Ռուսաստանում, ապա համենայն դեպս մենք դժվարացնենք նրա զարգացումը դեպի սոցիալիզմը,—այս կերպ եյին դատում այդ պետությունները և իրանց տեսակետից նրանք այլ կերպ չեյին կարող դատել։ Իբր հետևանք նրանք շահեցին իրանց խնդրի մի կիսավճիռ։*

*Նրանք չտապալեցին հեղափոխության ստեղծած նոր կարգը, բայց նրանք հնարավորություն չտվին նրան իսկույն և յեթ անելու այն քայլն առաջ, վորն արդարացներ սոցիալիստների նախագուշակումները, վորը նրանց հնարավորություն տար ահագին արագությամբ զարգացնելու արտադրողական ուժերը, այն բոլոր հնարավորությունները, վորոնք կձևավորվեյին իբր սոցիալիզմ, առարկայորեն, ակներև կերպով ապացուցեյին ամեն մեկին ու յուրաքանչյուրին, թե սոցիալիզմն իր մեջ հսկայական ուժեր է թաքցնում և վոր մարդկությունն այժմ փոխանցվել է դեպի զարգացման նոր փուլ, վորը բերում է անսովոր փայլուն հնարավորություններ։*



*Միջազգային հարաբերությունների սիստեմն այժմ այնպես է դասավորված, վոր Յեվրոպայում պետություններից մեկը ստրկացված է ստրկացնող պետությունների կողմից—դա Գերմանիան է։ Ապա մի շարք պետություններ և այն էլ Արևմուտքի ամենից հին պետությունները հաղթության շնորհիվ այնպիսի վիճակի մեջ ընկան, յերբ նրանք կարող են օգտվել այդ հաղթությամբ մի շարք անկարևոր զիջումներ անելով իրանց հարստահարված դասակարգերին—զիջումներ, վորոնք այնուամենայնիվ հետաձգում են հեղափոխական շարժումը նրանց մեջ և ստեղծում են «սոցիական հաշտության» մի յերևույթականություն։*

*Այդ միևնույն ժամանակ Արևելքի մի ամբողջ շարք յերկրներ—Հնդկաստան, Չինաստան և այլն—հայտնապես վերջին իմպերիալիստական պատերազմի զորությամբ վերջնականապես դուրս սահեցին իրանց հունից։ Նրանց զարգացումը վերջնականապես ուղղվեց հանուր-յեվրոպական կապիտալիստական մասշտաբով։ Նրանց մեջ սկսվեց հանուր-յեվրոպական խմորում։ Յեվ այժմ պարզ է ամբողջ աշխարհի համար, թե նրանք լծվել են այնպիսի զարգացման, վորը չի կարող ճգնաժամի չառաջնորդել ամբողջ համաշխարհային կապիտալիզմը։*

*Այս կերպ ներկա մոմենտին մենք կանգնած ենք մի հարցի առաջ. կը հաջողվի արդյոք մեզ մոտ մանր ու մանրագույն գյուղացիական արտադրությամբ, մեր քայքայված վիճակով դիմանալ մինչև այն ժամանակ, յերբ արևմտա-յեվրոպական կապիտալիստական յերկիրները իրենց զարգացումը կավարտեն դեպի սոցիալիզմ։ Բայց նրանք այն ավարտում են վոչ այնպես, ինչպես մենք եյինք սպասում առաջ։ Նրանք այն ավարտում են չե թե սոցիալիզմի համահավասար «հասունացումով» իրանց մեջ, այլ մի ուղիով, վոր մի պետության շահագործումն է մյուսի կողմից, վոր իմպերիալիստական պատերազմում պարտված առաջին պետության շահագործումն է՝ միացած ամբողջ Արևելքի շահագործման հետ։ Իսկ մյուս կողմից՝ Արևելքը հայտնապես այդ առաջին իմպերիալիստական պատերազմի զորությամբ վերջնականապես հեղափոխական շարժման մեջ է նետվել և վերջնականապես լծվել համաշխարհային հեղափոխական շարժման ընդհանուր շրջապտույտին։*

*Իսկ ինչպիսի տակտիկա յե թելադրում նման վիճակը մեր յերկրի համար։ Ակներև է, վոր հետևյալը. մենք պետք է ծայրագույն զգուշություն բանեցնենք մեր բանվորական իշխանությունը պահպանելու համար, նրա հեղինակության և նրա ղեկավարության տակ մեր մանր ու մանրագույն գյուղացիությունը պահելու համար։ Մեր կողմն է այն պլյուսը, վոր այժմ արդեն ամբողջ աշխարհն անցնում է այնպիսի շարժման, վորը համաշխարհային սոցիալիստական հեղափոխություն պետք է ծնե։ Բայց մեր կողմն է այն մինուսը, վոր իմպերիալիստներին հաջողվեց պառակտել աշխարհը յերկու բանակի, ըստ վորում այդ պառակտումը բարդ վիճակ ունի*

նրանով, վոր Գերմանիայն, վորը իսկապես առաջավոր կուլտուրական կապիտալիստական զարգացման մի յերկիր է, այժմ վերին աստիճանի դժվար է վոտի կանգնել։ Իսկ մյուս կողմից ամբողջ Արևելքն իր հարյուրավոր միլլիոն աշխատող շահագործվող բնակչությամբ հասցըրված է մարդկային ծայրահեղության վերջին աստիճանին, դրված է այնպիսի պայմաններում, յերբ նրա ֆիզիքական ու նյութական ույժերը վճռականապես վոչ մի համեմատության չեն գալիս վորևե արևմտա-յեվրոպական առավել փոքր պետության ֆիզիքական, նյութական ու ռազմական ուժերի հետ։

Կարո՞ղ ենք արդյոք մենք խուսափել գալիք բախումից այդ իմպերիալիստական պետությունների հետ։ Ունե՞նք մենք արդյո՞ք հույս այն մասին, թե ներքին հակասություններն ու բախումներն Արևմուտքի հաջողակ իմպերիալիստական պետությունների և Արևելքի հաջողակ իմպերիալիստական պետությունների միջև մեզ յերկարաձգում կտան յերկրորդ անգամ, ինչպես նրանք տվին առաջին անգամ, յերբ արևմտա-յեվրոպական հակահեղափոխության արշավանքը, վոր ուղղված էր պաշտպանելու ռուսական հակահեղափոխությունը, խորտակվեց այն հակասությունների պատճառով, վոր գոյություն ունեն Արևմուտքի ու Արևելքի հակահեղափոխականների բանակում, արևելյան շահագործողների ու արևմտյան շահագործողների բանակում, Ճապոնիայի ու Ամերիկայի բանակում։

Ինձ թվում է, թե այս հարցին հարկավոր է պատասխանել այնպիսի ձևով, վոր այստեղ լուծումը կախված է անչափ շատ հանգամանքներից և պայքարի յելք ընդհանրապես ու ամբողջապես կարելի յե նախատեսնել միայն այն հիման վրա, վոր յերկրագնդի բնակչության հսկայական մեծամասնությունը վերջի վերջո բուն կապիտալիզմի կողմից է, վոր կրթվում ու դաստիարակվում է պայքարի համար։

Պայքարի յելքը վերջին հաշվով կախված է նրանից, վոր Ռուսաստանը, Հնդկաստանը, Չինաստանը և այլն կազմում են բնակչության հսկայական մեծամասնությունը։ Յեվ հայտնապես բնակչության այդ մեծամասնությունն է, վոր վերջին տարիներն անսովոր արագությամբ պայքարի յե լծվում իր ազատության համար, այնպես վոր այդ իմաստով տարակուսանքի իսկ ստվեր չի կարող լինել այն մասին, թե ինչպիսին կլինի համաշխարհային պայքարի վերջնական լուծումը։ Այդ իմաստով սոցիալիզմի վերջնական հաղթանակը լիովին ու անպայման ապահովված է։

Բայց մեզ համար հետաքրքրական է սոցիալիզմի վերջնական հաղթանակի վոչ այդ անխուսափելիությունը։ Մեզ համար հետաքրքրական է այն տաքտիկան, վորը պիտի ունենանք մենք, Ռուսաստանի Կոմմունիստական կուսակցությունը, մենք, Ռուսաստանի Խոր-



հըրդային իշխանությունը, ունենանք նրա համար, վորպեսզի կարողանանք խանգարել արևմտա-յեվրոպական հակահեղափոխական պետությունների ճզմելու մեզ։ Նրա համար, վորպեսզի ապահովել կարելի լինի մեր գոյությունը մինչև հետևյալ ռազմական բախումը հակահեղափոխական իմպերիալիստական Արևմուտքի և հեղափոխական ու ազգայնական Արևելքի միջև, աշխարհի քաղաքակրթված պետությունների և արևելյան յեղանակով հետամնաց պետությունների միջև, վորոնք, սակայն, մեծամասնություն են կազմում,—այդ մեծամասնությանը հարկավոր է քաղաքակրթվել հաջողել։ Մեզ էլ է պակասում քաղաքակրթությունը նրա համար, վորպեսզի անմիջականորեն սոցիալիզմին անցնենք, թեև դրա համար մենք ունենք քաղաքական նախադրյալներ։ Մեզ հարկավոր է նման տաքտիկայի հետևել կամ մեր փրկության համար հետևյալ քաղաքականությունն ընդունել։

Մենք պիտի ջանանք կառուցել մի պետություն, վորի մեջ բանվորներն իրենց ղեկավարությունը պահպանեյին գյուղացիների վրա, գյուղացիների վստահությունն իրենց նկատմամբ և մեծագույն խնայողությամբ վտարեյին իրենց հասարակական հարաբերություններից վորևե շռայլության ամեն մի հետք։

Մենք ծայրագույն խնայողությամբ պիտի ոժտենք մեր պետապարատը։ Մենք պիտի նրանից վտարենք շռայլությունների բոլոր հետքերը, վորոնք այնքան շատ են մնացել նրա մեջ ցարական Ռուսաստանից, նրա բյուրոկրատական-կապիտալիստական ապարատից։

Չի լինի՞ դա արդյոք գյուղացիական սահմանափակության մի թագավորություն։

Վոչ։ Յեթե մենք բանվոր դասակարգի ձեռքին պահենք ղեկավարությունը գյուղացիության վրա, ապա մենք հնարավորություն կստանանք մեր պետության մեջ տնտեսության մեծագույն ու մեծագույն խնայողության գնով շահել այն, վորպեսզի ամեն մի փոքրիկ խնայողություն պահպանենք մեր խոշոր մեքենայական ինդուստրիայի զարգացման համար, ելեքտրիֆիկացիայի, հիդրոտորֆի զարգացման համար, Վոլխովստրոյի կառուցումն ավարտելու համար և այլն։

Դրա և միայն դրա մեջ կլինի մեր հույսը։ Միայն այդ ժամանակ մենք ի վիճակի կլինենք, պատկերավոր արտահայտվելով, մի ձիուց մյուսը նստելու. հայտնապես գյուղացիական ձիուց, գեղջկական, ուժասպառ, քայքայված գյուղացիական յերկրին պատշաճ խնայողությունների ձիուց այն ձին, վորը փնտռում է և չի կարող իր համար չը փնտռել պրոլետարիատը, խոշոր մեքենայական ինդուստրիայի, ելեկտրիֆիկացիայի, Վոլխովստրոյի ձին և այլն։

Ահա ինչպես եմ յես իմ մտքերի մեջ կապում մեր աշխատանքի, մեր քաղաքականության, մեր տաքտիկայի, մեր ռազմավարության

ընդհանուր պլանը վերակազմված Բանգյուղտեսչության խնդիրների հետ։ Ահա ինչի մեջ է կայանում ինձ համար այն բացառիկ հոգացությունների, այն բացառիկ ուշադրության արդարացումը, ինչ մենք բաժին պիտի հանենք Բանգյուղտեսչությանը, դնելով նրան բացառիկ բարձունքի վրա, տալով նրան կկ իրավունքներով մի գլուխ և այլն, և այլն։

Այդ արդարացումը կայանում է նրանում, որ միայն մեր ապպարատի ծայրագույն զտումով, այն բոլորի ծայրագույն կրճատումով, ինչ նրա մեջ անհրաժեշտ չէ բացարձակորեն, որ միայն դրանով մենք ի վիճակի կլինենք դիմանալ հաստատապես։ Յեվ ընդսմին մենք ի վիճակի կլինենք դիմանալու չէ թե մանր-գյուղացիական յերկրի մակարդակի վրա, չէ թե այդ ընդհանուր սահմանափակության մակարդակի վրա, այլ մի մակարդակի վրա, որ անշեղորեն վեր ու վեր է բարձրանում դեպի խոշոր մեքենայական ինդուստրիան։

Ահա ինչպիսի բարձր խնդիրների մասին եմ յես յերազում մեր Բանգյուղտեսչության համար։ Ահա ինչ նպատակով է, որ յես նրա համար հեղինակավորագույն կուսակցական կատարի ձուլման պլանն եմ քաշում «շարքային» ժողկոմատի հետ։

1923 թ. մարտի 2

«Պրավդա,» № 49
1923 թ. մարտի 4.

## ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ (93)

Ինձ թվում է, թե մեզ մոտ բավականաչափ ուշադրություն չի դարձնվում կոոպերացիայի վրա։ Հազիվ թե բոլորն են հասկանում, թե այժմ, Հոկտեմբերյան հեղափոխությունից ի վեր, և անկախ նեպից (ընդհակառակը, այդ տեսակետից ստիպված ենք ասելու—հայտնապես նեպ-ի շնորհիվ) կոոպերացիան մեզ մոտ ստանում է միանգամայն բացառիկ նշանակություն...։

Մեզ մոտ, իսկապես, յերբ պետական իշխանությունը բանվոր դասակարգի ձեռքին է, յերբ այդ պետական իշխանությանն են պատկանում արտադրության բոլոր միջոցները, մեզ մոտ, իսկապես, խընդիր է մնացել միայն բնակչության կոոպերացումը։ Բնակչության ծայրագույն կոոպերացման պայմանում ինքնին նպատակի յէ հասնում այն սոցիալիզմը, որը առաջ իր նկատմամբ հարուցում էր իրավացի հեգնանքներ, ժպիտ, արհամարհական վերաբերմունք այն մարդկանց կողմից, որոնք արդարացիորեն համոզված էին դասակարգային պայքարի, քաղաքական իշխանության համար մղած պայքարի անհրաժեշտության մեջ։ Յեվ ահա բոլոր ընկերները չէ, որ հաշիվ են տալիս իրանց այն մասին, թե այժմ մեզ համար հսկայական, ան-



ընդգրկելի նշանակություն է ստանում Ռուսաստանի կոոպերացումը։ Նեպ-ում մենք զիջում արինք գյուղացուն, իբրև վաճառականի, զիջում արինք մասնավոր առևտրի սկզբունքին. հայտնապես դրանից է բղխում (հակառակ այն բանին, ինչ մտածում են) կոոպերացիայի հսկայական նշանակությունը։ Բուն էությամբ խոսելով՝ նեպ-ի տիրապետության որով բավականաչափ լայն ու խորը կոոպերացնել՝ռուսական բնակչությանը—դա բոլորն է, ինչ հարկավոր է մեզ, որովհետև այժմ մենք գտել ենք մասնավոր շահի, մասնավոր առևտրական շահի այն միացման աստիճանը, ստուգման ու վերահսկողության այն աստիճանը, նրա ընդհանուր շահերի յենթարկման այն աստիճանը, որը առաջ գայթակղության քար էր շատ ու շատ սոցիալիստների համար։ Յեվ իսկապես, պետության իշխանությունն արտադրության բոլոր խոշոր միջոցների վրա, պետության իշխանությունը պրոլետարիատի ձեռքում, այդ պրոլետարիատի դաշինքը շատ ու շատ միլիոն մանր ու մանրագույն գյուղացիների հետ, ղեկավարության ապահովումն այդ պրոլետարիատի համար գյուղացիության վերաբերմամբ և այլն—միթե այս բոլորը չէ, ինչ հարկավոր է նրա համար, որպեսզի կոոպերացիայից, մեն-միայն կոոպերացիայից, որին մենք առաջ անգիտանում էինք իբր չարչիականի և որին հայտնի կողմից նեպ-ի որով իրավունք ունենք անգիտանալու այժմ ևս, միթե այս չէ բոլոր անհրաժեշտականը լիակատար սոցիալիստական հասարակության կառուցման համար։ Սա դեռ սոցիալիստական հասարակության կառուցումը չէ, բայց այդ կառուցման համար սա բոլորն է, ինչ անհրաժեշտ ու հերիք է։

Ահա այս հանգամանքն է, որ պահանջված գնահատությանը չի արժանացել մեր գործնական աշխատավորների կողմից։ Կոոպերացիայի վրա մեզ մոտ արհամարհանքով են նայում, չհասկանալով այն, թե ինչ բացառիկ նշանակություն ունի այդ. կոոպերացիան նախ սկզբունքային կողմից (արտադրության միջոցների սեփականությունը պետության ձեռքում). յերկրորդ՝ նոր կարգերին փոխանցվելու կողմից մի ուղիով, որը հնարավորին ավելի պարզ, հեշտ ու մատչելի յէ գյուղացու համար։

Յեվ դրա մեջ է դարձյալ հենց գլխավորը։ Մի բան է ֆանտազիայի հանձնվել ամեն կարգի բանվորական միավորումների մասին սոցիալիզմ կառուցելու համար, այլ բան է սովորել գործնականորեն կառուցել այդ սոցիալիզմն այնպես, որպեսզի ամեն մի մանր գյուղացի կարողանար մասնակցել այդ կառուցմանը։ Այդ փուլին էլ մենք հասել ենք այժմ։ Յեվ անտարակուսելի յէ այն, որ նրան հասնելով, մենք անչափ նվազ ենք օգտվում նրանից...։

Յուրաքանչյուր հասարակակարգ ծնունդ է ստանում միայն որոշ

դասակարգի ֆինանսական պաշտպանությամբ: Կարիք չկա հիշեցնելու այն հարյուրավոր ու հարյուրավոր միլիոն ռուբլիների մասին, որ արժեցել է «ազատ» կապիտալիզմի ծնունդը: Այժմ մենք պիտի գիտակցենք և գործ դարձնենք, թե ներկայիս այն հասարակակարգը, որը մենք պիտի պաշտպանենք սովորականից դուրս,—դա կոոպերատիվ կարգն է: Բայց պաշտպանել նրան հարկավոր է այս բառի իսկական իմաստով, այսինքն, այդ պաշտպանության տակ հերիք չէ հասկանալ որևէ կոոպերատիվ շրջանառության պաշտպանություն,— այդ պաշտպանության տակ հարկավոր է հասկանալ այնպիսի կոոպերատիվ շրջանառության պաշտպանություն, որի մեջ **իսկապես մասնակցում են բնակչության իսկական մասսաները**: Պարգև տալ այն գյուղացուն, որը մասնակցում է կոոպերատիվ շրջանառությանը,— այդ ձևակերպումն անպայման ճիշտ է, բայց դրա հետ միասին ստուգել այդ մասնակցությունը և ստուգել նրա գիտակցությունը և նրա լավորակությունը,—ահա ինչումն է հարցի էությունը.. :

Այս գործը մյուս կողմն էլ ունի: Մեզ հարկավոր է «քաղաքակրթված» (նախ և առաջ գրագետ) յեվրոպացու տեսակետից էս մի քիչ բան անել նրա համար, որպեսզի ստիպենք գլխովին մասնակցել կոոպերատիվ օպերացիաներում և մասնակցել ոչ թե կրավորապես, այլ գործունորեն: Իսկապես ասելով մեզ մնում է «**միայն**» մի բան— մեր բնակչությունը դարձնել այնքան «քաղաքակիրթ», որպեսզի նա ըմբռներ կոոպերացիայի մեջ գլխովին մասնակցություն բերելու բոլոր օգուտները և շտկեր այդ մասնակցությունը: «**Միայն**» դա: Ուրիշ որևէ իմաստություն մեզ հարկավոր չէ այժմ նրա համար, որպեսզի սոցիալիզմին անցնենք: Բայց նրա համար, որպեսզի կատարենք այդ «միայնը», հարկավոր է ամբողջ հեղաշրջում, բովանդակ ժողովրդական մասսայի կուլտուրական զարգացման մի ամբողջ շրջան...:

Առանց այդ պատմական ժամանակաշրջանի, առանց գլխովին գրագիտության, առանց բավարար չափով աչքաբացության, առանց նրան, որ բնակչությունը բավարար չափով սովորած լինի օգտվելու գրքերից, և առանց նյութական պատվանդանի, առանց հայտնի ապահովության, ասենք, անբերրիությունից, սովից և այլն,—առանց դրան մեր նպատակին մենք չենք կարող հասնել: Ամբողջ խնդիրն այժմ նրա մեջ է, որպեսզի կարողանանք միացնելու այն հեղափոխական թափը, այն հեղափոխական խանդավառությունը, ինչ մենք արդեն դրսևորել ենք և դրսևորել բավարար չափով և պսակել կատարյալ հաջողությամբ, կարողանանք միացնել այն (այստեղ յես պատրաստ եմ ասել համարյա) մի հմտության հետ—լինել աչքաբաց ու գրագետ չարչի, ինչ լիովին հերիք է լավ կոոպերատորի համար: Չարչի լինելու հմտության տակ յես յենթադրում եմ կուլտուրական չար-



չի լինելու հմտությունը: Թող դա իրանց համար ականջի օղ շինեն ռուս մարդիկ կամ պարզապես գյուղացիները, վորոնք կարծում են, թե քանի առևտուր են անում, նշանակում է, կարողանում են չարչի լինել: Դա իսպառ ճիշտ չէ: Նա առևտուր է անում, բայց դրանից մինչև կուլտուրական չարչի լինելու հմտությունը դեռ շատ հեռու յէ: Նա այժմ առևտուր է անում ասիական յեղանակով, իսկ նրա համար, վորպեսզի կարողանա չարչի լինել, հարկավոր է առևտուր անել յեվրոպական յեղանակով: Դրանից նրան զատում է ամբողջ ժամանակաշրջան...:

Առաջ մենք ծանրության կենտրոնը բարդում էյինք և պիտի բարդեյինք քաղաքական պայքարի, հեղափոխության, իշխանությունը նվաճելու վրա և այլն: Իսկ այժմ ծանրության կենտրոնը փոխվում է մինչև այն, վոր փոխադրվում է խաղաղ կազմակերպչական «կուլտուրական» աշխատանքի վրա: Յես պատրաստ եմ ասելու, թե մեզ համար ծանրության կենտրոնը փոխադրվում է կուլտուր գործունեյության վրա, յեթե միջազգային հարաբերությունները չլինեյին, յեթե պարտավորություն չլիներ պայքարելու մեր դիրքի համար միջազգային մասշտաբով: Բայց յեթե դա մի կողմը թողնենք և սահմանափակվենք ներքին տնտեսական հարաբերություններով, ապա մեզ մոտ իսկապես այժմ աշխատանքի ծանրության կենտրոնը հանգում է կուլտուր գործունեյության...:

Իսկ այդ կուլտուրական աշխատանքը գյուղացիության մեջ, իբրև տնտեսական նպատակ, հայտնապես կոոպերացումն է հետամտում: Լիակատար կոոպերացման պայմանում մենք արդեն յերկու վոտքով կանգնած կլինեյինք սոցիալիստական հողի վրա:

«Պրավդա»
1923 թ. հունիս:

# ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1) Հիշյալ աշխատությունը մի պատասխան է ներկայացնում «Русское Богатство» նարոդնիկական ամսագրի ընդդեմ մարքսիստների գրած հոդվածներին։ Այդ աշխատությունը գրվել է 1894 թվականին։ Միայն 1923 թվականին հաջողվեց պահնորդական բաժնի գաղտնարաններից հանել այդ աշխատության առաջին և յերկրորդ պրակները և հրատարակել։ Այդ աշխատությունն առաջին և հեղափոխական մարքսիզմի վոգուն առավել շատ պատասխանող ձևակերպումն է այն խնդիրների, վոր սոցիալիզմն է հետամտում Ռուսաստանում։ Այստեղ ընկ. Լենինի կողմից նախագուշակված է ռուսական բանվորական շարժման ապագա զարգացման հիմնական կովաններն ընդհուպ մինչև մեր ժամանակները։ Այստեղ արդեն զարգացվում է պրոլետարիատի հեգեմոնիայի գաղափարը, բալշևիզմի հիմնական գաղափարը, վորից իբրև հետևանք բղխում է այն նոր խոսքը, վորը Լենինն ասաց գյուղացիական հարցում։ Կարևոր է նույնպես նշել, վոր այստեղ էլ Լենինն առաջադրում է կալվածատիրական հողերի կատարյալ էքսպրոպրիացիայի և նրանց ազգայնացման գաղափարը, ինչ նա լրությամբ չէր պաշտպանում 1905 թվականի հեղափոխությանը նախորդող ժամանակաշրջանում, յերբ դեռ պատշաճ պատմական պայմաններ չկային նրա գործնական իրագործման համար, բայց վորին նա վերադարձավ 1906 թվականին։

2) Գյուղատնտեսական հարաբերությունների կապիտալիստական զարգացումը, մասամբ և արդյունաբերության զարգացումը Ռուսաստանում գտնվում է դեռ «սկզբում», իսկ դա նշանակում է, թե հակասությունները մանր ու խոշոր բուրժուազիայի միջև դեռ այնքան չեն զարգացել, վորպեսզի մանր բուրժուազիան հասկանար իր վիճակի պահպանման անհնարինությունը խոշոր կապիտալի անխուսափելի զարգացման հետևանքով. այստեղից էլ բղխում է մանր բուրժուազիայի հատուկ հետադիմականության աղբյուրը։ Իսկ նրա առաջադիմականության առանձին ույժը թագնվում է այն անհրաժեշտության մեջ, վոր պահանջում է վերացնել ճորտատիրական անցյալի այնպիսի դեռ պատկառելի մի խուլ (ավելաճուկ-нарост), վորի վերացումը կարող է ստանալ հեղափոխական բնույթ։



3) Ընդհանուր զարգացումն ընթանում է խոշոր կապիտալի աճման գծով ի հաշիվ մանրի, իսկ մանր տնտեսության պաշտպանության վերջին հաշվով ապարդյուն փորձերը կասեցնում են այդ աճումը թեկուզ ժամանակավորապես ու մասնակիորեն։ Էլ ավելի վնասակար է շահագործվողների շեղումը դասակարգային պայքարից, յերբ նրանք տոգորվում են սին հույսերով մասսայի վիճակի հնարավոր բարելավման և դասակարգային պայքարի թուլացման մասին (այն ինչ կապիտալիստական հարաբերությունների հողի վրա բարելավումը հնարավոր է առանձին և այն էլ աննշան թվով անհատների համար)։

4) Քայքայված գյուղացու սեղմումն իր բաժնեհողի ազատ տնորինման խնդրում առաջնորդվում է դեպի այն, վոր նա գաղտնի ձևով է բաժնեհողը տալիս կապալով և հետևաբար այնպիսի պայմաններով, վորոնք ձեռնտու չեն տվողի համար, կամ թե դառնում են հողի անվարձ հանձնումն «համայնքին», այսինքն համայնքի նույն հարուստ անդամներին, բայց այժմ ձրի։

5) Վերջինս բացատրվում է «կապիտալի ճնշմամբ աշխատանքի վրա», այսինքն նա իր էությամբ կապիտալիստական է։

6) Վճարումներ կալվածատերերի կամ պետության ոգտին այն հողի համար, վոր գյուղացիներին է թողնված ճորտատիրական կախումից նրանց ազատագրվելու պահուն և վորը նրանց տիրությունն է պատկանել շատ վաղուց։ Դա փրկանք եր վոչ միայն հողի, այլ և գյուղացու համար, վորի վրա կալվածատերը նայում եր իբրև իր սեփականության վրա։

7) Գյուղացիներին բաժին եր տրվում «ավազուտը», գյուղացիական բաժնեհողի մեջ սեպի պես ցցվում եր կալվածատիրական հողը, գյուղացիներից կտրում եյին նրանց բաժնեհողերի այնպիսի եյական մասեր, ինչպես անտառները, մարգագետինները, անասունները ջրելու տեղերը, հանդերը և այլն, առանց վորի նրանք չեյին կարող իրանց տնտեսությունը վարել և այս պատճառով ակամայից սարկանում եյին նախկին կալվածատիրոջ առաջ։ Այդ սարկացումը տեղի ունի հողոգտագործման փաստական բարդ պայմաններում, իսկ իրավաբանորեն հողերը բաժանված են։

8) Ս. Յուժակով—նարոդնիկական ուղղության հրապարակախոս ազգայնական յերանգով։

9) Վ. Վ.—(Վորոնցով) նարոդնիկության ականավոր թեորետիկ 80-ական և 90-ական թվականներին։

10) Վաշխառուական ու առևտրական կապիտալի ձևերով։

11) Արակչեյեվ—ռազմական մինիստր Ալեքսանդր I որով, հիմնադիրը ռազմական բնակատեղիների. տխուր հիշատակ է թողել իր մասին իր դաժանությամբ և բթամտությամբ։

12) Խոսքն այն նարոդնիկների մասին է, վորոնք ժխտում եյին, թե Ռուսաստանում սկսել է զարգանալ կապիտալիզմը, իրանց հույսերը դնում եյին ռուսական կյանքի համայնական կարգի և գյուղացիական սոցիալիստական հեղափոխության անմիջական հնարավորության վրա։

13) «Նարոդնայա Վոլյա»-ն կազմավորվել է «Զեմլյա և Վոլյա» 70-ական թվականների նարոդնիկական կազմակերպության փլուզումից հետո և իրան նպատակ դրել տապալել ինքնակալությունը տերրորիստական պայքարի միջոցով, ուղղված թագավորի և նրա գլխավոր չինովնիկների դեմ։

14) Խոշոր ֆաբրիկաներ ու գործարաններ, յերկաթուղիներ, ուր հանրայնացված է արտադրության պրոցեսը, հսկայական հարստություններ և նոր հարստությունների արտադրության եվ ավելի մեծ հնարավորություններ ամբողջ բնակչության կյանքի մակարդակի եվ առավել աճման նպատակով, այլ վոչ մեն-միայն կապիտալիստների դասակարգի համար։ Մարզված ֆաբրիկային բանվոր դասակարգ իր շուրջը միավորող հասարակության կիսապրոլետարական և մասամբ նույնիսկ մանր-բուրժուական տարրերով, վորոնք նույնպես իրանց վրա խոշոր կապիտալի հարստահարությունն են կրում։

15) Մարքսի և Ենգելսի ու նրանց աշակերտների սոցիալիզմը, վոր հիմնավորված է կապիտալիստական հասարակության զարգացման օրենքների ուսումնասիրությամբ։

16) Այս հոդվածն—առաջին ուրվագիծը և համառոտ հիմնավորումն է ՌՍԴԲԿ ագրարային ծրագրի, ընդունված կուսակցության II համագումարում։ Հիմնականն այստեղ, ինչպես մատնանշում է ընկ. Լենինն այդ ծրագրի նախագծի մեկնաբանության, «Ռուսական սոցիալ-դեմոկրատիայի ագրարային ծրագիրը» հոդվածում,—դա հարցի ընդհանուր կարգումն է մեր ագրարային քաղաքականության մասին։ Այն բղխում է Ռուսաստանի տնտեսական կյանքի տնտեսագիտական վերլուծումից, վորն ընկ. Լենինն է տվել նախորեն մի շարք աշխատություններում, մանավանդ «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» գրքի մեջ։ Հիմնական սկզբունքն այսպես է ձևակերպված. «Ճորտատիրական կարգի մնացորդների վերացման նպատակով, վորոնք ծանր լծով ընկած են անմիջապես գյուղացիների վրա, և գյուղում դասակարգային պայքարի ազատ զարգացման շահը նկատի առնելով, կուսակցությունը պահանջում է...» Մնացած առանձին պահանջներից իր ժամանակ առանձնապես մեծ քննադատություն հարուցեց այն կետը, վոր պահանջում եր գյուղացիներին վերադարձնել կտրանքները, վորոնք ընդհանուր առմամբ հանդիսանում եյին տնտեսության կիսաճորտատիրական փոխաշխատանքի սիստեմի ագ-



բյուր, տնտեսության, վորը կառուցված եր գյուղացու շահագործման վրա, իբր մանր հողագործի, այլ վոչ իբր վարձու բանվորի։ Յեվ թեև այդ կետը 1906 թվականին կուսակցության IV համագումարում վերացվեց ծրագրից, սակայն նա իր ժամանակ ունեցել է իր պատմական իմաստը։ Նրա սխալությունը կայանում եր այն բանի մեջ, վոր ինչպես ցույց տվավ գյուղացիական հեղափոխական շարժման թափը 1905 թ., թերագնահատված եյին այդ շարժման նշանակությունն ու ույժը, բայց այդ թերագնահատումն անխուսափելի չեր։ Յենթադրվում եր, թե գյուղացիությունը կը կարողանա իր շարժումն ուղղել վոչ թե կալվածատիրական հողատիրության դեմ առհասարակ, ինչպես յեղավ իրականում, այլ միայն կալվածատերերի հողերի դեմ, վորոնք ընդհանրապես շահագործվում եյին ճորտատիրականորեն, այլ վոչ կապիտալիստականորեն, այսինքն կտրանքների դեմ։ Միայն մասսայական, անգամ համազգային գյուղացիական շարժման փորձը կարող եր վորոշակի լուծել, թե արդյոք կալվածատիրական տնտեսությունը հետամուտ է ավելի տնտեսավարության ճորտատիրական-ստրկային, թե կապիտալիստական սիստեմի, և ինչ չափով են դեռ ամուր կապված գյուղական բանվորները գյուղացիության հետ, և, հետևաբար, ցույց տալ գյուղացիության մասնակցության ունակությունը հեղափոխական-դեմոկրատական հեղաշրջմանը։ Նման պայմաններում կտրանքների պահանջն այն առավելությունն ուներ, վոր նա՝ ճորտատիրականության մնացորդների դեմ ապագայում բունկվելիք լայն գյուղացիական շարժման թափի դեպքում՝ չմերժելով ամբողջ կալվածատիրական հողի, այլ վոչ միայն մի մասի, փոխանցումը գյուղացիներին (ինչպես ժամանակ առ ժամանակ պրոպագանդիստները սխալ եյին մեկնաբանում կտրանքների կետը),—դրա հետ միասին ամենից լավ եր լուծում և մարքսիստների համար վոչ պակաս կարևոր յերկրորդ պայմանը—նպաստել դասակարգային պայքարի ազատ զարգացման։ Ամբողջ կալվածատիրան հողի եքսպրոպրիացիայի խոստումը գյուղական պրոլետարիատի մեջ կհարուցեր ներկայիս, հանուն բեյական ապագայի, հույսեր, թե՛ կալվածատիրական հողն ստանալով՝ նրանք կարող են ամուր տնտեսություն կազմել, վորով և կը խորթանային իրանց պրոլետարական խնդիրների գիտակցումից։ Ծնունդ առնող գյուղական պրոլետարիատի դասակարգային ինքնագիտակցությունը մթագնելու համար առանց այն էլ բավարար հող կար թե յերկրի տնտեսական պայմաններում և թե քաղաքական կյանքում (մասնավորապես հանրահռչակ նարոդնիկական հոսանքները, վորոնք ոգտագործում եյին «աշխատավոր ժողովրդի սպասումները»)։ Սոցիալ-դեմոկրատիայի հիմնական խնդիրը—նպաստել դասակարգային պայքարի աճման—տվյալ պատմական մոմենտի պայմաններում ընդգծվում եր

առանձնապես։ Կտրանքների «հուսացումը» վտանգավոր չէ, վորովհետև,--ասում եր ընկ. Լենինը,—իրականի մեջ չէ թե կտրանքների «հուսացումը», այլ **այժմյան** կտրանքներն են բռնորեն պահպանում ճորտատիրական սարկացումը (Աշխ. ժող.-հ. IX, եջ 688, ռուսերեն)։ Ահա ինչու ընկ. Լենինն այնպես համառորեն նախազգուշացնում էր «հեղափոխական ավանտյուրիզմից». «մենք պետք է այնպես կազմենք մեր ծրագիրը, վորպեսզի պատրաստ լինենք վատթարագույնին, իսկ լավագույն կոմբինացիաների իրագործումը միայն կը հեշտացնե մեր աշխատանքը և նրան կտա նոր մղում» (Լենին, Աշխ. ժող.-հ. IX, եջ 382, ռուսերեն)։

17) Ժամանակավոր-պարտադիր—այնպես եյին կոչվում այն գյուղացիները, վորոնք 1861 թվականի փետրվարի 19-ի կանոնադրությամբ ազատ եյին արձակված ճորտական կախումից, բայց դեռ սեփականություն չեյին ստացել բաժնեհողերը, վորոնցից ոգտվելու համար վճարումներ եյին անում կալվածատերերի ոգտին, պարտադիր փրկանք մտցնվելով 1882 թ., ժամանակավոր-պարտադիր գյուղացիների կարգը դադարեց գոյություն ունենալ։

18) Կանոնագրեր (уставные грамоты)—այդպես եյին կոչվում այն ակտերը, վորոնք պիտի կազմվեյին «ըստ համաձայնության» կալվածատիրոջ և ճորտական կախումից յելած գյուղացիների միջև՝ վերաբերյալ վերջիններին վիճվող հողերին և հասույթաբեր տեղերին, այլև կալվածատիրոջ ոգտին կատարվելիք պարհակներին։

19) «**Վոր չափով** մեր գյուղում ճորտական հասարակությունը դուրս է վտարվում «արդի» (բուրժուական) հասարակության կողմից, **այդ չափով** գյուղացիությունը դադարում է դասակարգ լինել, ստորաբաժանելով գյուղական պրոլետարիատի և գյուղական բուրժուազիայի (խոշոր, միջին, մանր և մանրագույն)։ **Վորչափով** պահպանվում են դեռ ճորտական հարաբերությունները, **այդ չափով** «գյուղացիությունը» շարունակում է դեռ դասակարգ լինել, այսինքն, կրկնում ենք, դասակարգ չէ թե բուրժուական, այլ ճորտական հասարակության» (Լենին, Աշխ. ժող.-հ. XI, եջ 290, ռուսերեն)։

20) Սոցիալ-դեմոկրատներն իրանց վերջնական նպատակին—սոցիալիզմին—հասնելու խնդրում կռթնում են բուրժուազիայի ու պրոլետարիատի միջև յեղած հակադրության վրա։ Առանց ճորտատիրականության մնացորդների վոչնչացման կասեցվում է կապիտալիզմի և դասակարգային պայքարի հետագա զարգացումը նրա բուրժուական ձևով, ինչպես և յեղած բուրժուական դասակարգային պայքարն իր լիակատար արտահայտությունը չի գտնում, վորովհետև ստվերավորվում է իբր թե ամբողջ գյուղացիության ընդհանուր և միատեսակ հարստահարությամբ ճորտատիրական մնացորդների կողմից։



Ռուսական իրականության **առանձին** պայմաններում պրոլետարիատը նրանց կարող է վոչնչացնել միայն դաշնակցելով գյուղացիության՝ իբր ամբողջության հետ, և նրա խնդիրն է գյուղացիությանը մասնակից անել այդ պայքարին։

21) «Աշխատանքի Ազատագրություն» խմբակը—առաջին ռուսական հեղափոխական խմբակն արտասահմանում, վորը խզեց իր կապերը նարոդնիկության հայացքների ու գործնականի հետ և նախամայրը հանդիսացավ ռուսական սոցիալ-դեմոկրատիայի։ Կազմակերպվեց 1883 թ., իր կազմի մեջ ունենալով—Գ. Վ. Պլեխանովին, Լ. Գ. Դեյչին, Վ. Ի. Զասուլիչին, Պ. Բ. Աքսելրոդին և Ն. Ն. Իգնատովին։

22) «Իսկրա» («Կայծ»)—Ռուսաստանի սոց.-դեմոկրատիայի որգանը։ Առաջին համարը լույս է տեսել 1900 թ. դեկտեմբերին։ Ընկ. Լենինը «Իսկրայի» խմբագիրներից մեկն եր մինչև 1903 թվականի նոյեմբերի 1-ը։ Ընկ. Լենինի խմբագրական կազմից հեռանալուց հետո՝ «Իսկրա»-ն մենշևիկական դարձավ։ Փակվել է 1905 թ. աշնանը։

23) Ագրարային ծրագրի նախագծի այդ մեկնաբանությունից մենք վերցնում ենք X գլուխը (փոքրիկ կրճատումներով), իբրև յեզրափակիչ գլուխ, վոր տալիս է ամբողջ հոդվածի հիմնական դրույթները։

24) Այդ փաստը—«հեղափոխական մարքսիզմի թեորիայի հիմնական ու կենտրոնական կետն է ագրարային հարցի բնագավառում»։ Ճանաչել այն—«նշանակում է ճանաչել, վոր և էվոլյուցիա գյուղատնտեսության մեջ...նույնպես կապիտալիստական էվոլյուցիա չէ, թե նա ծնունդ է տալիս նույնպես (ինչպես և արդյունաբերության էվոլյուցիան) պրոլետարիատի դասակարգային պայքարին բուրժուազիայի դեմ, թե հայտնապես **այդ** դասակարգային պայքարը պիտի լինի մեր առաջին ու հիմնական հոգսը»։ Ճանաչել այն—«նշանակում է պարտավորվել և մանավանդ մանր գյուղացիության կողմից սոցիալ-դեմոկրատիայի շարժմանը մասնակցելու հիվանդագին հարցում անշեղորեն կանգնել դասակարգային տեսակետի վրա, վոչ մի բանում չզիջել պրոլետարիատի **տեսակետը** (ընդգծումը խմբ.) մանր բուրժուազիայի տեսակետի ոգտին, այլ, ընդհակառակը, բոլոր ջանքերը գործադրել այն բանի վրա, վորպեսզի ամբողջ արդի կապիտալիզմի կողմից քայքայվող ու հարստահարվող մանր գյուղացին ձգե **իր** դասակարգային տեսակետը և կանգնե պրոլետարիատի տեսակետի վրա» (Լենին, Աշխ. ժող. հ. IX, եջ 297 ռուսերեն)։

25) Հիշատակվում են զանազան բուրժուական թեորիաներ, վորոնք սիրով են ճանաչում անհատական շահագործումը գյուղում, բայց դրա փոխարեն պնդում են, թե այնտեղ «դասակարգային պայքարին իբրև հասարակական յերևույթի, տեղ չկա» (Բուլգակով)։

26) Աբլոմով—Գոնչարովի «Աբլոմով» վեպի հերոսը։ Հասարակ անուն է դարձել ծույլ, անգործունյա, առանց նախաձեռնության մարդու համար։

27) «Զարյա» (Արշալույս»)—գիտական—քաղաքական հանդես, վորն արտասահմանում 1901-1903 թ. թ. հրատարակում եյին Լենինը, Պլեխանովը և մյուսները։ Դրսեվորում և պաշտպանում եր հեղափոխական մարքսիզմը։

28) Այդ աշխատության մեջ, վորը վերաբերում է 1906 թվականի փետրվարին, ընկ. Լենինն առաջադրում է նոր լոզունգ. «ընդդեմ կալվածատիրական սեփականության, կողմնակից գյուղացիական սեփականության, յերբ հողի մասնավոր սեփականություն գոյություն ունի առհասարակ։ Ընդդեմ հողի մասնավոր սեփականության, կողմնակից հողի ազգայնացման, յերբ **վորոշ քաղաքական պայմաններ** գոյություն ունեն» (Լենին, Աշխ. ժող. հ. IX, եջ 401, ռուսերեն)։ Այդ աշխատանքից մենք վերցնում ենք IV և V գլուխները։

29) Մասլով, Պ. Պ.—մենշևիկ, հեղինակ մի շարք աշխատությունների, վորոնք շոշափում են ագրարային հարցը Ռուսաստանում։ 1903 թվականին (ՌՍԴԲԿ II համագումարից առաջ) Մասլովը հանդես յեկավ մի բրոշյուրով, ուղղված ՌՍԴԲԿ ծրագրի նախագծի ագրարային մասի դեմ, վորը հետո ընդունվեց II համագումարի կողմից (նախագիծը)։ Լենինն այն ժամանակ պատասխանեց Մասլովին հատուկ հոդվածով—«Պատասխան ընկ. Իքսին նրա ագրարային ծրագրի քննադատության դեմ» (Իքս—Մասլովի կեղծանունը)։ 1905 թ. Մասլովը հանդես յեկավ հողի «մունիցիպալիզացիայի» նախագծով, վորը պահանջում եր հողը տիրության ու տնօրինության հանձնել **մարզի** կազմակերպությունններին և պաշտպանեց այն IV միացուցիչ համագումարում (այդ մասին մանրամասն տես հետևյալ հոդվածում)

30) Իքսի պես Մասլովը «հակասություն է տեսնում նրանում, վոր մենք պահանջում ենք դասերի վոչնչացում և գյուղացիական, այսինքն դասային, կոմիտեների հիմնում։ Իսկապես, այստեղ հակասությունը միայն թվացող է. դասերի վոչնչացման համար պահանջվում է ստորին, հարստահարված դասի «դիկտատուրա»,—ինչպես վոր առհասարակ դասակարգերի և այդ թվում պրոլետարների դասակարգի վոչնչացման համար պահանջվում է պրոլետարիատի դիկտատուրա։ Մեր ամբողջ ագրարային ծրագիրը նպատակ ունի վոչնչացնելու ճորտատիրական ու դասային տրադիցիաներն ագրարային հարաբերությունների բնագավառում, իսկ նման վոչնչացման համար հնարավոր է միայն դիմել ստորին դասին, նրանց, վորոնք հարստահարված են ճորտական կյանքի այդ մնացորդների կողմից» (Լենին, Աշխ. ժող. հ. IX, եջ 377, ռուսերեն)։



31) Համագումարը տեղի ուներ 1906 թ. գարունքին Ստոկհոլմում։ Ագրարային ծրագրի հարցն աչքի զարնող տեղ բռնեց համագումարի աշխատանքների մեջ։ Թեև տվյալ հարցի մասին մի շարք զեկուցումներ ներկայացվեցին համագումարին, բայց պայքարի հիմնական գիծն ընթանում եր մունիցիպալիզացիայի ու բաժանքի միջև։ Այդ վեճերի հիմքում, անտարակույս, հանգչում եր տակտիկայի տարբերությունը, վորը բղխում եր կուսակցության ընդհանուր խնդիրների և հեղափոխության շարժիչ ուժերի ըմբռնման տարբեր հասկացողություններից։

32) Ջոն—Մասլովի կեղծանունը կուսակցության IV համագումարում։

33) Բերնշտեյն—գերմանական սոցիալ դեմոկրատիայի վոպորտունիստ գործիչներից մեկը։ 90-ական թվականների վերջին հանդես յեկավ Մարքսի ուսմունքի վճռական քննադատությամբ, քարոզելով «ռեֆորմ» «հեղափոխության» փոխարեն։

34) Կաուցկի—գերմանական սոցիալ-դեմոկրատիայի, II Ինտերնացիոնալի թեորետիկ, տնտեսագետ ու պատմաբան։ Մինչև 14 թվականի պատերազմը հարում եր մարքսիզմի արմատական թևին։ Պատերազմի մոմենտից սկսած բռնեց թերակատար դիրք։ Հանդես է յեկել խորհրդային սիստեմի «գիտական» քննադատությամբ։

35) Բացարձակ (աբսոլյուտ) ռենտա—հողատիրոջ յեկամուտը, վոր ստացվում է հողն ուրիշ անձի տալուց, ծագում է հողի մասնավոր սեփականությունից։

36) Նկատի ունի իշխանության գրավումը հեղափոխական զավթիչ կազմակերպության ձեռքով, վորը կապեր չունի լայն մասսայի հետ։

37) Բարթվելով—մենշևիկների Թուխլիսի կազմակերպության պատվիրակը։

38) Բորիսով—բոլշևիկներին հարող Ն. Սուվորովի կեղծանունը։ Համագումարում պաշտպանում եր հողերի բռնագրավման և գյուղացիներին սեփականություն տալու ծրագիրը։

39) Տրեպով—Ս. Պետերբուրգի գեներալ-նահանգապետը։ 1905 թ. հոկտեմբերի սրերին վոստիկանության արձակած հրամանի մեջ գործ է ածում հռչակավոր ֆրազը—«փամփուշտներ չխնայել»։

40) Ռոդիչև, Պետրունկևիչ—ականավոր կադետներ։

41) Այս աշխատանքի մեջ ընկ. Լենինը ձեռնարկում է ռուս սոց․․ դեմ. ագրարային ծրագրի վերաքննությունը գյուղացիական շարժման վերաբերյալ այն ահագին պատմական փորձի տեսակետից, ինչ ավին հեղափոխության տարիները (սկսած 1905 թ. աշունքից և մինչև 1907 թ. աշունքը)։ Այստեղ ընկ. Լենինը տալիս է նաև հարցի թեորետիքական վերլուծումը։ Այդ աշխատանքը միայն ավելի համոզիչ ու խորն

ե հաստատում բոլշևիկական տեսակետի իրավացիությունը հարցի մասին:

42) **Լենդլորդեր** — կիսաֆեոդալական տիպի խոշոր հողային սեփականատերեր:

43) **Լատիֆունդիաներ.** — ընդարձակ մասնատիրական կալվածներ:

44) **Յունկերություն** — գերմանական, գլխավորապես պրուսական, խորապես հետադիմական ազնվականության անունը:

45) **Կնեխտ** — մշակ (բատրակ):

46) **Գրոսբաուեր** — կուլակ, ունևոր գյուղացի, վորը չի կարողանում գլուխ հանել առանց բատրակներ ու որավարձով աշխատողներ վարձելու:

47) **Ստոլիպին** — Նիկոլայ II մինիստրների խորհրդի նախագահը 1905 թ. առաջին հեղափոխությունից հետո ռեակցիայի ժամանակաշրջանում: Ստոլիպինի քաղաքականությունն ամենից լավ բնորոշվում ե նրա իսկ ձևակերպումով. «Նախ հանգստացում, ապա միայն ռեֆորմներ»: Նրա ագրարային բարենորոգումները կայանում եյին նրանում, վոր համայնքի անդամ գյուղացիներին թույլատրվում եր իրանց սեփականությունն դարձնել բաժնեհողերը, ինչ նպաստում եր գյուղական կուլակների հարստացման, այլ և նպաստում եր միակտոր հողամաս ունենալու յերևույթին և հովանավորում եր ագարակային տնտեսության: Այդ «ուժեղների վրա կռթնելու» քաղաքականությունը կիրառվում եր այն նպատակով, վոր շուտափույթ քայքայել կարելի լինի միջին գյուղացիությունը:

48). Հող գաղթականների համար. այդ պատ հողը մեծ դեր ե խաղացել Ամերիկայում՝ այնտեղ կապիտալիստական հողագործության պատվաստելու խնդրում:

49) **Ուրբեր-մախեն** — ընկ. Լենինը 1861 թ. գյուղացիական բարենորոգումը համարում ե հողերի առաջին **կալվածատիրական** «մաքրում կապիտալիզմի համար» (այլ խոսքերով մասսայական բռնություն գյուղացիության վրա), Ստոլիպինի ագրարային որենսդրությունը յերկրորդ կալվածատիրական մաքրում, իսկ արդեն կապիտալիզմի համար **գյուղացիական** «մաքրումը հողերի» — դա հողի ազգայնացումը կլինի իր վախճանին հասցրած դեմոկրատական հեղաշրջումով հանդերձ:

50) Հոդվածը բաղկացած ե յերկու մասից. մեկը նվիրված ե սահմ.-ռամկավարների գնահատության, մյուսը — նարոդնիկների: Մենք վերցնում ենք միայն յերկրորդ մասը:

51) 1906 թվականի նոյեմբերի 9-ի որենքը, հրատարակված Ստոլիպինի կողմից առանց Պետական Դումայի և հետո պարտադրած նրան, առաջնորդում եր համայնքի քայքայվելուն և ագարակների ու միակտոր հողերի անցնելուն «տնտեսավար գեղջուկներին» — կուլակներին: Ստոլիպինը գիտակցաբար եր «ուժեղների վրա կռթնելու» քաղաքականությանը դիմում, քայքայվող ազնվականության փոխարեն նոր պատվանդան փնտռելով ինքնակալության համար (տես ծանոթ. 47-րդ):



52) **Չերնիշեվսկի** — հռչակավոր ռուս հրապարակախոս և սոցիալ-ուտոպիստ: 1862 թվականի հունիսի 12-ին Չերնիշևսկին ձերբակալվեց և Պետրոպավլովսկ բերդը փակվեց, վորտեղից տաժանակիր աշխատանքի ուղարկվեց Սիբիր. նրան թույլատրվեց Ռուսաստան վերադառնալ միայն 1883 թվականին:

53) 1907 թվականի հունիսի 3-ի պետական հեղաշրջումը Ստոլիպինը կատարեց՝ միաժամանակ ցրիվ տալով II Պետական Դուման: Խախտելով «հիմնական որենքները», հունիսի 3-ի ակտը փոփոխում եր Պետական Դումայի ընտրական իրավունքները հոգուտ կալվածատերերի ու խոշոր բուրժուազիայի:

54) **Մակլակով** — մեկը սահմ.-ռամկավար կուսակցության ղեկավարներից:

55) **1908 թվականի դեկտեմբերի կոնֆերենցիան** — այդ կոնֆերենցիան դատապարտեց լիկվիդատորությունը, իբրև դավաճանություն բանվոր դասակարգին, և նշանակեց կուսակցական հիմնական գիծը, վորի մեջ լեգալ հնարավորությունների ոգտագործումը զուգակցվում եր հաստատ անհրաժեշտության հետ ամրացնելու գաղտնադործ-կուսակցական կազմակերպությունները:

56) Տես ընկ. Լենինի յեզրափակիչ խոսքը կուսակցության IV համագումարում, ներկա գրքույկի 31 եջ:

57) Նևսկայա Զվեզդա» — լույս եր տեսնում 1912 թ. ապրիլին փակած «Զվեզդա»-յի փոխարեն մինչև նույն տարվա ոգոստոսի վերջը:

58) Խոսքը վերաբերում ե ստոլիպինյան ագրարային որենսդրության (տես ծանոթ. 47):

59) Ռոդբերտուս (1805-1875 թ.) — գերմանական բուրժուական տնտեսագետ և պատմաբան:

60) «Ռեչ» — սահմ.-ռամկավար կուսակցության կենտրոնական որգանը, վորը խմբագրում եյին Պ. Ն. Միլյուկով և Յոս. Գեսսենը:

61) «Ռուսսկիյե Վեդոմոստի» — Մոսկվայի լրագիրը, վորն իր շուրջը համախմբում եր լիբերալ-պրոֆեսորական շրջանները, 1905 թվականից սահմ.-ռամկ. որգան:

62) Հետևյալ հոդվածում — նկատի ունի «Վերջին դանակ» հոդվածը (Յերկ. ժող. հ. XII, մաս I, եջ 253, ռուսերեն): Նրա մեջ ընկ. Լենինն ապացուցում ե, թե ստոլիպինյան «բարենորոգումը» հետաձգում տվավ կործանվող ճորտատիրականությանը, բայց դրանից չի պակասել ճորտատիրական լատիֆունդիաների հարստահարությունը: Դրան վկա-

յություն—30 միլիոն մանր տնտեսատերերի սովը, որը չի կարող տեղի
ունենալ կապիտալիստական լատիֆունդիաների սովի։ «Դրան էլ հան-
գում է արդի ռուսական գյուղի հակասությունների գումարը. բուր-
ժուական ագրարային քաղաքականության կիրառումը հին ճորտատի-
րականների ձեռքով՝ լիակատարորեն պահպանելով նրանց հողն ու
նրանց իշխանությունը... և հայտնապես նրա համար, որ այդ քայլը
դեպի նորն արված է իր ամենազորությունը պահած հնի կողմից, այդ
քայլը չի կարող առաջնորդել և չի առաջնորդի դեպի որևէ հաս-
տատ մի բան» (Լենին, Յերկ. ժող, հ. XII, մ. I, եջ 257, ռուսերեն)։

63) «Պրիզիվ» («Կոչ»)—պաշտպանողական հանդես, որ Պլե-
խանովը եր հրատարակում Պարիզում 1914 թվականի պատերազմի
սկզբից։

64) Ստրուվե—մեկը հնագույն ռուսական սոցիալ-դեմոկրատնե-
րից, որն աստիճանաբար անցավ Մարքսի «ռեվիզիայի» և «Օսվո-
բոժդենիյե» միություն լիբերալ կազմակերպության միջոցով չվեց
սահմ.-ռամկավար կուսակցությունը, որի կկ անդամն է։

65) Գյուղացիական միություն—ճապաղ-նարոդնիկական բնույթի
ինտելիգենտական կազմակերպություն, թույլ կապված գյուղացիական
մասսաների հետ։

66) Բուլիգինյան Դուման—1905 թվականի օգոստոսի 6-ի որենքի
հիման վրա **օրինախորհրդակցական** որգան, կցած բյուրոկրատական
պետական խորհրդին, ընտրվող բարձր գույքային ցենզի հիման վրա։
Բոլշևիկները բոյկոտի եյին յենթարկում այդ Դումայի ընտրություն-
ները։

67) «Նաշե Դելո» («Մեր գործը»)—լիկվիդատորների լեգալ որգա-
նը, որոնք հրաժարվել եյին անլեգալ պայքարից և ինքնակալության
տապալման ու կատարյալ ժողովրդապետության լոզունգը փոխարինել
բուրժուական ազատությունների լոզունգներով։ Սկսվեց հրատարակ-
վել Պետրոգրադում 1915 թվականին։

68) Չխեյիձե—Դումայի մենշևիկների առաջնորդը. 17 թվականի
փետրվարից մինչև ամառվա վերջը նախագահը Բանվորների և Զին-
վորների Պատգամավորների Պետերբուրգի Խորհրդի, կողմնակից կոա-
լիցիային բուրժուազիայի հետ։ Ինքնասպանություն է գործել 1926 թ.
եմիգրացիայում։

69) Կազմ. Կոմիտե—մեծամասնության ու փոքրամասնության պա-
ռակտված ժամանակաշրջաններում այդպես եր կոչվում այն որգանը,
որը կկ դեր եր խաղում մենշևիկների մոտ (1903-1906 թ. թ, և 1911
թ. մինչև 17 թվականի ամառը, յերբ մենշևիկները սեփական կկ
ընտրեցին),

70) Պոտրեսով—մենշևիկների առաջնորդներից մեկը. ռեակցիա-



յի տարիներին—մենշևիկ լիկվիդատորների ամենից աջ թևի ղեկավա-
րը, պատերազմի ժամանակ սոցիալ-հայրենասիրության ամենից հետե-
վողական ներկայացուցիչը մենշևիկների մեջ։

71) Չերեվանին, Լեվիցկի—աջ սոցիալ-դեմոկրատներ, մենշևիկ-
ներ, լիկվիդատորներ և պաշտպանողականներ։

72) Պրագայի կոնֆերենցիան, ուր բոլշևիկները վերջնականա-
պես պառակտվեցին մենշևիկներից։

73) «Յերեք կետ ձկները»—ութ ժամյա բանվորական որ, դե-
մոկրատիկ հանրապետություն և կալվածատիրական հողի բռնագը-
րավում։

74) «Նաշե Սլովո» («Մեր խոսքը»)—ռուսական սոցիալ-դեմոկրա-
տական ամենօրյա լրագիր, որ լույս եր տեսնում Պարիզում պատե-
րազմի ժամանակ։ Իր շուրջը համախմբում եր ռուսական արտասահ-
մանյան սոցիալ-դեմոկրատիայի ինտերնացիոնալիստական տարրերը,
բայց հաստատ ու պարզ արտահայտված քաղաքական գիծ չուներ։

75) «Սոցիալ-Դեմոկրատ»—ՌՍԴԲԿ կենտրոնական որգանը, որ
լույս եր տեսնում արտասահմանում 1905 թ. հեղափոխությունից հե-
տո ընդհուպ մինչև 1917 թ. փետրվարի հեղափոխությունը։ 1911 թ.
սկսած խմբագրությունը գտնվում եր բոլշևիկների ձեռքին։

76) «Պրոլետարիատի խնդիրները մեր հեղափոխության մեջ» բը-
րոշյուրը գրվել է 1917 թ. ապրիլի 10-ին, այսինքն Վ. Ի. Ռուսաս-
տան վերադառնալուց մի շաբաթ հետո։ Այդ բրոշյուրն առաջին հրա-
տարակությամբ լույս է տեսել հուլիսյան որերից (հուլիսի 3-5) քիչ ա-
ռաջ, իսկ յերկրորդ հրատարակությունը, լույս է տեսել 1917 թ. սեպ-
տեմբերին։ Յերկու հրատարակություններն էլ լույս է ընծայել «Պրի-
բոյ» հրատարակչությունը, որն այն ժամանակ բոլշևիկների կկ հը-
րատարակչությունն եր։ Մենք այդ բրոշյուրից վերցնում ենք միայն
մի քանի հատվածներ, որոնք վերաբերում են գյուղացիության դե-
րին հեղափոխության մեջ։

77) Գուչկով—1917 թվականին առաջին ժամանակավոր Կառա-
վարության մեջ ռազմական և ծովային մինիստր, խոշոր բուրժուա-
զիայի հետադիմական շրջանների ներկայացուցիչ։

78) Կերենսկի, սոց.-հեղ.—հակառակ Պետերբուրգի Խորհրդի
կամքի մինիստր մտավ բուրժուական ժամանակավոր Կառավարու-
թյան մեջ. հետագայում գլխավորում է կոալիցիոն կառավարություն-
ները, անց է կացնում ծայրահեղ համաձայնողական քաղաքակա-
նություն, աստիճանաբար հեղափոխությունից գլորվում է դեպի հա-
կահեղափոխությունը։ «Շաղակրատ—Կերենսկի» Վ. Ի. Լենինի ար-
տահայտությամբ։

79) Ծերեթելի—սոցիալ-դեմոկրատ մենշևիկ, II Պետ. Դումայի

սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի առաջնորդը, կոալիցիոն կառավարության մինիստր, պաշտպանում էր կոալիցիան բուրժուազիայի հետ։

80) Ստեկլով—մարքսիստական գրականագետ. պառակտումից հետո հարեց բոլշևիկներին։ 1917 թվականի փետրվարի հեղափոխության ժամանակ տատանվող դիրք էր բռնում։ Մինչև 1926 թ. անդամ ՌԿԿ և «ԽՍՀՄ տեղեկատուի» խմբագիր։

81) Միլյուկով—սահ.-ռամկ. կուսակցության առաջնորդ. պատերազմի ժամանակ Դարդանելի, Գալիցիայի, Արևելյան Պրուսայի և Հայաստանի գավթման կողմնակից, խոշոր դավադրությունների գլուխ հեղափոխության դեմ։

82) Հեղափոխական պաշտպանողականություն—«հեղափոխական պատերազմի համար, վորը իսկապես արդարացնում է հեղափոխական պաշտպանողականությունը, պրոլետարիատը կարող է իր համաձայնությունը տալ միայն այս պայմանով. ա) իշխանության փոխանցումը պրոլետարիատի և նրան հարող գյուղացիության չքավորագույն մասերի ձեռքը, բ) բոլոր աննեքսիաներից (ուրիշ պետությունների հողերի գավթում—**ծանոթ. խմբ**) գործով, այլ վոչ թե խոսքով հրաժարվելու դեպքում, գ) գործով կապիտալի բոլոր շահերի հետ կատարելապես խզվելու դեպքում» (Լենին, Յերկերի ժող. հ. XIV, մ. 1, եջ 17, ռուսերեն)։

83) Ագրարային ծրագիր—ընկ. Լենինի մոտ այդ հատվածը սակավ ինչ այլ անուն է կրում—«ագրարային ու ազգային ծրագիրներ», ներառելով 13-րդ կետն ագրարային բարենորոգման մասին և 14-րդ կետը—ազգային։ Մենք վերցնում ենք միայն 13-րդ կետը։

84) Անհրաժեշտ է նշել, թե հողի հին ազգայնացումն այստեղ ստանում է «այլ կարգում, այն է՝ հողի ազգայնացումը վոչ միայն բուրժուական հեղափոխության «վերջին խոսքն» է, այլ և մի **քայլ դեպի սոցիալիզմը**» (ընկ. Լենինի նրա «Ագրարային հարցը Ռուսաստանում XIX դարի վերջին մոտալուտ» գրքի վերջաբանից), վորովհետև «նման միջոցներից դուրս (նման միջոցների թվում նկատի ունի և հողի ազգայնացումը—**ծանոթ. խմբ.**), վորոնք միայն քայլեր են հանդիսանում դեպի սոցիալիզմը և վորոնք լիովին իրագործելի յեն տնտեսականորեն, անհնարին է պատերազմի հասցրած վերքերի բուժումը և սպառնացող փլուզումի կանխումը» (Լենին, Յերկերի ժող., հ. XIV, մ. 1, եջ 51, ռուսերեն)։

85) Հողի սոցիալիզացիա հողի փոխանցումը գյուղացիների օգտագործման՝ արգելելով գնումը, վաճառքը և կապալը, հավասարար ու աշխատավորական սկզբունքներով, առանց վարձու աշխատանքի։

86) Գյուղացիական պատգամավորների համագումար—տեղի ու-



նեց Պետերբուրգում սոց.-հեղ. աջ թևի անհագին ազդեցության տակ։ Բոլշևիկներն այդ համագումարում մի փոքրաթիվ խմբակ եյին կազմում։

«Սոլդատսկայա Պրավդա» («Զինվորի ճշմարտություն»)—ժողովրդական բոլշևիկյան որգան, վոր հրատարակվում էր Պետերբուրգում 1917 թվականին, առավելապես զորքի մեջ ագիտացիա մղելու համար։

88) Չերնով—սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության առաջնորդը, հողագործության մինիստր Կերենսկու կոալիցիոն կառավարություններից մեկում, պայքարում էր կալվածատիրական հողը գրավող գյուղացիների դեմ

89) Ավկսենտևի խորհուրդ—Գյուղացիական Պատգամավորների Խորհրդների Կենտրոնական Գործադիր Կոմիտե, ընտրված 1917 թվականի մայիսին, վոր նախագահ ուներ աջ սոց.-հեղափոխական Ավկսենտյևին։

Դանի խորհուրդ—Բանվորների և Զինվորների Պատգամավորների Խորհուրդների Կենտրոնական Գործադիր Կոմիտե, ընտրված 1917 թ. հունիսին, վոր գտնվում էր մենշևիկների, մասնավորապես աջ մենշևիկ Դանի քաղաքական ղեկավարության ներքո։

90) Ձախ սոց.-հեղափոխականներ—ձախ խմբավորում սոց.-հեղ. կուսակցության մեջ, վոր սկսել է ստեղծվել կուսակցության III և IV համագումարների միջև տեվող ժամանակաշրջանում. սակայն պառակտումը տեղի ունեցավ IV համագումարում 1917 թվականի նոյեմբերի 26—դեկտեմբերի 5-ին։ Ձախ սոց.-հեղ. մի ժամանակ դաշինքի մեջ եյին բոլշևիկների հետ, վորը վերջացավ Բրեստի հաշտությունը խախտելու նպատակով ձախ սոց.-հեղ. կատարած ապստամբությամբ (գերմանական դեսպան Միրբախի սպանությունից հետո)։ Նրանց գլխավորում եյին—Կամկով, Սպիրիդոնովա, Նատանսոն և այլք։

91) Մարքսի «Կապիտալը»—Մարքսի խոշորագույն աշխատությունը, այստեղ տրվում է նրա տնտեսական ուսմունքը։

92) Կոնվենտ (Ազգային)—ֆրանսիական ներկայացուցչական ժողովրդական ժողով, վորը կառավարում էր Ֆրանսիան 1792 թվականի վերջից սկսած մինչև 1795 թ.։ Այդ պարլամենտը հռչակեց հանրապետություն, գլխատեց Լյուդովիկ XVI, կազմակերպեց Ֆրանսիայի պաշտպանությունը Յեվրոպայի հետադիմական բանակներից և ճնշեց յերկրում ներքին հակահեղափոխությունը։

93) «Կոոպերացիայի մասին» հոդվածը մենք տալիս ենք կրճատված ձևով, վորովհետև նա ամբողջությամբ մտել է «Կոոպերացիայի մասին» գրքույկի հայերեն հրատարակության մեջ։

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ
Անվան

# ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿԸ


Էջ

Հրատարակչությունից . . . . . . . . . . . . . . . . 3

Բանվոր դասակարգի վերաբերմունքի մասին դեպի մանր-բուրժուազիան . . . . . . . . . . . . 7

Բանվորական կուսակցությունը և գյուղացիությունը . . . 14

Ռուսական սոցիալ-դեմոկրատիայի ագրարային ծրագիրը . . 23

Բանվորական կուսակցության ագրարային ծրագրի վերաքննությունը . . . . . . . . . . . . 25

Ցեղրափակիչ խոսք ՌՍԴԲԿ IV «միացուցիչ» համագումարում ագրարային հարցի մասի . . . . . . 31

Սոցիալ-դեմոկրատիայի ագրարային ծրագիրը 1905—1907 թ. թ. ռուսական հեղափոխության մեջ . . 41

Ռուսական հեղափոխության ուժն ու թուլությունը . . . . 46

«Գյուղացիական ռեֆորմը» և պրոլետարական գյուղացիական հեղափոխությունը . . . . . . . . . 50

Ագրարային հարցի էությունը Ռուսաստանում . . . . . . . 59

Ստոլիպինյան և նարոդնիկական ագրարային ծրագրերի համեմատումը . . . . . . . . . . . . . 63

Հեղափոխության չերկու գծի մասին . . . . . . . . . 69

Պրոլետարիատի անելիքները մեր հեղափոխության մեջ . . . 75

Ռուսաստանի գյուղական բանվորների միություն հիմնելու անհրաժեշտության մասին . . . . . . . 84

Ծառ Գյուղացիական պատգամավորների առաջին համառուսական համագումարում . . . . . . . 88

Ագրարային հարցին վերաբերյալ բանաձևի նախագիծը . . . 108

Հողի մասին . . . . . . . . . . . . . . . . . . 110

Դեկրետ հողի մասին . . . . . . . . . . . . . . . 112

Բանվորների դաշինքն աշխատող և շահագործվող գյուղացիների հետ . . . . . . . . . . . . . . 113

Ճառ հողային բաժինների, չքավորության կոմիտեների և կոմմունաների համառուսական I համագումարում . . . . . . . 115

Գյուղի աշխատանքի մասին . . . . . . . . . . . . 127

Բնահարկը . . . . . . . . . . . . . . . . . . 144

Ցեղրափակման խոսք . . . . . . . . . . . . . . . 157

ՌԿԿ տաքտիկան . . . . . . . . . . . . . . . . . 165

Սոցիալիստական և գյուղացիական էկոնոմիկայի զոդման մասին . . . . . . . . . . . . . . . . 169

Գյուղի վրա կուլտ-շեֆություն ունենալու մասին . . . . . 175

Գյուղական ձևից փոխանցում խոշոր մեքենայական ինդուստրիայի ձևուն . . . . . . . . . . . . 178

Կոոպերացիայի մասին . . . . . . . . . . . . . . 182

Ծանոթություններ . . . . . . . . . . . . . . . . 186



ՀՀ Ազգային գրադար

NL01705

# ՀՍԽՀ ՊԵՏՀՐԱՏ ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

## Լ Ե Ն Ի Ն Յ Ա Ն  Ս Ե Ր Ի Ա

1. Պարենհարկի մասին, թարգմ. Թ. Ա. 64 եջ, 1922 թ., Յերևան . . . . . . . . . . . . . . . . — ր. 30 կ.
2. Իմպերիալիզմն իբրև կապիտալիզմի նորագույն էտապ, 120 եջ, 1926 թ. Վաղարշապատ . . . . . . » ր. 30 կ.
3. Պետություն և հեղափոխություն, 132 եջ, 1925 թ., Վաղարշապատ . . . . . . . . . . . . . . » ր. 20 կ.
4. Սոցիալիստական հեղափոխությունը և լուսավորության խնդիրները, 28 եջ, 1925 թ., Վաղարշապատ . . . . . . . . . . . . . . . . » ր. 20 կ.
5. 1905 թ. մասին, 123 եջ, 1925 թ., Վաղարշապատ . » ր. 23 կ.
6. Հունվարի 9-ը և Ռուսաստանի գործադուլների վիճակագրության մասին, 51 եջ, 1925 թ., Վաղարշապատ . . . . . . . . . . . . . . . . » ր. 20 կ.
7. 1905 թ. հեղափոխության մասին, 56 եջ, 1925 թ., Վաղարշապատ . . . . . . . . . . . . . . » ր. 10 կ.
8. Զեկուցում և այլ հոդվածներ, 73 եջ, 1925 թ., Վաղարշապատ . . . . . . . . . . . . . . . » ր. 15 կ.
9. Կոոպերացիայի մասին, 199 եջ. 1926 թ., Մոսկվա . . » ր. 40 կ.
10 Նոր տնտեսական քաղաքականություն, 340 եջ, 1926 » ր. 45 կ.
11. Ազգային հարցը (1910–1920 թ. թ.), 404 եջ, 1926 թ., Վաղարշապատ . . . . . . . . . . . . » ր. 60 կ.
12. Պրոլետարական հեղափոխությունը և ռենեգատ Կաուցկին, 148 եջ, 1925 թ., Վաղարշապատ . . » ր. 20 կ.
13. Ձախության մանկական հիվանդությունը կոմունիզմի մեջ, 135 եջ, 1926 թ., Յերևան . . . » ր. 40 կ.
14. Կոմունիստական Ինտերնացիոնալ, հոդվածներ և ճառեր, Պոպովի առաջաբանով, 386 եջ, 1927 թ. 1 ր. 20 կ.
15. Առաջին ռուսական հեղափ. շարժիչ ուժերը, 1925 թ., Յերևան . . . . . . . . . . . . » ր. 40 կ.
16. Նամակներ հեռվից, 22 եջ, 1925 թ., Յերևան . . . » ր. 07 կ.
17. Չինաստանի մասին, կազմեց և ծանոթություններով օժտեց Մ. Գ. Տաշկարյով, 37 եջ, 1927 թ. Վաղ-պատ. » ր. 20 կ.
18. Հոկտեմբերյան հեղափոխությունը (ճառեր և հոդվածներ) 249 եջ, 1927 թ., Վաղարշապատ . . . . . . » ր. 70 կ.

Դիմել՝ «Հայգիրք» բաժն. ընկ. բոլոր գրախանութներին յեվ բաժանմունքներին

**ԳԻՆԸ՝ 1 Ռ. 10 Կ.**